

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՆ ԱՅՍՕՐ ՀԱՅԱՅՔ ՆԵՐՍԻՑ





INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA

ETHNOSOCIOLOGICAL STUDIES
OF ARMENIA AND THE DIASPORA

19

ARMENIAN COMMUNITIES
IN FRANCE TODAY:
INSIDE VIEW

A COMPILATION OF RESEARCH MATERIALS

PUBLISHING HOUSE IAE
YEREVAN 2023

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ
ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

19

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՆ ԱՅՍՕՐ.
ՀԱՅԱՑՔ ՆԵՐՍԻՑ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի
տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 20TTSH-007 ծածկագրով
գիտական թեմայի շրջանակներում

Կազմել և խմբագրել են՝

Ռ. Ս. Կարապետյանը, Ս. Ա. Ներսիսյանը,
Լ. Ա. Տանաջյանը, Ս. Ս. Բարսեղյանը

Գրախոսներ՝ պ.գ.դ. Մ. Վ. Գալստյան
պ.գ. թ. Ռ. Ս. Օհանջանյան

ՀՏԴ 316:008:39
ԳՄԴ 60.5+71+63.5
Ֆ 857

Ֆ 857 Ֆրանսիայի հայկական համայնքներն այսօր. հայացք ներսից
(հետազոտության նյութերի ժողովածու) / Կազմ. և խմբ. Ռ. Ս. Կարապետյան,
Ս. Ա. Ներսիսյան, Լ. Ա. Տանաջյան, Ս. Ս. Բարսեղյան – եր., ՀՀ ԳԱԱ ՀԱԻ
հրատ., 2023. – 200 էջ:

Ժողովածուն ներկայացնում է Ֆրանսիայի հայկական համայնքների ծավալուն
հետազոտությունների որոշ արդյունքներ, որոնք ամփոփում են համայնքների
առանցքային ներկայացուցիչների կարծիքները, գնահատականները, դիրքորո-
շումները՝ չորս հիմնական ուղղություններով. համայնքների սոցիալ-ժողովրդա-
գրական նկարագիրը, սոցիալ-մշակութային կյանքը, ինքնության և Հայաստանի
հետ կապի հարցերը: Ուսումնասիրությունն իրականացվել է հայաշատ երեք քա-
ղաքների՝ Մարսելի, Լիոնի և Փարիզի հայերի շրջանում: Աշխատությունում ներ-
կայացված է հայկական համայնքների ներուժի գնահատման փորձը, որը
հիմնված է նորագույն էմպիրիկ հետազոտական նյութերի վրա: Գիրքը նախա-
տեսված է սփյուռքագետների, սոցիալ-հասարակագիտական հետազոտողների,
ուսումնառողների, սփյուռքի քաղաքականություններ իրականացնողների և
ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 316:008:39
ԳՄԴ 60.5+71+63.5

ISBN 978-9939-886-48-0

© Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

*Published by the decision of the Academic Council
of the Institute of Archaeology and Ethnography of the NAS RA*

This work was supported by the RA Science Committee,
in the frames of the research project № 20TTSH-007

Compiled and edited by

*R. S. Karapetyan, S. A. Nersisyan,
L. A. Tanajyan, S. S. Barseghyan*

Reviewed: M.V. Galstyan, Doctor in History
R. S. Ohanjanyan, PhD

Armenian Communities in France Today: Inside View (a Compilation of Research Materials), Comp. and Ed. Karapetyan R.S., Nersisyan S.A., Tanajyan L.A., Barseghyan S.S., Yerevan, Publishing House of the Institute of Archeology and Ethnography NAS RA, 2023, 200 p.

The compilation presents certain results of an extensive study of the Armenian communities in France, summarizing opinions, assessments, and positions of key representatives of the communities in four main areas: the socio-demographic description of the communities, their socio-cultural life, identity issues, and relations with Armenia. The present study was conducted among the Armenians of three cities in France with a significant Armenian population: Marseille, Lyon, and Paris. The work presents the experience of evaluating the potential of Armenian communities, which is based on the latest empirical research materials. The book is intended for diaspora studies scholars, social sciences researchers, students, policymakers working with the diaspora, and a wide range of readers.

ISBN 978-9939-886-48-0

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	8
ԳԼՈՒԽ 1. Մարտելի հայկական համայնքը	18
Ա. Համայնքի սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը	19
Բ. Համայնքի սոցիալ-մշակութային կյանքը	53
Գ. Ինքնության հարցեր	77
Դ. Հայաստան-սփյուռք փոխառնչություններ	86
ԳԼՈՒԽ 2. Լիոնի հայկական համայնքը	95
Ա. Համայնքի սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը	96
Բ. Համայնքի սոցիալ-մշակութային կյանքը	117
Գ. Ինքնության հարցեր	129
Դ. Հայաստան-սփյուռք փոխառնչություններ	141
ԳԼՈՒԽ 3. Փարիզի հայկական համայնքը	149
Ա. Համայնքի սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը	150
Բ. Համայնքի սոցիալ-մշակութային կյանքը	164
Գ. Ինքնության հարցեր	175
Դ. Հայաստան-սփյուռք փոխառնչություններ	181
ԱՄՓՈՓՈՒՄ	192
RESUME	195
ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ	
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	198
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	199

CONTENTS

FOREWORD	8
CHAPTER 1. Armenian community of Marseille	18
A. Socio-demographic description of the community	19
B. Socio-cultural life of the community	53
C. Identity issues	77
D. Armenia-diaspora collaboration	86
CHAPTER 2. Armenian community of Lyon	95
A. Socio-demographic description of the community	96
B. Socio-cultural life of the community	117
C. Identity issues	129
D. Armenia-diaspora collaboration	141
CHAPTER 3. Armenian community of Paris	149
A. Socio-demographic description of the community	150
B. Socio-cultural life of the community	164
C. Identity issues	175
D. Armenia-diaspora collaboration	181
RESUME	192
BIBLIOGRAPHIES AND SOURCE LISTS	198
LIST OF ABBREVIATIONS	199

ՆԱԽԱԲԱՆ

Սփյուռքի տարբեր համայնքների կենսագործունեության փորձի և առկա ներուժի իմաստավորումն առանձնահատուկ կարևորություն ունի՝ տեղի ունեցող ժամանակակից գործընթացները հասկանալու համար: Դրա անհրաժեշտությունն ակնհայտ է սփյուռքներ ունեցող բազմաթիվ երկրներին, որոնք արդի սփյուռքների հիմնախնդիրների, սփյուռքի ներուժի բացահայտման ու կիրառության վերաբերյալ ուսումնասիրությունների նկատմամբ լուրջ հետաքրքրություն են ցուցաբերում: Ներկայումս դա խթանվում է նաև հյուրընկալող երկրների ներքաղաքական կյանքում և միջպետական հարաբերություններում սփյուռքների դերի մեծացմամբ: Հասկանալի է, որ սփյուռքի ներկա վիճակի իմաստավորման, դրա դինամիկ զարգացումներին հետևելու և ներկա համաշխարհային գործընթացներում նրա դերի ընկալման համար անհրաժեշտություն է դառնում ներկա իրականությունն արտացոլող գիտելիքների ձեռքբերումը, որը հնարավոր է միայն էմպիրիկ հետազոտությունների միջոցով: Այս առումով հայկական սփյուռքի ուսումնասիրությունն առանձնահատուկ նշանակություն է ստանում:

Լինելով համախմբված էթնիկ հանրության կարևորագույն մաս՝ սփյուռքի հայ համայնքները բավականաչափ բազմազան են և իրենց ծագումով, և՛ ձևավորման հատկանիշներով, ինչպես նաև սփռվածության աստիճանով: Այս հանգամանքը որոշում է, մի կողմից, հայկական սփյուռքի առանձնակի տեղը և դերը հայ էթնոսում ընթացող գործընթացներում, մյուս կողմից՝ արտահայտում համաշխարհային գործընթացների ընթացքը և օրինաչափությունները:

Նշվածի համատեքստում ուշադրության է արժանի հայկական սփյուռքի կարևորագույն և խոշոր հատվածի՝ ֆրանսահայերի ներկա կենսագործունեության ուսումնասիրությունը, նրա ներուժի բացահայտման խնդիրները: Ելնելով վերը նշվածից ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազ-

գագրության ինստիտուտի սիյուռքի ուսումնասիրությունների բաժնի կողմից առաջարկվել է իրագործվել է Լիոնի, Մարսելի և Փարիզի հայկական համայնքների ծավալուն ուսումնասիրություն¹, որի նպատակն է ռեսուրսային ներուժի բացահայտման և դրա ներառման հեռանկարների ուրվագծումը²:

Ներկայացված ժողովածուն ֆրանսահայերի եռամյա հետազոտությունների արդյունքներից մեկն է, որն արտացոլում է Ֆրանսիայի երեք հայաշատ քաղաքների՝ Մարսելի, Լիոնի և Փարիզի հայկական համայնքների ներկա վիճակը հենց համայնքների ներկայացուցիչների տեսանկյունից:

Գրքում ներկայացված հետազոտությունը կարևոր է նրանով, որ հավաքագրվել է հայկական սիյուռքի տարբեր և, միաժամանակ, յուրատիպ համայնքների վերաբերյալ բազմաբովանդակ նյութեր, որից կարելի է դուրս բերել մի շարք օրինաչափություններ և ընդհանրություններ, ինչը կարող է լրացնել սիյուռքագիտական գրականության մեջ առկա բացերը և համադրելի լինել այլ սիյուռքագիտական ուսումնասիրությունների հետ՝ միտված սիյուռքում տեղի ունեցող գործընթացների, իրավիճակների ու փաստական նյութերի իմաստավորմանը: Ֆրանսիայում հայերի ուսումնասիրության նման մոտեցման անհրաժեշտությունը թելադրվում է նաև հետազոտության նման բարդ օբյեկտի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերման անհրաժեշտությամբ:

Սույն ժողովածուն ներկայացնում է համակարգված և մշակված առաջնային տվյալներ, որոնք արտահայտում են համայնքների առանցքային ներկայացուցիչների կարծիքները, գաղափարները, գնահատականները: Ներկայացվող նյութերում արտացոլված են ֆրանսահայերի կենսագործունեության հիմնական ուղղությունները՝ սոցիալական, տնտեսական, մշակութային, քաղաքական և այլն, և անդրադարձ է ար-

1 «Սիյուռքի ներուժի քարտեզագրման մոդելի մշակում. ֆրանսահայերի ուսումնասիրության օրինակով» - 20TTSH-007, հայագիտական ծրագիր, ՀՀ ԿԿՄՄՆ, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե, 2021-2023թթ.:

2 Ruben Karapetyan, 2022, Sociodemographic Aspect of the Resource Analysis of the Armenian Diaspora: Methodological Approaches, Armenian Diaspora in Dynamics, Prague, p. 11-29.

վում առկա մարտահրավերներին ու հնարավորություններին: Այն թույլ է տալիս ստանալ հայկական սփյուռքի տվյալ խմբերի իրավիճակի համապարփակ պատկերը, հետևություններ անել դրա առանձին բաղադրիչների և միմյանց միջև փոխկապակցությունների վերաբերյալ:

Աշխատանքում նյութերի ներկայացման նման ձևաչափի ընտրությունը նպատակ է ունեցել նվազագույնի հասցնել միջամտությունն արտահայտվող կարծիքներին ու գնահատականներին: Դա թույլ տվեց տեսնել գաղափարների բազմազանությունը, ընդհանրության մեջ չկորցնել նյութերի եզակիությունը, ինչի արդյունքում տեսանելի են ինչպես համադրվող, այնպես էլ հակադրվող, երբեմն էլ հակասական տվյալներ:

Հայկական սփյուռքի բազմազանության մեջ ֆրանսահայերի նկատմամբ հետաքրքրությունը և արդիականությունը պայմանավորված է դրա եզակիությամբ: Առաջինը, ֆրանսահայերն ունեն սփյուռքացման երկարամյա պատմություն, համայնքային կենսակերպի, ինստիտուցիոնալ կառուցվածքի և համայնքային ինքնակազմակերպման կայուն ավանդույթներ: Երկրորդ, Ֆրանսիայում առկա հայկական համայնքները բազմազան են՝ ունեն ինչպես հոծ, այնպես էլ ցրիվ բնակության ձևեր, ինչպես հին «դասական», այնպես էլ նոր սփյուռքյան շերտեր, ինչպես նոր սփյուռքացվող, այնպես էլ ապասփյուռքացվող խմբեր, ինչպես նաև ունեն Հայաստանի՝ ազգային պետության ու մյուս համայնքների կապերի իրենց հատուկ ուղիները: Այս բազմազանության հետ մեկտեղ, հաճախ, առանձին խմբերն ունեն բավականին բարձր համախմբվածություն և առանձնանում են որևէ բնութագրիչով՝ ձևավորելով համայնք մյուս համայնքների կողքին:

Այս հանգամանքը թույլ է տալիս խոսել ֆրանսահայերի համայնքի մասին ոչ թե եզակի, այլ հոգնակի թվով՝ մատնանշելով, որ Ֆրանսիայի հայկական համայնքը մեկ ընդհանրացված, համասեռ միավոր չէ: Այս մոտեցմանը նպաստում է նաև ֆրանսիական միջավայրում առկա կազմակերպակառուցվածքային մշակույթը, որը խրախուսում է տարբեր սոցիալական միավորներին համախմբվել առանձնահատկությունների շուրջ: Նաև հետազոտական դաշտում առկա քննարկումներն ու խոսույթները ցույց են տալիս, որ ֆրանսահայերի ընկալումներում ևս առ-

կա է համայնքների զանազանումն ըստ տարբեր խմբերի՝ կրոնական, ներգաղթի պատճառի, գաղափարական դիրքորոշման, ծագման վայրի և այլն:

Ֆրանսիայում հայերի ներկայությունը սկսվում է դեռ վաղ միջնադարից և իր ձևավորման պատմությամբ, տարաբնակությամբ, տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական, մշակութային փոփոխություններով և ինքնակազմակերպման ձևով առանձնակի տեղ է գրավում ողջ հայկական սփյուռքում: Լինելով խոշոր էթնիկ միավորներից մեկը տվյալ երկրում և ներգրավված լինելով երկրի կենսագործունեության տարբեր ոլորտներում՝ ֆրանսահայերն ունեն լծակներ մասնակցելու երկրի ներքին և արտաքին քաղաքականության մեջ և որոշակիորեն ազդելու դրավրա:

Ֆրանսահայերն ընդգրկված են ինչպես տեղական, համայնքային և Հայաստանի հետ համագործակցության գործընթացներում, այնպես էլ հաջողությամբ ինտեգրված են ֆրանսիական հասարակության մեջ՝ թե՛ անհատապես, թե՛ որպես էթնոսոցիալական խումբ, իր կառուցվածքով, կապերով և ունեցած ռեսուրսներով:

Առանձնահատուկ կարևորություն ունի նաև այն հանգամանքը, որ ֆրանսահայերի տարբեր համայնքները և հավաքականորեն Ֆրանսիայի հայկական սփյուռքն ընդունված է համարել հաջող ինտեգրման օրինակ: Նմանատիպ բնորոշումը հիմնականում համընկնում է քննարկվող խոսույթներում, ինչպես նաև տեղի հասարակության ընկալումներում: Ֆրանսիայի ազգային հերոս Միսաք Մանուշյանի, Շարլ Ազնավուրի և այլ անվանի մարդկանց դեպքերը հաճախ քննարկվող օրինակներ են: Այսպիսի դեպքերը ֆրանսիական հասարակության մեջ հայերի կերպարի և համայնքային նկարագրի վրա մեծ ազդեցություն են ունեցել: Ֆրանսիայում հայերը, հիմնելով ինքնակազմակերպական համայնքային կառույցներ, ստեղծել են ինտեգրման դաշտեր, որտեղ ֆրանսիական ու հայկական մշակույթները յուրովի միահյուսվել են: Ֆրանսիայի հայկական համայնքը, ստեղծելով մշակութային, սոցիալական, տնտեսական կապիտալ, միևնույն ժամանակ պահպանելով ազգային մշակույթը և ինքնությունը, ապահովել է ոչ միայն համայնքային, այլ նաև շրջապատող ազգերի կողմից լայն սպառում:

Ֆրանսիայի հայերի տարաբնույթ կազմը, որը ներառում է այդ երկրում ծնված արդեն երրորդ, չորրորդ և հինգերորդ սերնդի³ նախկին ԽՍՀՄ-ից (Հայաստանից, Վրաստանից, Ադրբեջանից, Ռուսաստանից) և Մերձավոր Արևելքից (Լիբանանից, Սիրիայից, Իրանից), ինչպես նաև Թուրքիայից և նորանկախ Հայաստանից ներգաղթած հայերի, ենթադրում է նրանց ինտեգրման և կենսագործունեության ընդհանուր և առանձնահատուկ խնդիրների մեծ բազմազանության առկայությունը: Այս բազմազանությունը պայմանավորված է նաև տարբեր քաղաքներում հայերի հոծ և ցրիվ տարաբնակեցմամբ, նրանց տնտեսական գործունեության բնույթով, սոցիալ-ժողովրդագրական կազմով, ազգային պատկանելության հիմքի վրա ինքնակազմակերպման ձևով, էթնոմշակութային հատկանիշների առկայությամբ և այլն: Ֆրանսահայերի տարբեր խմբեր ունեն իրենց յուրահատկությունները, ինչը կախված է խմբերի բնակության ժամանակահատվածից և ձևից, տեղափոխման վայրից, ելքային և այլ հատկանիշներից, որոնք, անկախ ընդհանուր միտումներից, ձևավորում են այդ խմբերի ինտեգրման առանձնահատկությունները:

Ընտևապես, Ֆրանսիայի հայկական համայնքների ներկայացվող ուսումնասիրությունը բացահայտում է համայնքների սոցիալ-ժողովրդագրական առկա պատկերը (անցյալի հետ համեմատության մեջ), սոցիալ-տնտեսական կառուցվածքն ու մշակութային կյանքը, ինքնության, էթնոմշակութային արժեքների պահպանման և վերարտադրման հիմնական գործոնները, Հայաստանի հետ կապն ու ներառման հնարավորությունները և այլն: Այն արժեքավոր է՝ որպես ժամանակակից հայկական սփյուռքի յուրահատուկ փորձառություն:

Ֆրանսահայերի տարբեր խմբերի մասին իրական, միաժամանակյա և թարմացվող տեղեկատվության հավաքագրումն ունի նաև կարևոր կիրառական արդյունք՝ որպես սփյուռքի ներուժի ճանաչման, քարտեզագրման և մոդելավորման համար առանձնահատուկ դեպքի ուսումնասիրություն:

Հատկանշական է, որ ֆրանսահայերի արդի շրջանի հետազոտությունները, հատկապես սոցիալական գիտակարգերի շրջանակներում,

3 Léonien René, Les Arméniens de France sont-ils assimilés ? Chez l'Auteur, Revue d'Histoire et de Philosophie religieuses, Issy-les-Moulineaux, 1986, p. 530.

բավականին փոքրաթիվ են: Նմանատիպ հետազոտությունների շարքում առանձնանում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի կողմից 2016թ. իրականացված Փարիզի և հարակից շրջանների հայկական համայնքների ուսումնասիրությունը, որտեղ արտացոլված են հայ համայնքների կյանքի քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ կողմերը: Մեկ այլ հետազոտություն իրականացվել է «Armenian Diaspora Survey. Հայկական Սփյուռքի Հարցախոյզ» ծրագրի շրջանակում, որը ներառել է Մարսելի հայերին⁴: Հարցախոյզը, առավելապես վերաբերում է ինքնության, հիշողության, հայրենիք-սփյուռք կապերի, սփյուռքի ընկալման և այլ հարցերի:

Ժողովածուի մեջ ներառված նյութերը հավաքագրվել են «Սփյուռքի ներուժի քարտեզագրման մոդելի մշակում. ֆրանսահայերի ուսումնասիրության օրինակով» հայագիտական ծրագրի շրջանակում, 2021-2023թթ.: Հետազոտությունների իրականացման տարբեր փուլերում հնարավոր է եղել հետևել կոնկրետ իրադարձությունների ազդեցությանը տվյալ համայնքներում, ինչը ապահովել է տվյալների դինամիկ պատկերի դուրսբերումը: Նմանատիպ իրադարձությունների շարքում, մասնավորապես, հարկ է առանձնացնել Քովիդ-19 համավարակը և 2020թ. Արցախյան 44-օրյա պատերազմը, որոնք լրջորեն ազդել են համայնքային կյանքի կազմակերպման, համախմբման ներուժի, սոցիալական կապերի և այլ կողմերի վրա: Նաև համայնքներում կրկնակի հետազոտական մուտքը հետազոտողներին հնարավորություն է տվել տեսնել հայերի նույն խմբերում տեղի ունեցող փոփոխությունները՝ տարբեր համատեքստերում:

Պետք է հաշվի առնել, որ ուսումնասիրության յուրաքանչյուր փուլի արդյունքում մշակվել են նոր խնդիրներ, առաջադրանքներ, և, համապատասխանաբար, ճշգրտվել ու լրամշակվել է հետազոտական գործիքակազմը՝ հաջորդ փուլի համար: Այդ պատճառով ուսումնասիրության մի փուլից հաջորդին անցումն ուղեկցվել է տեղեկատվության համալրմամբ և աճով՝ ներառելով ավելի շատ ու համակողմանի տվյալներ: Հե-

4 Armenian Diaspora Opinion, Armenian Diaspora Survey, Pilot Project, 2018.

տազոտությունը սկսվել է Փարիզի հայերի ուսումնասիրությամբ, ապա շարունակվել Լիոնում և ավարտվել Մարսելում՝ ընդգրկելով նաև այդ քաղաքների որոշ հարակից շրջաններ:

Չնայած այն հանգամանքին, որ ուսումնասիրությունն իրականացվել է մեթոդաբանության լայն կիրառմամբ՝ ներառելով քանակական և որակական մեթոդներ, սույն ժողովածուի մեջ արտահայտված են միայն որակական՝ հարցազրույցների նյութերը: Նյութերը հավաքվել են խորին հարցազրույցի մեթոդով՝ նախապես մշակված հարցաշարով: Հարցազրույցներն անցկացվել են ինչպես առանցքային հարցերի միջոցով, որոնք նույնական են բոլոր համայնքների և տեղեկատու անձանց համար, այնպես էլ հարակից հարցերի միջոցով, որոնք բխել են համայնքի և տեղեկատու անձի բնութագրիչ առանձնահատկություններից⁵: Հարցազրույցների իրականացման ընթացքը երեք քաղաքներում առանձնահատուկ է եղել՝ կապված առկա համայնքների ձևավորման պատմության, կառուցվածքի, բնակեցման տեսակի, սոցիալական ինքնակազմակերպման և ունեցած ռեսուրսի հետ: Մարսելի հայերի շրջանում իրականացված հետազոտության ընթացքն առավել արդյունավետ է եղել՝ կախված համայնքային հագեցած, ակտիվ կյանքից, հայկական ներկայությունից, և հոծ խմբերի առկայությունից: Ի տարբերություն Մարսելի՝ Լիոնում և Փարիզում հայերն ունեն ցրիվ բնակության ձև, հետևաբար, կառույցների և անհատների հետ կապերի հաստատման ու որոնման գործընթացը ժամանակատար և ոչ այնքան դյուրին է եղել:

Հետազոտությունների ընթացքում տեղեկատու անձ են համարվել համայնքներում ներգրավված, համայնքների համար առանցքային նշանակություն ունեցող հայերը, համայնքային ներգրավվածություն չունեցող, սակայն հայկականության հետ որևէ ձևով անչվող հայերը, ազդեցություն ունեցող կառույցների ներկայացուցիչները և այլն:

Տեղեկատու անձանց ընտրության ժամանակ փորձ է արվել առավելազույնս ապահովել բոլոր խմբերի ներկայացվածությունը, ինչը հնարա-

5 Հայ համայնքները այսօր. Թեհրանի, Լոս Անջելեսի, Բեյրութի, Փարիզի, Թբիլիսիի հայերի էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններ/ Ռ.Կարապետյան.- Եր., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, 2018, էջ 20:

վորություն է տվել ծածկել հետազոտական բոլոր խնդիրները: Առաջին քայլով յուրաքանչյուր քաղաքում նախապես առանձնացվել են գործող հիմնական հայկական կազմակերպությունները, որոնցից ընտրվել են համայնքի համար էական ազդեցություն ունեցողները՝ ըստ փորձագետների կամ եղած գրավոր աղբյուրների, մամուլի հրապարակումների: Հավաքագրված կազմակերպությունները ներառել են մի քանի խմբեր՝ կուսակցություններ, հայրենակցական միություններ, կրթական հաստատություններ, եկեղեցիներ, բարեգործական կազմակերպություններ, ՋԼՄ-ներ, գրատներ, գրադարաններ, մշակութային կազմակերպություններ, ազգային հարցերով զբաղվող կառույցներ, հասարակական կազմակերպություններ, նախաձեռնություններ, համայնքում ակտիվ գործող անհատներ: Յուրաքանչյուր խմբից ընտրվել են մեկ կամ մի քանի կազմակերպություններ, որոնց համապատասխան ներկայացուցիչների հետ անցկացվել է հարցազրույց՝ նախապես մշակված հարցաշարով: Սա թույլ է տվել հետազոտողներին դուրս բերել տարբեր օղակներում ներգրավված մասնագետների և համայնքում նշանակալի դեր ունեցող անձանց կամ կազմակերպությունների գնահատականները համայնքներում ընթացող գործընթացների, առկա իրավիճակի և հեռանկարների վերաբերյալ: Հետազոտության բոլոր փուլերում պահպանվել է տեղեկատու անձանց անանոնության և նրանց կողմից տրամադրած տեղեկատվության գաղտնիության սկզբունքը: Այստեղ պետք է հաշվի առնել ուսումնասիրվող նյութի առանձնահատկությունը. սփյուռքում դաշտային ուսումնասիրություններ իրականացնելիս հետազոտողները բախվում են տեղեկատու անձանց դաշտի որոշակի սահմանափակումների: Բացի այն, որ համայնքային միջավայրում այս անձանց նշանակալիությանը զուգահեռ աճում է նրանց ճանաչելիությունը թե՛ համայնքում, թե՛ տվյալ երկրում, նաև համայնքային կյանքի որևէ ուղղության ներկայացուցիչ կարող է լինել մեկ կամ մի քանի անձ: Նման հանգամանքներում այս անձինք և իրենց կողմից տրված տեղեկատվությունը եզակի են, հաճախ նաև հնարավոր է նույնականացնել: Սա լրացուցիչ կարևորություն է տալիս անանոնության ու գաղտնիության սկզբունքի պահպանմանը հետազոտական և հետհետազոտական փուլերում՝ չվնասելու և հետազոտական դաշտում կրկնայցերի հնարավորությունը պահպանելու նկատառումներով:

Տվյալների հավաքագրումից հետո իրականացվել է դրանց մշակումն՝ ըստ նախապես առաջադրված նպատակադրումների, խնդիրների, ըստ ուղղությունների, ըստ նյութերի առանձնակիության: Այդ նպատակով առանձնացվել են այն նշանակալի ցուցիչները, որոնց միջոցով սահմանվել է նյութերի համակարգման տրամաբանությունը:

Գիրքը բաղկացած է նախաբանից, երեք գլուխներից, ամփոփումից, սկզբնաղբյուրների և գրականության, հապավումների ցանկերից:

Ֆրանսիայի երեք հայաշատ քաղաքների՝ Մարսելի, Լիոնի և Փարիզի հայկական համայնքների հետազոտության արդյունքները ներկայացված են համապատասխան գլուխներում: Քաղաքների նման հերթականությունը ժողովածուի մեջ պայմանավորված է Ֆրանսիայում հայերի հաստատման, զաղթի պատմության և ներքին տեղաշարժերի այս գլխավոր հանգրվանների հետագծով: Այդպիսով, ընթերցողն առաջինը ծանոթանում է հայերի հաստատման սկզբնակետի՝ Մարսելի, ապա Լիոնի և, վերջում, Փարիզի հայկական համայնքների հետ:

Բոլոր գլուխներում հարցազրույցների նյութը մատուցված է հետևյալ ոլորտների թեմատիկ խմբավորմամբ՝ իրենց ենթաբաժիններով և ենթաթեմաներով: Դրանք են՝ ա) համայնքի սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը (համայնքի ձևավորումը և քանակական պատկերը, սոցիալ-մասնագիտական և տնտեսական կազմը, ընտանիքը, հայերի ինտեգրումն ընդունող հասարակությունում), բ) համայնքի սոցիալ-մշակութային կյանքը (համայնքի կառույցներն ու իրադարձությունները, վիզուալ ներկայությունը, մեդիան, հիմնական տոնածիսական միջոցառումները, սոցիալական կյանքն ու համախմբումը), գ) ինքնության հարցերը (ինքնության կառուցակցման գործոնները, դրսևորման ձևերն ու տարածությունները), դ) Հայաստան-սփյուռք փոխառնչությունները (Հայաստանի հետ կապը և հայրենիքի ընկալումը, սփյուռքի ներառումը ՀՀ-ում, հայկական շահերի պաշտպանությունը):

Այսպիսով, ընթերցողը ծանոթանում է ոչ թե որևէ հարցազրույցի ամբողջապես, այլ հարցազրույցի առանցքային հարցերի շուրջ տարբեր տեղեկատու անձանց կարծիքներին՝ ամփոփված մեկ բաժնում: Հարցազրույցներից առանձնացված բոլոր համարժեք պատասխանները ներկայացված են տվյալ բաժնում՝ տեղեկատու անձանց ուղիղ մեջբեր-

մամբ, ամբողջական կամ հատվածական: Հարկ է նշել, որ գլուխների ենթաբաժինների և ենթաթեմաների անհամամասնորեն ներկայացվածությունը պայմանավորված է ինչպես համայնքների առանձնահատկություններով (օրինակ՝ Մարսելում սոցիալ-մշակութային կյանքն ավելի հագեցած է, քան Լիոնում, հետևաբար, այդ ենթաբաժինը տարբեր գլուխներում տարբեր համամասնությամբ է), այնպես էլ համայնքների կենսագործունեության տարբեր ոլորտների հագեցվածությամբ (օրինակ՝ մեդիա դաշտը բավականին սահմանափակ է և, անկախ համայնքից ու տեղեկատու անձերից, դրա մասին տեղեկատվությունը ստացվում է սահմանափակ, քան համայնքային այլ կառույցների և ոլորտների մասին): Կարևոր է նշել նաև, որ որևէ հարցի շուրջ տեղեկատու անձանց տված պատասխանները խմբագրակազմի կողմից չեն լրացվել հավելյալ տեղեկատվությամբ՝ հետևելով հետազոտության արդյունքների այս ձևաչափով ներկայացման սկզբունքին, ըստ որի կարևորվում է հենց համայնքի ներկայացուցիչների կարծիքը, գնահատականը, դիրքորոշումը կամ ընկալումը, անգամ փաստական հարցերի սուբյեկտիվ ներկայացումը:

Հարցազրույցների լեզուն արևելահայերեն և արևմտահայերեն է: Արևմտահայերեն խոսքի մի մասը սղագրվել է արևելահայերեն ուղղագրությամբ և շարահյուսությամբ: Տեղեկատու անձանց հարցազրույցների հատվածները ժողովածուի մեջ տեղ են գտել նույնությամբ: Եթե խոսակիցը բանավոր խոսքում արել է շարահյուսական կամ քերականական սխալներ (օրինակ՝ սխալ հոլով, թիվ, ժամանակ, դեմք և այլն), օգտագործել ոչ գրական բառեր, դա մնացել է նույն ձևով: Բառերը, արտահայտությունները, որոնք հայերեն չեն, սակայն հայերեն խոսքում գործածական, հասկանալի են և (կամ) միջազգային եզրեր են, թողել ենք անփոփոխ: Խմբագրական նման մոտեցում է որդեգրվել՝ տեքստին հնարավորինս չմիջամտելու և բանավոր խոսքը կենդանի փոխանցելու նպատակով: Օտար լեզուներով և անհասկանալի արտահայտություններին տրվել են բացատրություններ:

ՄԱՐՍԵԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՐ

Մարսելի հայերի շրջանում իրականացված հարցազրույցների (շուրջ 25 հարցազրույց) համար ընտրված տեղեկատու անձանց ընտրությունը պայմանավորված է եղել մի շարք չափանիշներով և ընթացել է փուլային ձևով: Առաջնահերթ խնդիր է դրվել կապ հաստատել համայնքում առկա գրեթե բոլոր խմբերի, շերտերի հետ և հավաքագրված տեղեկատվության մեջ ապահովել բոլոր կողմերի ներգրավվածությունը: Այս սկզբունքը ապահովվել է համայնքում նշանակալի հայկական կառույցների ներառմամբ, ինչը որոշվել է ըստ մի քանի չափանիշի՝ ոլորտային տարբաժանման, կառույցներում ներգրավված անդամների թվի և սեռատարիքային կազմի պահպանման: Հաջորդիվ, ընտրված կառույցներից առանձնացվել են նաև տեղեկատու անձինք՝ ըստ համայնքի մասին ունեցած տեղեկատվության, ազդեցիկության, համայնքային տարբեր գործընթացներում ներգրավվածության փորձի: Պահպանվել են նաև սեռային, տարիքային, սոցիալ-մասնագիտական համամասնությունները: Արդյունքում տեղեկատու անձինք եղել են կուսակցությունների, հայկական դպրոցների, երեք եկեղեցիների, բարեգործական կազմակերպությունների, լրատվամիջոցների, մշակութային կազմակերպությունների, հասարակական և արխիվային կազմակերպությունների ներկայացուցիչները: Նաև կարևոր է եղել հարցազրույցների անցկացումը նախկինում և ներկայումս պետական պաշտոններ զբաղեցնող և տարբեր բնագավառներում ակտիվ գործունեություն ծավալած անհատների հետ: Յուրաքանչյուր խմբից ընտրվել են մեկ կամ մի քանի կազմակերպություններ, որոնց համապատասխան ներկայացու-

ցիչների հետ անցկացվել է խորին հարցազրույց՝ նախապես մշակված հարցաշարով:

Հարցազրույցներն իրականացվել են տեղում: Հարցազրույցները վարել են Լուսինե Տանաջյանը և Սոնա Ներսիսյանը: Գործիքակազմը և ստացված արդյունքները մշակվել են բաժնի աշխատակիցների կողմից⁶:

Ա. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Համայնքի ձևավորումը

Քննարկվող առանցքային հարցեր. *Մարսելի հայ համայնքի ձևավորման և գաղթի պատմությունը, ներգաղթի ու արտագաղթի հիմնական պատճառները, ձևերը, ծավալները և ուղղությունները՝ անցյալում և ներկայում, համայնքի սեռատարրիքային, ընտանեկան, սոցիալական կազմը՝ ըստ ելքի վայրի:*

«Ֆրանսիայում ամենաբազմամարդ [խմբ. հայ] համայնքը Մարսելում է՝ քաղաքի համարյա 10 տոկոսը: 100 հազար հայ կա Մարսելում: Մեկ միլիոնանոց քաղաք և 100 հազար հայ, այսինքն ամեն 10-րդ մարսելցին հայ է: Նաև համայնքը հին համայնք է: 20-22թթ-ից [խմբ. 1920-1922թթ-ից] արդեն, նույնիսկ անցյալից մնացած հայեր շատ կային, որոնք միջնադարում էին եկել, որոնք 18-րդ դարում են եկել: Այստեղ շատ հայտնի մարդիկ կան ռեզիդենտում հին հայերից, բայց մասսայական եկել են 20-22թթ. [խմբ. 1920-1922թթ]: Այստեղ եղել են երեք-չորս փախստականների ճամբար, որտեղ մինչև 50-ական [խմբ. 1950-ական] թվականներն ապրել են մարդիկ: Փոքրիկ տնակային թաղամասեր են ստեղծել: Ես մարդիկ գիտեմ այսօր, որ այդտեղ են ծնվել: Իրենք Ցեղասպանությունից գաղթած շատ մեծ մարդիկ են տարիքով, գաղթականների երեխաներ են»:

6 Ներսիսյան Ա., Տանաջյան Լ., ԴԱՆ, 2023, ՖՀ, Մարսել (խորին հարցազրույցի տվյալներ):

«Եթե պատմական էքսկուրս անելու լինենք, մեր սփյուռքը, ընդհանուր վերցրած, այստեղ ջարդից հետո են եկել՝ ըստ ծխի տվյալների: Սուրբ Հակոբ եկեղեցին որ կա, առաջին քահանան ինքն է [խմբ. Սուրբ Հակոբ եկեղեցու սպասավորը] եղել, առաջին ճամբարն այդտեղ է եղել [խմբ. 1922-1927 թվականներին հայ գաղթականության առաջին կայանները Մարսելում], գործարաններ են շատ եղել քաղաքի այդ հատվածում, տվել է այդ շանսը, որ մարդիկ աշխատեն: Առաջին դժվարությունը, որ հանդիպել են, դա նա է եղել, որ լեզու չեն իմացել: Շատ մեծ դժվարություն են կրել՝ իրենց բազմանդամ ընտանիքը պահել, առաջ գնալ, որովհետև, բարեբախտաբար, ծնելիությունը բարձր է եղել, ամեն ընտանիքում չորսից պակաս երեխա չի եղել:

Իբրև եկեղեցական՝ ես իմ տեսանկյունից ասեմ, աշխարհականի ասքերով չեմ փորձի գնահատական տալ: Ամեն դեպքում, պահպանողական շերտ է եղել, իրենց ազգային արմատներին կպած 50, 60, 70 տարի իրենք կարողացել են կպած մնալ եկեղեցուն, ինչքան էլ որ կուսակցությունները շատ են եղել՝ մեկը կարմիր է, մեկը դաշնակ է, մեկը հնչակ է: Իրենք եկեղեցու միջոցով տեսել են Աստծուն կամ սպասավորի՝ քահանայի միջոցով: Դրա արդյունքում պահպանել են լեզուն, մշակույթը, հավատքը, այն ինչն իրենց թույլ է տալիս, որ այսօր ես իրենց հետ հայերեն եմ խոսում»:

«Երբ հասնում են սեպտեմբերի 22-ից սկսած և հետո նոյեմբեր, այս թաղերում, ուր հիմա ենք, ուրեմն Սեն Շառլ կայարանը՝ մինչև Կարիբի-են, այս Բելգանս թաղամասը, որ տեսնում եք, ճիշտ կենտրոնում, այս թաղի մեջ էին հայերը:

Միայն ֆրանսիացի չէ, իսպանացի, իտալացի, Լեհաստանից կար արդեն գաղթականներ՝ մարդիկ, որ եկել էին աշխատելու համար: Հայերը, որ եկան ուրիշ պատճառ էր՝ իրենց կյանքը պիտի ազատեին: Երբ նրանք հասան, այն ժամանակ հյուրանոցներ կային, սկսեցին ապրել մեկ ընտանիքը՝ մեկ սենյակի մեջ:

Հոս 19-րդ դարից հայ ընտանիքներ կային Մարսելում՝ ինչպես տարբեր երկրների մեջ վաճառականներ: Այդ մի քանի ընտանիքները՝ Սերյանները, Միրզայանցները, Թեքեյանները Մարսել էին ապրում:

Նրանք շուտով իմացան, որ հայ գաղթականներ կան նավահանգիստ և գնացին, որ նրանց օգնենք: Տիգրան Միրզայանցը սկսեց իր միջոցներով օգնել, գաղթականներին դրամ տալ, որ կարողանան ապահովել, կարողանան ճաշ, մի բան առնել: Հետո այնչափ մարդ էր գալիս, որ կազմակերպեցին կոմիտե՝ կազմակերպություն փախստականների համար: Միրզայանցը առևտրական ընտանիքի անդամ էր, բայց նաև երկու տարվա անկախ Հայաստանի Առաջին Հանրապետության հյուպատոս Մարսելի մեջ: Անշուշտ, 20-ին [խմբ. 1920-ին] արդեն չկար Հանրապետությունը, բայց ինքն այդ պաշտոնը ունենալով՝ բավական լավ ծանոթներ ուներ: Ասաց՝ պետք է աշխատի մի միջոց գտնել, որ այս գաղթականներին օգնի: Ամեն տեղ գրեց: Հետո այս զինվորական քեմփը՝ Օդոն, ճամբարը, ազատ էր, պատերազմը վերջացած լինելով՝ զինվոր չկար: Ռազմի ընթացքին ֆրանսիացի զինվորներ կային և գերմանացի գերիներ: Ուրեմն, դիմում է գրում և, վերջապես, ունենում արտոնություն՝ այդ Քեմփ Օդոն տրամադրվի հայ գաղթականներին: Այդ Քեմփ Օդոնի մեջ 40 հատ տնակներ կան: Այդ 40 բարաքների 34-ը հայերին է տրամադրվում և 6 ուրիշները՝ մնացածներին, ասորիներին: Իրենք էլ այս դժվարություններն անցան: Կազմակերպվում է, և իրենք տնօրեն են նշանակում Թագվոր Խաչիկյան, որը սեբաստացի էր և ինքն էլ, Միրզայանցի պես, եկել էր 19-րդ դարում և ինքն էլ նաև ֆրասահպատակ էր, պատերազմի ընթացքին կռվել և փամփուշտ էր ստացել: Եվ քարտուղարը՝ պարոն Ալեքս Արաբաջյանը, այս տետրակները ինքն էր գրում: Ուրեմն գրում է անունը, տարիքը, որտեղից են եկել, գործը, բայց այս տետրակները չկան, չեն պահվել: Արաբաջյանը պահեց, հետո իրեն եղբոր թոռնիկը մեզ տվեց, և մենք թվայնացրինք:

Քեմփ Օդոն բացառիկ բան է, բացառիկ քեմփ է, որում անուններ ունենք: Օրինակ, Քեմփ Վիկտոր Հյուգոյում գիտենք քանի հոգի են եղել, որովհետև իրենց թղթերի մեջ գրված է, բայց ընդհանուր ցուցակներ չկա: Կնիքները մենք պատրաստեցինք, որովհետև ճիշտ օրինակն ունեինք: Երբ կարողանում էին երթալ Չմյունայից կամ Պոլսից, անցաթղթի վրա գրվում էր՝ «այստեղ չի կարող վերադառնալ կամ արգելված է վերադառնալ»:

«22-ից [խմբ. 1922-ից] մինչև 27թ. [խմբ. 1927թ.] բաց մնաց քեմփը, և այդ ընթացքում 5244 հոգի ապրեց, բայց ամենքը միասին չէ, անշուշտ: Մարդիկ կային, օրինակի համար, եթե ընտանիքից մեկը եկավ և մտավ Քեմփ Օդոդ, հետո մնաց 6 ամիս և ուրիշ տեղ գործ գտավ՝ Լիոն, Փարիզ, ուրիշ քաղաքներ, այնուհետ գնում էր: Եթե գործ էին գտնում, որտեղ գումարը, աշխատավարձը մի քիչ ավելի լավ լիներ, դուրսը մի բան վարձեին, որ իրենց ընտանիքը մնար, ոչ մեկը չէր ուզե՞նա մնար քեմփի մեջ: Քանի ընտանիք կար, զատված էին պարզ սավանով կամ վերմակով: Այդ բաները [խմբ. սանհանգույց, խոհանոց] դժվար էր:

Բայց Միրզայանցը և մյուս անդամները շատ մտահոգ էին այդ ձևով և կազմակերպեցին. ֆրանսիացի մի բժիշկ, որ Մարսելի մեծ հիվանդանոցի բժիշկ էր, իրեն ասեցին, որ պետք է զաք երկու անգամ շաբաթը և այցելեք հիվանդներին: Գալիս էր (իրեն վճարում էին, անշուշտ), և երկու ուրիշ հայ բժիշկներ էլ էին գալիս՝ Սեմերջյան և Ռաքեջյան: Ձմյուռնիայից մի դեղագործ կար, ինքը դեղարան ուներ քեմփի մեջ, և դեղերը ձրի էին: Քեմփի մեջ նաև դպրոց կար, որը ունեցավ մինչև 400 պստիկ, բայց միշտ նույն թվերը չէին, քանի որ նույն խնդիրն էր:

Պոլիսից բերել տվին Արամ Ջեվիզին: Արամ Ջեվիզը մեծ ուսուցիչ էր, ով Եսայան վարժարանի ուսուցիչ էր եղել, և իրեն բերել տվին և ուրիշ ուսուցիչներ: Եվ ֆրանսերեն, հայերեն լեզուն էին սովորում:

Իրենց մեջ շատերը չգիտեին [խմբ. ֆրանսերեն]: Մի մասը գիտեր: Կային իրենց մեջ որբեր, որոնք Լիբանան կամ Սիրիա որբանոցների մեջ էին եղել և ֆրանսերեն էին սովորել: Բայց իրենց մեջ շատերը չգիտեին: Հիմա երկու խնդիր կար. պիտի աշխատեն, լեզու չգիտեն: Միրզայանցը գրասենյակ է բացում քեմփի մեջ և հրավիրում մի հայի, որ շատ լավ ֆրանսերեն և հայերեն գիտեր՝ պարոն Ջարմայանն էր, որ եկավ այդ գրասենյակը և ամիսներով իրենց թղթերը լրացրեց: Իսկ աշխատելը, ինչպես պիտի աշխատեին՝ նավահանգստում կամ տարբեր գործարանների մեջ, որ կային, մարդիկ օճառ, յուղ, այդ բաներն էին անում:

Այս հայերը թուղթ չունեին կամ շատ քիչ: Դրա համար ինչ արին. այս մեր ընտանիքները, որ ուզում էին իրենց օգնել, իրենք պստիկ հայոց եկեղեցին ունեին՝ կենտրոնում: Եթե կուզեք թուղթ ունենաք, գնա-

ցեք պատիկ լուսանկար արեք, և հետո մենք ձեզ կնունքի և ծնունդի թուղթ կտանք: Եկեղեցին այս թուղթը տալիս էր:

Առաքելական եկեղեցին էր, որ տալիս էր այս թուղթը: Այդ ընտանիքները, որ հոս էին, առաքելական եկեղեցուն էին պատկանում: Իրենք պատիկ մի եկեղեցի կազմեցին: Իրենք առևտրական էին, նաև ուսանողներ էին ընդունում: Մի քանի հարյուր հայեր էին՝ տարբեր տեղերից, մեծամասնությամբ կեսարիացի և տարբեր քաղաքներ, մի քիչ Իզմիր

Միրզայանցը Շուշեցի էր: Այսինքն Մարսել էր ծնվել: Իր մեծ հայրիկն էր եկած: Բայց շատերն ավելի Կիլիկիայից և Արևմտյան Հայաստանից էին: 24-ին էր [խմբ. 1924թ.], որ Նանսենը, քանի որ 22-ին [խմբ. 1922-ին] սկսեց ռուսների համար փաստաթղթեր անել (ռուսները, որ հեղափոխությունից փախել էին), և, տեսնելով գաղթականների վիճակը, շուտով նա պատրաստում է հայերի համար: Մեծ օգուտ է տվել հայերին:

Սկզբում քեմփի մեջ էին: Երբ փորձեցին հելլենել քեմփի մեջից Գիտեք, հայերս այդպես ենք, փորձում են մի տեղ երթան, որտեղ մի պատիկ տեղ կունենան, որ լոլիկ, մի բան դնեն: Կերթային արվարձանները: Մարսելը այսքան մեծ չէ: Այդ տեղերը՝ Բոմոնի առաջ, տուն բան չկար: Այդտեղից կարողացան կամաց-կամաց հողեր առնել և մեկը մյուսի տուն շինել: Օրինակի համար, Սեն-Ժերոմ, ուր մենք ենք, մի ֆրանսուհի տիկին կար, որ մեծ տուն ուներ հողերով, ուզում էր մաս-մաս ծախել, հայերին ծախեց: Քով-քով արին, պատիկ-պատիկ իրար տները շինեցին՝ իրար օգնելով: Շաբաթական էին վճարում՝ ամեն անգամ քիչ-քիչ: Բոմոն, Սեն Ժերոմ, Սեն Լու, Սեն Անտուան, Սեն Մարգարիտ...

Օրինակի համար, այս տարեգիրքները, որ ունենք, ամեն տարի լինում են, և հոս կտեսնեք նկարներ՝ Սեն Անտուանի տներ են շինում: Այս անուարների [խմբ. annuaire - գրացուցակ, կատալոգ] մեջ քարտեզ էին դնում Մարսելի, բացատրություն՝ որ ավտոբուսը պիտի առնեք այսինչ տեղը գնալու համար, ուղեցույցի նման: Կամ բացատրում էին Նոտդը Դամ դը Պաղին ինչ բան է և ասում էին, որ ձեր ընտանիքի անդամներին կարող եք գտնել, որովհետև այսպես անվանացանկ կար»:

«Հիմա, եթե ինձ ասեք, թե հայերի թիվը ինչ է հոս, չեմ կարող ճիշտ թիվ տալ: Եվ ոչ մեկն էլ չի կարող: Ճշգրիտ վիճակագրություն չկա: Բայց

կարելի է ասել, որ մինչև 80-90 հազար հայ կա: Մարսելի մեջ 10 մարսելցիի վրա մեկ հայ կա. 10 մարսելցիից մեկը հայ է: 80-90 հազար կա: Մանավանդ, որ վերջին տարիներին եկան, նախ, Միջին Արևելքից՝ Սիրիայից, Լիբանանից, Թուրքիայից նաև 1955-ին: Այնտեղ նոր դեպքեր պատահեցին, շատերը գաղթեցին: Հետո հայեր, որոնք 1947-ին կամ ոմանք 1937-ին Հայաստան գաղթեցին, որոնց մեջ շատ-շատերը հոս նորից վերադաձան Մարսել կամ վերադարձան Ֆրանսիա: Հետո կա վերջին գաղթը Հայաստանից՝ 1990-ական թվականներից մինչև այսօր: Այդ ամբողջը եթե գումարենք, կարելի է ասել թե, իմ կարծիքով, 90-100 հազարի մոտ թիվ է Մարսելում:

Բայց երբ այսօր ցույց անենք Մարսելի մեջ ի նպաստ, ասենք, Ցեղասպանության, և այսօր՝ Արցախի նպատակի կամ Հայաստանի, կողք-կողքի բերելով էլ 1000 հոգի, 2000 հոգի կամ 800 հոգի հազիվ ստացվի: Դժվար է: Հիմա պիտի ասեք՝ ո՞ր են մյուս 80 հազարները: Այդ թվի մեջ շատ-շատեր ձուլված են:

Եվ ամենից վտանգավորը, որ կա սփյուռքի մեջ այսօր, լեզուն կորցնելն է: Լեզուն ի՞նչ է: Լեզուն արտահայտության մեկ միջոց է՝ ստեղծագործելու, գիրք գրելու, հաղորդակցության միջոց է: Այսօր, իսկապես, լեզուն նահանջում է ամեն տեսակետով: Առաջ այստեղ միայն հայերեն էինք խոսում: Ամեն տեղ հայերեն էր՝ բանախոսությունները, ճառերը, թատրոնները: Ամենը հայերեն էր: Բայց եթե այսօր հայերեն խոսեք, չեն հասկանա: Ամենավտանգավորը բանը, որ լեզուն նահանջում է: Այստեղ Մշակույթի տունը հիմնվել է 1976-ին: Այն ժամանակ բոլոր արտահայտությունները, ճառերը, հայերենով են, անշուշտ, թատրոնը՝ հայերենով: Նարեկ Դուրյանը մի քանի անգամ այստեղ է եկել, կամ ուրիշները՝ Վաչե Ատրունի: Քանի անգամ եկել է այստեղ: Հիմա եթե ասենք, որ եկեք, ոչ մեկը բան չի հասկանա, որովհետև հները հետզհետե մարում են, երիտասարդներն էլ չկան:

Բաժանում չկա: Բայց, ասենք, լիբանանցիները, նրանցից առաջ եկան թուրքահայերը 60-ական [խմբ. 1960-ական] թվականներին, այնուհետև եկան լիբանանահայեր, սիրիահայեր: Նրանք որ եկան, ավելի հայկական շունչ բերին: Հայախոս գաղութներ՝ թուրքահայ, սիրիահայ գաղութներ եկան: Ճիշտ է, որ այն ժամանակ քիչ ավելի կառույցները,

կազմակերպությունները առանձնացան այդ անդամներով, նոր ուժերով: Բայց մի քիչ իրենք իրենց շրջանակի մեջ մնացին: Բայց ավելի, որ եկան և իրենց շրջանակի մեջ են մնում, հայաստանցիներն են: Այնքան էլ չեն խառնվում: Խառնվում են, եթե հայաստանցիներին մի բան եղած լինի: Բայց խորքի մեջ այդպես են:

Մենք տեսնում ենք «arménien libanais, Arménien d'Arménie, du français à l'arménien»-ը [խմբ. լիբանանահայեր, հայաստանցիներ, ֆրանսահայեր] մենք ենք, բայց դա մի քիչ արհեստական բան է: Խորքի մեջ իմաստ չունի: Նրանք գալիս են այստեղ և խառնվում»:

«Համայնքը Ցեղասպանությունից հետո չէ, որ ձևավորվել է, դրանից առաջ այստեղ բնակչություն եղել է 17-րդ դարից՝ առևտրական կապերի զարգացման համար: Օրինակ, Պասկալ Հարությունը Ֆրանսիայի թագավորի առաջին վարչապետն է եղել: Բնակչությունը քիչ էր այդ ժամանակ և, բնականաբար, Ցեղասպանությունից հետո շատ եկան Մարսել, Լիոն, Փարիզ: Տուն չունեին: Որ եկեղեցի կառուցեցին Գրիգորիս սրբազանի հովանավորչության ներքո, կամաց-կամաց զարգացավ: Ֆրանսիացիները Բոմոնին ասում են փոքրիկ Հայաստան: Սկզբում ճամբարի պես էին այստեղ ապրում, բայց դա արագ փոխվեց, որովհետև իրար շատ էին օգնում: Օրինակ՝ պապիկս էլեկտրականությունից շատ լավ հասկանում էր, ինքն այդ հարցում էր օգնում բոլորին:

Բոմոնը շատ արագ են տները կառուցել՝ իրար օգնելով շինարարության հարցում, ջրի հարցում, շատ-շատ հարցերում: Գնում ցերեկը գործարանում էին աշխատում, վերադառնում և կառուցում: Կառուցեցին եկեղեցի, դպրոց, որը եկեղեցու ներսում էր գործում:

Տարբեր ճամբարներ էր: Հայերն այնքան շատ էին այստեղ՝ Բոմոն, Բուլվար Օդոդ, Սեն Ժերոմ, Սեն Լու, Պրադո, Սեն Անտուան, բոլորը սրբեր են, Պրադոն, Սեն Ժերոմը, Սեն Անտուան [խմբ. հիմա հայաշատ]:

Ջարդի ժամանակ եկած հայեր կան, հետո Լիբանանից են եկել, որովհետև պատերազմ է եղել, հետո Սիրիայից հայեր եկան: Այդ ամենը հերթով եղավ: Այնուհետև եկան Հայաստանի հայերը՝ պատերազմի, երկրաշարժի պատճառով, տարբեր խնդիրների: Նոր սերունդ մտնում է եկեղեցի, և, տեսնում ես, մի որոշ ժամանակ լիբանանահայերն են գալիս,

հետո՝ տարբեր: Անկախությունից հետո Հայաստանից նոր եկածներ կան: Սկզբում գալիս են եկեղեցի՝ մինչև փորձ ունենան, տուն, հետո մտնում են բնականոն կյանքի մեջ: Այդ ժամանակ շատ հեշտ է մարդկանց համար հեռանալ եկեղեցուց: Շատերը հեռանում են:

Մարսելում [խմբ. հայերը կազմում են] 80 հազար, կարծեմ»:

«Մարսելի համայնքը երևի ամենաբազմաշերտ սփյուռքն է: Ավանդական համայնք, ավանդական սփյուռք, ֆրանսահայեր՝ սրանք Ցեղասպանությունից հետո եկածների առաջին ներհոսքն է և սերունդը՝ ֆրանսահայերը: Մյուսը թուրքահայերն են, եկել են 40-ական [խմբ. 1940-ական] թվականներին: Կան սիրիահայեր, լիբանանահայեր: Եվ, իհարկե, ամենամեծ զանգվածը՝ դա հայաստանցիներն են, որոնք ևս շերտերի են բաժանվում՝ կիրովականցիներ, լենինականցիներ, արցախցիներ: Ամեն շերտ ունի իր կառույցը:

Ինչպես որ հայաստանցիների մոտ է, կառչած են իրենց պոլսական, սիրիական արմատներին, խոհանոցին, մշակույթին: Բայց նաև այդ մասսան ավելի քան 30-40 տարի է, որ այստեղ են ապրում աշխատանքային, ընտանեկան բնույթով, ներգրավված են և գրեթե ձուլված ֆրանսիական մշակույթին: Բայց ինքնությունը պահում են:

Եթե ինտեգրում կա, հիմնականում շերտերը զգացվում են, ամեն մարդ փնտրում է իր նմանին: Օրինակ, կիրովանկացիները Նոր տարին իրար հետ են նշում, լենինականցիները իրենց ռեստորաններն ունեն, իրենց խոհանոցը, թուրքահայերը՝ իրենցը: Բայց եկեղեցու շուրջ համախմբվում են տոներին: Հայաստանի շուրջ համախմբվում են և՛ վատ պահերին, և՛ լավ: Իսկ ինտեգրումն իրար մեջ, կարծեմ, ամուսնությունն է, և, չթաքցնենք, որ հիմնականում Հայաստանից է կամ հայաստանցիների հետ է, որ ամուսնանում են:

Ֆրանսահայերի սերունդը մեծամասամբ ձուլված է կամ խառնամուսնությունների է դիմում: Հայաստանցիների նոր ներգաղթյալները, նոր ասելով նկատի ունեն վերջին 20 տարում եկածները, փորձում են պահել, ամուսնանալ իրար մեջ կամ գնալ և Հայաստանից աղջիկ բերել, այսպես ասած, տղա էլ բերել, կան դեպքեր»:

«Ընդհանրապես, համայնքն այսպես մեծացել է, բնականաբար, Ցեղասպանությունից հետո: Դրանից առաջ եղել է հայկական ներկայություն: Դե, ինչպես ամենուր, այստեղ էլ եղել են քիչ թվով հայեր, բայց հիմնականում համայնքը սկսել է, այսպես ասած, մեծանալ 20-ական [խմբ. 1920-ական] թվականներին՝ 22-23թթ-ից [խմբ. 1922-1923թթ-ից] սկսված, այդ մեծ ալիքը, որ Ցեղասպանությունից հետո եղավ:

Ուրեմն մի գրություն ունենք այստեղ, որ Գրիգորիս եպիսկոպոս Պալաքյանի առաջին քարոզն է մեր Մայր եկեղեցու բացման առիթով, որ ինքը խոսել է, այնտեղ հիշատակում է, որ 1931 թվականին Մարսելի գաղութը ունի 25 հազար հայություն: Այսինքն այդպես հայաշատ է դարձել 1920-ականների ընթացքում: Մի քանի տարի առաջ անձամբ քաղաքապետն իրենց տվյալներով ինձ ասել է, որ Մարսելում ունեն 86 հազար հայ՝ պաշտոնական թվով, որի հետ այստեղի հայերը շատ համաձայն չեն, այդ թվում՝ ես էլ: Որովհետև նկատի չենք ունենում՝ բազմաթիվ, հազարավորներ գոնե (աչքաչափով եմ ասում հազարավորներ), շատերը ոչ թե քաղաքացիություն, այլ հայկական ազգանուն չունեն: Հիմնականում Թուրքիայից վերջին քառասուն տարի առաջ եկածներից շատ-շատերը չունեն հայկական ազգանուններ, բայց հայախոս են: Մի սերունդ կա, որ հայախոս, եկեղեցի հաճախող է: Շատերին եմ ճանաչում:

Օրինակ, Անատոլի գյուղերից եկած ընտանիքներ կան, իմիջիայլոց, այդ ընտանիքներից շատ են Հոլանդիայում, Ալմեյխոյում, Բրյուսելում, Բելգիայում, որ իրենց ընտանիքները, մեծերը քրդախոս ու թուրքախոս են, բայց երիտասարդ սերունդը քիչ, թե շատ հայկական դպրոցներ գնալու հնարավորություն է ունեցել: Ժամանակին Կ. Պոլսի Շնորհք Գալուստյան պատրիարքը իրենց մեծ մասին ուղարկել է կրթության Երուսաղեմ: Այնտեղ հոգևոր կրթություն են ստացել և այլն: Այլ հարց է՝ ով է շարունակել, ով՝ ոչ: Օրինակ, մեծ մասը, հիմա շատերին եմ ճանաչում, որ սարկավագներ են, բայց աշխարհիկ՝ ավելի: Այնտեղ ավարտել են, սարկավագի աստիճան ունեն: Եկել են, մեկը ջինս է կարել ժամանակին՝ 40 տարի առաջ, ընթացքում հարստացել են, շատացել են, և իրենց սովորությունը կա՝ նեղ ազգակցական ամուսնությունը, ապրում են թաղամասերով, լիքը զավակներով: Նեղ ազգակցական՝ նկատի ունեմ դեպքեր կա, որ երկու եղբայր ամուսնանում են երկու քրոջ հետ,

բացի այդ, չասեմ մորաքույր, համեմայն դեպս նույն ազգի, նույն ընտանիքի: Հիմա ես չեմ խոսում որպես հոգևորական, իմ տեսակետը չեմ ասում, ասում եմ փաստը, իրենց մոտ դա նորմալ է, ընդունված է, մի քիչ որ խորանանք՝ հենց գալիս է այդ Անատոլիի գյուղերի սովորություններից: Ասածս այն է, որ ճանաչում եմ նրանց և գիտեմ, որ նրանք հազարավորներ են:

100 հազար կան քաղաքում երևի: 150 հազար միշտ ասելով՝ նկատի ունեմ Մարսելն իր հարակից արվարձաններով, Ֆրանսիայի հարավը ավելի շատ: Այստեղ այլ հարց է նաև, թե 100 հազարից կամ 150 հազարից հայ լինելու զգացողությունը քանի տոկոսն ունի: Ինքնությունը՝ դա էլ է մեծ հարցական: Երբեմն ցնցումներից, աղետներից, պատերազմներից, Աստված չանի, տեսնում ենք մասսայական ակտիվություն: Կյանքին [խմբ. համայնքային կյանքին] ներգրավվածների թիվը անհամեմատ քիչ է: Այսինքն միգրացե այդ 100 հազարից 10 տոկոսը կամ մի քիչ ավել, ստատիստիկա [խմբ. վիճակագրություն] չունեմ, որ ձեզ ասեմ, բայց, համեմայն դեպս, շատ չեն այդ ակտիվները, որ անընդհատ հայկականության հետ են առնչվում: Ըստ իս՝ դրանք ասոցիացիաներին կապված մարդիկ են, տեղական կազմակերպություններին՝ սպորտային, մշակութային, կրոնական, իրենք՝ իրենց ընտանիքները: Դե սփյուռքում ինչն է քեզ հայ պահում. կանն այս եկեղեցին, կանն այս դպրոցը, կանն այս կազմակերպությունը, մի քիչ էլ խոհանոցը՝ ֆրանսիայում ավելի շատ: Ուրեմն այդ մարդիկ ինչքան են հաճախում այդ կազմակերպություններ, միջոցառումներին, հայկական իրադարձություններին իրենց ներգրավածությամբ, ես մասնագետ չեմ նմանատիպ բաների, միայն աչքաչափով եմ ասում:

Գիտե՞ք, այս երկիրը կատակով ասում են թոշակառուների երկիր է, որովհետև այստեղ երիտասարդները վազում են անընդհատ: Սիստեմն [խմբ. համակարգ] այնպես է, որ դու առավոտ շատ շուտ արթնանաս: Կյանքը շուտ են սկսում ֆրանսիացիները, և շատ պիտի այդ տեմպի մեջ մնաս: Իսկ թոշակառուները հնարավորություն ունեն: Ես՝ որպես հոգևորական սա լավ գիտեմ անձնական զրույցներից, երբ որ թոշակի տարիքն է գալիս, երեխաների հոգսեր շատ չունեն, տանը մենակ են մնում, արմատներին վերադառնալու փափագը երբեմն արթնանում է: Գալիս,

խոսում են՝ իրենց սիրտը բացում, հուզվում և ինչ-որ իմաստով երիտասարդ տարիների չարածը փորձում լրացնել:

Համայնքում բավականին շատ խառնամուսնություններ կան: Օրինակ, հայաստանցիները դեռևս, կարող են ասել, 95 տոկոս իրար մեջ են ամուսնանում կամ հայի հետ գոնե՝ կլինի ֆրանսահայ, պոլսահայ: Հայաստանցիները հիմնականում հայաստանցիների հետ են ամուսնանում, որովհետև հայերը շատ են այստեղ: Լուս Անջելեսի պես տեղ եք եկել, ամեն ինչ կա՝ խորովածը, ռաբիս երգիչները, մեր իմացած ժամանակակից հայկական հարսանիք անելու ամենահարմար տեղն է:

Գիտե՞ք ոնց է. այստեղ ֆրանսիական մշակույթը մի քիչ բարձր մշակույթ է, կարող է շատ բաներ մեզ դուր չի գալիս, բայց, օրինակ, եթե մարդը գնում է հուզարկավորության կամ գալիս է պատարագի, մարդիկ գիտեն, որ այդ «դրես կոդը» կարող է առօրյայում չզգաք: Օրինակ, եթե Շանգ Էլիզեով քայլես, կմտածես՝ ինչ փնթի տեղ ես եկել, բայց եթե մի կիրակի օր գաս պատարագի, երիտասարդ ֆրանսահայ տղան ամառ-ձմեռ գալիս է պատարագի կոստյումով, վերնաշապիկով, դասական հագուստներով: Հայաստանցին, որ մտնում է՝ սպիտակ սպարտիվով [խմբ. մարզահագուստ], շորտերով, ոնց որ պլաժ [խմբ. լողափ] կգնան՝ մանղալը բազաժնիկում [խմբ. բեռնախցիկ] դրված: Այդ փնթի վիճակով մտնում են եկեղեցի: Հիմա ղնց եք ուզում այս երկու մենթալիտետները իրար համադրեք: Նրանք էլ խոցելի են. նորեկը միշտ էլ խոցելի է լինում: Ես առաջին երկու տարում շատ խոցելի էի, հիշում եմ, որովհետև ամեն տեղ հայի խոսք ես լսում, ուզում ես մոտենալ, ծանոթանալ: Հիմա այդպես չեմ, 10 տարի է անցել, չեմ ձգտում, երբ խանութում մեկը հայերեն է խոսում, երբեմն անտարբեր եմ անցնում: Օրինակ՝ «Երևան սիթի»-ում [խմբ. սուպերմարկետների ցանց Երևանում] բոլորին բարևո՞ւմ ես, որ հայ են, Աստված իրենց հետ, չէ՞, քո առևտուրը պետք է անես, դուրս գաս: Բայց առաջ էդպես էր. մի տեղ հայ՝ վա՛յ դուք էլ եք հայ, մարդը մի տեսակ է նայում: Հա ի՞նչ կա դրա մեջ, հայ եմ: Ուրեմն այդ երկու մշակույթները իրար հետ չեն քայլում: Հայաստանցիները ինտեգրվում են, երբ լեզուն սովորում են, մինիմում երեք տարի պետք է գալիս, եթե սովորեն՝ նայած ինչ ոլորտում են աշխատում: Իսկ մեծ մասը մինչև կյանքի վերջ էլ չի սովորում: Եթե քահանա ես, չես կարող

չսովորել: Եթե ուզում ես ինտեգրվել, մի տեղ աշխատել՝ պետական կամ ոչ պետական, ստիպված ես սովորել, բայց եթե մի որոշ տարիք ունես, եկել ես, էլ չես սովորել, արդեն ուշ է, մի խոսքով, ինտեգրումը դժվար է:

Իմ սեփական նախաձեռնությունն է եղել՝ առաջ սուրճ էին տալիս պատարագից հետո: Համայնքը սուրճ է հյուրասիրում ներկաներին: Դե քսան հոգի ֆրանսահայ էին՝ կեսը վարչական, կեսը իրենց ընկերներն էին, գալիս էին խմում, ծխում, գնում էին իրենց տներով: Դե ես սկսեցի: Սկզբում, որ ուժս տեղն էր, ամեն կիրակի պատարագից հետո հայտարարում էի, որ ամեն հինգշաբթի եկեք հոգևոր զրույցի: Թեմաներով, ծրագրով մի քիչ սկսեցի աշխատել: Այդ հոգևոր զրույցների գալիս էին հայաստանցի՝ բացառապես նոր եկածները, որովհետև ես ֆրանսերեն չգիտեի: Ուրեմն զուգահեռ մի համայնք էր ձևավորվել քահանայի շուրջը՝ երկու տարբեր իրականություն: Երբ այս համայնքը ինտեգրվեց կամաց-կամաց ու իրանք սկսեցին գալ սուրճ խմել, այնքան եկան, որ սկսեցին գերիշխող դառնալ, ու մյուսները դուրս մղվեցին: Այս համայնքը շատ մեծացավ՝ 100-150 հոգի: Նման բան Եվրոպայում չեք տեսնի պատարագից հետո, այս հետնամասում սիրուն տարածք կա, մնում են 3-4 ժամ, տորթով գալիս տարեդարձ են նշում: Մեկ-մեկ կառավարումից դուրս էր գալիս իրավիճակը:

Այս համայնքում, անկեղծ ասած, բոլորն ասում են հայաստանցի ես, այստեղ խնդիր չունես, բայց էնպես չի, որ ֆրանսահայերը խնդիր ունեն, ու իրար հետ շատ լավ է: Ես՝ որպես հոգևորական անաչառ լինեմ. մյուս տեղերում հայաստանցիները, չակերտավոր ասած, նման արտոնություններ չունեն: Այնպես չէ՝ այստեղ շատ են արտոնությունները: Պատարագների 90 տոկոս հայաստանցիներ են գալիս, միայն մեծ տոներին են ֆրանսահայերը գալիս: Բայց պսակ, թաղում, մկրտություն՝ մեծ մասը ֆրանսահայերն են գալիս:

Ֆրանսահայի համար սա ավելի շատ ինքնություն է, մեծամասամբ՝ որքանով որ ես եմ շփվում իրենց հետ: Օրինակ իրենց պապիկը մահացել է, ինքը հայ էր, ինքը այստեղ է ամուսնացել, այստեղ է մկրտվել, հետո կարող է էլ իրենց չտեսնես: Ֆրանսահերը այդ կապով են կապված, մեծ մասամբ, խոսում ենք 90 տոկոսի մասին պայմանական: Հայաստանցի հայեր, որ գալիս են, առաջին հերթին, մի քիչ այստեղ շերտը

ավելի շատ է: Կան որ, օրինակ, Երևանից կամ Հայաստանի տարբեր քաղաքներից կամ գյուղերից եկել են, հավատացյալ մարդիկ են եղել՝ եկեղեցի հաճախող, անպայման, այդ իրանց պակասում է, իրենք լացում են, մտնում են, ուրախանում, հայտնաբերում են և իրենց ջերմ անկյունը գտնում: Իհարկե, փոքրամասնություն են իրանք, բայց կան: Մարդկանց մի մասը՝ մեծ մասը գալիս է, առաջին տեղը ուր գնա՝ եկեղեցի է գնում: Սա մի քիչ աջակցություն գտնելու, հայր հային հանդիպելու, նաև ինքնությունը պահելու այդ անձնային հարցն է, որ բերում է եկեղեցի, բայց ամենաշատը շահն է: Անկեղծ լինեմ, կարող է մի գործ գտնի, մի կայացած մեկից խորհուրդ հարցնի և այլն, և այլն: Այսինքն գիտեն, որ եկեղեցում իրենց կընդունեն, կօգնեն, լեզենդներ են պատվում: Իհարկե, ում ոնց կարողանում՝ օգնում ենք, բայց դժվար է: Եթե անտուն է մնացել, տուն չենք կարող տալ իրեն: Մեկին կարող ես մի քիչ գումարով օգնել:

Հիմա՝ այս շրջանում մի քիչ քչացել է դիմելը: Անկեղծ ասած, այն սկզբի տարիներին, որ այստեղ էի, 2018 թվականին, հենց հեղափոխությունից հետո կանգնեց, բայց դրանից առաջ շատ մարդիկ, շատ ընտանիքներ գալիս էին, և դա զգում էինք: Հիմա քովիդ, պատերազմ՝ լրիվ կանգնացրեց, սառացրեց այդ վիճակը:

Ես չեմ զգում հիմա, որ այնտեղից արտագաղթ կա, բայց նորից սկսել են: Չգիտեմ հիմա ուր են գնում, ուր են կարողանում գնալ: Համենայն դեպս, այստեղ ես շատ չեմ զգում: Այն ժամանակ դուք չէիք պատկերացնի ինչ էր: Մարդիկ այստեղ սննդի տեղերում էին աշխատում: Կամ բարեգործականները բերում այստեղ սառնարանն ուտելիք էին լցնում, որ մարդիկ գան օգտվեն: Իմ կաբինետից դուրս էի գալիս, որ, օրինակ, ջահել աղջիկներ, ընտանիքներ հագուստներ փորձեին, եթե իրենց հարմար է, վերցնեին գնային: Գալիս էին, ես իրենց առաջարկում էի այն, ինչի կարիքն ունեին: Մարդ կար, ասում էր՝ ամեն ինչի կարիք ունեմ: Նույնիսկ ես կամավորների հետ խումբ էի ստեղծել՝ սոցիալական հարցեր լուծելու: Բանուգործը թողնում ես ու նման բաներով էլ ես սփյուռքում զբաղվում:

Այստեղից ետ վերադարձ՝ Հայաստան կամ ուրիշ երկիր գնալ էլ է լինում, բայց ոչ շատ: Գիտե՞ք, Մարսելն ավելի ընտանեկան քաղաք է,

հեշտ է՝ համեմատ մյուս քաղաքների, բայց ուսանողական քաղաք չէ՝ Փարիզի կամ էքս ան Պրովանսի [խմբ. Aix-en-Provence] պես: Որ երիտասարդը որոշի այստեղից գնալ Անգլիա՝ կյանքը շարունակի, թատրոնի դասերի է մասնակցել Փարիզում, հիմա որոշել է երկիր փոխի: Այստեղ գալիս են հիմնականում, որ բարեկամ ունեն: Լուս Անջելեսի պես՝ այստեղ զարգանալու պերսպեկտիվա [խմբ. հեռանկար] չկա: Ընկեր ունեմ, որ Գեղարվեստի ակադեմիան ավարտել, եկել Մարսելի դիզայն-երական համալսարան է ավարտել, բայց ռեստորանում աման էր լվանում յոթ տարի: Հետո մի կերպ տեղավորվեց մի նորաբաց՝ ծովի վրա սարքած թանգարանում, հետո իրեն տրանսֆեր արեցին Փարիզ, համաձայնեց: Հիմա «Լուի Վիթոն» ֆոնդում է աշխատում՝ իր մասնագիտությամբ և այլն: Բայց յոթ տարի իր համար Մարսելում ոչինչ չկարողացանք անել:

Զգիտեմ, պետական, քաղաքական է խնդիրը է, թե՛ ոչ, բայց Մարսելը շատ մշակութային կենտրոն չէ, փորձում են դարձնել: Այստեղ տուրիզմն է զարգացած, ծովափ, սննդի ոլորտն է լավ աշխատում, մի երկու թանգարան կա, բայց Վան Գոգ և Պիկասո չես տեսնի»:

«Այստեղ շատ կազմակերպություններ կան: Մեր ծնողները եկել են այստեղ Թուրքիայից, ջարդերից հետո՝ 1922-23 թվականներին: Այստեղ տուն ու եկեղեցի են կառուցել, և եկեղեցու շուրջն իրենց թաղամասերը կառուցեցին: Մինչև այսօր դեռ կան հայկական թաղերը՝ օրինակ Բոմոնը, որ անվանում են փոքրիկ Հայաստան: Հիմա հայերի տները վաճառվել են, իրենց թոռները գնացել և ուրիշ վայրերում են ապրում: Հիմա ժողովուրդն այստեղ խառն է: Նոր եկած հայեր էլ են հիմնականում, ֆրանսիացիներ և ուրիշ ազգեր: Այլ հայաշատ թաղամասեր են նաև Սեն Ժերոմ, Սեն Անտուան, Սեն Լու: Որտեղ որ հայկական եկեղեցի կա, հայկական թաղամաս է: Այստեղ յոթ հայ առաքելական եկեղեցի ունենք: Մեկ հատ հայ կաթողիկե և երկու-երեք բողոքական եկեղեցի: Ամենամեծ մասը հայ առաքելական է:

1922-23թթ-ից առաջ այստեղ հայեր կային: Հայերը որ եկան, զինվորական մի վայր կար, որ ազատ էր, և ժողովրդին այնտեղ են ուղարկել բնակության: Անկախ Հայաստանի մի կոնսուլ կար՝ 1918 թվականի,

և այդ մարդը գումարներով այս հայերին շատ է օգնել տեղավորելու հարցում: Այստեղ գործազրկություն չկար, որովհետև պատերազմից հետո էր, որտեղ գործ է եղել, հայերը գնացել են աշխատելու և կառուցեցին իրենց տները:

Կազմվեց մի քանի ասոցիացիաներ՝ AGBU, այստեղի Դաշնակցությունը, JAF-ը, եկեղեցականների ասոցիացիաները:

Եկեղեցիների կողքն է եղել փոքր դպրոցներ, բայց մեկօրյա: Ես այնտեղ եմ գնացել: Այսօրվա պես չի եղել: Հիմա շատ մեծ դպրոց ունենք՝ Համազգային են ասում, Բոմոնում, աշակերտները բավականին շատ են և ամենօրյա է: Մարսելում միայն դա է, որ ամենօրյա է: Ուրիշ դպրոց էլ կա, որ 200 աշակերտ կա, բայց աշակերտները միայն Հայաստանից եկած ընտանիքների զավակներ են: Բայց զարմանալի է՝ խոսել գիտեն, կարդալ, բայց գրել չգիտեն, որովհետև ծնողները շփման մեջ հայերեն են խոսում, բայց իրենք գրել-կարդալ չգիտեն: Բավականին կան՝ փոքրից մինչև մեծ տարիքի: Ուրիշ բաներ էլ են սովորեցնում՝ գծագիր, ներկ, երաժշտություն: Այնքանով եմ զարմանում, որ Հայաստանից եկած ընտանիքներն ուզում են, որ իրենց երեխաները հայերն կարդալ-գրել սովորեն: Դա լավ է: Մենք չենք ուզում իմանալ պատճառը, թե ինչու են գալիս այստեղ, բայց չենք ուզում, որ գան: Եկողներին ասում ենք «բարի գալուստ», բայց ոչ սրտանց»:

«Այստեղից էլ արտագաղթ կա այլ երկրներ. հիմնականում ուզում են գնալ Կանադա, բայց շատ տեղյակ չեմ այդ ամենի մասին:

Տարբեր կերպ ենք մտածում [խմբ. ֆրանսահայերն ու հայաստանցիները]. մենք այստեղ ենք ծնվել, մեծացել, և նրանք այստեղ եկել են դժվարությամբ և փորձում են իրենց բարեկեցության մակարդակը լավացնել: Մտածում եմ՝ գուցե մենք ենք մեղավոր, որ իրենց չեն ընդառաջում, չգիտեն»:

«Անկեղծ լինեմ, այդ խնդիրը ծագել է իմ առաջ, երբ ես եկա ու հասկացա, որ Հայաստանի հայերը շատ դժվարությամբ են ինտեգրվում ֆրանսահայերի մեջ, բայց 20 տարում մեծ զարգացում ենք ապրել և հասկացել ենք, որ Հայաստանի հայերն էլ իրենց ներդրումն ունեն այստեղ, նաև փոխադարձ ամուսնություններով ինտեգրվում են: Եվ ասեմ,

որ Տեր Արամի շնորհիվ առաջին օջախը այստեղ է եղել՝ Պրադոյի եկեղեցին, որ եկեղեցու դռները բացեց նրանց առաջ, խորհրդի անդամներ դարձրեց: Ամեն դեպքում, կա մշակույթի տարբերություն, որովհետև մենք՝ Հայաստանի հայերս մի քիչ նուրբ չենք որոշ դրսևորումների մեջ: Հիմա արդեն կարողանում ենք խոսեցնել այդ երկու մշակույթները:

Հայաստանի հայերը ինքնուրույն ոչ մի կազմակերպություն չունեն, ինտեգրված են գոյություն ունեցող կազմակերպության մեջ: Գուցե չեն տիրապետում ճանապարհներին՝ ինչպես անել այդ ամենը: Այստեղ ադմինիստրատիվ պահը շատ բարդ պրոցես է. նախ, լեզվին պետք է տիրապետել, որ կարողանաս ղեկավարել կազմակերպությունը, բացի այդ էլ՝ արդյունք չի տա: Նորից զանազան է հայաստանցիների և ֆրանսահայերի համար: Հիմա այնպիսի պահ է, որ պետք է կարողանանք միաձուլել այդ երկու համայնքները:

Իրենց երեխաները կարողանում են լիարժեք ինտեգրվել: Հայերի ներուժն այդ առումով մեծ է: Ֆրանսիացիները բաղկացած են հազար ու մի շերտերից: Նկատած կլինեք արդեն, որ համայնքներ կան նույնիսկ երեք-չորս սերունդ հետո չի ընտեգրվում: Իրենց համար սա մի պետություն է, որտեղից կարելի է մաքսիմալ օգտվել: Մենք հայերով ունենք այդ ներուժը, որ կարողանում ենք ինտեգրվել օրենքներին, վարք ու բարքին, աշխատել, նվիրվել և, միևնույն ժամանակ, պահել հայերի ներուժը:

Այսպես կոչված, անօրինական բնակվողների շերտ ունենք, և այնքան կարևոր է իրենց ինտեգրել համայնքի մեջ: Շատ բարդ հարց է, թե ումից պետք է գա այդ նախաձեռնությունը, ինչ գործընթաց պետք է իրականանա, որպեսզի հնարավոր լինի ինտեգրել նրանց: Ես ինքս էլ երկար մտածել եմ, թե ինչ կարող եմ անել: Նախ, իրենք շատ են և իրենք էլ ցանկություն պետք է ունենան ինտեգրվել համայնքի մեջ: Այն պահից ի վեր, երբ հանդիպում եմ նրանց ոստիկանությունում, իրենց առաջ հայ է նստած, իրենց էմոցիոնալ գնահատականը այլ է: Երբ ֆրանսիացու առաջ են, լեզուն իրենց համար շատ մեծ խոչընդոտ է, որպեսզի այլ կերպ իրենց դրսևորեն: Գողություն են անում ֆրանսիացու մոտ, ոչ մեկ իրենց չի ճանաչում, իրենց լեզուն չեն հասկանում, իրենք կերպար են, որ ոչինչ չի ներկայացնում ֆրանսիացու համար: Հենց հայ է հայտնվում

իրենց մոտ, իրենք այդ ամեն ինչի զգացումն ունեն: Իրենց համայնք ինտեգրելով, իրենք կհասկանան, որ կարևոր են: Հայաստանը լքել են ինչ-որ պահի, բայց այստեղ իրենց ուրույն դերն ունեն:

Իրենք իրար մեջ փոքր, յուրաքանչյուրն իր մակարդակին հարիր ընտանեկան կապեր է ստեղծում: Հայաշատ վայրերում են ծագում բնակվել, որովհետև իրենց վստահություն է տալիս այդ միջավայրը, նաև անվտանգություն: Բոմոնում շատ հայեր կան, խանութներ: Իրենց պետք է, որ կարողանան իրենց փոքր աշխարհը ստեղծեն, օգտվեն իրենց խանութներից: Մեր նահանգները շատ մեծ են: Գուցե զանգեն ինձ մի 100 կմ Նիսի կողմից ու ասեն, որ հայ ենք բռնել, բայց Մարսելից է: Իրենք հեռանում են Մարսելի տարածքից, որպեսզի գնան գողություններ անեն, որ իրենց ոչ մեկ չճանաչի»:

«Կան Հայաստանից եկողներ, որ բնավ չեն հետաքրքրվում իրենց գործով, և կան, որ հետաքրքրվում և մասնակցում են: Հոս կտեսնեք նկարներ դպրոցից՝ քեմփի դպրոցից: 50 հատ հարսանիք է եղել: Դպրոցում կիրակի օրերը եկեղեցի է լինում: Աշխատում են, միլիոնից ավել գորգեր են պատրաստել: Եվ կարող եմ ցուցանել ձեզ մի քանի նմուշներ: Քանի որ Արևմտյան Հայաստանի շրջաններում օրինակ՝ Կեսարիա, տարբեր քաղաքներում բուն մասնագիտություն էին պատրաստում, ուրեմն շատ վարպետ էին: Աշխատեցին «Տապի Ֆղանսիան» [խմբ. Tapis Français - Ֆրանսիական գորգեր] ընկերության մեջ և շինեցին շատ-շատ գորգեր: Էսքիզները իրենց թոռնիկները մեզ են տվել: Մի քանի օրինակ դրինք, բայց շատ են»:

«Պատմությունը Մարսելի և հայերի միջև երկար պատմություն է, որ դարերի է գալիս: 13-րդ, 14-րդ, 15-րդ դարերում հոս առևտրականներ էին գալիս՝ Հայաստանից կամ Արևելքի կոմից: Հայեր էին գալիս և այստեղ առևտուր անում ֆրանսիացիների հետ կամ ֆրանսիական նավահանգիստների մեջ՝ Մարսել, Մոնպելյե, հետո գնում էին դեպի Իտալիա՝ Ջենովա, Լիվոռնո, և շարունակում էին: Այդ հարաբերությունները սկսվել էին միջնադարում՝ 11-12-րդ դարերում: Այդ թվականներում մեկ շատ հատկանշական կետ կա, որ 1672-ին հայկական մի տպարան հաստատվեց Մարսելում՝ Ոսկան վարդապետի հետ: Եվ այդ տպարանը

գործեց հիմնադրի ներկայությամբ երկու տարի: Երկու տարի հետո մահացավ, և իր տապանը հոս՝ Մարսել է, Մարսելի մայր եկեղեցու մեջ՝ Cathédrale de la Major, հոն է տապանը Ոսկան վարդապետի: Այդ տարիներում էլ հոս՝ Մարսելի մեջ իր հաջորդը, որ անունը Սողոմոն էր, իրեն փոխարինեց, այդ մի քանի տարիներին Մարսելի մեջ լույս տեսան տպագիր 18 գիրք: Հայերի և Մարսելի միջև կամ Պրովանսի միջև ամենից հատկանշական մեկ կետ է:

Հայկական տպարանը ստեղծվեց Վենետիկի մեջ 1512-ին. ոչ թե Հայաստանի մեջ, սփյուռքի մեջ: Երբ Լուիսենբերգը 1465-ին տպարանը հիմնեց, 50 տարի վերջը հայերն ունեցան իրենց առաջին տպարանը Վենետիկ: Միշտ սփյուռքի մեջ: Ոսկան վարդապետը, նախ, Փարիզ եկավ, Ամստերդամ գնաց, հետո՝ Փարիզ եկավ և Փարիզից Մարսել եկավ: Հոն տպես առաջին Աստվածաշունչը և նվիրեց Լյուդովիկոս 14-րդ թագավորին: Այդ տպարանի պատմությունը շատ հետաքրքրական պատմությունն է, որ Մարսելի և հայերի պատմության սկիզբն է:

Երկրորդը, որ հետաքրքրական է՝ սուրճը: Հայն է, որ առաջին անգամ Ֆրանսիայի մեջ՝ Փարիզ և Մարսել, որ սուրճը բերեց 1672-ին և անունը Պասկալ էր: Դրա մասին էլ բավական բաներ կա այդ գիրքի մեջ: Կարող եք գտնել՝ Մարսելի որ կողմն է, ինչպես է եղել: Փարիզ եղել է, Մարսել էլ եղել է: Այդպիսի հատկանշական բաներ կան Մարսելի պատմության մեջ:

Մինչև 20-րդ դարի սկիզբը, երբ զանգվածային գաղթեր, որ եղավ հետևանք հաջորդող տարների Ցեղասպանության, հետևանք նաև Հայաստանի Առաջին Հանրապետության անկումի՝ 1920թ. նոյեմբեր կամ 1921թ. փետրվարի վերջ, ժողովուրդը շատերը հոն եկան՝ գաղթեցին: Այդ ժամանակ մոտավորապես 10-15 հազար հայեր եկան Մարսել: Եկան Մարսել, ոմանք հոս մնացին, ուրիշներ գնացին դեպի Լիոն, դեպի Փարիզ, ուրիշները գնացին Միացյալ Նահանգներ և այլն: Բայց շատերը հոս մնացին: Եվ առաջին բազմանդամ գաղութը սկսվեց այդ տարիներին: Դրանից առաջ պստիկ գաղութ կար, բայց պատմաբաններն ասում են, թե որակով, հարուստ գաղութ էր: Բայց զանգվածային գաղթը սկսեց 20-ական խմբ. 1920-ական] թվականներին՝ 20, 22, 23 խմբ. 1920, 1922, 1923]: 22 թվականին է խմբ. 1922 թվականին, որ առաջին քեմիկերը, ինչ-

պես ասում են՝ ճամբարները հաստատվեցին: Ուրեմն, հայերը եկան, և շատ-շատերը Մարսելում մնացին և Մարսելի զանազան թաղերի մեջ հաստատվեցին: Ինչպե՞ս հաստատվեցին: Հաստատվեցին իրենց ծննդավայրերի բանով՝ հայրենակցական բանով: Օրինակի համար, նրանք, որոնք գալիս էին Կիլիկիայի շրջանից, նրանք ավելի շատ գնում էին Սեն Լուի շրջանի մեջ և այլն, և այլն: Այս ձևով իրենք կազմավորվում են:

Եվ առաջին միությունները, որ եղան, որ կազմավորվեցին, հայրենակցական միություններն էին: Այդ ժամանակ կար 10-20 հայրենակցական միություն: Առաջինը հայենակցականներն էին: Այնուհետև սկսեցին մարզական, քաղաքական, մշակութային կառույցներ: Եվ այդ ձևով սկսեց գաղութը կամաց-կամաց իր կառույցները հիմնել, կերտել: Եվ այդ առաջին տարիներին՝ 20-ականներից [խմբ. 1920-ականներից] մինչև 30-ական, 40-ական [խմբ. 1930-ական, 1940-ական] թվականներին հայերի վիճակը այստեղ այնքան էլ փայլուն վիճակ չէր»:

«Մենք ունենք ծանոթ, ով աղջիկ ուներ այստեղ, նա տուրիստական վիզայով է եկել, և եթե ոստիկանությունը նրան բռնի, անմիջապես ետ կուղարկի: 60 տարեկան կին է, ամբողջ ընթացքում վիճում, ասում է տունը փոքր է, չեն կարող ապրել միասին: Որոշեցինք օգնել, մեր տանն էր աշխատում, բայց հետո նորից խնդիրներ եղան, լեզու չգիտեր և չէր կարող այդ տարիքում սովորել, իսկ առանց դրա աշխատանքի չեն կարող մտնել: Առաջինը պետք է լեզուն իմանալ, նույնիսկ ֆրանսիացիները չեն կարողանում աշխատանք գտնել, շատ դժվար է: Երրորդը, Ֆրանսիայում շատ թանկ է ամեն ինչ, արժեքները շատ են բարձացել, նույնիսկ ոչ մեկն աշխատավորձով չի կարող բնակարան ձեռք բերել, փոքրիկ տուն կարող ես ունենալ, բայց խոնավ, կտրված, արաբների մեջ»:

«Ես չորս տարի աշխատել եմ Կարմիր խաչի փախստականների բաժնում, և հոսքը անհամեմատ իջել է՝ հայաստանցիների հոսքը:

Առանձնակի փոփոխություններ չեն եղել [խմբ. ֆրանսիական օրենքներում]: Ուղղակի մարդկանց գիտակցությունը, հայրենասիրությունն է բարձրացել՝ իմ անձնական նկատառումով, նույն ստատիստիկ [խմբ. վիճակագրական] տվյալներով: Չնայած կարող ենք ասել, որ թվերին կարող ենք վերագրել ինչ ուզում ենք, բայց եթե տեսնում ես, որ

երկու-երեք տարվա ընթացքում հոսքը կիսվել է, չնայած պատերազմական պայմաններին, առաջվա հոսքը չկա: Մարդիկ գալիս են, շարունակում են գալ՝ իքս պատճառներով, բայց առաջվա հոսքը չկա: Պատճառների մեջ, եթե վերլուծենք, միշտ նույն պատճառն է՝ սոցիալ-տնտեսականը: Պատճառի հիմքերը գուցե փոխվել են, ու մարդիկ այդ պատճառներին ուրիշ լուծումներ էլ են փորձում գտնել արդեն: Համենայն դեպս, ով որ գալիս է, փորձում է ինտեգրվել: Համ էլ հայրենասիրությունը փորձում են պահել»:

Համայնքի սոցիալ-մասնագիտական և տնտեսական կազմը

Քննարկվող առանցքային հարցեր. *հայերի զբաղվածությունը տնտեսական գործունեության ոլորտներում և փոփոխություններն ըստ ժամանակագրության, ձեռնարկատիրություն և ներգրավվածություն համայնքային կյանքում, սոցիալ-մասնագիտական խմբեր, շերտեր, կրթություն (կրթության նկատմամբ վերաբերմունք և կրթական շեմի փոփոխություններ):*

«Նախկինում այս վայրը կոշիկի, կահույքի ֆաբրիկաներ է ունեցել, մեծ մասն աշխատել է այդ մարդու մոտ՝ կահույքի ֆաբրիկայում: Հիմա, օրինակ, Վիկտոր քաղաքում է, կարծեմ, Մանուկ Եղիազարյան, իր անունով հրապարակ էլ կա: Իր խանութն է մեծ՝ հայերեն տառերով «Կազարյան» գրված: Իր մոտ են շատ աշխատել, մեր թաղի ժողովուրդը, տղամարդիկ այդտեղ են աշխատել՝ այդ կահույքի ֆաբրիկայում: Կրթված մասսա էլ է եղել, որ այն ժամանակ Մխիթարյանների մոտ են ավարտել, գնացել Փարիզ, սովորել, վերադարձել են: Քաղաքական դաշտում էլ են ակտիվ, օրինակ, իմ եկեղեցու վարչության ատենապետը՝ Կարո Հովսեփյանն է: Նա 15-16 տարի եղել է 13-14-ի քաղաքապետը [խմբ. Մարսելի 13-14-րդ թաղամասերի ղեկավար]: Իրենք քաղաքապետ են ասում, բայց թաղապետ է: Մարսելում շատ սիրված և հարգված է:

Հիմա երիտասարդներ կան, որ քաղաքապետարաններում են, քաղաքապետի առաջին խորհրդական կամ առաջին տեղակալ և այլն՝ վերջին 10-15 տարվա Հայաստանից եկածներ:

Նույնն է [խմբ. համայնքի նյութական բարեկեցությունը], ոնց որ մեր մյուս իմացած քաղաքները, երկները՝ նույն կերպ: Չափազանց հարուստներ էլ կան՝ անաստված հարուստներ, աստվածապաշտ հարուստներ, կան մարդիկ, որ նյութական կարիքի մեջ են: Իրենք ավելի շատ Հայաստանից վերջին շրջանում եկածներն են: Այս կամ այն թուղթը չունեն, որի հետևանքով որոշ բժշկական ծառայությունների համար պետք է վճարեն և այլն: Այսինքն չեն կարող օգտվել սոցիալական այս կամ այն փաթեթներից, որոնք գործում են»:

«Ամեն ոլորտում կան [խմբ. հայերը]: Ե՛վ գիտության մեջ, և՛ արվեստի: Առաջատար են:

Կան [խմբ. հայաստանցիներ], որ դեռ չեն կարողացել ամբողջ Ֆրանսիայի մակարդակով հասնել ինչ-որ բանի: Կան, որ այստեղ են հայտնի: Մենք հումորիստներ ունենք ֆրանսիացի՝ հայական ծագումով, որոնք ֆրանսիական հեռուստատեսության էկրաններից չեն իջնում»:

«Շատերը գործավորներ էին, արհեստավորներ էին: Շատ քիչ կային այն ժամանակ, որ ուսում ունեին և բժշկական կամ այլ ճյուղերի մեջ ասպարեզ էին ելնում: Այն ժամանակ մեծ մասը գործավոր, առևտրավոր, արհեստավոր էին, դերձակ, նպարավաճառ և այլն:

Երբ գաղութ եմ ասում, պետք է հասկանանք նրանք, որ առաջին տարիներին եկան՝ 20-ական թվականներ: Օրինակի համար ես, հոս իմ մեծ մայրս է եկել, մեծ հայրս, ամենը ջարդված էին: Մեծ մայրս եկած է, հայրս եկած է, ես կամ, իմ զավակներս կան այսօր և իմ թոռներս կան: Հինգերորդ սերունդն է: Արդեն երրորդ սերնդից սկսած, չորրորդ և հինգերորդ բոլոր հայերը իրենց համարում են ինտերնացիոնալ: Ընտրվել են ֆրանսիական ընկերության մեջ՝ «Société Française»:

«Ընտանիքներ են պահում [խմբ. հայաստանցիները], տան մաքրություն են անում կամ այստեղ ընտանիքներ ունեն, ընկերներ: Օրինակ՝ ընկերուիկս իր սկեսրայրին է պահում, դրությունը լավ չէ, և նեղվում է: Շատ փոքր սենյակ է, երկու երեխա կա, ամուսինը գնում աշխատում է, նա ամեն մեկի համար ճաշ է պատարաստում: Ֆրասիայի մեջ սա անընդունելի է:

Շինարարություն, արհեստներ [խմբ. հայերի զբաղմունքի ոլորտները]՝ դա այն դեպքում, եթե թուղթ ու գիտելիքներ չունես, բայց եթե ունես, կարող ես հարմար մի բան գտնել: Օրինակ ընկերուհիս ֆրանսերեն մաքուր խոսում է: Ֆրանսիացին շատ արագ տեսնում է, որ լոն և լան խառնում ես, արդեն աշխատանքն ավելի ցածր է լինում: Որովհետև գրավոր խոսքի հետ էլ ես գործ ունենում, և ֆրանսերենը պետք է շատ լավ լինի, չեն կարող աստիճաններ բարձրանալ: Ուրիշ բան չկա [խմբ. գործոն, որ կարող է չթողնել բարձրանալ սոցիալական աստիճանով], պետք է անպայման թուղթ ունենալ, բնականաբար: Ամեն մեկն իրավունք ունի իր տեղն ունենալ, եթե, իհարկե, գիտելիք ունի:

Տարիներ առաջ՝ մայրիկիս ժամանակ հայերին լավ աշխատանք էին առաջարկում, բայց հիմա ֆրանսիացիները հեռվից են նայում հայերին: Կարծում եմ, կապված է քաղաքականության հետ, որովհետև թուրքերին հաջողվում է Եվրոպայի աչքերը փակել, կարծես հիպնոս են անում: Շատ հեշտորեն կարող ես գնալ Ստամբուլ՝ առևտուր անել էժան: Այստեղից, որ գնում-գալիս են, շատ տպավորված են, ասում են շատ հյուրասեր են թուրքերը»:

«Համայնքը տնտեսապես վատ չի ապրում, ընդհանուր առմամբ: Այստեղ ունենք շատ հարուստ անհատներ, որոնց անունները բոլորը գիտեն՝ թե՛ հայ, թե՛ ֆրանսիական միջավայրում: Շատ հարուստներ, միջին խավ և, իհարկե, կան նորեկներ՝ շատ քիչ թվով, որ այդ տնտեսական վիճակին չեն հասել, որ ինքնուրույն կարողանան արժանապատիվ ձևով ապրել, բայց դա ժամանակի հարց է լինում, որպես կանոն, որովհետև պետությունը այդ հնարավորությունը սկզբից ստեղծում է՝ գոյատևելու գոնե, մինչ որ որ մարդը մի քիչ ճարպիկ գտնվի՝ սեփական կյանքը հոգալու:

Կարիքավորներ չունենք: Միշտ ասում են, որ Ֆրանսիայում սոված մարդիկ չկան, որովհետև պետությունը անվճար ճաշ տալիս է բոլորին, եթե մեկը կարիքավոր է, անպայման կարելի է գտնել սոցիալական կենտրոններ և օգտվել: Ընդհանրապես, դա խնդիր չէ:

Ես բոլոր մեծահարուստներին չեմ ճանաչում, չգիտեմ իրենք բոլորին են օգնում, թե՛ ոչ: Եթե հիմա նայենք մեր եկեղեցիներին, մարդ-

կանց մոտ այդ թյուրըմբռնումը կա, որ եկեղեցին ապրում է մոմի գումարով, բայց եթե անկեղծ լինենք, եկեղեցիներն ապրում են հարուստ մարդկանց տված նվիրատվություններով: Ենթադրենք, մեկը կտակ է թողնում, մյուսը՝ բնակարան, մեկը 50 հազար եվրո է թողնում կամ 10 հազար եվրո է նվիրում, որովհետև շատ թանկ է այս երկիր, հարկերը շատ թանկ են: Օրինակ՝ քահանային պահելը ամսական 2,5-3 երեք հազար ծախս է, մեծ ծախս է եկեղեցու վարչության վրա, և առանց այդ բարերարների նվիրատվությունների՝ ո՛չ եկեղեցին է ապրում, ո՛չ դպրոցը, ոչ մի կազմակերպություն չի ապրում: Անկեղծ ասած, չեմ կարող ասել, որ բոլորն են օգնում կամ բավարարված ենք այդ ամեն ինչով: Մեկը Ֆրանսիայի Համահայկական հիմնադրամի միջոցով կարող է՝ օգնում է Հայաստանին կամ Արցախին, իսկ մյուսը՝ տեղական կազմակերպություններին»:

«Հայաստանցի տղամարդիկ հենց գալիս են, փորձում են իրենց գտնել շինարարության մեջ: Շատ կայացած շինարարներ կան նրանց մեջ, որ իրենց փոքր սոսիետներն [խմբ. société-ընկերություն] ունեն, այսպես ասած: Նրանք երբեմն աշխատողի կարիք են ունենում և տարբեր միջնորդություններով իրար գտնում են: Այս առումով այստեղ շատ աշխատանք կա: Շատ արագ դրամ աշխատելու ձև է՝ շատ խելքին զոռ տալու, լեզու սովորելու կարիք չունեն. մի փոքր բառապաշարը հերիքում է նման մասնագիտությունը կիրառելու համար: Իսկ կանայք հիմնականում սկզբի համար տուն են մաքրում, ծեր կամ երեխա են խնամում: Դե սկզբից ամեն ինչ արվում է «սևով» [խմբ. չգրանցված], եթե թուղթ չունեն, լեզու չգիտեն: Հետո, որպեսզի դու կայանաս, թուղթ ստանաս, պետք է աշխատանքային պայմանագիր ունենաս: Օրինակ, մի մարդ է գալիս, ասում է՝ եկեղեցին կարո՞ղ է ինձ գումարով օգնել, ինՖարկտ տարած մարդ եմ: Հարցնում եմ՝ ո՞նց ես ապրում, ասում է՝ ընկերներիս մոտ: Մեկի մոտ ստացվում է գումար վերցնել, մյուսները խորհուրդ են տալիս: Կան հաշմանդամության դեպքեր, որ չես կարող չօգնել: Եվ մարդ կա ասում է՝ ես մուրացկան չեմ, ուղղակի ուզում եմ իմանալ եկեղեցին ինձ կարո՞ղ է օգնել, թե՛ ոչ: Լինում են երիտասարդներ, որ մտածում ես, լավ, եկել հասել ես Ֆրանսիա, բայց ու՞մ հույսով: Օրինակ, ես 300 եվրո տվե-

ցի, քանի՞ օր ես այստեղ ապրելու, ինչ է լինելու քո վերջը 10 օր հետո: Ցավոք սրտի, ամեն օր են նման դեպքերը»:

«Երբ որ մեր ծնողները եկել են, առաջին զավակներին փորձել են բժշկական կրթության տալ: Չունևոր ընտանիքների մեջ բժշկական պրոֆեսորներ ունեցանք, սրանց զավակները ավելի շատ առևտրով են զբաղվել, չեն շարունակել իրենց ծնողների գործը: Սոցիումն է փոխվել հիմա՝ ավելի շատ առևտուր, ինտերնետ: Ֆրանսիայում բժշկի պակաս կա, որովհետև շատ գումար չեն վաստակում, իսկ ամեն մարդ գումարի ետևից է գնում: Հիմա համեմատ մի քիչ հետ ենք գալիս դեպի մշակույթ, արժեքներ»:

Ընտանիք

Քննարկվող առանցքային հարցեր. *հայ ընտանիքի կառուցվածք, հարաբերություններ՝ անցյալի և ներկայի համեմատությամբ, խառնամուսնություններ՝ ընկալումներ և միտումներ, երեխաներ:*

«Հիմա շատ ցավալի պատկեր է՝ գոնե Ֆրանսիայի համար, չգիտեմ սփյուռքի մյուս բաժինները: Ես՝ իբրև երկու ծուխ ունեցող քահանա, մեծ մասը մեկ զավակ ունի կամ մաքսիմում երկու, մեծ թիվ են կազմում: Մեծ թիվ են կազմում նաև այն ընտանիքները, որոնք զավակ չունեն: Օրենքը թույլ չի տալիս, որ դու քո տունը վերցնես նվեր տաս բարեկամին: Տաս տարի է այստեղ եմ, չեն տվել որևէ բարեկամի: Մեծ մասը պետությանն է մնում: Մարդը այնպիսի էակ է, որ չի սպասում իր մահվանը: Մտավորականին էլ որ հարցնես՝ ինքը գիտի, որ վաղը արթնալու է անպայման ու լծվելու իր գործերին:

Շատ են [խմբ. միայնակ տարեցները, որ ծերանոցում են], մեծամասնությունը, բոլորը երևի, որովհետև տարեցի հետ, երբ նստած խոսում ես, գնացել ես տեսության տանը, ծերանոցում կամ հիվանդանոցում, նա ոչ մեղադրում է, ոչ ուրիշ ակնկալիք ունի, ասում են՝ նորմալ է, իրենք իրենց կյանքն ունեն: Ասում են՝ ոչ, իրենք երիտասարդ են, իրենց կյանքն ունեն:

Իրենք գիտեն, որ եթե առողջ չեն կամ ֆիզիկական խնդիր ունեն,

տարիքով են, մենակ չեն կարող իրենց հարցերը լուծել: Նման բաների համար կա երկու տեսակ ծերանոց՝ բժշկական թեքումով և ոչ բժշկական թեքումով: Հայաստանում, եթե մեկը իր ծնողին տանի ծերանոց չեն կարծում, որ հպարտ-հպարտ ման կգա, հանգիստ մարդկանց աչքերի մեջ կնայի: Երեք հոգուց երկուսինը հաստատ ծերանոցում է: Մեր համար դա խորթ է: Ես ամեն անգամ գնում տեսնում եմ, որ մարդը երեք տղա ունի, չորս աղջիկ, քառասուն թոռ, նեղվում ես: Մեկը ասում է՝ դու ինձ ավելի շատ ես զանգում, Տեր հայր, քան տաս-տասներկու թոռներս, կամ դուռը թակում ես, բացում է և սկսում լացել, ասում է դուռս քսան օր է թակող չի եղել՝ նամակ բերողից բացի:

Հիմնականում ֆրանսիացի երևի, տոկոսային չեմ կարող ասել, կես-կես կամ կեսից ավելի շատ [խմբ. ամուսնանում են ֆրանսիացու, այլազգիների հետ]: Հիմնականում մեր եկեղեցում՝ թե՛ հարսի դեպքում, որ հայ է, թե՛ փեսայի դեպքում: Հայն ասում է, որ պետք է գնանք մեր եկեղեցի: Մեր թաղում շատ կան հայ և իտալացի ամուսնացած: Ավելի շատ այստեղ ամուսիններն են հայ, այստեղ ծնված հայերի մասին եմ ասում: Իրենց կանայք հայերին վերաբերվող ամեն ինչ գիտեն՝ երգ, պար, խոհանոց, պատմություն և այլն, ոչ միայն լեզուն»:

«Նորերը, որ գալիս են, ամուսնությունները խառնամուսնություններ են, քան թե առաջինները. ֆրանսիացի, իտալացի, հիմա նույնիսկ արաբների հետ են ամուսնանում: Քահանաներին և եկեղեցիներին որ հարցնեք, խորհրդով չպետք է պսակեն, բայց հիմա օրենքին, ավանդույուններին հետևող չեն»:

«Եթե հայ տղան ամուսնանում է ֆրանսիացի աղջկա հետ կամ իտալացի, իսպանացի, շատ անգամ հանդիպում է, որ աղջիկն ուզում է հայերեն սովորել, պատրաստել, հայկան դպրոց տանել: Աղջիկները եթե ամուսնանում են ֆրանսիացի տղայի հետ, շատ քիչ ենք տեսնում դպրոցում: Հիմնականում ֆրանսիացիների հետ է ամուսնությունը, և իրենք հայկական համայնքային կյանքից դուրս են մնում»:

Հայերի ինտեգրումը երկրում

Քննարկվող առանցքային հարցեր. *հայերի կերպարի ընկալումը, ինտեգրման հաջողություններն ու դժվարությունները, ընդունող երկրի և հասարակության վերաբերմունքը, հայ համայնքի և պետության փոխհարաբերությունները:*

«Շատ-շատ սիրված են հայերը, մեծ հարգանք են վայելում՝ ուր էլ որ գնաք, իմանան հայ եք: Անպայման, արաբ կամ ֆրանսիացի լինի, ով որ լինի, ասում է, որ հայ ընկերներ ունի՝ մեկը բիզնես է անում, մեկը քաղաքական գործիչ է, մեկը քաղաքապետարանում է աշխատում:

Դե հներից է սկսվել այդ դրվածքը. հյուրասեր են, մարդամոտ, պաշտոնական շատ բաներ չունեն: Այստեղ չես կարող մեկին մոտենալ քո խնդիրն ասել, ասում է ներողություն, ժամանակ չունեմ կամ աշխատանքը վերջանում է, երկու բոպե է մնացել, քեզ չի ընդունում: Նույնը հայերի մասին չես կարող ասել, որովհետև հայերն ամեն միջոց գտնում են՝ օգնելու, օժանդակելու: Չէի ասի, որ փոխվել է, ավելի շատ այդպես են մարդիկ: Մեկը ասում է՝ ես հայ եմ, ինչպես կարող եմ գիշերով չգնալ օգնել, ես հայ եմ, հո ֆրանսիացի չեմ, ես պետք է ինձ նեղություն տամ: Սիրված ենք՝ ուր էլ որ մտնես, չես ամաչի, որ հայ ես: Իրենք էլ հակառակը՝ խոհանոցից մինչև Ցեղասպանություն տեղյակ են»:

«Հայերի համբավը մեծ է: Հայերի համբավը բարձր է, որովհետև այստեղի հայերը ամենը յուրովի մարդ են: 25 տարի ես ընտրվել եմ, [խմբ. որից] 16 տարի Մարսելի քաղաքապետ եմ եղել: Այնպես որ մեզ խոչընդոտ չկա: Հայերն էլ լավ անուն ունեն՝ պարկեշտ, աշխատող, ամեն մարզերի [խմբ. ոլորտների] մեջ: Մեկ առավելություն ունեցան հայերը: Ուզեմ եմ ասել, որ հաջորդ սերունդների հարցով առջընթաց կա:

Այն ժամանակ ամեն մեկը չէր գնում ուսումնարան: Ավելի ճրի են, օրենքներն ավելի նպաստավոր են այսօր: Հիմա կան նոր եկող հայեր, որոնք եկել են 20 տարի առաջ, իրենց զավակները կարող են բժիշկ լինել, փաստաբան լինել: Դյուրինություններ կան: Դա չկար մեր ծողղների ժամանակ: Մեր ծողղերը որ եկան, ո՛չ հայերեն գիտեին, ո՛չ ֆրանսերեն

գհտեին, ոչինչ չգհտեին: Նույնիսկ իրենց «աղտոտ հայեր» էին ասում: Այնքան էլ բաց ձեռքերով չընդունեցին»:

«Այստեղ հայերը հարստացան և մտադրությունները մի քիչ փոխվել է՝ եվրոպացիների պես, իհարկե, ոչ բոլորը: Երբ Հայաստանն անկախացավ, մինչ այդ հայերը սփյուռքում մի քիչ ուզում էին հայությունը պահել: Սովետական Միության ժամանակ գհտեինք, որ սովետ է և դրսում պետք է պահվի ինքնությունը, լեզուն: Բայց անկախությունից հետո, օրինակ, իմ տատը, պապը, ծնողներս պայքարում էին, բայց իմ սերնդից շատերը հարստացան և հեռացան եկեղեցուց, հայությունից:

Երկու մաս կա, որ պահում է իր հայությունը: Կան, որ սպասում են կյանքի վերջին տարիներին՝ 50, 60 տարեկանում սկսում են վերականգնվել, հիշում են, թե ինչպես էին խոսում իրենց տատերն ու պապերը: Իսկ առաջինները մշտապես Հայաստանի հոգսերով են ապրում, գնում-գալիս են: Օրինակ՝ մենք 14-15 անգամ գնացել ենք Հայաստան, մեկ տարի աշխատել այնտեղ, ընկերներ ունենք, տեր հայրերի ենք ճանաչում: Շատ տարբեր ոլորտներում ենք աշխատել՝ մշակույթ և այլն»:

«Կան մարդիկ [խմբ. պետական կառավարման մեջ]: Մարտելը 16 թաղամասի է բաժանված, որոնք զույգով բաժանված են խմբերի: Մեր տնօրենն այդ խմբերից մեկի փոխթաղապետն է՝ կրթության գծով: Երկար ժամանակով ունեցել ենք փոխքաղաքապետներ հայ: Հիմա էլ ունենք փոխքաղաքապետ անվտանգության գծով՝ Յանիկ Օհանեսյան: Մինչ այդ եղել է Դիդիե Փարաքյանը՝ համայնքում հայտնի, հարգված գործիչ: Ավելի բարձր մակարդակում ունեցել ենք արդեն լուսահոգի Պատրիկ Դևեջյանը, որ ժամանակին եղել է վարչապետ»:

«Այստեղ պետությունը հայամետ է: Հայերը լավ անուն ու հեղինակություն ունեն: Մի փոքր վերապահումով են հայերին մոտենում՝ լավ իմաստով: Իմ ֆրանսիացի հարևանները շատ սիրում են հայերին»:

«Եկեղեցին, կրոնական կազմակերպությունն առանձին գրանցված է մարզպետարանում՝ որպես կրոնական կազմակերպություն, մյուսները՝ կրթական, մշակութային, տարբեր կատեգորիաներով ու երբեմն ֆինասավորվում են: Կրոնը ընդհանրապես չի ֆինանսավորվում այս երկ-

րում, աշխարհիկ պետություն է, բայց մշակույթի տունը կարող է ֆինանսավորվել պետության կողմից՝ որոշ միջոցառումներ: Դու տարեկան հաշվետու ես իրենց, ներկայացնում ես, իրենք էլ մի փոքր, սիմվոլիկ մասնակցություն են ունենում: Այդ առումով նվիրատվությունները շատ ժխտ են, այսինքն պետության հույսին չեն ապրի:

Ճիշտն ասած, մի քիչ տեղյակ չեմ կրթությունից, որովհետև միակ դպրոցը Համազգայինն է: Գիտեմ, որ ֆինանսավորվում է, անհնար է չֆինանսավորվի, բայց դա վճարովի դպրոց է: Վճարովի է, որովհետև այստեղ կան մասնավոր և պետական: Այս մասնավոր դպրոցները սովորաբար լինում են կաթոլիկ, կարող է լինել նաև հրեական: Ամենաշատը կաթոլիկ դպրոցներն են, և ընդամենը մի հայկական դպրոց, որը շատ քիչ է: Եվ այդ մասնավորները հայտնի են իրենց բարձր մակարդակով: Իրենք հետևում են պետական չափորոշիչներին, բնականաբար, ոչ մեկ ինքնագլուխ իրավունք չունի: Այստեղ կրթությունը բարձրժողի վիճակի մեջ չէ, բայց շատ թանկ է, բոլորի համար հասանելի չէ և մի քիչ էլ ինքնաֆինանսավորվում են:

Իսկ ինչ վերաբերվում է մշակույթին, կա հատուկ կառույց, որը սուբվենցիաներ է հատկացնում: Մշակութային տարբեր կենտրոնների տալիս են, ենթադրում եմ՝ հավասարապես բոլոր փոքրամասնություններին: Ես շատ տեղյակ չեմ մյուսներից, ուղղակի գիտեմ, որ այդ կառույցները օգտվում են պետական սուբվենցիաներից: Այստեղ մեծ մշակութային կենտրոններ կան հայկական, մեկը կոչվում է JAF: Մարսելի ամենամեծ, ամենակտիվ մշակութային կառույցը դա է: Իրենք մեծ պարախումբ ունեն, օրկեստր, երգչախումբ և շատ ակտիվ են ընդհանրապես: Վերջերս իրենց հրավերով «Բարեկամություն» պետական անսամբլի համերգն էր այստեղ: Իրենք ժամանակին համագործակցել են Վանուշ Խանամիրյանի հետ, կապի մեջ եղել: Շաբաթ օրն էլ հենց Վանուշ Խանամիրյանի անվան պարի դպրոցի 20-ամյակին նվիրված միջոցառում ունեն և ցուցահանդես դեկտեմբերի 17-ին:

Շատ միջոցառումներ ունենք հայկական՝ մեկը մյուսի հետևից, որ երբեմն զուգադիպում է ամսաթվերը: Դժվար է մարդ հավաքելը: Հիմա գիտեք ռիսկ է, ես ձեզ անկեղծ ասեմ, եթե գա Արմենչիկը, մեր սրահները չեն հերիքի, մի մեծ պետական տեղ պետք է վերցնես ու քեֆ անես, բայց

երթե գալիս են հրաշալի տիկնիկագործներ, մեկը, որ պիտի Նարեկացի ասմունքի, Չարենց և այլն, այդտեղ լուրջ պրոբլեմ ունենք: Մարդիկ շատ ռաբիս, դեգրադացված են դարձել: Դա ընդունեցինք այս պատերազմից հետո, որ բոլոր ոլորտները նեխած, փչածած են»:

«Հայեր որ ասում ենք, մի պատկերացրեք, որ դա կոլեկտիվ ծրագրավորված բան է, անհատներ են, որ կան թաղապետարանում: Օրինակ, որ քաղաքապետը ընտրվեց, կարող է պատահի, որ ընտրության ցուցակի երրորդ համարը հայ է: Կարող է մարդը ուղղակի այդ կուսակցությունից է և ընտրվել է: Այլ բան է, որ նա շատ հանգիստ հրավիրվում է հայկական կազմակերպությունների կողմից, հնարավոր է՝ իր միջնորդությամբ քաղաքապետը գա: Դա լավ ազդեցություն կունենա: Փառք Աստծո, կան նման վայրերում լավ մարդիկ, դա ծրագրված հայկական բան չէ, միանշանակ:

Մեր մեջ չկա, որ ինչ-որ մեկին, ընտրեն, աճեցնեն: Միգուցե լիներ՝ ավելի լավ կլիներ, միգուցե այսպես էլ է լավ: Որովհետև կոմունիտարիզմը՝ դա դատապարտելի երևույթ է ֆրանսիական մենթալիտետով, իսկ, մի մոռացեք, ֆրանսահայերը՝ դրանք ֆրանսիացիներ են: Որ ասում ենք ֆրանսահայ, պատկերացրեք ֆրանսիական մենթալիտետ, ոչ թե հայկական: Հայկականն իրենց արմատն է, իրենց մշակութային կապը, հավատքն է, բայց իրենք աշխարհիկ ֆրանսիական մարդիկ են մեծանում մեծ մասը:

Տեսեք, օրինակ, ինչ մակարդակի շահերի սպասարկման մասին է խոսվում. ես գիտեմ, որ օրենքից դուրս ապրելը ինչ-որ մի աստիճան հանդուրժվում է Ֆրանսիայում: Այո, մարդը կարող է խանութից մի բան գողանա՝ դրանով իր կյանքը ավելի բարելավի: Հիմա, բարեբախտաբար, նման բաներ չենք անում, բայց լսում ենք, գիտենք, որ, օրինակ, գողացած հագուստ բերեն՝ իրար մեջ վաճառեն ավելի էժան: Մարդիկ կան, որ քննադատում են, որ գողություն են անում. «Մենք եկանք, քրտինքով աշխատեցինք, նրանք բանտում չեն՝ դա անելով»: Բայց այնպես չի որ, իրենց մի վարկյանում բռնում, դեպորտ են անում. սահման կա, սա շատ ուժեղ պետություն է, իրենք ունեն ինֆորմացիա, մեխանիզմներ՝ այդ ամեն ինչը զսպելու համար: Կարող է երեսիդ ժպտա, բայց

մերժման թուղթ տա 10 տարի շարունակ: Ինձնից 20 տարի առաջ է եկել, ինքը թուղթ չունի, ես ունեմ. դա ինչից է:

Բայց, անկե՞ծ ասած, այստեղ մեծ վտանգներ չեն տեսել: Օրինակ, պատերազմի օրերին գիշեր-ցերեկ մեր եկեղեցում տղամարդիկ էին, որովհետև հումանիտար օգնություն էր հավաքագրվում: Ամենաարագներից մեկը մենք ենք եղել, երկու ինքնաթիռ մենակ եկեղեցում հավաքված օգնություն է գնացել Հայաստան, ընդ որում՝ մեկը առաջին շաբաթվա մեջ է եղել: Շատ արագ մոբիլիզացվեց: Ես այդքան հայ Մարսելում չէի տեսել՝ համախմբված գիշեր-ցերեկ: Եթե վտանգ կա ու իմ նման մեկին նեղացրել են, ոնց է Հայաստանում, այստեղ էլ այդ մասսան կա անպայման, դա միայն դատապարտելի երևույթ չի, ինչ ասեմ, թասիբ է և այլն: Մարսելում կա այդ աշխարհը, շատ չեմ շփվում, բայց չակերտավոր հեղինակություններ, այդ աշխարհի ներկայացուցիչներ տարբեր տեսակի մարդիկ են գալիս եկեղեցի: Շատերն ասում են, որ մարդիկ գալիս քո հետ ուրիշ կերպ են շփվում, դու իրենց իրական կյանքում չես ճանաչում: Իրոք, ես դրսի կյանքի մեջ գրեթե չկամ, իմ կյանքը անցնում է այս գրասենյակում, եկեղեցում, երբեմն մարդկանց եմ այցելում: Դրա համար ես մարդկանց տեսնում եմ, թե իրենց ոնց են պահում եկեղեցում: Ժամանակին այստեղ երիտասարդաց միություն ունեինք, ջահելները գալիս ասում էին՝ «Տեր Հայր, դու այդ մարդուն դրսում չես ճանաչում, ինչու՞ ես ...»: Ինձ ուզում էին հուշել, որ նա լավը չի, բայց, ինչ ասեմ, մարդը գալիս, խելոք հոգևոր գրույցը լսում, գնում է: Իմ գործն իրեն դաստիարակելն է, թե՛ դատելը:

Պետությունը նման հարցերում մի քիչ հեռվից է նայում. իրար ջարդեն, վերջում նոր գնա որոշի: Այստեղ պատերազմից հետո օրեր անց, երեկոյան ժամի, քովիդի հետ կապված հատուկ պարետային ժամ էր, բայց մի դաշնակահար տղա կար, իր հետ միասին մեծ դահլիճում էինք, դրսի կողմից կրակել էին ապակուն՝ որսորդական հրացանի կրակոց էր ու շատ հեռվից: Մարսելում կատակ են անում՝ մինչև մեկը չմեռնի, ոստիկանությունը չի գա: Օրական հազարավոր գողություններ է լինում»:

«Ֆրանսիայի պետության քաղաքականությունը կրթության հարցում, իհարկե, խիստ է: Բայց չեմ ասի, թե շատ է միջամտում մեր գործե-

րին: Օրինակ, ես պետական աշխատանք չունեմ, դպրոցից եմ ստանում աշխատավարձս: Որպեսզի մենք մեր ծրագիրն ունենանք, հստակ լինի, վտանգված չլինի, որոշում եղավ, որ դրսից չպետք է լինի տնօրենը: Դա մեր վարչության որոշումն է: Այնպես որ բավականին ազատ ենք: Մարսելի Համազգային դպրոցը ո՛չ կաթոլիկ շրջանակում է, ո՛չ լայիկ [խմբ. laïc - աշխարհիկ] շրջանակում: Երբեմն դժվար է լինում, որովհետև օգնություն չկա:

Սա բավական հետաքրքիր պատմություն է: Առաջին անգամ լինելով պոլիվե [խմբ. privée - մասնավոր], դպրոցները պետական քնություններ ունեցան: Եվ ինսպեկտորները [խմբ. inspecteur -տեսուչ] կանչեցին բոլոր դպրոցներից, և ոչ մեկ չուզեց առաջինը լինել: Եվ ինձ կանչեցին քովիդից հետո, ասացին, որ շատ են ուզում մեր մասնակցությունը: Ասացի՝ լավ: Ոչ մեկ չգիտեր, թե դա ինչ է: Պետք է իրենց բացատրեի, թե ինչն է մեր ընդհանուր առաքելությունը, հեռանկարը, ծրագրերը, անշուշտ, նաև մեր արդյունքները, ինչպես նաև դժվարությունները, հնարավորությունները, ես՝ իբրև տնօրեն ինչպես կարող եմ ամեն մեկին աշխատանք տալ, ընդունել, հետևողական լինել: Ես այս ամենն իրենց բացատրեցի, թե ինչպես է արվում: Մեր ուսուցիչները միայն մեր դպրոցում չէ, որ դասավանդում են: Ես կազմեցի սա, կարդավ տվեցի տարբեր մարդկանց: Ասացին, այո, մեր պատկերացրածն է, ուղարկեցի, և եկան երկու ինսպեկտորներ: Ես հարցրի, թե քանի դպրոց են մասնակցել, ասաց որ միայն մենք ենք: Այսքան բան որ կազմեցիք, ուրիշ դպրոցները պետք է գործածեն: Ինձ համար սա շատ լավ առիթ էր, ես դպրոցը գիտեի, բայց ամբողջացրած չէր: Խնդիրները գրել սովորեցի, և կարդաց օտար մեկը, որոնք են մեր դժվարությունները՝ միայն մեկ դասարանով ուսուցիչ բերել, հայերենի մասին, տարբեր կետեր կային: Եվ այս մարդն ինձ ասաց. «Գիտե՞ք, դուք «սոլո-սոլո եք» [խմբ. առանձին]՝ ո՛չ կաթոլիկ, ո՛չ լայիկ, ո՛չ հրեա, ո՛չ մուսուլման»: Այո, մենք անկախ ենք:

Դժվարություն կա նաև նրանում, որ մենք ազատ ենք, բայց հայկական ծրագրերի հարցում առաջնորդ չկա, ես եմ: Իմ հայերենը լավ չէ: Ես անգլերենի ուսուցիչ եմ եղել և գիտեմ պահանջները: Ես մեր ուսուցիչներին ասացի, որ բոլոր օտար լեզվի պահանջները նույնը լինեն՝ այդ թվում և անպայման հայերենինը»:

«Մեր այստեղի նախագահուհին ընտրված է քաղաքականության մեջ: Հայրը ֆրանսիացի է, մայրը՝ հայ, երեք աթոռ ունի՝ մարզ, քաղաքապետարան, քաղաքապետ, իր փոքրիկ թաղի քաղաքապետն է: Հայրը դաշնակցական էր, բայց աղջիկը հայերեն չգիտեր : Այս ամառ ընկերների հետ գնաց Հայաստան: Առաջին անգամ գնացել էր ծնողների հետ, երբ որ երիտասարդ է եղել: Իր ֆրանսիացի բարեկամը շատ զարմացած էր Հայաստանից, լավ տպավորություն ուներ»:

«Այստեղ պետական սիստեմ մտնելու համար, նախ, պետք է քաղաքացիություն ունենալ: Երբեմն, անօրինական կարգավիճակ ունենալով, դժվարանում են քաղաքացիություն ձեռք բերել, դրանից ելնելով չեն էլ պատկերացնում, որ կարող են պետական սիստեմ մտնել: Պետք է լեզվին, բնականաբար, լավ տիրապետեն:

Տեղացի հայերից շատ կան: Առաջին անգամ, երբ ես մտա նահանգապետարան, միջանցքներով քայլում էի, շատ դռների վրա հայի ազգանուն էի կարդում:

Ֆրանսերեն խոսելուց մի փոքր ակցենտ ունեմ, բնականաբար, դա չի անցնում, նույնիսկ լոգոպեդի մոտ եմ գնացել, որպեսզի վերացնեի ակցենտս, բայց նա ասաց, որ մինչև ութ տարեկան արդեն ձայնալարերը կառուցվում են և դա փոխելը շատ դժվար է: Իսկ հիմա այն դարձել է իմ այցեքարտը:

Նահանգապետը նույնպես ծագումով հայ է, նա շատ նվիրված է հայ համայնքին, ի դեպ: Վերջերս Արցախի նախագահին էր ընդունել, նյութական մեծ օգնություն էր ցույց տվել:

Անշուշտ, անձի ներգրավվածությունը պետական համակարգում չպետք է կողմնապահություն ենթադրի, դա դու պետական աշխատող ես: Բայց, ես ձեզ ասեմ, բոլոր կազմակերպություններն օգնություն ունեն պետական կառույցներից՝ լինի շրջանային կառույց, նահանգային կամ դեպարտամենտալ և հետո քաղաքապետարան: Շրջանային կառույցն իր մեջ ինտեգրում է մի քանի դեպարտամենտ: Մեր դեպարտամենտն այստեղ Մուշ գյուղ ունի հարավի շրջանում, որտեղ ես եմ բնակվում: Ու իրենք շատ մեծ օգնություն ցուցաբերեցին Արցախյան պատերազմից հետո, նաև վերջերս, երբ Հայաստանի վրա հարձակում էր

եղել: Մեր նահանգապետարանի Ֆրանսիայի դրոշի կողքին նաև Հայաստանի դրոշն է ու մեծ աֆիշայով գրված է, որ Ֆրանսիան իր աջակցությունն է ցուցաբերում Հայաստանին:

Եթե Մարսելում ֆրանսահայերից խոսենք, այսօր, օրինակ, ունենք մի կարկառուն դեմք, նա մի քանի պաշտոն ունի քաղաքապետարանում (քանի որ Մարսելը 10-11 սեկտորի է բաժանված, Հայաստանի թաղապետի պես է) փոխթաղապետ է: Ինչպես ասացի, շրջանային կառույցում պետական խորհրդական է: Քաղաքապետարանում, եթե չեն սխալվում, քաղաքային ապահովության հարցն է իր պատասխանատվության տակ: Նա երբևիցէ ժամանակը չի խնայում, որպեսզի, ինչը Հայաստանին է վերաբերում, նիստերի ժամանակ խոսում, ներկայացնում է թեմաները: Նա մեծ ներդրում ունի նաև համայնքային կյանքում, քանի որ հարավի ՀԲԸՄ Նախագահն էր, իսկ պետական կառույցներում իրենք հիմնականում օգնություն տալիս են:

Վերջերս Համազգային դպրոցը պետք է մի փոքր ընդարձակվի, շինարարություն է ընթանալու, պետական կառույցներն են օգնություն տվել: Ցանկացած կոթող, որ այստեղ կառուցվել է, պետական ֆինանսավորում կա: Ինչքան գիտեմ՝ մեկ տարի հետո մեր եկեղեցին պետք է վերանորոգվի, քանի որ հատակը վնասվածքներ ունի, ամրացվելու կարիք կա: Դրան էլի պետական աջակցություն է տրվում:

Բոլորի համայնքների հանդեպ է այդպես, բայց մի փոքր նախասիրություն կա հայերի նկատմամբ: Ամեն դեպքում, Ֆրանսիան՝ քրիստոնյա երկիր լինելով, քրիստոնյաների հանդեպ ուրիշ վերաբերմունք ունի»:

«Հայերն այստեղ լավ համբավ ունեն: Առաջինը, ինձ թվում է, հայկական խոհանոցն են նշում, նաև այն որ հայերն ինտեգրված են և միշտ աջակցում են, լավ քաղաքացիներ են Ֆրանսիայի համար:

Ամենևին չի փոխվել [խմբ. հայերի կերպարը վերջին շրջանում]: Գուցե հայաստանցին, հայը իրար մեջ դնեն այդ բաժանումը և դա զգան, բայց Ֆրանսիան և ֆրանսիացին չի զգում դա, և հայերը ամենուր լավ համբավ ունեն:

Եվ դա թույլ է տալիս, որ հայկական շահը բարձրանա: Վերջին պատերազմի ժամանակ շատ էին ֆրանսիացի հարևանները, ովքեր մո-

տենում էին ինձ և հարցնում՝ ինչով կարող են օգնել (հագուստ, ֆինանս, սնունդ): Շատ հարևաններ ունեմ, որ ասում են շատ են սիրում Հայաստանը: Ջարմանում, մտածում եմ ծագումով հայ են, բայց, ոչ, պարզապես սովորել ու շփվել են հայի հետ ու երագում են Հայաստան այցելել»:

«Այդ առաջին սերունդ, պայմանական ասված, Շառլ Ազնավուրի սերունդն այնքան հաջողված է, որ դեռ շատ չի փոխվել [խմբ. հայերի կերպարը]: Բարեբախտաբար, ցանկացած միջավայրում այս տաս տարվա մեջ մեկը, որ լսել է, որ ես հայ եմ, վերաբերմունք է փոխվել: Նույնիսկ դա եղել է մետրոյում, ջեբկիրը, ով ուզում էր ինձնից ինչ-որ բան գողանալ, կանչեցի, անունը հարցրի, ասեցի, որ հայ եմ, ասեց ներողություն և գնաց:

Կերպարը բավական լավ է, իմ կարծիքով, թեև, գուցե, մարդիկ լինեն համաձայն չլինեն մեզ հետ: Մի 30 տարի առաջ եկածները ասում են՝ մենք եկանք սկսեցինք աշխատել, այս նորերը եկել գողանում են, նորեկներին չեն ընդունում:

Հայերին շատ են սիրում, որովհետև հաջողված հայեր կան շատ: Օրինակ, Մարսելում միայն Շառլ Ազնավուրին չեն ճանաչում, տարբեր ոլորտներում շատ հաջողված հայեր կան, բժիշկներ՝ թե՛ հներից, թե՛ նորերից: Քաղաքականության մեջ մարդիկ կան: Ամեն ոլորտում հայ կա ու հաջողված:

Այստեղ Հայաստանի տեղը հաճախ չգիտեն շատերը, գիտեն, որ արևելք է, կա, որ մի քանի անունների հետ են ասոցացնում, կա, որ գիտեն հստակ տեղը»:

«Լիարժեք կարող եմ ասել, որ շատ սիրված են հայերը: Ի վերջո 5 հազար կմ կտրել եկել ես և ուզում ես արմատներ գցել, միևնույն է, չես լինի այն բարձրության, ինչպես այստեղ ծնված-մեծացած ֆրանսիացին, ով իր լեզվին 100 տոկոս տիրապետում է: Ես մինչ օրս զարմացած եմ, թե ինչքան մեծ սիրով են ինձ ընդունել: Հայը սիրված, նվիրված է Ֆրանսիային, մեր համայնքը բաց է, մենք գրկաբաց ընդունում ենք ֆրանսիացուն:

Հիմա շատ են անօրինական եկողները, բայց, միևնույնն է, հայերի կերպարը փոխված չէ, գուցե այնքան ծանրակշիռ է գնահատականը: Հուսամ՝ դա երբեք չի փոխվի: Չնայած՝ դեպքեր լինում են»:

«Երբ որ մենք եկանք, ծնողներս ասում էին, որ եկաք Ֆրանսիա, ուշադիր եղեք՝ մեզ ընդունում են, որ ձայն չհանենք: Մենք ցույցեր սկսեցինք 1965 թվականին: Հիմա նոր եկողները Գնում եք շուկա, ազատ հայերեն են խոսում: Ես որ գնում եմ, ինձ թվում է Վերնիսաժն է: Լսում եմ, բայց չեմ խոսում իրենց հետ: Իրենք շատ ազատ ցույց են տալիս իրենց հայկականությունը: Հիմա ժողովուրդը սովորել է, գիտեն, որ հայերը մյուս ազգերի պես չեն՝ աշխատող են, մաքուր, երեխաներին լավ խնամում են: Փողոցում տարբերում են հայերին այլազգիներից: Դա այն բանի շնորհիվ է, որովհետև հայեր ունենք, որ Ֆրանսիայում լավ անուն են ունեցել և գիտեն, որ հայը մաքուր մարդ է: Հազվագյուտ է, որ կհանդիպես գող, ավազակ հայի: Հայը լավ էթիկետ ունի»:

Բ. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

Համայնքի կառույցներն ու իրադարձությունները

Քննարկվող առանցքային հարցեր. *համայնքի կառույցներ և կազմակերպություններ (կրոնական, մշակութային, բարեգործական, քաղաքական և այլն), համագործակցություն նրանց միջև, հիմնական սոցիալական և մշակութային միջոցառումներ ու իրադարձություններ, նախաձեռնություններ, սոցիալ-մշակութային կյանք, համայնքի ներգրավվածություն և համախմբում:*

«Մարտելում շատ հայկական կազմակերպություններ կան, բայց երևի ամենախոշորը մերն է՝ JAF-ը և նաև Համազգային դպրոցը:

Ի սկզբանե մեր կազմակերպությունը ստեղծվել էր որպես մշակութային կազմակերպություն: Հիմնականում երիտասարդներ են: Սա երիտասարդական կազմակերպություն է: Այստեղ գալիս են երեխաները 5 տարեկանից: Մեր վարչական խորհուրդը անպայման պիտի երիտասարդ լինի, նախագահը պիտի երիտասարդ լինի, որովհետև երիտասարդական կազմակերպություն է: Իրենք 20-30 տարեկան են:

Երկու մեծ այլք եղավ հայաստանցիների՝ մեկը 90-ական [խմբ. 1990-ական] թվականներին, մյուսը այս վերջերս: Երբ ես եկա այս կազ-

մակերպություն՝ 2000թ-ից եմ այստեղ աշխատում, ամեն երկրորդը ֆրանսահայերի դասական սփյուռքի ժառանգներ էին: Հիմա 60 տոկոսը հայաստանցիներ են: Հիմա այդ երեխաները բերեցին իրենց հետ, վերակենդանացրին սփյուռքը, որովհետև մնացել էին հին բաների վրա: Մի տեսակ ավելի հայկականացրին սփյուռքը: Անսամբլի մեջ կեսը հայաստանցիներ են կամ հայաստացիների երեխաներ, որոնք այստեղ են ծնվել: Լեզուն կենդանացավ: Ես, իհարկե, կրթությամբ ուսուցիչ չեմ, բայց երբ եկան ինձ ասեցին, որ իմ պարտականության մեջ մտնում է նաև երեխաներին հայերեն դաս տալը, կազմակերպեցի, տվեցի: Բայց անտանելի ծանր աշխատանք էր: Ութ տարի ես դասավանդեցի ֆրանսահայերի սերունդներին: Ես տեսա, որ դա օգուտ չունի: Դա կորսված սերունդներ են լեզվի տեսակետից: Եվ շուտով բոլոր տեսակետներից իրենց համար մնում է երաժշտությունը, պարը և ուտելիքը: Դասական սփյուռքից դա է մնում: Չհաշվելով նաև հատուկենտ ընտանիքներին, ովքեր խոսում են հայերեն: Որովհետև շատ-շատերը չեն խոսում»:

«Կային, բայց շատ են թուլացել հիմա [խմբ. հայրենակցական միությունները]: Համարյա թե գոյություն չունեն: Եվ մարդկանց հիշողության մեջ, գիտակցության մեջ համարյա անհետացել է: Նոր սերունդները չեն պահել այդ բանը: Բայց պոլսահայերի մոտ մի քիչ մնում է: Երևի շփումները շատ են, գնում-գալիս են: Օրինակ՝ Նիսում հզոր միջուկ կա պոլսահայերի: Նույնիսկ Թուրքիայի իշխանությունների հետ կապ ունեցող մարդիկ կան Նիսում հայերի մեջ:

Բայց միությունների դերը թուլացել է: Քաղաքական վիճակը, խնդիրները, դեպի ազգային կառույցներ գործունեություն ծավալելը ստիպում է մարդկանց միանալ և մի ճակատով փորձել այդ հարցերը լուծել: Դրա վառ արտահայտությունն է CCAF-ի ստեղծումը 30 տարի առաջ: Համակարգող մարմինը՝ դա շատ դրական էր: Եվ, իմիջիայլոց, ոչ միայն հայերն են դա տեսնում, այլ նաև մյուսները՝ մանավանդ ֆրանսիական իշխանությունները: Կարող եմ վկայել, որ մեծ դրական դեր խաղաց այդ կառույցի ստեղծումը:

Պետության հետ ոչ մի կապ չունեմ [խմբ. կառույցի ստեղծումը]: Ոչ մեկի, ոչ մյուսի հետ: Դրա կորիզը եղավ «Ապրիլի 24-ի կոմիտե»-ն, որի

ամենակարևոր քայլը արվեց Մարսելում: Ստեղծվեց այդ մարմինը, որը ահագին գործ արեց տարիների ընթացքում, և «Ապրիլի 24-ի կոմիտե»-ի մասնակիցների խոսքը, որի վրա ստեղծվեց CCAF-ը: Դա մի կազմակերպություն էր, որը ունակ էր, համախմբելու այլ կազմակերպությունները, որոնք իրար հետ չէին համագործակցում: Բայց ապրիլի 24-ի կապակցությամբ հաջողվել էր, այնպես անել, որ նրանք միավորվեն և ինչ-որ բան կազմակերպեն: Դա եղավ այն հիմքը, որի շնորհիվ ստեղծվեց CCAF-ը, որը եղավ շատ դրական քայլ:

CCAF-ի խնդիրն այն է, որ միջոցներ չունի, չի մտահոգվել միջոցներ ստեծելու անհրաժեշտության մասին: Եվ հիմա քնննադատվում է դրա համար: Եվ կան կառույցներ, որ ստեղծվեցին վերջերս, որ փորձում են լուծել այդ հարցը և գործունեություն ծավալել, բայց չի երևում, թե արդյոք ինչ են ուզում անել:

Մտքեր կան [խմբ. հակակշռող կազմակերպություն ստեղծելու], որոնք հիմնավոր են: Այնպիսի կառույց պետք է ստեղծել, որ կարողանա գործ անել, և դրա համար միջոցներ են անհրաժեշտ: Եվ այդ միջոցները պետք է ստեղծել: Մյուս կազմակերպությունը կոչվում է «Conseil Arménien» [խմբ. Conseil Français-Arméniens], կարծեմ: Դա ղեկավարում է մի մարդ, ով երկար ժամանակ, աուդիտ կազմակերպություն է: Այդ մարդը հիմնադիրներից մեկն է: Երկու-երեք, գուցե չորս տարի է, որ ստեղծվել է «Conseil Arménien»: Այդ մարդն է կորիզը և մի քանի հոգի:

CCAF-ը մնում է միակը, որ ճանաչված է և որը հանդիսանում է խոսակից՝ պետության մարմինների կողմից:

Մեկ այլ կազմակերպության ներկայացուցիչն էլ Պրովանսից է: Կազմակերպությունը կոչվում է «Շարժում» [խմբ. Le Mouvement Arménien]:

Դաշնակցությունը դեռ դեր խաղում է: Այնուամենայնիվ, քիչ դեր ունի: Ներառված է CCAF-ի մեջ: Այո, վաստակ ունեն, ինչ խոսք: Բայց նաև ամեն ինչ իրենք ղեկավարելու միտում ունեն:

Մարսելում հրաշալի դպրոց կա՝ Համազգային: Դա իսկապես դրական ձեռքբերում է, որը ստեղծել են լիբանանահայ դաշնակցականներ: Դա անգնահատելի ավանդ է: Չես կարող չզնահատել: Կա Մշակույթի տունը: Չգիտեմ՝ որքանով այդ կապը հիմա մնացել է, բայց քիչ, թե շատ

այդ գիտակությունը կա նրանց մոտ, ովքեր տեղյակ են և հիշում են անցյալը: Բայց նոր սերունդներն արդյո՞ք զգում են դա: Ասացի նոր սերունդները... Առաջ կար «Նոր սերունդ» կազմակերպություն: Հիմա էլ կա, բայց որքանով են իրենց զգում դաշնակցության ներկայացուցիչներ»:

«Ամեն մեկը, այսպես ասած, իր մեծ խումբն ունի. JAF-ը կա, «Կապույտ խաչ»-ը, «Կանանց միություն»-ը, որը, դժբախտաբար, պակասեց, «Նոր սերունդ»՝ նմանատիպ ասոցիացիա էլ կա:

Այստեղ Հայ մշակույթի տուն ունենք: Սպառման մասին երևի ուղիղ ու հստակ չկարողանամ ասել, տարբեր ճաշակների հարց է, բայց երկուերեք գրողներ ունենք՝ մեկը հայաստանցի է, մյուսը այստեղից: Առաջ, կարծեմ, մայր եկեղեցում թատերական խմբակ կար, մեկ-երկու ամիսը մեկ ներկայացումներ էին բեմադրում:

Բոլորը եկեղեցական տոների շուրջ է պտտվում կամ եկեղեցու կողմից կազմակերպած ազգային տոների շուրջ: Մեծ ասոցացիաները տարին մեկ էլ նշեն, դա քիչ է հենց այդ խմբի համար: Մարսելի կամ Ֆրանսիայի պարազային դա եկեղեցու վրա շատ է հենված, որ քիչ առաջ նշում էի այդ երեք կազմակերպությունների անունները՝ «Կապույտ խաչ», «Կանանց միություն», օգնում էին՝ Հայաստան ինչ-որ դեղեր, հագուստ ուղարկում, այստեղ չունևորներին, հիվանդներին էին այցելում: Իրենք մեծ գործեր են արել: Ամեն թաղամաս «Կապույտ խաչի» իր բյուրոն է ունեցել, դաշնակների, «Նոր սերունդի», պայքարել են, հանդիպել, ժողովներ արել, ապրիլի 24 և ուրիշ միջոցառումներ են արել: Օրինակ, թաղեր կան, որ «Կապույտ խաչ»-ը չկա, «Նոր սերունդ»-ի խմբակը չկա, ձուլվել է մնացածի մեջ: Հետո ավելի շատ խանգարել է այն հանգամանքը, որ ուրիշ քաղաքում գործ են գտել, գնացել և այստեղ էլ չեն կարող գալ»:

«ԱՐԱՄ»-ն ասոցիացիա է՝ ինչպես Ֆրանսիայի մեջ լինում է [խմբ. Մարսելի համայնքում կազմակերպությունների տարածված ձևը ասոցիացիան է]: Մենք ամենքս հետևողական ենք, ամենքս գնում աշխատում ենք սիրով, ճիշտաբար, ամեն մարդ իր մասնագիտությունը փորձում է նվիրել «ԱՐԱՄ»-ին: Կան նրանք, որ լավ հայեր գիտեն՝ թարգմանու-

թյուններ են անում, կան, որ մասնագիտություն սովորեցին՝ վերակազմել գրքերը: Հետո լուսանկարիչ անդամներ ունենք, որ լավ են աշխատում, կամ համակարգչի թվայնացման:

Եվ մեկ հատ շատ կարոր «Երկունք» թերթը՝ «Որբերի միության» թերթը, որը ստեղծել էր Շավարշ Նարդունին: Շատ կարևոր է այս գաղթականների մեջ նրանք, որ բախտ ունեն մեկին ունենալու, լավ էր: Բայց շատ երիտասարդներ ոչ մեկը չունեին: Չափահաս որբեր էին: Իրեն համար շատ կարևոր էր միշտ կապի մեջ լինել, որ կարողանար օգնել և նաև քաջալերել՝ գրելու համար: Ինչպես նաև գրելու «Յառաջը»: «Յառաջը» ստեղծեց Միսաքյանը, շատ կարևոր դեր էր խաղում: Այդ թերթերի մեջ կար «Կփնտրվի» բաժինը, որը շատ կարևոր էր, քանի որ այս գաղթականները կորցրել էին իրար: Թերթերի մեջ միշտ գրում էին: Եթե նայեք, մի քանի օրինակ ենք դրել: Ճիշտ է, ֆրանսերեն ենք թարգմանել, որ շատերը հասկանան: Դա շատ կարևոր է եղել և հուզիչ: Թերթերի մեջ միշտ գրում, փնտրում էին մարդիկ. մեկը եղբորն էր փնտրում, մեկը՝ զավակին:

Ստեղծեցին կամ հնչյական, կամ դաշնակցական, կամ պոլսեցիների միություն, տարբեր-տարբեր, հետո՝ «Կարմիր խաչը»: «Կարմիր խաչը» պետական էր, երբ անկախ Հայաստան կար: Բայց հետո, վերջը, որ Սովետական Հայաստան եղավ, պետք է, անշուշտ, Սովետական Հայաստանի «Կարմիր խաչ» լինել: Հոս «Կարմիր խաչը» դարձավ «Կապույտ խաչ», քանի որ իրավունք չունեինք:

«Կապույտ խաչը» շատ գործուն կազմակերպություն է, աշխատանք է տանում աղքատներին օգնելու համար, դպրոցներին, Հայաստանին, Արցախին: Շատ գործ է արել՝ ֆուտբոլի խմբեր, ամեն տեսակ: Մի քանի հատ նվազախումբ կա Մարսել, «Գեղամ» նվազախումբ կա»:

«Եկեղեցիներից զատ կա դպրոց՝ Համազգային դպրոցը, Հայ քույրերի դպրոցը: Ամենօրյա է, բայց միայն մանկապարտեզ և նախակրթարան ունի: Թողության կենտրոնը Հռոմն է՝ կաթոլիկ են: Դպրոցներ կան, մարզական միություններ, մշակութային հաստատություններ: Հետո ուրիշ միություններ կան, զանազան միություններ կան, որ մասնագիտական են, բայց եթե թվով բաղդատենք, շատ քիչ են: Եթե մեր թվին բաղ-

դատենք, մարդկանց թիվը շատ քիչ է: Մարսելի մեջ 80 հազար կամ 100 հազար մարդ կա»:

«Ծնողները պետք է դաստիարակեն՝ ասելով, որ, նայիր, ինչը, որ դու ստացել ես, դու ինչ պետք է տաս նոր սերնդին: Հայերի համար այդ դաստիարակությունը ընտանիքում շատ կարևոր է, որովհետև այսպես ենք ապրում: Պետք է հասկանալ՝ որտեղից ենք ստանում այս ամբողջ նվիրյալ կյանքերը, որտեղից հասանք, ինչպե՞ս հասանք. սրանք մեր մեծ հայրերն ու մայրերն էին պատմում: Մենք այստեղ ենք ծնվել, շատ հանգիստ ենք, ընկերներ ունենք, իսկ իրենք դպրոց են կառուցել և այլն: Այժմյան կյանքը շատ դժվար է, ամեն ինչ շատ ժամանակ է խլում»:

«Մեր համայնքի առավելություններից ու բացասական կողմերից, միևնույն ժամանակ, այն է, որ ասոցիացիաները շատ են: Մեծ մասը ակտիվ գործող են: Համակարգող կոմիտե կա՝ CCAF, որը փորձում է համակարգել, բայց միշտ չէ, որ հաջողվում է՝ հաշվի առնելով, որ ուղղվածությունները հաճախ տարբեր են լինում: JAF-ի մասին երևի լսած կլինեք: Ես իմ երեխաներին տանում եմ այնտեղ: Երիտասարդական, փոքր սերնդի համար շատ կարևոր գործ են անում: Մենք շատ կենտրոնացած ենք զուտ բարեգործության վրա: Այսինքն կազմակերպում ենք միջոցառումներ և ամբողջ հասությո՞ն ուղարկվում է նախօրոք որոշված ինչ-որ նպատակի համար՝ օրինակ դպրոցների վերանորոգման, 99 տոկոսով անմիջապես Հայաստան, եթե սփյուռքում ինչ-որ համայնք կա, որ գիտենք Այդ ժամանակ ինչ-որ ուղղությամբ աշխատանքներ տարվել են Սիրիային, մեր սիրիական համայնքին օգնելու: Բայց հիմնական ուղղվածությունը գնում է Հայաստան, հիմնականում սամանամերձ գոտիների դպրոցների վերանորոգում, բարեկարգում և այլն: Երիտասարդների մեծ խումբ ունենք, որ շատ լավ աշխատում են, գնում են որպես կամավոր ու մասնակցում են շինարարական աշխատանքներին անմիջապես: Բավական նվիրված երիտասարդություն ունենք: Ու տեսնում ենք սերունդների շարունակականություն կա: Ցանկալի կլիներ, որ ավելի շատ լիներ:

[Իմբ. մարդկանց ներգրավում ենք] Սոցիալական ցանցերով, հայկական փչացած հեռախոսի մեխանիզմով, որ շատ լավ աշխատում է:

Համայնքի համար արվում է ապրիլի 24-ի նախօրյակին: Դերերը վաղուց բաշխված են: Հայ Յեղափոխական Դաշնակցությունը 23-ին ջահերով երթ է անում՝ ինչպես Երևանում: Նախ, հավաք առավոտը հայկական եկեղեցում՝ հայկական թաղամասում Բոմոնի: Բոմոնի եկեղեցուց շարժվում ենք Յեղասպանության հուշահամալիր ոտքով, հետո 2-3 ժամ ընդմիջում: Հետո, նայած քաղաքական և հասարակական վիճակից, հավաքվում ենք քաղաքի ինչ-որ հատվածում և շարժվում ենք Թուրքիայի դեսպանատուն: Ինչքան մոտիկ են մեզ թողնում՝ կապված է պահի իրադրությունից:

Բոլորի հետ [խմբ. կառույցների] կապ ունենք, իրար միջոցառումներին փորձում ենք մասնակցել: Իրար միջոցառումների մասին մեք մեր բոլոր անդամներին տեղյակ պահում ենք: Այդ առումով մրցակցություն չկա: Ամեն մեկն իր ցանցն ունի և բոլորի նպատակը, գործունեության վերջը համայնքի և ազգի բարօրությունն է: Վերջին միջոցառումներն էլ ուղված են հիմնականում բուն Հայաստանի և ընդհանուր անվտանգության ապահովման, զինվորներին օգնելուն և այլն: Վերջին իրադարձություններն ահագին բան փոխել են մարդկանց պատկերացման մեջ:

Դաշնակցությունն իր դերն ունի, իր երիտասարդությունն ունի: ՀԲԸՄ-ն հիմնված է հենց ռամկավարների կողմից, բայց քաղաքական ազդեցությունը շատ քիչ է: Մենք տեղական մասշտաբով չենք զգում ու չենք էլ համարում, որ այս պահին, մանավանդ հայրենիքի այսօրվա դրության մեջ որևէ կուսակցություն իրավունք ունի ասել՝ ես կուսացություն եմ, ինչ-որ մի բանի հակադրվի: Բոլորը պետք է գնան նույն ուղղությամբ. հայրենիքը վտանգի մեջ և «ես ճիշտ եմ, դու սխալ ես» անելու ժամանակը չի: Մեր ազգի, համայնքի խնդիրներից մեկը միշտ այն է եղել, որ փորձել են գլուխ վերցնել՝ «մենք ենք գլխավորը»: Օտարության մեջ ենք, բոլորս պետք է նույնը ձգտենք: Դաշնակցությունը, դե փաստը մնում է փաստ, սփյուռքում գլխավոր քաղաքական ուժն է, երիտասարդությունը՝ շատ ակտիվ:

Մարտելում կա «Նոր Սերունդը»: Բավական ակտիվ են: Կազմակերպչական ձիրք ունեցող անձինք կան իրենց մեջները՝ հավատարիմ իրենց գործին և իրենց գաղափարախոսությանը: Հայրենասեր երիտասարդություն կա: Ճնշող մեծամասնությունը, եթե չասեմ 100 տոկոսը սփյուռքից են:

Հայաստանի և Ափյուռքի Դաշնակցության կուսակցությունների գործունեությունը իրարից կատեգորիկ տարբերվում է: Այսինքն Դաշնակցությունը այստեղ հիմնականում զբաղվում է հայապահպանությամբ, Հայ դատի հարցերով, առաջընթաց ինչ-որ արձանագրելով: Փորձում են իրենց քաղաքական քաշը օգտագործեն՝ ֆրանսիական պառլամենտում քվեարկությունների ժամանակ լոբբինգով կամ ճնշում գործադրելով հայանպաստ հարցեր անցկացնել: Անգամ Հայաստանում ցույցերի ժամանակ ես՝ անձամբ այստեղի դաշնակ ներկայացուցիչներից նման մղումներ չեմ նկատել: Իրենք ավելի առօրյա, համայնքի հարցերով են զբաղված, քան թե քաղաքական: Իհարկե, այդ ամեն ինչը դիտարկվում է քաղաքական պրիզմայով, բայց իրենց համար առաջնահերթը համայնքն է, այլ ոչ թե քաղաքական հայացքը: Ես այդ տպավորությունն ունեմ»:

«Մշակութային կյանքը շատ ակտիվ է: Դե եկեղեցին գրեթե բոլոր մեծ եկեղեցական տոները նշում է, բայց կառույցներն ունեն իրենց առանձին ծրագրերը: Շատ ակտիվ է կապը Հայաստանի հետ: Տարվա մեջ մի քանի անգամ ցանկացած կառույց, որևէ խումբ, որևէ նկարիչ կամ մշակութային գործիչ անպայման հյուրընկալում է:

Մյուս կառույցներն իրենց մեջ են՝ փակված են, կարող եմ ասել, որ շերտավորված են և ներփակված: Օրինակ, երեք-չորսը միասին են, որ միշտ իրենք միմյանց հետ համագործակցում են, այդ միջոցառմանն իրենք են գնում, բայց կան դրանց հակադիր կառույցներ, որ չեն գնում: Նրանք էլ ուրիշ տեղ ուրիշ ձևով են յուրացվում: Ցավալի է, բայց չկա, եթե մի մշակութային գործիչ եկավ, ամբողջ համայնքը գնա մասնակցի: Ոչ: Կան շերտեր, եթե դա որևէ տարածքում է, որը որ մարդիկ չեն սիրում կամ չեն հաճախում, չեն գնա»:

«Այստեղ բոլորն ունեն իրենց կառույցները: Նույնիսկ հայաստանցիներն ինչ-որ կառույց ունեն՝ «Ղարաբաղի հայերի միությունն» էր: Պոլսահայերն ունեն «Պոլսահայ մշակութային տուն»: Հայաստանցիները հիմնականում անդամագրվում են պատրաստի կառույցներին: Օրինակ՝ JAF-ը, որը երիտասարդներին և մանուկներին առաջարկում է մեծ մշակութային ծրագիր:

Բոլոր շերտերից ներառվում են, բայց հիմա ավելի շատ հայաստանցիներ: Եկեղեցին է, որ գրեթե ամփոփում է բոլոր շերտերը: Իհարկե, էլի հայաստանցիները մեծամասնություն են կազմում՝ որպես համայնք, բայց, որպես ադմինիստրատիվ անդամություն, ավանդական համայնքն է՝ ֆրանսահայերը, որ անդամագրվում են, վճարում են, կազմակերպչական հարցերում են ակտիվ: Հայաստանցիները, այսպես ասած, պասիվ մասնակցողն են, բայց քանակական ուժն են: Եթե որևէ միջոցառում ես կազմակերպում, հիմնական քո հրավիրյալները հայաստանցիներ են. առանց իրենց տեղի չի ունենա»:

«Դե մի քիչ դժվար է բնակարանի հարցը. պետք է լավ կայացած լինես, որ ինքնուրույն որոշես ուր ապրես, որովհետև մեծ մասը ապրում են այնտեղ, որտեղ որ պետությունն իրենց տեղավորում է: Պետությունը տեղավորում է էժան թաղամասերում, որտեղ շատ են արաբները, շատ են փոքրամասնությունները, խառը վիճակներ: Երբեմն նույնիսկ չես զգում, որ Ֆրանսիայում ես, հայերը շատ են լինում: Բացի Բոմոնից կան էլի հայկական թաղամասեր, Սեն Ժերոմ թաղամասը, որ էլի այնտեղ Հայ Առաքելական Եկեղեցին է, Արարատ, Պերճ Զեյթունցյան փողոց, «ԱՐԱՄ» կազմակերպությունն է: Տարածքն ունի հնարավորություն, որ կարող է վերածի և դառնա թանգարան, բացառիկ բան է՝ հայկական հիշողության արխիվ: Սրանք նվիրյալ մարդիկ են, ոչ մի կուսակցական գույն չունի, զուտ մի ընտանիքի, մի պապայի հավաքածու, որ դարձել է իր զավակների կյանքի նպատակը: Առաջ եղբայրն էր տնօրենը, մահացավ, հիմա կինն է առաջ տանում, ով պատմաբան է: Բացառիկ մի տեղ է: Իրենք խնդրում են ծերացած մարդկանց իրենց արխիվները չթափեն: Այստեղ գիտեք ռնց է, այս գրքերը ռնց է հայտնվում այստեղ. երբեմն բերում տուփի մեջ դնում գնում են՝ չթափելու համար, որովհետև տունը շատ արագ վաճառում են զավակները: Ծեր ծնողը մեռավ, էլ ոչ մեկ հայերեն չի կարդում, բերում են կամ եկեղեցի, կամ աղբաման, իսկ իրենք ասեն ինչ ընդունում են, ասում բերեք տվեք մեզ:

Դա կամավոր, երբեմն պետական սուբվենցիաներ են ստանում՝ որպես օգնություն: Լրիվ կամավորական սկզբունքով կառույց է: Օրինակ՝ մի աղջիկ կա, Հայաստանից նոր է եկել, Պատմության ֆակուլ-

տետն է ավարտել, Ազգային արխիվում է աշխատել, մինչև բալիկ ունենալը գնում էր այդտեղ: Ինքը միակն է: Կան մեծ տատիկ-պապիկներ, որ հայերեն գրել-կարդալ գիտեն, օգնելու համար գնում են: Մարիամն [խմբ. վերոնշյալ աղջիկը] ասում է, որ այնտեղ հսկայական աշխատանք կա, որ կարելի է համակարգել, դասավորել, մի բան, որ ամեն տեղ այդ գործն անելու կարիք կա: Մենք փոքր գրադարան ունենք և գլուխ չենք կարողանում հանել:

«Այստեղ գլխավորը CCAF կոչված կազմակերպությունն է: Այն հրավիրվում է հայ համայնքի ցանկությամբ, որպեսզի բոլոր տարբեր քաղաքներում գոյություն ունեցող համայնքները կարողանան կորդինացվել: Կարծես ինքը հին կառույց չէ. 20 տարվա պատմություն ունի: Եվ իրենք միակն են այդպես, որ կարող են համախմբել և ներկայացնել համայնքի շահերը: Բոլոր համայնքները գրանցված են CCAF-ում, ու ընդհանուր գործունեություն է ընթանում: Բնականաբար, այստեղ ևս տարածայնություններ կան:

Գոյություն ունի միջին CCAF՝ հարավինը: Սա իր մեջ համախմբում է հարավի բոլոր ասոցիացիաները: Այս տարի ունենք երեք նախագահ, համանախագահներ, որոնց մեջ Բդունան էր [խմբ. Aurore Bruna]: Նա իսկապես վստահելի անձ է: Մյուսն Ազատ Բալալաս Կազանջյանն է՝ քաղաքական գործիչ, համանախագահ: Փարիզում Արա Թորանյանն է: Նա շատ խելամիտ և խելացի մարդ է և կարողանում է բոլոր քաղաքական գործիչներին հավաքել մեր շուրջ: Մակրոնը [խմբ. Էմանուել Մակրոն, Ֆրանսիայի նախագահ] իր ասածները, այսպես ասած, լսում է: Հունվարի 25-ին լինելու է CCAF-ի ճաշկերույթը, Մակրոնը պետք է որ ներկա լինի: Հիմնականում համայնքների ղեկավարները ներկա են լինում: Եթե սովորական քաղաքացիները ցանկանան և տեղ լինի, կարծես 250 դուլար է:

Կրոնական կառույցները նույնպես ներկա են հստակորեն, քանի որ մենք ունենք նաև հարավի ճաշկերույթը: Տեր Հայրը միշտ ներկա է, մինչև ճաշելը օրհնում է սեղանը: Եկեղեցին միշտ կցված է մեր համայնքներին, նույնիսկ քաղաքական շրջանակում միշտ ներկա է: Տարածայնություններ, ցավոք սրտի, այս հարցում էլ են լինում:

Տարբեր կազմակերպությունների նախագահները [խմբ. ընտրում են հարավի պատասխանատուին՝ ներկայացուցչին], բայց նախագահներին չեն կարող հստակ ասել, գիտեմ, որ ընտրությամբ է տեղի ունենում, չեն կարող ասել, թե դա ինչ օրենքների հիման վրա են անում: Այնպես են անում, որ ամեն տարի CCAF-ի նախագահը նույն կազմակերպությունից չլինի, և հարավի բոլոր կազմակերպություններն իրենց ձայնը տալու իրավունք ունենան: Պետք է լինի անպայման կրթված, եթե քաղաքական գործիչ լինի՝ առավել ևս, կամ որևէ կարևոր մասնագիտություն ունեցող: Ամեն դեպքում, բոլորը հասարակության մեջ կայացած մարդիկ են: Չէի ասի, թե դավանանքը կարևոր է, հաստատ մուսուլման չի լինի:

Անկեղծորեն, չեն կարող ասել հայ եկեղեցու տարբերությունները կարևոր են, թե՛ ոչ, բայց այստեղ Հայ Կաթողիկե, Ավետարանչական շատ չկան: Այստեղ հիմնականում Հայ Առաքելական Եկեղեցուն պատկանող հայերն են:

Կուսակցականները շատ են, օրինակ՝ դաշնակցականները հստակորեն չեն շփվում մյուս կուսակցությունների հետ, ինչպես նաև մերոնք [խմբ. հայաստանցիներ] դժվարությամբ են գնում հնչակների կամ ռամկավարների հետ շփվելու: Մենք՝ հայաստանցիներս, ավելի լայն ենք հոգեբանորեն, ավելի ճկուն ենք և մեր համար հայր՝ հայ է: Դաշնակցականներինը «France Arménie» թերթն է, մինչդեռ «Nouvelle d'Arménie»-ն բացարձակ ազատական դիրքորոշումով ամսագիր է: Հնչակ ու ռամկավար չեն ճանաչում»:

«Անկեղծ ասեմ, վերաբերմունքը մարդու հանդեպ և այլն մի քիչ այլ է այստեղ [խմբ. Ֆրանսիայում]: Միգուցե նրանից է գալիս, որ հասարակությունը մարդակենտրոն է: Այնտեղ [խմբ. Հայաստանում] կենտրոնում մարդը չի, իշխանավորն է: Եթե այստեղ դու գնում ես մի գրասենյակ, քեզ սպասարկում են, այնպես են անում, որ հաճելի լինի, ոչ մեկ քո վրա «մուննաթ» չի գալիս՝ ո՛չ եկեղեցում, ո՛չ խանութում, ոչ մի տեղ: Եթե նման դեպքեր լինում են, դա բացառություն է: Մարդը կարող է գալ քահանայի մոտ՝ իր ամենաանտրմալ պահանջով, դու նրան ո՛չ վիրավորում ես, ո՛չ եկեղեցուց դուրս ես շարտում, որովհետև երկիրը թույլ չի տա: Հայաստանում հանգիստ կարող են գոռալ՝ «Գլխաշորդ ինչո՞ւ չես դրել, աղջիկ

ջան, գնա հագնվի, նոր արի»: Նման բաներ, ցավոք սրտի, լինում է: Չեն քննադատում, ինձնից շատ լավերն են այնտեղ: Այստեղ դու ամեն մի քայլից շատ զգույշ ես, որովհետև իրավունքը միշտ իրենն է:

Իսկ ինչ վերաբերվում է հոգևոր հարցերին, այստեղ մենք առնչվում ենք խնդիրների հետ, որոնց հետ Հայաստանի քահանան երբեք չի առնչվում: Այստեղ ասում են, որ մարդը մահացել է ուզում ենք տանենք դիակիզենք, բերենք եկեղեցում աղոթք անեք: Սկզբում թույլ չեն տվել, բայց հիմա խնդիր չկա: Իսկ եթե Հայաստանում գնաս մի գյուղում քահանայի ասես դիակիզում և այլն, դա մեղք է: Դրա համար սուրբգրային հիմնավորումներ կան՝ «հող էիր, հող դարձիր» աստվածաշնչյան այդ կողը ընդունելի չէ, որովհետև մենք սիրում են պահել մեր ավանդույթները, թաղման կարգը, հողը պետք է օրհնես և այլն: Ինչն է խնդիրը, որ զարգացած պետությունները տարածք չունեն, պետությանը մեծ գումարներ պետք է վճարես (թաղումը 8 տեղանոց պուճուր բետոնե տուփ է ընտանեկան, դա արժե 10 հազար եվրո, իսկ դիակիզումը մի 1000 եվրոն բավականացնում է): Հիմա մեռնելուց հետո վառում են, թե ինձ դնում են այդ տուփի մեջ, հողով չեն էլ ծածկում, որ նոր մեկն է մահանում, դնելուց մյուսներին էլ են տեսնում կիսանեխած վիճակում: Հիմա ընտրեք, եթե պետության տենդենցը դա է, ամեն երկրորդը այրվում է, քահանան պետք է ընդունի: Թեմի մակարդակով խնդիր չունենք, մեր եկեղեցին պաշտոնական մոտեցում չի ձևակերպել: Հայաստանում 90 տոկոսը պետք է ասեն անընդունելի է, բայց սփյուռքում բոլորը դա անում են, տարբերություններ շատ կա:

Մեր եկեղեցին երկու պատճառ ունի. այն, որ մենք շատ տողերանտ ենք [խմբ. հանդուրժող], բաց ենք, ինչքան ավանդապահ ենք, այդքան էլ դա մեր ուժն է՝ կարողանում ենք լավ ադապտացվել: Դա մեր պատմական ճակատագրից է գալիս, փորձից, որ ամեն երկրում կարողանում ենք հարմարվել տեղի պայմաններին, բայց, մյուս կողմից էլ, մի քիչ հետ ենք գիտական առումով: Ցեղասպանությունից հետո, սովետի այդ ջարդից հետո մեր եկեղեցին հետ է մնացել, շատ ռեֆորմներ [խմբ. բարեփոխումներ] չի անցել: Իսկ Արևմուտքում այդ թելը չի ընդհատվել, իրենք դոգմաներ են զարգացրել և, երբեմն, նոր մարտահրավերներին հստակ պատասխաններ ունեն, որը մենք չունենք:

Տեսնք, այդ ճկունության, եկեղեցու զարգացման մասին, որ խոսում ենք, իմ կարծիքով, պետք է սփյուռքից առաջարկները գնան՝ հասնեն այդտեղ: Ի վերջո, որոշումներն այդտեղ են կայացվում, եպիսկոպոսաց ժողովն է տերը: Այդ մեխանիզմն ունի մեր եկեղեցին, որ կամաց-կամաց լավ նշաններ կան, որ, օրինակ, սոցիալական հարցերի, տարբեր մարտահրավերների պատասխանելու համար Մայր Աթոռը գրասենյակ ունի, հանձնաժողովներ կան, որ աշխատում են: Ծիսական հարցեր կան, որ ռեֆորմի կարիք ունեն, բայց ես կարծում եմ՝ մեր սահմանները, էական հարցերը չպետք է զիջենք ո՛չ սփյուռքում, ո՛չ էլ Հայաստանում:

Ես պրակտիկ կողմին եմ նայում մի քիչ: Օրինակ, ինձնից առաջ մի դեպք է եղել, մի երեխա է մահացել ավտովթարից՝ 14 տարեկան, գնացել ընկերների հետ գժուպոն են արել, այդպես դեպքը պատահել է: Թաղումը այստեղ են արել, Պրադո փողոցն ամբողջովին փակ է եղել՝ այնքան մարդ է եղել, մի քանի հոգևորականներ և այլն: Ամբողջ դպրոցի երեխաները մոտենում, դագաղի վրա տիպեր էին փակցնում՝ իրենց ձևով: Դա ֆրանսիական մշակույթն է: Օրինակ, մենք պետք է սպասենք տատիկները լացեն, վերցնեն առանց խոսք ասելու: Այստեղ, ոչ, իր ընկերուհին պետք է խոսի, հայրը պետք է խոսի, եթե ի վիճակի է, կոլեգան, եթե մեծերի մասին է: Եվ վերջում, երբ պետք է դուրս գային, ասել են, որ այդ երեխան Մայքլ Ջեքսոնի ինչ-որ երգն է ամենաշատը սիրել, խնդրել են միացնել այդ երգը եկեղեցում ու իրենք չեն մերժել: Հիմա դրանից մեր ավանդույթը քանդվեց, ինչ եղավ: Հազարավոր մարդիկ եկել են լացելով ճանապարհել են այդ երեխային: Պետք է, իմ կարծիքով, նայել բարոյական կողմին: Որ այդպես նայենք, այն ժամանակ եկեղեցում երգեհոնն էլ չենք ուզել, որ մտնի: Եթե արգելվեր, չգիտեմ, այստեղ կգային, թե՛ ոչ: Սա ֆրանսիական միջավայր է, այստեղ օդի մեջ Մայքլ Ջեքսոնի երգ կա, ամեն հայ կարող է, ուզում է Շառլ Անգլանվորի «Մայրիկ» երգի տակ դուրս գա եկեղեցուց: Խնդիր է, իհարկե, ու որպես հովիվ՝ դու ամեն անգամ պետք է որոշում կայացնես. չես կարող այդ կամ ոչ ասես:

Իհարկե, այնպես չի, որ ես լիարժեք ազատ եմ իմ որոշման մեջ, այնպես էլ չի, որ այնքան տղերանտ եմ, որ ինչ կուզեմ, կանեմ: Նկատի

ունեն, որ այստեղի պահանջարկը այլ է, ու կաթոլիկ եկեղեցում գնում գիրթառ են նվագում՝ իրենց ցանկությամբ: Դա է իրենց հրաժեշտ տալու կերպը, մի բան, որը մենք Հայաստանում չունենք: Այնտեղ ուրիշ է. պետք է դագաղը բաց դնեն, բոլորը տեսնեն, նստեն լացեն՝ ինչքան որ ուժ ունենք, արևելյան ձևերով: Այնտեղ էլ կան սխալ բաներ, այստեղ էլ կան: Էականը պահելն է ճիշտ»:

Մեդիա

Քննարկվող առանցքային հարցեր. *մեդիա կազմակերպություններ, սպառում և լսարան, հայկական տեղեկատվական դաշտի և ազդեցություններ:*

«Հայկական մեդիա, որպես այդպիսին, չունենք: Ունենք ռեգիոնալ ռադիո ալիք, որը կոչվում է «Ռադիո դիալոգ»: Խոսքի իրավունք ունեն տարբեր համայնքների ներկայացուցիչներ: Քվոտաներ կան, գրված, թե չգրված՝ չզիտեմ, բայց բոլորն իրենց եթերային ժամանակն ունենում են: Ես հաղորդում եմ անցկացրել Առաջին Հանրապետության վերաբերյալ տարիներ առաջ: Կան որոշ ալիքներ, որոնցով կարելի է տարածել որոշ լուրեր Դա ֆրանսերեն: Հայկական ռադիոալիք կամ հայկական հեռուստաալիք հայալեզու չունենք: «Nouvelles d'Arménie»-ն ամբողջ Ֆրանսիայի տարածքով է: Նեղ տարածքային չունենք»:

«Համայնքը շատ զգայուն է [խմբ. Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ]: Տեսանելի համայնքը հայաստանցիներն են, որոնք իմ պես ընտանիք ունեն այնտեղ: Ո՞նց պետք է արձագանքենք. դա անմիջականորեն մեր վրա ազդում է: Ամեն մարդ մի ձևով է արձագանքում դրան. նայած, թե ով ինչ է մտածում: 44-օրյա պատերազմից հետո մինչ վերջերս 80 ընտանիքի միանվագ աջակցություն եմ ցույց տվել, փակ՝ առանց հայտարարության, այդպես եմ տեսել ելքը: Ամեն մեկը՝ ում խելքն ինչպես կտրում է:

Բայց համայնքը մոբիլիզացնելու այդ պրոցեսին շատ վնասում է քաղաքական «զզվոտոցը»: Այստեղ դա ակտուալ է, որովհետև այդ մեդիաներն այնքան ուժեղ են, որ եթե մանիպուլացվում է ինչ-որ ինֆորմա-

ցիա, չգիտեմ՝ դա ճիշտ է, թե՛ սուտ: Օրինակ վարչապետը հայտարարում է, որ նվիրատվություն կատարեք Համահայկական հիմնադրամին, մենք բոլորս հիշում ենք դա, ու բոլորս՝ ինչ ունեինք-չունեինք, տվեցինք այդ պահին: Ես էլ էի նվիրատվություններն ընդունում, արձանագրում՝ շատ խոշոր գումարներ իմ ընկերների կողմից, կանխիկ հաշվվել է, և դա արվել է շատ մաքուր կերպով: Դա Համահայկական հիմնադրամն է կենտրոնացնում, հետո տվել են պետությանը, դա չգիտեմ ինչպես է ծախսվել: Բայց մամուլում գրվեց, որ 100 մլն. տարան և կերան: Եվ, բնականաբար, պատերազմից, Շուշիի անկումից հետո, այդ մեծ հուսախաբությունը: Գիտե՞ք, հուսահատությունը ամենահեշտ բանն է մարդու համար: Այստեղ 20 տարեկան տղա է մահացել, ոչ մեկ չունի, պետք է դիակը ուղարկեինք Հայաստան: Ասում եմ՝ ժողովուրդ գումար է պետք, գիտեմ, որ այսինչ մարդը կբերի, մյուսը չի բերի, որովհետև երկուսին էլ ճանաչում եմ, որովհետև հիասթափվելը հեշտ է, անվստահություն հայտնելը հեշտ է: Դա մեր դեգրադացված վիճակից է գալիս: Բնականաբար, մարդիկ կան սրտացավ:

Ես էլ ասում եմ՝ պետությանը չեք վստահում, լավ եք անում, Աստված ձեր հետ, դուք սահմանամերձ գյուղում մի որբացած ընտանիք գտեք, այսօր դա դժվար չէ: Պրիմիտիվ բաներ են, որ ամեն հայ ի վիճակի է այստեղից դա անելու: Դե մեկը մտածում է՝ ընտանիք ունեմ չեմ կարող օգնել, բայց դա ասելը ամենահեշտն է: Ես այդպես էի մտածում պատերազմից հետո: Ասում էի՝ ես 10 տարի այստեղ եմ եղել, բայց լավը չեմ եղել, որովհետև ավելին կարող էի: Այն, ինչ որ արեցի պատերազմից հետո, կարող էի 10 տարի այդպես ապրել: Քնած ապրել ենք, հասկանում եք՝ ամեն մեկս մեր համար: Մեր պապային գումար ուղարկելով՝ մտածել ենք երկիր ենք պահում: Մտածում եմ, որ կարելի է հավաքվել չորս-հինգ հոգով՝ ինչ-որ բան այնտեղ սկսել: Այստեղ այնքան մարդիկ կան իրենց ոլորտներում կայացած, հաջողած, որ կարող են անել:

Մի պահ էր թեժ, հիմա ամեն մեկն իր կյանքով է: Հիմա Լաչինի [խմբ. Բերձոր] միջանցքի համար, որևէ ցույց նախատեսված չէ: Դա է զարմանալի, բայց, որպես կանոն, շատ արագ մոբիլիզացվում, կազմակերպվում են, հայտարարություններ են անում:

Մի քիչ կոմունիկացիայի առումով են թույլ: Այս ասոցիացաներն ունեն իրենց շրջանակները: Հազարավոր հայաստանցիներ, որոնք ակտիվ մասսան են, տեղյակ չեն՝ Բարեգործականը ինչ է: Այդ մշակույթը չունեն: Եթե գրանցվում ես, տարեկան անդամավճար պետք է տաս, դա սիմվոլիկ բան է: Հարցը դա չէ, մարդուն պետք է բացատրես՝ դա իր իրավունքն է, պարտականությունը: Եթե դուք 5 հոգի եք ասոցիացիայի մեջ կամ 500, դու բաժնետերն ես: Եթե գալիս բողոքում ես, որ այստեղ ինչ-որ բան այն չէ, ինչու՞ բոլորին տուն չեն տալիս: Ես իրենց առաջարկում եմ՝ եկեք դարձեք կազմակերպության անդամ, ձեր բոլոր հարցերը ներսում բարձրացրեք, եկեք օգնեք, ես մենակով շատ հարցեր եմ փորձում լուծել, ուր եք՝ չկաք: Ֆրանսահայերին քննադատելուց առաջ եկեք տեսեք՝ այս մարդիկ ինչ են քաշում, որ կարողանան համայնքային կառույց պահել: Բայց չեն գալիս, որովհետև իրենց վիճակը ստաբիլ [խմբ. կայուն] չի. այսօր այստեղ են ապրում, վաղը՝ մի ուրիշ տեղ: Տաս օր տեսնում ես, տասնհինգերորդը չես տեսում, որովհետև գործի է տեղավորվել, աշխատում է կամ գործերը լավացել է, էլ չի ուզում գալ: Հիմնականում իրենց վրա հույս չես կարող դնել:

Գուցե 10, 20 տարի հետո ինտեգրվեն այն աստիճան, որ պիտանի լինեն, բայց, որպես կանոն, ասում են՝ ինչ պետք է կանենք, կողքից կօգնենք, բայց ժողովները և այլն գլխացավանք է իրենց համար, այդ մշակույթը մեջները չկա: Պոլսի մշակույթն է, իրանք են եկել այստեղ, իրենց ծնողներն են եկեղեցի սարքել, իրենց զավակները, թեկուզ թասիբից, ընտանեկան ավանդույթից՝ պետք է նվիրատվություն անեն: Ուզած-չուզած նրանց սերունդներն էլ են ինչ-որ չափով հեռանում այդ մշակույթից:

Սփյուռքն անեծք է: Գիտեք, Հին կտակարանյան կոնցեպտում, սփյուռքը անեծք է, եթե դուք նայեք մարգարենների գրվածքները, մարգարեն խոսքը ուղիղ Իսրայելին է ուղղում, ասում է. «Քանի որ դուք պոռնկացաք, ուրիշ կուռքերի հետ ձեր համար այլ աստվածներ ստեղծեցիք, իրենց պաշտեցիք, ձեզ պիտի հարվածեմ, աշխարհով մեկ պիտի ցիրուցան անեմ, ձեր տունը պիտի ավերեմ»:

Եթե այսօր նայում ես, սփյուռքը նաև հնարավորություն է, բայց եթե ուժեղ պետություն ունես: Պետք է պետության մեջ հավաքվի այդ հնարավորությունը: Ինչու՞ պետք է սփյուռքում լինի, սպասես, որ Ֆրանսի-

այի կամ Ռուսաստանի համայնքը քեզ օգնի: Ոնց որ ԱՄՆ-ը սփյուռքի օգնությանը սպասի, մտածի՝ ինչ լավ է, որ սփյուռք ունենք:

Եթե հոգեբանական կողմին եք նայում, ողբերգություն է: Եթե մի պապիկ եկել այստեղ է ապրում, որովհետև տղան այստեղ է, հարսը այստեղ է, թոռները, նա այնտեղ մենակ է մնացել, եթե տատիկի հետ է, նա բախտավոր է, բայց եթե մենակ է, ընկեր չունի, տան մեջ խենթանում է մարդը:

Պապիկները թոռնիկների լեզուն չեն հասկանում: Հայաստանում քչից-շատից կհասկանան, բայց այստեղ շատ արագ լեզու են կորցնում, մանավանդ, եթե ընտանիքը կրթված չէ, չի կարողանում լեզուն փոխանցի, մի սերունդ հետո կորում է: Ֆրանսահայերի մոտ երրորդ, չորրորդ սերունդ դեռ հայախոս են: Հայաստանցիների մոտ մեկ սերունդ հետո կորում է»:

Վիզուալ ներկայություն

Քննարկվող առանցքային հարցեր. *Հայկական ներկայությունը և ազգային ժառանգությունը Մարսելում, հիմնական մշակութային կրթողները, վայրերը, հիշատակումները:*

«Հայկական ներկայությունը Մարսելում շատ ակտիվ է: Նախ, փողոցից ենք տեսնում. անհնար է քայլել ու հայերեն չլսել: Մյուսը, տեսնում են փողոցների անուններից, հայկական խանութների, ռեստորանների առատությունից: Մարսելի հայերը եկեցեղիների, հուշարձանների առատությունից իրենց զգում են ինչպես տանը»:

«Մեր եկեղեցիները կառուցվել են հիմնականում 20-ականների [խմբ. 1920-ական] վերջին, 30-ականների [խմբ. 1930-ականների] սկզբներին, նոր եկեղեցիներ չեն կառուցվում: Վերջին տարիներին Սոդոմոն Թեիլերյանի անվան հրապարակ բացվեց, փոքրիկ ցուցանակ դրվեց: Բազմաթիվ փողոցներ կան հայերի անունով, որ տարբեր ժամանակներում Ֆրանսիայում անվանակոչվել են:

Շատ փողոցներ կան, հայկական անուն են կրում, օրինակ Ապրիլի 24-ի փողոց, Երկրորդ համաշխարհայինի մասնակիցների կամ հերսնե-

րի անուններով, Հրանտ Դինքի անունով: Ընդհանրապես, հայկական հետք շատ կտեսնեք, եթե խոսքը հուշարձանների մասին է: Նկատի ունեցեք, որ այս քաղաքը մոտավորապես 850 հազար բնակչություն ունի, սա պաշտոնական թիվն է, և դրանց 10 տոկոսը հայ են: Դա նշանակում է՝ եթե դուք մտնեք ցանկացած գերեզմանատուն, անշուշտ, հայկական անուն, ազգանուն եք տեսնելու:

Առանձին հայկական գերեզմանատուն չկա, որովհետև այստեղ կրոններն են իրարից առանձնացնում: Լինում է, սովորաբար, մուսուլմանական փոքրիկ հատված, քրիստոնեական և հրեական:

Վերջին մեկ-երկու հուշարձանների տեղադրմանը, կողքի քաղաքներից մեկում խաչքար (հմիջայլոց, նշանավոր քաղաք՝ հայտնի գինու, տուրիստական հարավի ամենակարևոր կենտրոն), դա եղել է անհատների միջոցով, չակերտներով ասած, հեղինակություն ունեցող մարդու՝ իր մտերմությունը քաղաքապետի հետ: Դա անցնում է, բայց ամբողջությամբ լեզավ ճանապարհով, այսինքն դիմում ես, բայց դե մենք գիտենք, որ միգուցե նոր եկած էմիգրանտ դիմի, ասեն ոչ, նույն պրոյեկտը տանի տա քաղաքապետին, ասեն ոչ, բայց որոշ մարդիկ կամ որոշ կազմակերպություններ, որ կանգնած են նման գործերի թիկունքում, բնականաբար, լինում են: Հիմնականում փոքր քաղաքներում, գյուղերում, որտեղ որ կա հայկական ընկերակցություն, կազմակերպություն, այդ մարդիկ շատ լավ հարաբերություններ են ունենում տեղական իշխանությունների հետ: Որքանով որ ես ծանոթ եմ, բավական ծանոթ եմ հարավային շրջանի կազմակերպություններին, այսինքն լինում է այցելում եմ կամ այդ կազմակերպություններն են այդ առիթը ստեղծում նաև, շատ սերտ հարաբերություններ եմ ունենում տեղական իշխանությունների հետ, ու ամեն մի քաղաքում մի հայկական խաչքար, մի հավաքվելու տեղ գոնե կա: Ուր որ գնաս, երբեմն պատահական ես հանդիպում այդ խաչքարերին, երբեմն կատեդրալի [խմբ. cathédrale - տաճար] առջև՝ հայկական տուֆից սիրուն խաչքար: Ամեն տեղ այդ հետքը կա:

Մարսելն այլ է, այն մեծ քաղաք է: Օրինակ, ունենք հայաշատ մի քանի թաղամասեր: Դրանցից գլխավորը Բոմոնն է «սիրուն սար»՝ Beaumont, մի քիչ բարձրադիր վայր է, որ ամենահայաշատ տեղն է, այնտեղ կա Հայ Առաքելական Եկեղեցի, Հայ Բողոքական Եկեղեցի, Համազգա-

յին դպրոց, ֆուտբոլի շատ նշանավոր ակումբ հայկական, մշակույթի տուն, մի խոսքով, տասնյակից ավել, Դաշնակցության կենտրոնական գրասենյակը, և շատ հայեր են ապրում: Նրանք ունեն այնտեղ ամեն ինչ: Ապրիլի 24-ի փողոցն էլ է այդտեղ: Մի քանի տարի առաջ Վիգեն Ավետիսի քանդակը տեղադրվեց, մեծ հուշակոթող է, որ թաղապետարանի և մի անհատի ֆինանսավորմամբ այդ արձանը գնեցին և տեղադրեցին Եղեռնի հուշարձանի հարևանությամբ՝ շատ շքեղ մի բան:

Տարվա որոշ օրերի այն շահագրգիռ կազմակերպությունը, որ ամեն ինչ արել է՝ այդ հուշարձանը լինի, տարին մի անգամ ժամադրություն է լինում դրա առջև: Օրինակ, այստեղ Պաղկ Բողեյին [խմբ. Parc Borély] մեծ այգի է, Մարսելի ամենամեծ այգին է, շատ գեղեցիկ խաչքար է նվիրել Երևան քաղաքը Մարսելին, որովհետև քույր քաղաքներ են: Այս խաչքարի առաջ տարին մեկ անգամ արարողություն է կազմակերպվում, քաղաքապետը ներկա է լինում, եթե հաջողվում է Երևանից ներկայացուցիչներ են լինում՝ քաղաքային իշխանություններից, քահանաներ են գնում, ընտրյալներ են հավաքվում: Եվ դրա հետևում անպայման կանգնած է լինում այդ շահագրգիռ կողմը, անհատը, ով տեղադրել է և հետևում է, որ դա կատարվի տարին մեկ անգամ: Մենք հրավերները ստանում ենք, մեր հրավերները մյուսներն են ստանում, այդ ցանցը, այսպես ասած, կա: Այսինքն, եթե բարեգործականը մի միջոցառում է անում, ես անպայման հրավերը ստանում եմ, ես եմ միջոցառում անում՝ իրենք են ստանում»:

Տոներ, ծեսեր

Քննարկվող առանցքային հարցեր. *համայնքի հիմնական տոները, ծեսերը, դրանց սոցիալ-մշակութային նշանակությունը:*

«Օրինակ, փետրվարին կա Սուրբ Սարգսի տոն, Տեառն ընդառաջ: Ես գիտեմ, որ Սուրբ Սարգսի տոնը կողքի եկեղեցում քահանան ամեն տարի նշում է: Մյուս եկեղեցին փորձում է չնշել Սուրբ Սարգսի տոնը, որպեսզի չխանգարի, այլ նախընտրում է գնալ մյուսի կողքը լինել, միասին նշել: Երիտասարդների օրհնության օր է հայտարարվում, որ երիտասարդներն էլ գնան այնտեղ, իմանում ենք, որ Մարսել քաղաքում մի

պատարագ արվում է շաբաթ օրով: Իսկ մյուս եկեղեցին իր ամբողջ ուժը մեկ ամիս, երկու ամիս առաջ դնում է Տեառն ընդառաջի վրա: Իմիջայլոց, Տեառն ընդառաջը զրոյից տրադիցիա են դարձել եկեղեցու շնորհիվ, որովհետև այստեղ կրակ չեն վառել, չեն իմացել ինչ է դա ընդհանրապես՝ նորապսակների օրհնությունը: Քանի որ ամենաշատ հարսանիք անող եկեղեցին Պրադոյի եկեղեցին է, աֆիշ են ստեղծում, անհատապես բոլորին հրավիրում, զանգում բոլոր պսակվածներին՝ քահանան կամ վարչականները, տեղեկացնում են: Մեծ մասը ֆրանսահայեր են, չգիտեն ինչ է [խմբ. այս տոնը]: Երաժիշտներ են հրավիրում, երգչախումբ՝ սիրուն տարազներով, դիոլներով: Ավանդական մի հատ սիրուն քեֆ են անում: Փոքր կրոնական արարողություն, օրհնության կարգ երիտասարդներին: Մի եկեղեցի կա, անում է Տեառն ընդառաջը, հյուսիսային թաղամասում է, այնտեղ գուցե 1-2 նորապսակ զույգ գնա, Պրադոյում՝ 10-12:

Եկեղեցիներն իրար մեջ համագործակցում են, դա էլ է հետաքրքիր: Օրինակ՝ ես շաբաթ երեկոյան եմ տոն անում, որ մարդիկ ազատ լինեն: Իրենց ընտանիքներում մի իսկական տոն է լինում, հյուրասիրություն: Այսինքն ընտրում ես մի տոն, որ կարող ես անել՝ համ ու հոտ տալ, որ հետաքրքրություն լինի և ավանդույթը պահվի՝ թե՛ ժողովրդական կողմը, թե՛ եկեղեցական կողմը: Ամբողջ տոնական տարին ես ծրագրում եմ նախապես:

Լինում է, որ ֆրանսիացիներն էլ են գալիս, մի անգամ գալիս են, դուրը եկել է: Հայաստանցիներն ակտիվ են, դե գիտեն ինչ է, ընտանիքները խրախուսում են, բայց ֆրանսահայերը չգիտեն: Իրենց էլ փորձում ենք սովորեցնել: Դռները բաց է: Իրենց հետ հյուրեր են երբեմն լինում, շճած գնում են ուղղակի: Նամանավանդ այդ ֆոլկլորը կարողանում են լավ ցույց տալ այստեղ:

Բացառիկ բան է, որովհետև այս երկրում կրակ վառելու իրավունք չունես, քո բակում չես կարող Տրնդեզ նշել: Իսկ եկեղեցու բակում հնարավորություն ունենք, մեծ կրակ ենք վառում: Բայց դրա համար բավական նախապատրաստական աշխատանքներ է գնում: Ես վարչությանը գրում եմ, որ խարույկի համար ինձ կրակ է պետք, մեկը պետք է խարույկին հսկի, որ մենք այնտեղից ջահերը վառած գանք և այլն, և այլն: Այս

տարի նորություն է լինելու Սուրբ Ծնունդին. մեր մանկական երգչախումբը, կանթեղներ եմ գնացել գնել, որ ամեն մեկի ձեռքը տամ Ճրագալույցին՝ երեկոյան, փոքրիկները կանթեղներով, «Ավետիս» երգելով գանք Մշակույթի տուն և առաջին տնօրինները կատարենք:

Օրինակ, մի տղա, որ եկել է, նա Կոնսերվատորիայի ժողգործիչներ բաժինն է ավարտել, այդ ոլորտի ինչքան բեմեր ու երաժիշտներ կան, բոլորի հետ լավ է, տիկնիկային թատրոններից՝ տարազներ, տիկնիկներ, ինչ ասես: Իրար գտել ենք: Նա այստեղ երգչախումբ է հիմնում, ինչքան կարող եմ իրենց օգնում եմ, բացի ազգային երգերից, որպեսզի շարականներ էլ երգեն, ու ես իր վրա եմ հենվում, ինքը՝ իմ: Փառք Աստծո, շատ լավ բան է:

Սփյուռքում ճիշտ ձևով է պահպանվել կարգը. մեր եկեղեցում կարգը կատարում ենք, հետո գերեզմանի կարգն ա կատարվում: Սփյուռքում մաքուր մնացել են ավանդույթները: Հայաստանում մի քիչ աղավաղումները շատ են»:

Սոցիալական կյանք և համայնքային համախմբում

Քննարկվող առանցքային հարցեր. *համայնքային կապեր և հարաբերություններ, ներհամայնքային կյանք և ինտեգրում, համայնքների բազմազանություն:*

«Հայաստանցիները շատ մեծ օգուտ են ստանում այստեղ՝ JAF-ում հայերենի դասերի գալուց, որովհետև կան երեխաները 2-րդ դասարան են եղել այստեղ գալուց և գրել-կարդալ գիտեն, կան չգիտեն՝ փոքր են եկել, կան այստեղ են ծնվել: Գոնե տանը իրենց ծնողները հայերեն են խոսում: Երեխաները երբ որ խոսում են, հետո գրել-կարդալն իրենց համար ավելի հեշտ է սովորել, քան թե դասական սփյուռքի ներկայացուցիչների երեխաները: Հրաշալի սովորում են գրել, կարդալ, բայց չեն հասկանում, որովհետև չեն խոսում, որովհետև իրենք չեն լսում հայերեն:

Բավականին հաճախ [խմբ. միջոցառումներ ենք ունենում]: Օրինակ՝ նայած ինչ միջոցառում: Մենք տեղում միջոցառումներ ամիսը մեկ ունենում ենք: Հիմա, օրինակ, հունվարի 8-ին ունենք ներկայացում: Մի հոգանոց ներկայացում է՝ հայկական ծնունդի թեմայով: Պետք է Ձմեռ

պասպիկը գա և այլն: Ներկայացումը մի աղջիկ է արել, հայկական ծագում ունի, բայց իր ազգանունը Նիկոլոֆ է: Բայց մեծ հիշողություններ ունի ընտանեկան, հայկական միջավայրից: Շատ գեղեցիկ ներկայացում է ստեղծել:

Օրինակ, փորձի փոխանակման դասընթացներ են լինում Մարսելի կոնսերվատորիայի հետ: Մեր երեխեքը և Մարսելի կոնսերվատորիայի երեխեքը օրկեստր կազմեցին անցյալ տարի և մի ամբողջ ծրագիր պատրաստեցին Խաչատրյանի [խմբ. Արամ Խաչատրյան, կոմպոզիտոր] գործերից: Տարբեր տեղերում ելույթներ ունեցան, այդ թվում նաև՝ Մարսելի կոնսերվատորիայում: Կեսը ֆրանսիացի էին: Մենք մանկական օրկեստր էլ ունենք: Աշակերտների օրկեստր ունենք և մեծերի: Հետո, օրինակ, հրեաների հետ, կուբացիների հետ: Այստեղ շատ բրազիլացիներ կան: Դասերի փոխանակում ենք անում»:

«Մի քանի տարի առաջ եթե ինձ այդ հարցը տայիք [խմբ. դասական սփյուռքի և հայաստանցիների փոխհարաբերության մասին], կասեի, որ շփումը չկա և իրարից անջատ են: Քիչ հույս կար: Բայց վիճակը փոխվում է: Երևի ժամանակների պահանջները, վիճակի լրջությունը, Հայաստանի դժվարություններն են ստիպում, որ մարդիկ մոտենան իրար: Գուցե եկեղցին է մոտեցնում իրար: Հետո ժամանակն անցնում է, երիտասարդները, որ Հայաստանից են եկել, սկսում են տեղացիներին բնորոշ հատկանիշներ ձեռք բերել, որոնցով էլ մյուսներին մոտենում են: Ինչ-որ ընդհանրություն է ստեղծվում երկու խմբերի միջև: Հետաքրքիր բաներ կան: Երբեմն Հայաստանից եկած հայերը սկսում են արևմտահայերեն խոսել, սկսում են խոսել մյուսների նման, որպիսի չտարբերվեն և ավելի հեշտությամբ ընդհանուր լեզու գտնել:

Ինքնաբուխ է հիմնականում լինում: Օղակները կազմակերպություններն են, եկեղեցին, հանդիպման առիթներ, վայրեր: Բայց պատենշը մնում է: Տարբեր մարդիկ՝ տարբեր հոգսեր: Եվ հետո մի տարօրինակ բան կա, որ Հայաստանից եկած հայերի մոտ չկա, ավելի քիչ կա ժառանգությունը պահպանելու հոգսը, մտահոգությունը: Լեզվի ասպարեզում դա ակնհայտ է: Հեշտությամբ հրաժարվում են լեզվից կամ երեխաներին չեն փոխանցում: Սկսում են ֆրանսերենով խոսել երեխաների

հետ: Ասում ես հայերեն խոսեք, չեն լսում, չեն հասկանում: Չարմանալի է: Նրանց հոգսի մաս չի կազմում փոխանցելը: Տեղափոխվել են երկի այստեղի մարդ դառնալու համար»:

«Իհարկե, կան ընդհանուր խանութներ, որտեղ տնօրենը հայ է, բայց վաճառվող ապրանքը՝ ունիվերսալ: Բայց հայկական խանութները կենտրոնանում են հայկական ազգային սնունդի վրա, բաներ, որ Ֆրանսիայում չես կարող գտնել: Սպառողները բոլոր այն մարդիկ են, ովքեր ծանոթ են մեր հայկական խոհանոցին, մեր հայկական մշակույթին: Բացի հայերից՝ ռուսներ, ուկրաինացիներ, նախկին Սովետական Միության ներկայացուցիչներ:

Մարդիկ, իմանալով, որ ինչ-որ մեկը սեփական գործ է դրել, փորձում են աջակցել: Մարդիկ փորձում են իրար օգնել՝ իհարկե, նվազ չափով, քան որոշ այլ համայնքների ներկայացուցիչներ: Բայց, համենայն դեպս, հայության օգնություն իրար մեջ կա:

Մեր քաղաքի առումով 20 տոկոսից ավել չեն տա [խմբ. համայնքում ներառված հայերի թիվը]: Եվ անգամ ինձ թույլ կտամ ասել, եթե ավել տոկոս ասեն, ուրեմն ճիշտ չեն ասում: Չեմ ասում, որ բացարձակ ճշմատությանը տիրապետում եմ, բայց 15 տարի քաղաքում ապրելով, հոսքը իմանալով, մեծ բարեկամություն ունենալով, երեխաներս դպրոցներում և այլն, մաքսիմում 20 տոկոս»:

«Խնդիրներ կան, [խմբ. թաղամասերի, եկեղեցիների միջև բաժանումը], որոշ խնդիրներ կան, բայց դա չի խանգարում հարգել մեկը մյուսին: Խնդիրներն ավելի սուր են եղել սրանից 30 տարի առաջ կամ ավելի շուտ, բայց հիմա այդ դարում չենք, փառք Աստծո: Որովհետև քաղաքական գույներն ազդում են, մարդիկ կան, որ իրենք, օրինակ, եթե դաշնակցական են, իրենք իրենց եկեղեցին ունեն, իրենք այդ կողմ են գնում: Ավանդաբար այդտեղ են գնացել՝ պսակվում, թաղում անում, այնտեղ պատարագի գնում: Բայց դա չի խանգարում, որովհետև եկեղեցիները մեկ են, մենք խնդիր չունենք, մենք նույն թեմի մեջ ենք, բոլորն էջմիածնից եկած քահանաներ են: Դե բողոքականների հետ առօրեական շփում չկա ընդհանրապես:

Ապրիլի 24-ին բոլորը հավաքվում են Բոմոնի եկեղեցում, առավոտյան արարողություն է կատարվում, իջնում հուշահամալիր՝ քաղաքա-

կան վերնախավի ներկայացուցիչների հետ, ժողովրդի բազմության՝ կեսօրից հետո ժամադրությունը այստեղ է լինում, թուրքական կոնսուլան [խմբ. consulat - հյուպատոսարան] կողքն է, մեծ երթ է կազմակերպվում, իսկ օրն ավարտվում է եկեղեցում՝ հանդիսավոր արարողությամբ: Միայն այդ օրը լինում է էկումենիկ աղոթք, այսինքն մենք հնարավորություն ենք տալիս նաև իրենց, որ մասնակցեն, պատվելիներն ինչ-որ մի աղոթք ընթերցեն մեր եկեղեցում: Եվ ունենք մեկ կաթոլիկ հայկական եկեղեցին, և իրենց հոգևորականները, բնականաբար, բոլորի հետ մասնակցում են:

Կաթոլիկները շատ քիչ են՝ որքանով որ ես տեղյակ եմ: Մի եկեղեցի և մի քահանա ունեն: Բողոքականներն ունեն երեք եկեղեցի՝ տարբեր թաղամասերում: Իմացա, որ մի եկեղեցի այնքան չունի հնարավորություն շարունակելու, որ տվել են ինչ-որ հայկական աղանդի, եթե չեմ սխալվում, կարող է ինֆորմացիան սխալ լինի, բայց ուզում եմ ասել, որ իրանց վիճակն էլ խոսքը ավանդական բողոքականների մասին է, ոչ թե աղանդների: Աղանդները տներում լիքն են, ինչպես որ Հայաստանում:

Եթե մեկը մկրտված է, Առաքելական եկեղեցին ընդունում է նրա մկրտությունը, բայց եթե Հայ Առաքելական եկեղեցու դավանանքը չի ընդունում, չի կարող պասկադրվել հայ եկեղեցում: Նույնն էլ, եթե դու գնաս կաթոլիկների մոտ և կաթոլիկ չես, քեզ չեն պսակում: Ուրեմն հատուկ տարբերակ կա, եթե մարդը պատրաստ է դավանանքը ընդունի կամ դրոշմը, որովհետև, օրինակ, մկրտված են, բայց դրոշմված չեն: Հայ եկեղեցում մենք մկրտությունը արեցինք ջրով՝ անմիջապես մյուռոնով դրոշմում ենք: Իսկ իրենց մոտ երբեմն երեխան մկրտվում է ջրով, բայց չի դրոշմվում այդ պահին, պետք է մի քիչ մեծանա, հասունանա հետո դրոշմվի: Ուրեմն դրոշմը հնարավոր է կատարել: Դա անհատական մոտեցման հարց է, նաև այդ ճանապարհը կա»:

Համազգային դպրոցը բաց է, այնտեղ ֆրանսիացիներն էլ են սովորում, հայաստանցիներ կան, պոլսեցիներ, լիբանանցիներ: Պարզապես Համազգայինի ցանցը պատկանում է Դաշնակցությանը՝ լրիվ ֆրանսիական օրենքների մեջ տեղավորված»:

«Նոր սերունդը, թե ինչպես է կապված հայկականությանը, հայկական արմատներին, ծնողից կախում ունի: Իմ աղջիկը գնաց երկու տա-

րի աշխատեց Երևանում: Խոսում ենք երեխաների հետ, ասում է հայրս հայ է, ասում եմ բա դու ինչ ես: Ցավոք այս գաղափարն էլ կա: Ինչպես են պահում երեխաներին, մեծացնում»:

«Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները կամ անձինք լիարժեք կարող են այստեղ ազդել համայնքի տրամադրությունների վրա: Ես կարող եմ ասել, որ մենք շնչում ենք Հայաստանով: Առաջինը, որ անում ենք առավոտյան, դա Հայաստանի մասին լուրերը լսելն է: Իմ ընկերն այստեղ է մեծացել, Հայաստանն իր շունչն է, շատ լավ հողվածներ է գրում Հայաստանի մասին: Իր աշխատանքը նրա համար է, որ ֆինանսավորում գտնի Հայաստան ուղարկելու համար:

Հայաստանի մասին պատկերացումները ձևավորվում են՝ և մեդիայի միջոցով, և անձնական կապերով: Ֆրանկոֆոն ամենամեծ ամսագիրը՝ «Nouvelles d'Arménie magazine»-ն այստեղ ամեն թեմա շոշափվում է՝ մշակույթ, քաղաքականություն: Իրենց նախագահը մեծ դեր ունի քաղաքական շրջանակում, երբ հայ համայնքների տարեկան ճաշկերույթն ենք անում շատ քաղաքական գործիչներ են գալիս»:

Գ. ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Քննարկվող առանցքային հարցեր. *հայկական ինքնությունը պայմանավորող գործոնները համայնքում, երկրում (հիմնական տարրեր), ինքնության դրսևորման տարածությունները, լեզվի, ընտանիքի, կրոնի և եկեղեցում, այլ գործոնների դերը ինքնության պահպանման գործում, ծուլում՝ վրանգներ և մարահրավերներ:*

«Իրենց համար ցույցի երթալ, գոռալը, թուրք ասեն կամ Ադրբեջան ասեն, և այդ բանով գալիս են, երբ ցույց է լինում: Գալիս են 400-1000, բայց դա միայն հոգեպես է, գործնապես լեզուն, գիրը չկան: Ամենամեծ վտանգն է սփյուռքի մեջ՝ ծուլման ճամփան է: Այսօր, բարեբախտաբար, Հայաստանը կա: Շատերի համար որպես միայն պատկեր հայկականության Հայաստանն է: Ուրիշ բան չենք կարող ասել: Ուրիշ բան չեն տեսել: Հիմա իմ սերունդս կա: Իմ սերունդս նույն բանը չէ: Ես Հայաստանը ճանաչել եմ, նախ, գրքերում, ընթերցումների մեջ: Երբ ես առա-

ջին անգամ Հայաստան գնացի, երբ Էջմիածին գնացի 1988-ի՝ երկրաշարժի տարին, գնացի: Ինձ այնպես թվաց, որ առաջին անգամը չէ, որ հոն կերթայի: Այնքան ծանոթ էր՝ գրքերի մեջ, պատմության մեջ: Ինչ-որ տեսա՝ նուրություն չէր: Այդ բանը ունեցա նույնպես, երբ Ծիծեռնակաբերդ գացինք առաջին անգամ, որովհետև մենք վարժված էինք բոլոր այդ բաներին: Բայց հիմա այսօր միայն մեկ հայության պատկեր ունեն իրենց առջև՝ Հայաստանը և Ցեղասպանությունը: Ես երբեմն ասում եմ, որ «լավ է» թուրքերը մեզ կոտորեցին: Որ դա հանենք, տակը բան մը չի մնա: Ամեն մարդ իր տուն կգնա»:

«Դժբախտաբար եմ ասում, վերջին 5-10 տարի առաջ եկածների երեխաների մեջ մարդիկ կան, Հայաստանից են եկել, փորձում են նրանց հայերենով հարց տալ, ինձ ֆրանսերենով պատասխանում են: Ծնողներին այն հարցին, թե ինչու՞ երեխաները հայերեն չեն խոսում, պատասխանում են, որ ուզում ենք ինտեգրվեն կյանքի մեջ, ֆրանսերենից հանկարծ չնեղվեն, որ իրենց օտարի պես չզգան: Ասում եմ քիչ առաջ ասածս մարդկանց մասին, նայեք այս սերունդներին, դուք ճանաչու՞մ եք՝ մեր թաղի ժողովուրդն են: Նրանք, եթե այն վատ տարիներին առավոտ ժամը 5-ին արթնացել, գիշերը 11-ին քնել են, իրենց ծնողները ասել են, որ տան մեջ անպայման հայերեն կխոսեք: Ասում եմ մի հատ նայեք իրենց. ո՞ր մեկն է անհաջող, ո՞ր մեկը նպատակին չի հասել, ո՞ր մեկը տուն-տեղ, կրթություն չունի, ո՞ր մեկն է նեղվում: Դրա հակառակ կողմն էլ կա. ազգանունիդ «յան»-ն էլ պետք է հանես, չնայած, դժբախտաբար, նման օրինակներ հանդիպում ես»:

«Առաջին դպրոցը, որ այստեղ ունենք, Համազգայինն է, որ 40 տարի գոյություն ունի, ծրագրեր ունի՝ Բեյրութից եկած: Այսպիսի 5 դպրոց կա աշխարհում, լավ են աշխատում մինչև այսօր: Բեյրութն է, որ ղեկավարում է: Այնտեղից են ծրագրերն ու հայերենի ուսուցիչները գալիս: Կան նաև ֆրանսիական դպրոցներ, որովհետև այստեղ իրավունք չունես ուրիշ դպրոց, ուրիշ լեզվով, պետք է ֆրանսերեն լինի: Պետությունը հիսկիչներ ունի, որ գալիս ստուգում են ֆրանսերենն ինչ ծրագրով է: Անցնում են հայերեն լեզու, պատմություն, մշակույթ, և դպրոցն ապրում է հայկական տոներով, ավանդույթներով: Օրինակ, Սուրբ Ծննդյան ժա-

մանակ մեր երեխաները ընկնում են տներով, երգում հայկական երգեր: Շատ քիչ են այլազգիները [խմբ. սովորողների մեջ]: 30 հոգուց 1-ը:

Ուզում ենք ավելի շատ առաջնահերթությունը տալ հայերին: Ընտրում ենք նրանց, որոնք ծրագիրը հաղթահարում են: Այս ծրագիրն ունի երկու լեզու, և մի քանի հոգի ֆրանսիացիներ ընդունում ենք, որովհետև ֆրանսիական պետությունն էլ ուզում է հսկել՝ կարդում և խոսում են արդյո՞ք հայերեն: Ֆրանսիական ընտանիքի երեխան, որ մտնում է, 5-6 տարի հետո կարողանում է կարդալ, խոսել: Հասկանում է ամբողջ հայկական ավանդույթները, հայ է զգում իրեն:

Քանի որ ընտանիքները չեն պահում լեզուն, նրանց համար է, որ արդեն հայերենը մոռացել են և դպրոցում սովորում են: Սկզբում այսպես էր: Հիմա շատ են հայախոսները՝ նամանավանդ Հայաստանից եկածները: Գրել-կարդալ է պետք, պատմությունը իմանալ: Ինչու՞ ենք հայերեն խոսեցնում, որովհետև ֆրանսիական միջավայրում այլ տեղ չկա, որ գործածեն: Դպրոցում, օրինակ, ճաշի ժամանակ միշտ հայերեն պետք է խոսեն:

Փորձում են միշտ հայ լինի [խմբ. տնօրենը]: Դասավանդումն արևմտահայերեն է: Խնդիր լինում է, բայց ասում են ոչինչ: Այս դպրոցն այս լեզվով է, ուրեմն պետք է ընդունեն: Քանի որ Լիբանանի ծրագիր է, չենք փոխում: Ուսուցիչներ ասում են, եթե դու խոսում ես արևելահայերեն, վնաս չկա, դու կարող ես քո ուզած հայերենով խոսել: Դասն արևմտահայերեն է, բայց երեխան խոսում է այնպես, ինչպես ուզում է:

Սա ամենօրյա դպրոց է, բայց կան ասոցիացիաներ, շաբաթօրյա դպրոցներ: Ունենք Աբովյան դպրոց. սա ավելի շատ Հայաստանից եկող երեխաների համար է, շաբաթը երկու անգամ՝ շաբաթ և չորեքշաբթի: Կցված է Սուրբ Թարգմանչաց եկեղեցուն: Ավելի շատ արվեստի հետ կապված առարկաներ են դասավանդվում՝ նկարչություն, շախմատ: Շատ խմբակներ կան:

JAԲ անունով կազմակերպություն կա, որը շատ ուժեղ է մեր ժամանակներում: Մեր ծնողների ժամանակ սրանք ավելի կոմունիստ էին: Սովետից հետո՝ հիմա ավելի շատ հայկական մշակույթի կազմակերպություն է դարձել: Շատ բարձր մակարդակով զբաղվում են լեզվով: Պարախումբ ունեն շատ սիրուն: Մասնակիցները գալիս են և երեխաներին

սովորեցնում են, շատերը Հայաստանից եկողներն են՝ քանոն, դիոլ, որ այնտեղ մասնագետ են եղել, եկել այստեղ դասավանդում են: Մոտավոր 300 սան ունի: Դրանք կանոնավոր դասեր են, ծնողները վճարում են, շատ կազմակերպված և շատ մեծ համերգներ են կազմակերպում ամեն տարի: Ունենք մեծ ֆրանսիական սրահներ, որ իրենք գնում են: Մշակույթի մեջ իրենք են առաջատար:

Կան փոքրիկ կազմակերպություններ՝ իր փոքրիկ համայնքով: Օրինակ, Գեղամ Բաղդասարյանի կենտրոնը 40 տարի է գործում է: Շաբաթօրյա դպրոց է Բոմոնում, երեխաները գնում են՝ հայերեն են խոսում, ժամանակ անցկացնում»:

«Նոր եկածները լեզու, մշակույթ չիմանալու խնդրի առաջ են, և, պարզ է, իրենց համար ամենալավ տեղը՝ դա հայությունն է: Մյուս կողմից էլ՝ հին համայնքն ավելի, քան 20-30 տարի ապրողները կարող են աշխատանքի աղբյուր լինել այդ ընտանիքների համար:

Պոլսահայերը ձգտում են իրենց մոտ վերցնել աշխատանքի հայերի: Նույնիսկ ֆրանսահայերի հեռու շերտերը, որ միայն արմատներով են կապված համայնքին և ակտիվ չեն, բայց եթե պետք է իրենց երեխա պահել կամ ծնողի, անպայման զանգում, խնդրում են հայ միջավայրից՝ մանավանդ եկեղեցուց մեկին, որ նոր է եկել և ուզում է աշխատանքի ընդունվել»:

«Այստեղ շատ բան ենք սովորում ինքնուրույն ճանաչման ու պահպանման առումով: Օրինակի համար՝ քահանան ինչ է սովորում: Եթե դու գաս քնես, հանգիստ քեֆ անես, կիրակի օրը գնաս պատարագ անես՝ նման մի տեղ Պրադո փողոցի վրա, մարդ չի գա քո եկեղեցի, որովհետև, նախ, դիմացը հայկական տներ չեն Բոմոնի կենտրոնում չեմ, ոչ էլ Սեն Ժերոմի, որ իմանամ այս թաղն է, տատիներն առավոտ արթնանալու են, գան պատարագի, որ զանգը տաս: Չէ, պետք է իրենց ինչ-որ բաներ առաջարկես, պետք է ուղեղդ աշխատացնես, ջանք դնես, չգիտեմ՝ տարբեր բաների շուրջ համախմբես: Օրինակ, այստեղ մենք նոր-նոր մի երգչախումբ ենք ստեղծել: Երկու խումբ ունենք արդեն՝ փոքրիկների և մեծերի, «Էջմիածին» մանկական երգչախումբ: Չգիտեմ Եվ-

րոպայում ուրիշ տեղ կգտնե՞ք, թե՛ ոչ, շարական են սովորում այս երեխաները, զուտ ազգային հայկական բաներ»:

«Ինքնությունը պահողը ինձ համար ընտանիքն է: Այստեղ շատ բաներ կան, օրինակ, որ ֆրանսիական դպրոց են գնում, բարեկամներ են ունենում: Երբ որ երեխան փոքր է, ծնողը պետք է մի քիչ ստիպի, ոչ շատ, որ բոլորովին հակառակը չստացվի: Բայց հասնի նրան, որ իրեն հայ զգա»:

«Ինքնություն պահելն այնքան լայն հասկացողություն է. արդյո՞ք միայն լեզուն է, կրոնը: Ես իմ երեխաների օրինակով ասեմ: Լեզուն իմ համար շատ կարևոր է, որովհետև դրա միջոցով մենք մշակույթի, պատմության, հոգեբանությունն ենք ընդունում մեր մեջ: Երբ ուսումնասիրեցի, հասկացա, որ ֆրանսերենի հետ ես վերցրել եմ ֆրանսիական մշակույթը, հոգեբանությունը, հազար ու մի բան: Առաջին կարևոր էլեմենտն իմ համար լեզուն է:

Լիոնում կա համայնք: Ես որ եկա Ֆրանսիա, մեծ ինտեգրում ունեի: 2006 թվականն էր, այդ տարի Տուլոնի մշակութային կենտրոնում հայերեն լեզվի դասեր բացվեցին ու ինձ հրավիրեցին, որ դասավանդեմ: Իհարկե, ես հայոց լեզվի ուսուցիչ, դասախոս չեմ, բայց սկսնակների համար կարող էի: Ինձ համար դա մեծ փորձ է՝ տարիներ շարունակ հայերեն դասավանդել այդ կենտրոնում, որտեղ այցելում էին հիմնականում ծագումով հայեր, չկար տարիքային սահմանափակում: Բոլորն այստեղ ծված հայեր էին, որ տանը խոսել կամ չէին խոսել, հայերեն մի երկու բառ տիրապետում էին, բայց ամենակարևորը ցանկություն կար լեզվին տիրապետելու և արտահայտվել կարողանալու: Այնուհետև այդ նույն կենտրոնում ինձ առաջարկեցին հայկական խոհանոցի դասընթացներ անել: Խոհանոց էր, որտեղ յուրաքանչյուրն ուներ իր վրացարանն ու գազօջախը: Այս դեպքում միայն հայեր չէ, որ գալիս էին: Ինչու՞ խոհանոցի մասին ասացի, որովհետև այն նույնպես մշակութային տարր է:

Այսօր ես ունեմ ճանապարհով անցած սերունդ, լիարժեք լավ տիրապետում են հայերենին, որովհետև ջանասիրաբար շարունակում էին սովորել: Բացի օջախներից այսօր հնարավորություն ունենք ինտերնե-

տով, կա հարթակ, որ կարող են հայերեն սովորել, առարկաներ ուսումնասիրել:

Բոճոնի համայնքում կասեի չկա հայկականություն տարածող հարթակներ: Ցավում եմ, որ չկա: Այստեղ համալսարան ավարտած մարդիկ են եկել, այսինքն ցածր կրթական ցենզ ունեցող մարդիկ չեն, բայց չեն զարգացնում իրենց գիտելիքները: Երբեմն հույսը դնում են իմ վրա, որ դասերը նորից սկսեմ, երեխաները հավաքվեն դպրոցում, և դա ստիմուլ [խմբ. խթան] կհանդիսասանա լեզուն սովորելու, բայց դե իրենք էլ կարող են անել: Ես երկու տեղ եմ աշխատում: Ֆրանսիայում նաև պետական աշխատող եմ:

Անօրինական բնակվողների կարգավիճակը խոչընդոտում է՝ ինչ-որ կերպ դրսևորել իրենց հայությունն, այն ճիշտ ձևով, որով պատկերացնում ենք: Ու ոչ միայն, կացության քարտ ձեռք բերելը շատ բարդ պրոցես է, որ գալիս են լիարժեք անօրինական ձևով: Բոլորի պատմությունը գրեթե նույնն է: Ինչ-որ մեքենա բերել իրենց իջացրել է իբրև չգիտեն, որ քաղաքում են, չեն կարող հիմա Հայաստան վերադառնալ: Ուրիշ երկրով են գալիս, որպեսզի Հայաստան վերադառնալու ճանապարհ չլինի, ոչ մի փաստաթուղթ չունեն: Իրենք իրենց մխրճում են ստիմեջ և նոր կերպար են իրենց համար ստեղծում: Ի դեպ, այդ մարդիկ իրենց ինքնությունը կորցնում են: Շատ եմ շփվել նմանատիպ մարդկանց հետ, անուն, ազգանունի փոփոխություն են արել, այդ մարդիկ հոգեբանորեն շատ ծանր պրոցեսի մեջ են»:

«Գաղութը կազմակերպված գաղութ է: Երբ հայերը հոս եկան, առաջին իրենց հավաքական ձեռնարկն ինչ էր՝ մի եկեղեցի հիմնել, եկեղեցու քովը սրահ հիմնել և այնտեղ հայերեն դաս տալ: Եվ այդ թվականներում՝ 1926-27, մինչև 1933թ. Մարսելի մեջ շինվեց ութ Հայ Առաքելական Եկեղեցի: Ութն էլ առաքելական: Նրա կողքին կա նաև ավետարանական եկեղեցիներ և կաթոլիկ եկեղեցիներ: Այդ 8 եկեղեցիների քով սրահներ եղան և այդտեղ սրահների մեջ հայերեն դասավանդեցին այն ժամանակ: Մինչև այսօր այդ ամբողջ եկեղեցիները կան: Տեղական միջոցներով է եղել: Ժողովրդի ունեցածով և չունեցածով: Իսկ ինչու ութ, որովհետև թաղերի մեջ բաժանված էին: Հնո թաղեր կան, որ հայաշատ

թաղեր են, ավելի ամփոփ: Քաղաքի կետրոնը ավելի ցրված են: Բայց շրջանների մեջ՝ Բոմոն, Սեն Լու, Սեն Ժերոմ, Սեն Անտուան և այլն, փողոցներ կան, ուր հայերը պատմություն ունեն: Այդ շրջանների մեջ ամեն շրջան իր եկեղեցին ունի, իր քահանան այստեղից է դրվել: Հիմա քահանաները էջմիածից են գալիս: Տեղական այլևս չկա: Այստեղ է պատրաստվել քահանա: Նրանք, որ կուզեին քահանա լինել, դրա հատկություններն ունեին, քանի որ թեմ չի եղել, այն ժամանակ նրանք, որ կուզենային լինել [խմբ. քահանա], քառասուն օր ծոմ էին պահում, ճգնավոր կյանքով ապրում, պատրաստվում էին: Մի եպիսկոպոս կար Փարիզ էր նստում, գալիս էր քահանա էր օծում: Մարդը արհեստով կոշկակար էր, բայց կուզեր քահանա լինել: Ուրիշը ուսուցիչ էր, կուզեր քահանա լինել: Այդ ձևով սկիզբը քահանաներ եղան: Եվ պաշտոնները վարեցին, մինչև որ եկան մի քիչ ավելի պատրաստված քահանաներ՝ մի քիչ Անթիլիասից, մի քիչ Երուսաղեմից, մի քիչ Պոլսից և հետո՝ այս վերջին տարիներում ամբողջը էջմիածնից:

Հիմա որոշ շրջանների մեջ միակ հայկական հետքը, որ մնացել է, եկեղեցին է, որի շուրջ հավաքվում են: Եկեղեցին կարևոր մի հաստատություն է կամ կենտրոնական, որի շուրջ հայությունը հավաքվում է: Չեմ ասում, որ ամեն տեղ եկեղեցին լցվում է: Բայց այս ասելիքներով ուր գնան, կգա ժողովուրդը: Եվ իր դերն ունի, անշուշտ: Կարող է ավելի այդ դերը ընդլայնել, զարգացնել, օրինակի համար, ավելի հայեցի դաստիարակություն տալ եկեղեցիների մեջ, ինչն այսօր հակառակն է տեղի ունենում: Քահանաներն ուզում են իրենք հարմարվեն շրջանակին և ոչ թե շրջանակը հարմարվի իրենց, քարոզները ֆրանսերեն, որոշ աղոթքներ թարգմանությամբ ֆրանսերեն, որպեսզի ժողովուրդը հասկանա: Ես դրան շատ համաձայն չեմ, որովհետև պետք է ավելի ճիգ անեն, որ սովորեն: Դա դյուրին ճամփա է: Այսօր մեկ կամ տասը կլինեն, վաղը 150 կլինեն, և 20 տարի հետո պատարագը ֆրանսերեն կլինի:

Ամեն կազմակերպություն եկեղեցու հետ լավ հարաբերություններ ունի: Հիմա Մարսելի մեջ այս Մշակույթի տունը առաջին հաստատությունն է՝ հավաքական մշակութային գաղութային կառույցի բանով, առաջինն է, որ հիմնվեց 47 տարի առաջ: Բոլոր միությունների կամ կազմակերպությունների դռները բաց են, անդամները՝ գաղութն են»:

«Գիտեք, եկեղեցին օգտվում է անցյալից եկած պատկերից, համբավից և այլն: Բայց իրականում ինձ թվում է, որ արմատների հետ կապը պահպանելու միջոց է: Հավատքը կա: Չեմ կարող դատել՝ ինչ է կատարվում ամեն մեկի սրտում: Հավատքը, հավանաբար, դեր է խաղում: Բայց ինձ թվում է, որ դա ամենակարևորը չէ: Արմատների հետ կապը պահպանելն է հիմնական ուժը, որը մարդկանց բերում է եկեղեցի, անկախ նրանց, թե որտեղից են գաղթել: Եվ մի տեսակ հանդիպման վայր է հանդիսանում, որի շնորհիվ կապ է ստեղծվում տարբեր համայնքների միջև: Ոչ միայն հայաստանցիներն են առանձնանում, այլ նաև այլ տեղերից եկած մարդիկ, օրինակ՝ պոլսահայերը: Պոլսահայերն առաձին խումբ են կազմում»:

«Բարեբախտաբար, եկեղեցիները գործում են, քահանաներն ակտիվ են: Եկեղեցիներն իրենց վարչություններն, իրենց ծուխը, իրենց տիկնանց միությունն ունեն: Շատ է, թե քիչ՝ դա ուրիշ հարց: Երիտասարդաց միություններ կան՝ քիչ կամ շատ: Մայր եկեղեցին երկօրյա դպրոց ունի: Այստեղ մենք միօրյա դպրոց ունենք:

Գործակցում ենք [խմբ. մյուս եկեղեցիների հետ] ազգային որևէ ձեռնարկի ժամանակ: Այստեղ կան հայ ավետարանչականներ, երեք եկեղեցի ունեն, կարծեմ, բայց քիչ թվով, մեկը, կարծեմ, փակվեց: Հայ կաթոլիկները մեկ եկեղեցի ունեն քաղաքում: Քիչ են շատ, պատարագների հաճախականությունն է քիչ, նույնիսկ ամիսը մեկ անգամ դժվար է կազմակերպել: Հայր Սուքիասը առողջական խնդիրներով տեղափոխվեց, այս պահին մնացել են առանց հոգևորականի:

Անթիլիասը չունի Ֆրանսիայում առաջնորդական աթոռ:

[խմբ. պատարագների ժամանակ] Մեծ թիվ են կազմում 40-ից բարձրները, երիտասարդները քիչ են գալիս, դժբախտաբար: Պատճառն իրենց աշխատելն է: Հիմնականում կախված է տեղից, խիտ բնակեցվածությունից: Թիվ չեմ կարող ասել հստակ: Իրենք իրենց եկեղեցին ունեն, դա էլ է բաժանում: Ասում են՝ սա մեր եկեղեցին է: Ասում են՝ բայց բոլոր եկեղեցիներն էլ ձերն են, բոլորն էլ առաքելական: Պետք է հաճախ ուխտագնացություններ կազմակերպել քահանաներով, որ հավաքես, խառնես իրար: Մայր եկեղեցին է երևի, որ չնայած շուրջը բնակ-

վողները հայեր չեն, բայց հայաստանցիները շատ են գնում այդ եկեղեցի: Բոմոնի եկեղեցին է, որ շատ հայերով է բնակեցված՝ Սեն Ժերոմը»:

«Անկախությունից հետո Հայաստանից նոր եկածներ կան: Սկզբում գալիս են եկեղեցի՝ մինչև փորձ ունենան, տուն, հետո մտնում են բնականոն կյանքի մեջ: Այդ ժամանակ շատ հեշտ է մարդկանց համար հեռանալ եկեղեցուց: Շատերը հեռանում են:

Եկեղեցին հազարամյակով պահել է իր ուղղությունը՝ խոսքը գրաբարով է: Հաճախ ասում ենք հայերենը մոռանում ենք, սերունդը շատ արագ է մոռանում լեզուն: Ծնողները խոսում են տանը, հասկանում են, բայց իրենք արդեն չեն խոսում: Առավել ևս, որ գալիս են եկեղեցի, ասում են չենք հասկանում՝ ինչ է ասում գրաբարով: Ճիշտ է, որ ուզեն՝ կսովորեն: Առկա է այս խնդիրը, բայց եկեղեցին էլ ասում է մենք պահում ենք մեր ավանդությունները, հիմքը այսպես է, իրավունք չունենք փոխելու: Օրինակ, կաթոլիկներն էլ շատ են ձևափոխել ամեն ինչ, ամեն քահանա իր ձևով է անում, դա էլ մի ուրիշ խնդիր է:

Հաճախ տեսնում եմ, որ դպրոցի ուսուցիչներն աթեիստ են: Նրանք տարածում են, որ գիտելիքն է կարևոր. այն, ինչ որ տեսնում եք, այն, ինչ ապացուցելի է: Ամեն մեկը թող տանո իր կրոնն ուենա, Աստվածաշունչը, բայց չտարածվի:

Մեկ այլ խնդիր կա, որ մուսուլմաններն են շատացել, և իրենք շատ ակտիվ են իրենց կրոնական հարցերում, ուր էլ լինեն՝ տանը, աշխատավայրում: Ուտելիքի հարցում էլ են խիստ, օրինակ, դպրոցներում ասում են մենք այս խոզի միսը չենք ուտում, և, արդյունքում, փոխում են սնունդը: Աղջիկներն ուզում են փակել գլուխը աշխատավայրում, պայքարում են, խնդիրներ է առաջանում: Քանի որ շատ են, պետությունը չի կարող շատ «ոչ» ասել: Բողոքում են, եկեղեցու մեջ գլուխ են կտրում, պայքարում են, ստիպված պետությունը հանդուրժող է դառնում»:

«Մարդիկ գնում են տարբեր այլ եկեղեցիներ, տարբեր աղանդների ներկայացուցիչներ կան: Մարդիկ, որ լքում են Հայաստանը սոցիալ-տնտեսական պատճառներով, սոցիալ-տնտեսական պատճառներով էլ գնում են այլ ուղղություններով [խմբ. կրոնական ուղղություններով]: Ես գտնում եմ, որ դա կապված է որոշակի կրթական խնդիրների հետ,

որոնք կային Հայաստանում: Հայ եկեղեցու մասին շատ թույլ պատկերացում կա սերնդի որոշ ներկայացուցիչների՝ վաղ սերնդի մոտ, որոնք եկեղեցու պատմություն չեն անցել: Շատերն են ասում՝ ես հայ քրիստոնեա եմ, բայց որ հարցնում ես՝ դա ինչ է նշանակում, կաթոլիկներից կամ ուղղափառներից տարբերությունը չի հնչում: Եթե մարդը չունի կրոնական մինիմալ գիտելիքներ, չի կարող հոգևոր պատասխան տալ:

Հիմնականում այստեղի ծնված-մեծացածներն են, Սիրիայից եկածներն են կաթոլիկ: Դավանանքը փոխելը հիմնականում գնում է դեպի նոր ուղղություններ՝ հիսունական, ավետարանչական և այլն: [խմբ. նրանք ընդունվում են համայնքի կողմից] Վատ: Կարող են ինտեգրվել [խմբ. համայնքի մեջ]: Ոչ ոք ոչ ոքի չի խանգարում: Նման կառույցները ցանկություն չունեն ինտեգրվելու: Նման կառույցի նպատակն առանձին լինելն է»:

«Սփյուռքում, գուցե, սյուբեկտիվ է, բայց այդ [խմբ. միավորող] կառույցը եկեղեցին է: Սրա շուրջ հավաքվածները ո՛չ կուսակազմականներ են, ո՛չ այլ կառույցների անդամներ, այլ հայեր են, որ եկել մասնակցում են հայ եկեղեցու տոնի կամ համայնքի կյանքին: Այստեղ է, որ դրոշակներն իջնում են, և բոլորը մի ազգություն ունեն՝ հայ, կա մի տեղ, որտեղից են եկել, ինչ պատճառով են եկել»:

Դ. ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի հետ կապը և ընկալումները

Քննարկվող առանցքային հարցեր. *Հայաստանի մասին ընկալումները համայնքում, երկրում, այդ ընկալումները պայմանավորող գործոնները, Հայաստանի հետ կապի ոլորտները, ՀՀ ներքին և արտաքին քաղաքականությունների ազդեցությունը հայրենիքի կերպարի ձևավորման, հայրենիք-սփյուռք հարաբերությունների վրա:*

«Հայաստանի այս պատմություններից [խմբ. պատերազմ, հետպատերազմական իրավիճակ] հետո նորից վերսկսվեց, (որովհետև ինտերնետի միջոցով բոլորը տեղյակ են՝ ինչ է կատարվում, նախկինում

տեղյակ չէին, միայն պետական մամուլից էին կարդում) այն նույն պրոցեսները, որ Հայաստանում է կատարվում, նույնն այստեղ էլ է կատարվում: Ես ընկերներ ունեմ, ավելի ճիշտ ազգականներ, այնպես է ստացվել, որ իրենց օֆիսում բոլորը հայաստանցի հայեր են: Տեսան, որ շատ վատ է իրավիճակը և որոշում կայացրեցին, որ հայկական հարցով չեն խոսում, որպիսի կարողանան աշխատել: Ոչ մեկ չէր ցանկանում իր գործը կորցնել: Տարբեր քաղաքական հայացքներ ունեն և որոշեցին, որ ընդհանրապես չեն խոսում այդ մասին: Վերջ: Բոլորին ճանաչում ենք, ովքեր այդտեղ աշխատառում են: Բոլորն էլ նորմալ մարդիկ են: Նույն բաներն այստեղ է կատարվում, բնականաբար»:

«Հայաստանի և Արցախի խնդիրները մնում են ուշադրության կենտրոնում: Դրանց շուրջը շատ մարդիկ են համախմբվում, անկասկած, այդ գործունեությունները, որ կապված են Հայաստանի և Արցախի այսօրվա խնդիրների հետ:

Չեմ զգում դա, ինձ թվում է, որ համարյա թե չկա [խմբ. մերժում, ժխտում՝ կապված պարտության հետ]: Գուցե ոմանք մենակ ավելի շատ կանեն [խմբ. բարեգործություն, նվիրատվություն], քան մյուսների հետ: Ընդհանուր առմամբ, արվում է, և մարդիկ միջոցներ են տալիս: Նորից դժվարանում եմ դատել, որովհետև չունեմ գործիք չափելու: Ինձ թվում է, որ ֆրանսահայ համայնքն առատաձեռն է, այսինքն սիրով է տալիս: Համահայկական ֆոնդը կա, որ միջոցներ է հավաքում, գուցե կարող է շատ ավելի շատ: Մարդիկ իրենցից կտրում տալիս են»:

«Բոլորն էլ համարում են [Հայաստանն է իրենց հայրենիքը]: Պապիկներ կան, այստեղ իմ կողքն են ապրում, 87 տարեկան է, կարծեմ, զենք ուներ տանը, վերցրել եկել էր: Հայաստանցի չէ, այստեղ է ծնվել: Ամեն դեպքում, այդ ընկալումը կա՝ իրենց հայրենիքն է, իրենց տունն է: Դուք էլ լսած կլինեք, որ հանդիպել եք սփյուռքահայերի, ովքեր ասում են՝ Հայաստան գնացինք, աղվոր կերանք: Ասում եմ՝ Հայաստանը ուտելու տեղ չէ և ոչ էլ թաղում անելու տեղ: Հայաստանը վայր է, որտեղից պետք է էներգիա ստանաս, որտեղ Աստված է իջել, որն առաջին քրիստոնյա երկիրն է: Տեղեր կա բացատրելու, որ գալիս հասնում ես ու չես կարող բառերով բնութագրել: Եվրոն հարմար գնով փոխելու և ընկեր-

ների հետ հաց ուտելուց վեր է Հայաստանը: Ուրեմն դու այն չես ընկալել, քո սրտի մեջ Հայաստան չկա: Որ մեկ-մեկ նեղվում եմ, խոսում եմ այս մասին, բայց նրանց ես չեմ դաստիարակել, իրենք դաստիարակված են արդեն»:

«Ամենքի համար չեմ կարող պատասխանել, բայց կարող եմ ասել, որ սերունդներ եղան, որոնց համար բավական դժվար էր, որովհետև բավական ռասիզմ կար ֆրանսիացիների կողմից: Ուզեցին մի քիչ հեռանալ, մի քիչ մոռանալ իրենց հայությունը: Բայց հիմա նոր սերունդների մեջ երիտասարդությունը ուզում է հայերեն սովորել: Եվ նրանք գնում են [խմբ. Հայաստան] ու վերադառնում են խանդավառ»:

«Իրենք [Արևմտյան Հայաստանից գաղթած մարդիկ] այդ Սովետ Միության պատմությանը չմասնակցեցին: Մի քիչ հեռու մնացին, մի քիչ օտար, թեև շատ մարդիկ ճամփորդել են այդ տարներին, բայց ոչ այնքան: Դրա համար մի քիչ տարբեր է: Գիտեք, այն տարիներին դյուրին-դյուրին Հայաստան չէիք երթա: Հիմա օդանավ եք նստում և Երևան հասնում, ձեր ուզածի պես կարող եք պտտվել: Այն ժամանակ այդպես չէր: Դժվար էր, կապերն ավելի թուլացած էին: Թեև շատ կապ կար, քանի որ թերթեր էինք ստանում, ամեն մարդ կարդում էր:

Ճիշտ է, որ մարդիկ իրենց Արևմտյան Հայաստանը չեն մոռացել: Որովհետև հիմա տեսնում եմ շատ երիտասարդներ գնում են իրենց պապերի գյուղերը տեսնելու: Ինչպես տարիներ առաջ ես գնացի: Իմ պապերի շրջանը չգնացինք, Մուշ գյուղը գնացինք, նաև Վան, Խարբերդի կողմերը: Բայց, անշուշտ, շատ տխուր է: Շատ քիչ բան է մնացել, շատ քիչ հետքեր կան»:

«Նրանք, ովքեր այստեղ հայկականությամբ են զբաղվում կամ սիրահայերի խնդիրներով, բոլորին էլ Սովետական Հայաստանի և այսօրվա իրադարձությունները իսկապես ամեն օր տանջում են: Ես Լաչին եղել եմ: Երբ համահայկական հիմնադրամը առաջին անգամ 6 կմ ճամփան սկսեց՝ Գորիսից մինչև Լաչին, ես այնտեղ եմ եղել: Այն ժամանակ Ղարաբաղի [խմբ. Արցախ] նախագահը Քոչարյանն էր: Ես կողքին եմ եղել, նկարները ունեմ, երբ ժապավենը կտրեցինք: Հիմա, որ այդտեղ ամենը փակած է և շրջափակում է, դա մեր մեծ մտահոգությունն է: Մենք

այսօր Ֆրանսիայի համար ասում ենք, որ Ֆրանսիան ասում է, որ մենք բարեկամ երկիր ենք, բայց գործնապես բան չկա հետևում: Եթե բարեկամ երկիր ես դու, Հայաստանին զինամթերք տուր, դրամ տուր: Միլիարդներով դրամ են տալիս Ուկրաինային: Թող տան, բայց հայերին էլ: Այսօր նպատակը ուրիշ բան չէ, եթե ոչ Թուրքիայի և Ադրբեջանի, քան Արցախի հայերը այդտեղից դուրս հանեն, որ ձգեն երթան: Ամեն տեսակի նեղություն պիտի անեն, որպեսի ձգեն երթան՝ գաղթեն, երթան ուրիշ տեղ: Եվ ասեն, որ այլևս կովող չկա: Այդ է վերջնական նպատակը: Եվ դրա դեմ պետք է պայքարեն: Եվ դրա դեմ պայքարելու համար բոլորը պետք է, նույնիսկ եթե փողոց չեն իջնում, բայց սովիդար լինեն: Այսօր ֆրանսիացին փողոցում մեզ հետ մի բան կանի, բայց գործնապես ոչ մի բան չկա: Այսօր ոչ մեկը գործնապես բան չի տա Հայաստանին»:

«Հայրենիքի մաս է [խմբ. Հայաստանը], անշուշտ, որովհետև և՛ Արևելահայաստանը, և՛ Արևմտահայաստանը մերն է: Ոմանք պատմական Հայաստանին էլ են նայում, այսինքն չենք ասում կորցրել ենք՝ վերջացավ: Ոչ, այդ պայքարն էլ կա, իհարկե, ոչ բոլորի կողմից, բայց դա գոյություն ունի: Արցախի հարցն էլ կա: Երբ որ պայքար կա, հայերը միանում են, բայց երբ հարմարավետություն կա, աշխատում են, ժամանակ չունեն, միայն տագնապի պահերի են համախմբվում:

Այս տարիքում ֆրանսահայեր կան, որ ուզում են գնալ Հայաստան, սակայն հիասթափված են Հայաստանի վիճակից: Սիյուռքից շատ օգնություն եղավ, բայց շատերը այս ֆոնին [խմբ. խորապատկեր] հարստացան: Երբ նստում ես տաքսի, հյուրանոցում, ամենուր այդ միտքն էր՝ օգնել Հայաստանին: Արդեն պետությանը չեն ուզում օգնել, միայն անհատներին, որովհետև տեսան, որ շատ մեծ գումար գնաց հակառակ ուղղությամբ: Այդ օգնությունը, որ պետք է պետությունը ծախսեր կրթության, բանակի վրա... Այս պատճառով հիասթափվում են:

Չեմ կարող ուրիշի մտածելակերպն ասել: Իմ տեսակետն այն է, որ նոր ղեկավարությունն էլ նախորդների նման այդ դրամը ծախսում է դրսում, ոչ հայերի վրա: Նորից տեսնում ենք, որ շատերն աղքատ են, աշխատանք չկա: Սա շատ դժվար հարց է: Մենք դրսից չենք հասկանում՝ ինչ է կատարվում պետական գործերում»:

«Ես ձեզ, որպես Հայաստանից եկած մարդ, կարող եմ ասել, շատերի համար Հայաստանը մի տեսակ անշոշափելի երևույթ էր՝ իդեալական հայրենիք, բայց բոլորս իջանք ինչ-որ տեղից, և մարդիկ հասկացան, որ Հայաստանում, բացի սննդի, դպրոցի և երկրաշարժի գոտու խնդիրներից, շատ ավելի լուրջ խնդիրներ կան, որոնք լուծում են պահանջում:

Ես կասեի հակառակը՝ ավելի մեծացավ ցանկությունը Հայաստան գնալ ապրելու: Փոխանակ մարդիկ վախենան, բայց հակառակը: Օրինակ՝ մարդ ունենք, պաշտոնական լուսանկարիչ, ինքն իր նախաձեռնությամբ ճակատ է գնացել Արցախում, կամավոր գնացել նկարել է ռեպորտաժներ և այլն: Ինքը այստեղ ծնված, մեծացած, արմատներով լիբանանահայ: Հայաստանի Հանրապետության հետ ինքը կապ չի ունեցել: Գնացել և եկել է, բնականաբար, բայց վերջին իրադարձություններից ավելի ոգևորված, ավելի լարված, բազմիցս սեփական ֆինանսներով, այսինքն՝ ուղղակի նվիրվածությամբ գնացել է և արել: Եվ այդպես շատերը: Մարդիկ, ովքեր հայերեն չեն իմացել սկսել են սովորել: Երեխաների գրանցումը դրոցներում կամ հայկական խմբակներում, կապ չունի՝ ինչ ուղղությամբ, շատանում է: Կապ չունի՝ ծնողները Հայաստանից եկած հայեր են, սփյուռքում ծնված-մեծացած հայեր են, ծնողների ուղղվածությունը՝ երեխաների հայեցի դաստիարակելու, մեծանում է»:

«Մարդկանց գնալ-գալու [խմբ. կապը Հայաստանի հետ] հարցն է, առաջին հերթին: Կամ վերջերս կազմակերպել էինք Արցախի նվազախմբի համերգ: Մի քանի տարի առաջ Նորքի հայորդաց տունն էր եկել՝ նորից ՀԲԸՄ-ի նախաձեռնությամբ: Շատ լավ երեխաներ մասնակցեցին, անգամ մեկը եկավ ամուսնացավ և մնաց: Փորձում ենք մշակությամբ փոխանակման ծրագրերի միջոցով [խմբ. կապ պահել], այստեղից են Բարեգործականով գնում, աշխատում են երեխաները, տեսնում են, շփվում են մոտիկից: Այնտեղից ենք աշխատում բերենք: Ուսանողական փոխանակման ծրագրեր կան: Ուսանողները ERASMUS-ի գծով են գալիս: Հայկական եկեղեցու՝ Տեր Արամի և Տեր Արշենի դերն էլ է շատ մեծ: Եկեղեցին հիմնական կապող օղակն է, եկեղեցի երևույթը՝ հավատքը և հենց Տեր Հոր անձը, որովհետև համ Տեր Արամը, համ Տեր

Արշենը, մի կողմից՝ որպես հոգևոր հայր, մյուս կողմից՝ որպես լավ անձնավորություն են»:

«Ընդհանրապես, շատերը կան, որ կապվում են Հայաստանին: Ֆրանսահայերի մոտ տեսնում եմ, որ շատերն ուզում են հայկական անձնագիր վերցնել, քաղաքացիություն ստանալ, ներդրում անել, բնակարան գնել:

Իսկ հայաստանցիներն ամեն մեկն իր կարողության չափով կապված է երկրին: Պարզապես հիասթափությունը մի քիչ մեծ է պատերազմից հետո. այդ մոբիլիզացիայի էներգիան մարեց: Ես լավատես եմ մնում, որովհետև մարդն իր ներսում ճշմարտությունը կեղծիքից տարբերակելու բանը ունի, ուղղակի մարդուն պետք է ճիշտ ուղղորդել: Սա քաղաքական այս կամ այն թևի համար չի, սա պետության համար է կամ հայերնիքի համար, անհատի կամ հումանիտար հարց լուծելու: Դրա փաստն է Համահայկական հիմադրամի այս տարվա արդյունքը, որը Մարտելում կամ բուն Ֆրանսիայում շատ լավ էր:

Սա էլ ասեմ, ես էլ որոշակի չափով արել եմ, բայց արդեն չեմ վստահել, որ դա կգնա մարդկանց, շինարարության, միշտ այդ կասկածը եղել է մեր մեջ: Բայց պատերազմից հետո միշտ օրինակ եմ բերում հրեաներին, որ իրենք ունեն միասնական բյուջե՝ դա սինագոգն է կարգավորում, կառավարում: Ասում ենք՝ բա ինչու՞ մենք չունենք: Իրենք տասնորդ են տալիս: Այստեղ ռաբբիները մտնում են խանութ, հարցնում են՝ հրեմ ես, գալիս հարկերը հավաքում են: Չեմ ասում, որ այդպես լինի, մեր եկեղեցին այդ ֆունկցիան երբեք իր վրա չի վերցրել, ոչ էլ կվերցնի: Եթե այսօր մի ցանց ունեն համաշխարհային ֆինանսական՝ դա «Հայաստան» համահայկական հիմնադրամն է, ու բողոքում ենք, թե միասնական չենք: Մարդիկ փորձել են, ու սա բավական հաջող փորձ է: Այն աշխատել է բոլոր իշխանությունների հետ և գոյատևում է դեռ: Օրինակ, վերջերս իրենց հանդիպումն էր մեր սրահում: Փարիզից եկել էին գլխավոր տնօրենը Ֆրանսիայի, հաշվետու հանդիպում էր, այսպես ասած: Մի քանի շերտով աուդիտներ է արվում՝ և այստեղ, և Հայաստանում: Եթե այդ կասկածամիտներից մեկը գար և ներկա լիներ, բոլոր կասկածները կփարատվեին»:

«Գիտե՞ք, Հայաստանի մասին պատկերացումները թե՛ հնց են ազդում Հայաստանի իրադարձությունները համայնքի վրա սրանք շատ դժվար հարցեր են հիմա, մի քիչ շժմած ենք, հասկանում եք: Այսօր, այս վիճակում, ցավոք, առաջ չենք գնում, Արցախի խնդիրները և այլն... Շատ սպասելիքներ չունենք Ֆրանսիայից. խոսում են միայն և ոչինչ չեն անում: Ամուսինս Հայաստանի համար շատ աշխատեց: Առաջ չենք գնում, ուսներին ենք սպասում, նրանք էլ չեն գալիս, չես հասկանում՝ ինչ խաղեր է խաղում ազերիների կամ մեզ հետ, չգիտեմ»:

«Հայաստանը հստակորեն այստեղի հայերի համար մնում է հայրենիք: Քսան տարվա ժամանակահատվածով կարող եմ ասել, շատ ընտանիքները գիտեմ, որ Հայաստանը իրենց համար միշտ հայրենիք է՝ ինչպես իմ համար, ինչքան էլ, որ ես այստեղ ինտեգրված լինեմ: Ֆրանսահայերը շատ մեծ նվիրում ունեն Հայաստանին: Ոմանց մոտ դա երկրորդ հայրենիք է, ոմանց՝ առաջին, չգիտեմ այդ պահին իրենք ինչպես են զգում: Անշուշտ, այստեղ գիտակցում են, որ Հայաստանը ռեալ պետություն է, ժողովուրդ: Այս պահին էլ մեծ հոսք կա դեպի Հայաստան նաև ֆրանսահայերի մեջ, որ ցանկանում են գնալ և հաստատվել այնտեղ, քաղաքացիություն ստանալ:

Հայաստանի կյանքում, հատկապես տնտեսական ոլորտում ֆրանսահայերը բավականին շատ ներդրում ունեն: Մենք այստեղ ունենք հայ-ֆրանսիական առևտրի կենտրոն, որով այստեղի անհատ ձեռներեցները համագործակցում են Հայաստանի գործընկերների հետ: Իմ ընկերական միջավայրից Հայաստանի քաղաքացիության հարցում արեցին. նրանցից մեկը Հայաստանում հողակտորներ է գնել, որպեսզի շենքեր կառուցի և վարձով տարամադրի: Մյուսը ևս հողակտորներ էր գնել Հայաստանի տարբեր շրջաններում՝ Աբովյանում, Էջմիածնում, որպեսզի զարգացնի գյուղատնտեսությունը: Նրանք նախատեսում են գնալ և այնտեղ հաստատվել:

Քաղաքականությունն այլ բան է: Քաղաքական մասնակցությունը քիչ է, ցավոք սրտի: Սփյուռքի հանձնակատարը կարևոր օղակ է՝ Հայաստանը սփյուռքին կապելու համար: Հենց դրանից պետք է սկսել, որ կարողանանք...»:

Սփյուռքի մասնակցությունը ՀՀ կյանքին

Քննարկվող առանցքային հարցեր. *սփյուռքի մասնակցությունը ՀՀ քաղաքական կյանքում, Հայաստանի նշանակությունը՝ որպես հայրենիք և պետություն, սփյուռքի ակնկալիքները ՀՀ-ից՝ սփյուռքի հանդեպ վարվող քաղաքականության մեջ, հայկական շահի պաշտպանություն, լրբբինգի ներուժ Ֆրանսիայում:*

«Շատ սահմանափակ է [խմբ. սփյուռքի մասնակցությունը Հայաստանի կյանքին]: Չեն կարող քաղաքական կյանքին մասնակցել, քաղաքացիություն ունենալ, այնքան բարդ է թղթաբանությունը: Մենք համաձայն չենք, որ սփյուռքը միայն Հայաստանին գումար տալու համար չէ կամ տուրիստ [խմբ. գրոսաշրջիկ] լինելու 1992 թվականին, երբ անկախացավ Հայաստանը, ես ասում էի պետք է կանչեն սփյուռքի լավագույն ուսանողներին, լավագույն մասանգետներին, որ գան Հայաստան և աշխատեն: Ես վստահ էի, որ այդպես կլիներ: Աշխարհում շատ խելացի, հարուստ հայեր կան, ինչու՞ չկանչեցին օգնելու: Ինչպե՞ս արեցին հրեաները այն ժամանակ: Մերոնք լրիվ հակառակն արեցին: Ես երբ Հայաստանում մեկ տարի աշխատեցի՝ Ֆրանսիական դպրոց բացելու համար, ինչ որ տեսա, ուզում էի, որ ամեն ինչ օրենքով լինի, բայց դա չկար, շատ դժվար էր»:

«Ամեն երկիր, ամեն քաղաք, վստահ եմ, եթե ունի այդ տեսակ մարդիկ [խմբ. պաշտոնյա], առաջինը Հայ դատի պաշտպանությունն է: Իր շուրջը հավաքել են բոլոր հայերին, որոնք որ համակարծիք են: Առաջին փարոսը, առաջին նպատակակետը Հայ դատի՝ Ցեղասպանության հարցն է: Մյուս օղակներում հայերը հպարտանում են՝ մեկը քաղաքագետ է, մյուսը դեպուտատ [խմբ. պատգամավոր]»:

«Ֆրանսիան դեմոկրատ [խմբ. ժողովրդավար] երկիր է: Ամենքին հարգում են: Ֆրանսիան այսօր ասում է, որ չեն կարա Ղարաբաղին մի բան անել, որովհետև Ղարաբաղը ճանաչված երկիր չէ՝ միջազգային բանով: Կարամ Հայաստանին օգնեմ, բայց ոչ Ղարաբաղին: Հայաստանը ճանաչված է: Բայց Հայաստանին էլ չեն օգնում՝ ինչպես պետք է:

Եթե պիտի ուղարկեն դեղորայք, եթե կաթ պիտի ուղարկեն, դրա պետքը չկա այլևս: Այսօր ի՞նչ է մեզ պետք. մեզ զենք է պետք: Թող զինվորներ ուղարկեն այնտեղ, որ լինեն խաղաղապահ:

Այդ ուղղությամբ Ֆրանսիայի հայերի կողմից աշխատանք է տարվում, բայց դժվար է: Արդյունքը չկա: Մի ֆրանսիացի կա, որ, իսկապես, Ֆրանսիայի առաջին մամուլից մեկն էր, որ ամեն օր ցույց է տալիս, թե ինչ է տեղի ունենում Արցախի մեջ, ամեն օր, ժան Քրիստոֆ Բյուսոն է անունը: Բայց Մակրոնը, որ խոսում է Փաշինյանի հետ [խմբ. չի լուսաբանում ինչպես հարկն է]: Բայց ի՞նչ պիտի անի, եթե պիտի երթա քոչարի անի, խորոված ուտի, դա զրո է: Մեր ամենամեծ բանը այդ է, որ Արևմուտքը կամ Եվրոպան ոչ մի պարտականություն չունի Հայաստանին, որովհետև Հայկաստանը ո՛չ գազ ունի, ո՛չ նավթ ունի: Եկեղեցի ունի, վանքեր ունի, առաջին քրիստոնեա ժողովուրդն է, մշակույթ և քաղաքակրթություն ունեցող ժողովուրդ է, բայց դա այն չէ: Երկրների մեջ ամենամեծ բանը շահն է: Բարեկամություն չկա, միայն շահն է: Եթե Հայաստանը գազ ունենար, եթե նույն ձևի բան ունենար, այն ժամանակ ասելիք կունենար: Ամբողջ մեր պատմության մեջ մեր աշխարհագրությունը դավաճանել է մեր պատմությանը»:

ԼԻՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Լիոնի հայերի շրջանում իրականացված հարցազրույցների (շուրջ 20 հարցազրույց) անցկացման համար ընտրված տեղեկատու անձանց ընտրությունը պայմանավորված է եղել մի շարք չափանիշներով և ընթացել է փուլային ձևով: Առաջնահերթ խնդիր է դրվել կապ հաստատել համայնքում առկա գրեթե բոլոր խմբերի, շերտերի հետ և հավաքագրված տեղեկատվության մեջ ապահովել բոլոր կողմերի ներգրավվածությունը: Այս սկզբունքը ապահովվել է համայնքում նշանակալի հայկական կառույցների ներառմամբ, ինչը որոշվել է ըստ մի քանի չափանիշի՝ ոլորտային տարաբաժանման, կառույցներում ներգրավված անդամների թվի և սեռատարիքային կազմի պահպանման: Հաջորդիվ, ընտրված կառույցներից առանձնացվել են նաև տեղեկատու անձինք՝ ըստ համայնքի մասին ունեցած տեղեկատվության, ազդեցիկության, համայնքային տարբեր գործընթացներում ներգրավվածության փորձի: Պահպանվել են նաև սեռային, տարիքային, սոցիալ-մասնագիտական համամասնությունները: Արդյունքում տեղեկատու անձինք եղել են կուսակցությունների, հայկական դպրոցների, 3 եկեղեցիների, բարեգործական կազմակերպությունների, լրատվամիջոցների, մշակութային կազմակերպությունների, հասարակական և արխիվային կազմակերպությունների ներկայացուցիչները: Նաև կարևոր է եղել հարցազրույցների անցկացումը նախկինում և ներկայումս պետական պաշտոններ զբաղեցնող և տարբեր բնագավառներում ակտիվ գործունեություն ծավալած անհատների հետ: Յուրաքանչյուր խմբից ընտրվել են մեկ կամ մի քանի կազմակերպություններ, որոնց համապատասխան ներկայացուցիչների հետ անցկացվել է խորին հարցազրույց՝ նախապես մշակված հարցաշարով:

Հարցազրույցներն իրականացվել են տեղում: Հարցազրույցները վարել են Լուսինե Տանաջյանը և Սոնա Ներսիսյանը: Գործիքակազմը և ստացված արդյունքները մշակվել են բաժնի աշխատակիցների կողմից⁷:

Ա. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Համայնքի ձևավորումը

Քննարկվող առանցքային հարցեր. *Լիոնի հայ համայնքի ձևավորման և գաղթի պատմությունը, ներգաղթի ու արտագաղթի հիմնական պատճառները, ձևերը, ծավալները և ուղղությունները՝ անցյալում և ներկայում, համայնքի սեռափոփոխային, ընտանեկան, սոցիալական կազմը՝ ըստ ելքի վայրի:*

«Լիոնի հայերը շատ տարբեր հոսքերով են այստեղ եկել: Նույնիսկ Ցեղասպանությունից առաջ որոշ հայկական շրջանակներ արդեն հաստատվել են այստեղ, նույնիսկ վաղ միջնադարում: Բայց հիմնական հայերի հոսքը, որ ձևավորել են համայնքը, որ այսօր առկա է, անշուշտ, Ցեղասպանությունից հետո՝ 20-ական [խմբ. 1920-ական] թվականների առաջին կեսին ու դրանից հետո հոսքը շարունակական բնույթ է ունեցել, ու մեծապես ավելացել է համայնքը նոր մարդկանցով: Գիտեք՝ սփյուռքը ոնց է ձևավորվում. մի քանի ընտանիք հաստատվել են այստեղ, տեսել են, որ արդյունք կա և, անշուշտ, բարեկամներին բերել են:

Ցեղասպանությունից հետո առաջինը հիմնականում հայերը հաստատվել են Մարսելում, որովհետև հիմնական ուղղությունը եղել է ծովայինը: Նավով հաստատվել են Մարսելում՝ 1917, 1918, 1919 թվականներին: Առաջին հոսքը հասել է Ֆրանսիա 20-ական [խմբ. 1920-ական] թվականներին, բայց իրենք հաստատվել են Մարսելում: Ես շատ տեղյակ չեմ փաստաթղթային նյութերին, բայց փաստաթղթերի, խնդիրների պատճառով, կեցության իրավունքի խնդիրներով երկար ժամանակ

7 Ներսիսյան Ա., Տանաջյան Լ., ԴԱՆ, 2022, ՖՀ, Լիոն (խորին հարցազրույցի տվյալներ):

ստիպված են եղել ապրել վրաններում, ճամբարներում կամ քաղաքից դուրս գտնվող կեցավայրերում, որտեղից սկսել են հաջողություն փնտրել՝ ամեն մեկն իր իմացածի չափով, որովհետև իրենք դատարկ էին եկել և չունեին ապրուստի միջոց:

Սկսել են տեղաշարժվել, բնականաբար՝ իրենց աշխարհագրությունը մեծացնելով: Ֆրանսիայի աշխատուժի պակասը զգալի էր հատկապես սև աշխատանքի մեջ՝ հանքային աշխատանքների մեջ: Իրենք թղթաբանական խնդիր են ունեցել, որն այսօր ունեն նոր եկող լիբանանցիները, հայաստանցիները, սիրիացիները, որ կրթության խնդիր ունեն, որ կարողանան ոչ բանվորական բարձր աշխատուժի դիմեն: Լեզու չունեն, կրթություն չունեն: Բնականաբար, առաջին գործը, որ պիտի փնտրեին, պետք է լիներ բանվորային ձեռքի աշխատանքի կամ արհեստի գործ: Ինչու՞ են հաստատվել այստեղ, քանի որ Լիոնը հայտնի է իր տեքստիլ, մանավանդ մետաքսի արտադրության մեծ ծավալներով: Ճիշտ այդ ժամանակներում այստեղ մեծացրել են արդեն եղած գործարանները, և արդեն մեծ արտադրական ծավալները սկսելու համար մեծ հոսքի կարիք են ունեցել: Բնականաբար, քաղաքական որոշ սկզբունքներով կարողացել են համախմբվել: Սկզբում փոքր համայնքներ են եկել, հետո արդեն տեղափոխվելով՝ իրենց ընտանիքի անդամներին կանչել:

Ես գիտեմ, որ այստեղի գրավչությունը կայացել է նրանում, որ գործարանին կից գործարանի տնօրինությունը կառուցել է փոքր տնակներ, որոնք եղել են տան նման, այսինքն վրանային բաներ չեն եղել: Մինչև այսօր այդ թաղամասը կա, և այդ տները նույն բնույթն են կրում: Իհարկե հիմա արդեն նույն տեսքը չունեն, բայց էլի այդպես իրար կպած տներ են, որոնք ուղղակի գրավչություն են ստեղծում, որ մնալու տեղ ունես այստեղ: Փոքր թաղամասեր էին, որտեղ ապրում էին գործարանի աշխատակիցները: Ուրեմն, առաջին հայերը, որ եկել են և այստեղ բնակվել են, եղել են հենց այդ մարդիկ, որ աշխատել են մետաքսի գործարանում:

Բացի դրանից, այդ շրջանում եղել են հանքային աշխատողներ, որոնք աշխատել են հանքերում՝ ոչ շատ հեռու այս տարածքից: Այստեղի հայերը փորձել են այդ հանքերի դժվար աշխատանքից այստեղ բերել

իրենց հարազատներին: Ես շատերին գիտեմ, որ ծնվել են այդ ավերում բայց տեղափոխվել են այստեղ՝ աշխատելու ավելի հեշտ աշխատանքի և ավելի լավ պայմանների համար: Ամբողջ Լիոնի համայնքն առաջացել է հենց այս կորիզից: Ինչու՞ եմ դա այդպես ասում, որովհետև, երբ որ հաստատվեցին, հայերն արդեն մոտ 10 տարի Ֆրանսիայում էին և իրենց զավակները ֆրանսիական կրթություն էին ստացել: Օրինակ, եթե 5 տարեկանում եկել էին այստեղ, արդեն 15-16 տարեկան էին, խոսում էին ֆրանսերեն և կրում էին ֆրանսիական մշակույթը: Մարդիկ, երբ դպրոցը վերջացրեցին, պիտի կրթություն ստանային և, բնականաբար, սկսեցին կրթական դպրոցներ փնտրել: Ծնողներն արդեն մի քանի տարի Ֆրանսիայում էին, ունեին դրամական կարողություններ և չունեին փաստաթղթեր: Փաստաթղթերը տրվել են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, այսինքն ավելի ուշ: Մարդիկ, որ չունեին փաստաթղթեր, կարողացել են իրենց երեխաների համար կրթություն ապահովեն: Կրթությունը ապահովել են Լիոնի լավագույն դպրոցներում: Մեկը մյուսի հետ մրցակցելով փորձել են ավելի լավ պայմաններ ստեղծեն և դուրս են եկել բանվորական միջավայրից՝ փորձելով հաջողության հասնել այլ միջավայրերում: Օրինակ, արհեստագործության մեջ, մի քանի նպարավաճառի խանութներ են ստեղծել, սեփական գործ են ստեղծել: Փորձել են՝ համայնքի ներուժը օգտագործելով: Առաջին ստեղծած խանութները պարզապես խանութներ էին, որտեղ հայկական կամ հայկականին մոտ ապրանքներ էին, որ համայնքը կարողանա օգտվի: Այդ բոլոր արհեստագործական բաները սկզբում համայնքի համար էին: Համայնքի ներուժը ճիշտ է օգտագործվել: Եվ որոշ մարդիկ արդեն 30-ական թվականներին (հակառակ նրան, որ 30-ական խմբ. 1930-ական) թվականները սովի տարիներ էին, Մուսոլինի, Հիտլեր և այլն) կարողացել են որոշակի հաջողություն ունենալ և կապիտալ ստեղծել:

Այս ընթացքում, կապիտալը ստեղծելուց բացի, սկսեցին ձևավորել համայնքը, համայնքի կապիտալը, համայնքային ֆոնդեր, բայց ոչ թե դրամական, այլ ներուժի ֆոնդեր, որտեղ որ կկարողանաին համայնքային կյանք վարել՝ բնականաբար, եկեղեցի, բնականաբար, մշակութային կառույց: [խմբ. եկեղեցու] Հողը գնվել ա 32թ-ին [խմբ. 1932 թ-ին], և

շինարարությունը սկսվել ա 37-ին [խմբ. 1937 թ-ին]: Բայց, ցավալիորեն, արդեն պատկերացնում եք, սովը կամ այդ տնտեսական եղելությունը բերել ա իր հետ դժվարություններ, ու շինարարությունը այդպես կանգնել ա: Մարդիկ կային, ովքեր որ ապրում էին տարածքում, այս թաղամասերում և հիշում են, որ եկեղեցին կիսակառույց էր՝ կեսն էր շարած, և երեխաները այդտեղ պահմտոցի էին խաղում, որովհետև ինքը համարվում էր հայկական տեղ: Համայնքային կառույց էր, որը կիսատ էր մնացել: Ու ցավոք, մինչև 47թ.[խմբ. 1947 թ.]՝ 10 տարի շինարարությունը կանգնած էր: 47-ին [խմբ. 1947-ին] նոր տանիքը դրվել է: Բայց, իհարկե, դա չէր նշանակում, որ հոգևոր կյանքը կանգնել էր: Պատարագները իրականացվում էին ուրիշ եկեղեցիներում: Մինչև 1922թ. եկեղեցին Ֆրանսիայում դեռ պայքարում էր պետության հետ, որովհետև եկեղեցին շատ մեծ կալվածքներ ուներ: Իսկ 1905թ. պետությունը ստիպեց, որ բաժանում տեղի ունենա պետության և եկեղեցու միջև: Թերևս, ամենալավ դրվագը համայնքային կյանքի, երբ մարդիկ սկսեցին օգտագործել համայնքային ներուժը՝ մեկը մյուսին դուրս բերելու համար այդ դժվար վիճակից, կարողացան ձևավորել այսպիսի հոգեբանություն, որ մեկը մյուսին պետք է աջակցեն: Հենց այդ ժամանակ հայ համայնքում ձևավորվել են որոշ կառույցներ, հայ համայնքը ձեռք ա բերել կալվածքներ: Դրանից հետո ձեռք չի բերել մինչև 2014թ., մինչև կառուցվեց հայտնի տառերով կառույցը»:

«1915թ-ին Ֆրանսիայի կառավարության օգնությամբ՝ շոգենավով Հունաստանից Մարսել հայ համայնքը եկավ, իբր գաղթական լինելով եկավ և, դժբախտաբար, անգործություն էր տիրում Մարսելի մեջ: Շատ դժվարություններ ունեցան: Հետո սոցիալական իրավունքները հիմա հոն եղածի պես չեն: Ֆրանսիան էլ պրորբեմ ուներ: Ուրեմն, մեկ-երկու փախստական հայեր, փախստական չասեմ, այսինքն, իդեալիստ հայեր Լիոն են եկել, օրինակի համար: Հոն գործ չկա, հոս կգտնեն, այնտեղ՝ արև, այստեղը՝ մութ: Ինչորէ, եկել են արդեն, ես էլ հետները: Նայեցի աջ-ձախ՝ ով կա, հայ կա, եկեղեցի չկա, բան չկա: Եվ Դեսին ասված տեղը, որ մեր հուշարձանը կա հիմա, մի հատ մեծ ֆաբրիկա կա ֆրանսիացի, որ զենքի փամփուշտ են արտադրում: Մտել եմ այնտեղ աշխատե-

լու: Որտեղ աշխատել եմ, մարդը ասում է. «Տեսա, որ աշխատասեր տղա ես: Բարեկամ չունեմ: Կանչի գան, ամենքին գործ կտամ այստեղ»: Ու սկսել են գալ: Այրերը առաջ էին գնում և տիկիններին էին բերում: Եվ այս մարդը շատ բարեսեր մարդ էր, որովհետև պետք է այդ ֆաբրիկան առանց ստոպի աշխատի: Ութ ժամը լրանում էր, մյուսը պիտի մտներ, հետո մյուսը պիտի մտներ: Եվ այս միջոցին նայելով մարդկանց՝ այրերն էլ էին աշխատում, կիներն էլ: Ուրեմն իր փողով մարդը հող է առել և ասել է հայերին՝ էս ձեզ հող, ձեզ տուն շինեցեք: Ամեն մեկը կողք-կողք տուն են շինել: Իտալացիները իմացել են այնտեղ հայերն են, նրանք էլ են եկել: Մեր հայերը ոնց հայերեն էին խոսում, նենց էլ ֆրանսերեն:

Եվ Ֆրանսիայի էկոնոմին [խմբ. տնտեսությունը]՝ շորերի էկոնոմի է դառնում՝ պրետապորտե էկոնոմի, այսինքն պատրաստ հագուստ է դառնում: Մեր հայերը այս գործի մեջ կան: Կարի մեքենայով և մյուսներով ամենը կարում են, և դրանք կտոր-կտոր, պատիկ-պատիկ իրենց տան մեջ, իրար օգնելով՝ լավ դրամ են շահել: Այս անգամ սկսել են քաղաքի մեջ խանութներ առնել՝ պատիկ-պատիկ տեղերով, վաճառել կամ վաճառականից ծախու առնել:

Երկրորդ, երրորդ սերունդը, ասենք, թոռները մեծացան, քսան տարեկան եղան, զինվոր դարձան, եկան, ասենք, լավ միջոցի մեջ է, ընտանիքն էլ դրամ ունի, սրանք էլ սկսեղին Դեսինից գնալ: Եվ սկսեցին գետի մյուս կողմը՝ բարձր կողմը գնալ: Սկսեցին հարուստների մեջ մտնել: Եվ երկու հոգու բաժանվեցին: Այս պոլիտիկը [խմբ. քաղաքականությունը] մի քիչ կտրում է մարդու մեջքը: Չլիներ [խմբ. քաղաքականությունը], շատ ավելի լավ կլիներ: Որովհետև ֆրանսիական մի բառ կա, ասում է «diviser pour régner», այսինքն՝ «բաժանիր և տիրիր»:

«Համայնքը, կարելի է ասել, որ չորս հոսանքներով է կազմավորված: Մեկը առաջին եկողներն են: 1923թ-ին Դեսինի համայնք գոյություն չունեի և Դեսինի արհեստական մետաքսի ընկերությունը ուղարկել է դեսպանի պես մեկին Հունաստան՝ փախստականների ճամբարի մեջ հայեր գտնելու, որպեսզի գան և այստեղ աշխատեն: Եվ առաջին պատերազմի վերջավորության Ֆրանսիայի մեջ մարդու պակաս կար և պետք ունեին նոր աշխատողների: Այդպիսով, լիոնահայ, կարծեմ, մի

վաճառական են ուղարկել Հունաստան՝ ասելու համար, որ մենք պատրաստ ենք հայեր ընդունելու:

Ուղարկվողը հայ է եղել, բայց ուղարկողը ֆրանսիական արհեստական մետաքսի գործարաններն էին, որոնք աշխատուժի պետք ունեին: Եվ քիչ-քիչ հայեր են բերել տվել Դեսին, որ ոմանք այդ գործարանի մեջ աշխատեն: Այդ գործարանը քիմիական նյութերի գործարան էր, որ նավթով կերպաս էին արտադրում: Եվ հետզհետե հայերի թիվը բազմացել է: Հաստատվել են, ընդհանրապես, Հունաստանից: Եվ 23թ-ին [խմբ. 1923 թ-ին] Ֆրանսիա հասան առաջին հայերը: Թուրքական հանրապետության հայտարարվելուց հետո հայերը սկսեցին Մարսել նավերով գալ: Եվ այդ եկողների մեծ մասը եկան և Դեսին հաստատվեցին և առաջին հայերը կազմեցին: Այդ առաջին հայերն են, որ Դեսինի հայկական կառույցները ստեղծեցին: Այսինքն այն, ինչ Մշակույթի տունն է, ակումբ է եղել, Դաշնակցությունն է կազմակերպել, բայց ամբողջ ժողովրդի գումարներով և աշխատանքով: Մարդիկ իրենց օրական աշխատանքի վերջում գալիս էին և իրիկունները աշխատում էին շենքը շինելու համար: Եվ այդ շենքը մնացել է տակավին այդպես: Մի քանի անգամ նորոգվել է, անշուշտ: Շենքը եղածի պես մնացել է: Միաժամանակ, սկսել են եկեղեցին շինել: Բայց եկեղեցին ակումբից հետո վերջացավ: 33-ին [խմբ. 1933-ին] շինարարությունը վերջացավ ակումբի և, եթե չեմ սխալվում, մի քանի տարի հետո առաջին ակումբը ստեղծվեց: Ակումբի մեջ եկեղեցական արարողություններ են արվել, որովհետև եկեղեցի գոյություն չունեի: Այս մատուռը, կարծեմ, ավելու ուշ է ավարտվել: Եվ, եթե չեմ սխալվում, 72-ին [խմբ. 1972-ին] էլ Եվրոպայի առաջին Ցեղասպանության հուշարձանը կանգնեցվեց Դեսինի մեջ: Դեսինի հրապարակի այդ հուշարձանը Եվրոպայում առաջինն էր: Մինչ այդ, եթե չեմ սխալվում, մեկ-երկու տարի առաջ Մարսելի հուշարձանը եղավ: Բայց Մարսելի հուշարձանը եկեղեցու բակի մեջ էր: Թույլ չտվեցին, որ հանրային լինի, հանրությանը մատչելի լինի: Առաջին շերտը այս է:

Երկրորդ շերտը, եթե չեմ սխալվում, 40-ական [խմբ. 1940-ական] թվականներին՝ պատերազմից հետո, ավելի 50-ականների [խմբ. 1950-ականների] շուրջ թուրքահայեր եկան Պոլսից: Թուրքահայեր, որոնք եկեղեցու շուրջ ավելի հավաքված մարդիկ են՝ եկեղեցասեր, հա-

վատացյալ և եկեղեցուց շատ կառչած: Ուրեմն, երկրորդը այդ եղավ: Այսպես հատ-հատ փոքր խմբեր, անձեր են եկել Արևելքից:

Բայց մեծ շարժումը, մասնավորապես՝ Լիբանանից, եղավ 1975-80թթ.՝ որպես հետևանք քաղաքացիական պատերազմին:

Եվ մոտ 20 տարի է, որ Հայաստանից մարդիկ եկան, մասնավորապես՝ նախկին ֆրանսիահպատակներ, որոնք Հայաստանից վերադարձան և այստեղ հասատվեցին: Եվ անշուշտ, Արցախյան պատերզմը, երկրաշարժը և Հայաստանի անկախացումից հետո բավական մեծ թվով հայեր եկան, որոնք իսկապես չի կարելի հաշվարկել այսօր:

Գիտե՞ք, մենք խոսում էինք 50.000 հայերի մասին՝ Լիոնում, 70.000 հայ՝ Լիոնի շրջապատի մեջ և այլն: Այսօր ճիշտ չգիտենք՝ որքան հայ կա: Հայաստանից գաղթած հայերը մասամբ են եկեղեցի հաճախում, ոչ ամենքը փաստաթուղթ ունեն: Ունեցողներ կան, բայց նույնիսկ ունեցող և չունեցող հաշվարկված չեն: Թեև վիճակագրություն չի կարելի այստեղ: Միակ վիճակագրությունը հայ կնքված երեխաների ցանկն է: Կնունքի առիթով եկեղեցին ունի անուններ, հասցեներ: Բայց եկեղեցին այդ գործը չի արել՝ այդ տվյալների հավաքագրման գործը չէ արել: Հնարավորություն էլ չկա, որովհետև Ֆրանսիայի մեջ արգելված է մարդու ծագումը բնորոշել, և ծագումով խմբերի մեջ դնելու իրավունք գոյություն չունի: Գիտե՞ք՝ 2-րդ [խմբ. համաշխարհային] պատերազմին հրեաների պարագան: Ֆրանսիական պետությունը բնորոշող բանն այն է, որ նրանք, որոնք քաղաքացի են, ազգային համայնքի մաս են կազմում, և պետք չէ տարբերություններ դնել:

Բայց շատ կորցրած հայ կա հիմա: Հիմա նոր բան կա՝ Հայաստանից, բայց մասնավորապես Սովետական Հայաստանից եկած, այլ երկրներից էլ կան, բայց հայ համայնքին չեն մոտենում, համախմբված չեն: Նույնիսկ Հայաստանից եկող հայերը մեծ մասամբ իրար կապված են ընտանեկան կապերով: Այստեղի համայնքի մեջ իրենք իրենց լավ չեն զգում: Հետո, այստեղի համայնքը կազմակերպված է երկու-երեք մեծ ալիքներից: Մեկը՝ 23-30-ական [խմբ. 1923-1930-ական] թվականներիին եկած հայերը, երկրորդը՝ 50-60-ական [խմբ. 1950-1960-ական] թվականներին Թուրքիայից եկած հայեր, երրորդը՝ 70-ական [խմբ.

1970-ական] թվականներին Բեյրութի քաղաքացիական պատերազմից եկողներն էին»:

«Ժամանակին 70 հազար կար: Բայց ավելին եղավ՝ հայաստանցիները երբ որ եկան: Առաջին եկողները մեկ հատ-մեկ հատ արդեն գնում են: Վերջինը եկան Լիբանանից և Սիրիայից: Հիմա Սիրիայից աշակերտներ ունեն: Հայաստանից [խմբ. աշակերտներ], անշուշտ, կան: Շատ լավ են»:

«Ֆրանսահայերը կորցնում են, հայաստանցիներն են գալիս: Դպրոցի համար եմ ասում: Քանի տարի է արդեն 60 տոկոսից ավելին հայաստանցի երեխեք են: Հիմա նոր եկողները Հայաստանից չգիտեն որտեղ են ապրում: Առաջին եկողները Դեսին են ապրում»:

«Մեր համայնքը 1924թ-ին սկսվեց: Երկու-երեք տարուց 100 տարին պիտի տոնենք: Հայերը այստեղ եկան, որովհետև գործ կար՝ Մարսել, հետո կամաց-կամաց Լիոն, հետո Փարիզ:

Սոցիալական պատճառներով են եկել: Եվ պետք կար, որ Հայաստանից կամ Թուրքիայից եկածները հավաքվին եկեղեցու մեջ: Եվ բողոքական եկեղեցում մեկը եղավ, որ եկավ և օգնեց, որ հայերը՝ իբր միություն կազմակերպվեն, օրենքները սովորեցրեց:

Լիոնի եկեղեցու մեջ 60 անդամ է արձանագրված, բայց մինչև 100 հոգին գալիս են: Հետո եկեղեցուց դուրս, որ մենք ճանաչում ենք, և առիթ է լինում, գալիս է շուրջ 150 հոգի: Դեսինի եկեղեցին ավելի փոքր եկեղեցի է. 10 անդամ ենք, բայց մինչև 25-40 հոգի գալիս է:

Մեծամասնությունն այստեղի երրորդ կամ չորրորդ սերունդն են, որ Ֆրանսիա են եկել: Նշմարում ենք, որ երրորդ սերնդից հետո հայերենը մի քիչ դժվար է խոսել, որովհետև ավելի ֆրանսերենով կվարժվեն: Բայց միշտ նոր հայեր են եկել. 70-80 տարիների մեջ լիբանացիներ շատ եկան, հետո հայաստանցիներ, սիրիացիներ:

Հայաստանցիներ կան համայնքում: Լավ է, քանի որ ավելի մոտ կապ ենք ունենում Հայաստանի հետ: Իրենց ընտանիքներն էլ են այնտեղ:

Երիտասարդներ կան, բայց շատ չեն մեր ժողովրդի համեմատ. մոտ 80 հոգուց 15-ը երիտասարդ է»:

«Լիոնի հայերը 1920թ-ից եկել են այստեղ, և Դեսինում ապրել է 6000 բնակիչ, որից 5000-ից ավելը հայեր էին: Գործարան կար, որտեղ հայերը աշխատել են և բնակվել են այդտեղ: Հին հայերի երրորդ սերունդն է, որոնք դժվարությամբ են հայերեն խոսում կամ ընդհանրապես չեն խոսում: Կան հին մարդիկ, որ 70-80 անց են, որոնք լավ բաներ են ստեղծել համայնքի համար՝ եկեղեցին և այլն: Այս օրով իրենց թոռնիկները չեն ուզում շարունակեն դա: 2000-ից հետո Հայաստանից հայեր շատ են եկել: Ու արդեն 15-20 տարի հավասարվել են և չեն ուզում իրանց ստեղծածը թողնել»:

Լիոնում մոտավորապես 260.000 հայ կա: 130.000-ը քաղաքացի են: Հայերը շատ են: Շատ լավ սերունդ ա այս պահին: Հայկական դպրոցը, եթե վերցնենք, ծնողները հնարավորություն ունեն տուն մարդ բերեն, երեխայի հետ զբաղվեն: Ես էլ կարող եմ անել: Բայց իմ նպատակն է, որ իրար հետ զբաղվեն, միավորված լինեն, իրար հետ սովորեն»:

Համայնքի սոցիալ-մասնագիտական և տնտեսական կազմը

Քննարկվող առանցքային հարցեր. *հայերի զբաղվածությունը տնտեսական գործունեության ոլորտներում և փոփոխություններն ըստ ժամանակագրության, ձեռնարկատիրություն և ներգրավվածություն համայնքային կյանքում, սոցիալ-մասնագիտական խմբեր, շերտեր, կրթություն (կրթության նկատմամբ վերաբերմունք և կրթական շեմի փոփոխություններ):*

«Հայերի շնորհիվ՝ մեր նախահայրերի և նախամայրերի, ասում են հոս եկան, հայության հետ ծանոթացրին: Այսօր հայերը բոլորն էլ վաճառական են: Ամբողջ վաճառական են: Աշխատել եմ ժամանակին շատ շուկաների մեջ՝ հագուստ էի ծախում 15-20 տարի առաջ: Այդ մարդիկ այսօր մեծ բիզնեսմեններ են: Իրենք համայնքին օժանդակում են: Բայց այդ սերունդը գնում է կամաց-կամաց»:

«Հայաստանից 1990-2000-ի վերջի եկող գաղթը՝ officiel [խմբ. պաշտոնական], non-officiel [խմբ. ոչ պաշտոնական] տվյալներով, շատ

մեծ դժբախտություն բերեց: Որովհետև non-officiel եկողները officiel բերողներին ավելի դյուրին սպասուհու տեղ դրին: Այն աղջիկը, որ եկել է դպրոցի շրջանավարտ, այստեղ սպասություն սկսեց: Եվ նյութական հարցի վրա, դժբախտաբար, ամեն տեսակ գեշ պատմություններ մեջտեղ գալ սկսեց»:

«Համայնքն աղքատ է: Եկեղեցի ունի: Եկեղեցին չեմ ասում, որ հարուստ է, բայց միշտ կտակներ է ստանում: Վերջին ժողովներին տեսանք, որ 3 կտակ ենք ստացել: Մի հատը չգիտեմ քանի տասնյակ հազար եվրո, մյուսը՝ տուն և բանկի հաշիվ:

Եկեղեցին շատ լուրջ և շատ լավ հսկվում է: Հնարավոր չէ, որ եկեղեցու վարչությունից մեկը գումար տանի: Ֆրանսահայությունը որոշ չափով վստահելի է այդ առումով: Հանրությանը պատկանող բաներն իսկապես պահպանված են: Ժամանակին, «Ֆրանս-Ղարաբաղ» անունով կազմակերպություն ստեղծվեց: Եվ Արցախի սահմանակից գյուղերի մեջ գյուղ վերականգնեցինք՝ Հադրութի շրջանում, դժբախտաբար, ազերիների ձեռքին է: Առաքել գյուղը հողին հավասար եղած էր: Մենք վերականգնեցինք, այդ գյուղը շինել տվինք, ժողովուրդ բերինք Կրասնոդարից, որ գան այդտեղ հաստատվեն:

Այդ կազմակերպության մեջ հաշվետվողականություն և թափանցիկություն կա: Ոչ մի կասկած չկա:

Ամեն բան կա [խմբ. տնտեսական գործունեության ոլորտներ և ձևեր]: Բայց ամեն մի գաղթողների շերտ իրենց բաներն ունի: Օրինակի համար, 70-ական [խմբ. 1970-ական] թվականներին Միջին Արևելքից եկածների զավակների մեջ բարձր ուսում առած մարդ շատ չկա: Կան, բայց քիչ են կամ մինչև մաստերս [խմբ. մագիստրոսի կոչում] արած են և անմիջապես գործի ընդունված են: Գիտաշխատող չկա, օրինակի համար, կամ պրոֆեսորներ չկան:

Արհեստավորները Միջին Արևելքի եկողների առաջին սերունդն է: Այդտեղից եկողներն էին արհեստավորները: Իրենց զավակներն այստեղ արհեստավոր չեն, ընդհանրապես, վաճառական բաների մեջ են աշխատում: Արհեստավորներ շատ չկա: Ընդհանրապես, առաջին սերունդներն են արհեստավորները:

Հայաստանցիները նոր են, կարելի է զանազանել իրենց, որովհետև թուղթ չունեն և պատրաստ են ամեն տեսակ գործ անելու»:

«Լիոնի հայերը հաշվապահության, առևտրի ոլորտում են ավելի շատ: Պահանջարկ շատ կա էստեղ: Նման ավելի շատ գործ կարող են գտնել: Ամեն երկրում նայում են ինչ պահանջարկ կա: Էստեղ տնտեսությունը լավ է գործում, առևտուրը լավ է գործում, երկիրը իրենով ծաղկող երկիր է, բնականաբար, հայերն էլ ձգտում են էդ ուղղությամբ: Չնայած շատերը իրենք իրենց գործը ունեն: Սեփական գործն են հիմնում, էսպես ասած, բացում և ընտանիքով աշխատում են էստեղ: Հայաստանցի հայերը մեքենաների վաճառքով են զբաղվում, գեղեցկության սրահ, սրճարան կամ ռեստորան: Շատ է պատահում, որ ռեստորան՝ ընտանեկան բիզնես ունեն: Հաջողվում է: Կան բժիշկներ, բժշկության ուղղությամբ են գնում: Բազմազան է, կոնկրետ ոլորտ, որ ասես, չկա: Ինչը հայերիս մոտ լավ է ստացվում, հաստատ էդտեղ իրենք ամենալավն են»:

«Մասնագիտական ամեն ոլորտի ճյուղերում էլ կան [խմբ. հայեր]: Շատ կա բժշկական ոլորտում: Լիոնի մեջ հայերը բացել են շատ բիզնեսներ (շատը հագուստի): Կան, որ արդեն երկու ընտանիք միասին են աշխատում: Չեմ կարծում միայն հայեր են աշխատում բիզնեսներում: Երևի կա, որ մի քանի ուրիշ ազգ էլ կա: Եվ իրենց գործատուների մոտ ուրիշ ազգով են աշխատում»:

«Նրանք [խմբ. այն հայերը], ով լավ վիճակում են, օտարների հետ են՝ վաճառել, սարքելու մեջ են: Հացագործ շատ կա հիմա: Դժվար աշխատանք է: Աշխատանք կա, ամեն ինչ կա՝ հացագործություն, մեխանիկ, ոսկերիչ :

Կան մեծ ձեռնարկատերեր, բայց ցույց չեն տալիս: Նրանք չեն օգնում իրար: Երբ որ օգնություն ես ուզում դպրոցի համար, դրամ դժվար են տալիս:

Ինչքան ցածր սոցիալական վիճակով են, ավելի լավ են օգնում: Գիտե՞ք, երբ որ պատերազմը եղավ, դպրոցում ասեցին, որ տուփ կդնենք, տետրակի մեջ էլ գրեցին, որ երեխեքն էլ պետք է մասնակցեն՝

պետք է մեր երեխեքը սովորեն տալ: Տուփ սարքեցին ու ամեն դասարանում դրեցին: Շատ երեխաներ, որ լավ վիճակ չունեին, տան գանձանակը դատարկել էին մեջը: Ունեցողներն էնքան բան չէին տա»:

«Լիոնի հայերի մեծամասնությունը, այնտեղից, որ եկել են հոս, փորձում են ուրիշ, նոր բան սկսել: Թվերը չունենք [խմբ. տնտեսական վիճակի]:

Ովքեր որ այստեղ ապրում են 10-30 տարուց ավելի, իրենց կարիքները ապահովված են, լավ են ապրում: Նրանք, որ 10 տարի առաջ եկան՝ սիրիացիները կամ լիբանանցիներն ավելի դժվարության մեջ են, կամաց-կամաց փորձում են լեզուն սովորել, գործ գտնել, հետո կամաց-կամաց շտկվել:

Անձեր կան, որ գործեր ունեն [խմբ՝ բիզնես]: Քաղաքապետարանում կան քիչ: Պետական պաշտոններում կան մարդիկ, բայց շատ չեն»:

«Հայերը շատը շինարարության մեջ են: Հին հայերը տեքստիլի մեջ էին՝ շորեղեն, կոշիկ: Հայաստանից եկած հայերը ամենաշատը ավտոմոբիլային գործի և շինարարության մեջ են: 70 տոկոս իրենց հաշվին են ապրում: Բոլորն էլ լավ տնտեսական վիճակում են: Վերջին տարիներին ցանկանում են ադմինիստրատիվ գործ՝ հաշվապահ, բանկի աշխատող»:

«Այս ընթացքում փոխվեց նաև համայնքի դիմագիծը: Ինչու՞ փոխվեց: Մարդիկ, որ այստեղ են 25-30 տարի, իրենց եղբայները դեռ ապրում էին, օրինակ, Սիրիայում և Լիբանանում, միսիոներական խնամատներում կամ որբանոցներում, որտեղից որ տեղափոխվել էին և ապրում էին քաղաքային հասարակությունների մեջ, դուրս են եկել և ապրում են Հալեպում, Դամասկոսում, Բեյրութում և այլն: Այդ մարդիկ սկսեցին փոքր հոսքերով գալ: Ամենամեծ հոսքերը եղան Լիբանանյան պատերազմի ժամանակ: Օրինակ, եթե նայեք կտեսնեք, որ կա Մարջան անունով ընտանիք, որոնք հայախոս չեն, եկել են 1920թ-ին և նույն ընտանիքի եղբոր զավակները հայախոս են, որովհետև իրենք եկել են Լիբանանից 1980-ականներին: Այս եղբայրների զավակները կրում են ազգային տարբեր հայացքներ: Այսինքն ամենաուշ եկողները թարմաց-

րեցին հայկականությունը, բայց այն հայկականությամբ, որը իրենք իրենց հետ բերեցին, որը ակտուալ էր այդ ժամանակ Լիբանանի մեջ: Հիմա, եթե ուզում եք ուսումնասիրեք 90-ականների [խմբ. 1990-ական] հայաստանյան պատկերացումները, բարբառը, կարող եք գալ այստեղ և կտեսնեք, որ այստեղ պահպանել են: Ոնց եկել են, իրենց հետ բերել են այն մշակույթը, որի մեջ ապրում էին: Պատկերացնում եք, որ Լիբանանից, Սիրիայից, եվրոպական ուրիշ քաղաքներից՝ Բուլղարիայից, Հունաստանից և այլն սկսեցին գալ այստեղ ձևավորված համայնքի անդամների բարեկամները, որոնք էլ իրենց հերթին սկսեցին քաշել իրենց բարեկամներին, իրենց հարազատներին, որոնք ապրում էին տվյալ երկրներում: Օրինակ, Լիբանանյան պատերազմի ժամանակ այստեղ հասատվել են գրեթե այն չափի հայեր, որ չափի այստեղ կային արդեն: Այսինքն համայնքի միասեռությունը չի պահպանվել: Մշտապես փոխվել է համայնքը: 80-ական [խմբ. 1980-ական] թվերից հետո սկսել են Թուրքիայից գալ: Թուրքիայից եկող հայերն ընդհանրապես նման չէին ո՛չ Լիբանանից, ո՛չ Սիրիայից եկող հայերին, ո՛չ էլ, նամանավանդ, էստեղի հայերին:

Երբ որ լիբանանցիները մեծ խմբով եկան, դեռ քաղաքացիական պատերազմն էր: 70 [խմբ. 1970] թվականների հոսքը, ովքեր որ համարեցին, որ Լիբանանում մնալը անիմաստ է, որովհետև սա մեր երկիրը չի, այստեղ մնանք մեռնենք՝ ու՛մ համար, մեծ մասսաներով դուրս եկան Լիբանանից: Ու, բնականաբար, ամեն տեղ, օրինակ, ես գիտեմ, որ Լոս Անջելեսում շատ են, Լիբանանից եկող հայերը՝ խիստ դաշնակցական են, ազգային, մեծացել են ԱՍԱԼԱ և հայկական թաղամասերը պաշտպանելու բանի տակ ու իրենց հայասիրության մակարդակը շատ ավելի բարձր էր: Օրինակ, իրենք շատ են պատմում, երբ իրենք եկան այստեղ, համայնքի հայերը հայերեն չէին խոսում: Իրենք ճիշտ են ասում, որովհետև Ցեղասպանության հաջորդ սերունդն արդեն հայախոս չէր: Արդեն հաջորդ սերունդը շատերն ասում էին, որ հայախոս էին, հայերեն գիտեին, որովհետև տանը հայերեն էին խոսում, բայց իրար հետ խոսում էին ֆրանսերեն, որովհետև դպրոցական միջավայրը, ուր ձևավորվել էր իրենց լեզուն, խոսում էր ֆրանսերեն: Երբ որ հայերը եկան, արդեն երրորդ սերունդն էր իր ձեռքն առել համայնքային ղեկավարումը,

ու, բնականաբար, լիբանանցիների մոտ տարակուսանք էր առաջացնում, թե ինչի են այս մարդիկ ոչ հայախոս: Մենք էլ ենք սփյուռքում ապրել, այս մարդիկ էլ են սփյուռքում ապրել, բայց մենք ավելի հայ ենք, քան թե իրենք: Նույն կամ ավելի վատ վերաբերմունքը ցույց էին տալիս այն հայերի նկատմամբ ուլքեր թուրքերեն էին խոսում: Այստեղի հայությունը սկսեցին ձևավորել սուր եզրեր, մտնել պայքարների մեջ: Այսինչ բանը, որ ենթահամայնքը պիտի վերցնի իր ձեռքը, որոշ բաներ հաջողեցին վերցնել: Հետո եկան սիրիահայերը, հետո սկսեցին գալ հայաստանցիները: Եվ այսպես միատարր զանգաված չի եղել:

Վերադառնանք համայնքը կազմակերպելու խնդիրներին: Անշուշտ, չէր խանգարի, եթե դոմինանտ ուժը լիներ: Եթե լիներ քաղաքական հզոր կառույց, որը ինչ-որ մի բան աներ, ցույց տար, որ ինքը կա, ինքն ունի կամք աշխատելու: Անշուշտ, բոլորը կհնազանդվեին:

Հայաստանից եկած հայերը ունեն մեծ խնդիր՝ համայնք ձևավորելու: Նախ, ցավալիորեն, այստեղ եկող մասսաները հիմնականում արհեստավոր մասսաներ են, ոչ թե մտավոր: Առաջին էտապում փախել, եկել են այստեղ, օրինակ, էն մարդիկ որոնք հանցավոր կյանք ունեն և իրենք իրենց հետ բերել են էն շրջանակի մարդկանց, որոնք, փողոցային բարբառով ասած, իրենց մաստի մարդիկ են: Հիմնական մեծ մասը այստեղ եկող հայերի մտավոր պլանկան շատ բարձր չի: Ֆրանսիայում այդ խնդիրը կա: Օրինակ, մեր հայաստանյան միջավայրում շատ քիչ ես գտնում մարդիկ, ուլքեր որ բարձրագույն կրթություն ունեն, ուլքեր ինչ-ոչ մի ձևով կարող են օգնել: Թերթ ունենք, և ես չեմ կարողանում գտնել մեր համայնքում մեկին, ով կկարողանա զբաղվել թարգմանությամբ: Ուլքեր պիտի թարգմանեին, այստեղ պիտի ուսանած լինեին: Բնականաբար, փողոցում ֆրանսերեն սովորած մարդը գրագրություն չի կարող անել»:

«Արտագաղթը Ֆրանսիայից շատ է: Լիոնի մեջ հայերը որ եկան, մի քիչ աշխատեցին: Լիոնում գործավոր դասակարգի պես է: Հարուստ դասակարգը Փարիզ է գնացել: Շատերը տեսել են, որ ավելի առաջադիմություններ կան հոն, ավելի աշխատանք կա հոն: Այդ անձերը, որ ժամանակին հոս եկած են, երրորդ սերունդը, երբ որ եկան հոս, դժվա-

րություններ ունեցան, պատերազմի մտան 1918-ին Ֆրանսիայի հետ: Եվ տեղացիք ասում էին «աղտոտ հայեր»: Այդ հայերը աշխատեցին, պատերազմ արին, Ֆրանսիայի կառավարության, Ֆրանսիայի բանակի քովը, և հիմա այսօր, շնորհիվ նրանց, հայերի անունը բարձր է»:

«Սիրիայից, որ պատերազմը սկսեց մի փոքր ներգաղթ եղավ, բայց շատը Հայաստանից: Ինչքան պարսկահայ կային, բոլորը Ամերիկա են: Այստեղ շատ չեն գալիս: Հայաստանից եկողները շատ են: Եվ իրենց ներգաղթի պաշտոնական պատճառը, որ բերում են՝ «Բաքվից ենք գալիս, Ադրբեջանից ենք գալիս», դրանով իրենց ավելի հեշտ են հաստատում իրենց գործը:

Որ գալիս են, արհեստավորի բաներ են անում, որ շուտ կարողանան հարմարվել: Հիմա էն սերունդն էմ ես տեսնում, որ հայրը և մայրը եկել են, և երիտասարդները պատրաստ են ամեն ինչ անել, որ իրենց օգնեն: Հայաստանցիները հացագործություն են անում, ձեռքի գործ, օտո [խմբ. ավտոմեքենա] են վաճառում, բայց ավելի մակարդակը բարձրները, անշուշտ»:

Ընտանիք

Քննարկվող առանցքային հարցեր. *հայ ընտանիքի կառուցվածք, հարաբերություններ՝ անցյալի և ներկայի համեմատությամբ, խառնամուսնություններ՝ ընկալումներ և միտումներ, երեխաներ:*

«Խառնամուսնությունները շատ են: Հիմա որ հայաստանցի է գալիս, եկեղեցին առաջինը թղթերն է պահանջում: Եթե ունեն, խնդիր չկա: Քաղաքական պսակը պետք է լինի, և թուղթը պետք է տեսնեն: Եթե չտեսնեն, չեն անի, որովհետև, ֆրանսիական օրենքների համաձայն, արգելված է: Իսկ այդ պարագային շատերն են ասում, որ զագս չունեն [խմբ. ամուսնությունը գրանցված, վավերացված չէ]: Դա չի կարող լինել, որովհետև հոս արարողությունը կատարող հոգևորականը պատասխանատու է՝ մինչև իսկ բանտարկություն: Ես ամեն անգամ հարսանիքից առաջ կանչում խոսում եմ, բացատրություն տալիս՝ ինչ պետք է լինի, ոնց պետք է լինի: Անշուշտ, ստիպված կեսը ֆրանսերեն, կեսը

հայերեն՝ խառնամուսնություններում: Ասում եմ, որ զագսի թուղթը պետք է տեսնեմ, եթե չտեսնեմ՝ չեմ անի, եթե ճանաչում եմ՝ կհավատամ: Երկու-երեք պարագաներ եղավ, ասել եմ, որ թուղթը բերեք, որ տեսնեմ, չեն բերել: Ասի ներողություն, բայց պետք է թուղթը տեսնեմ, հավատում եմ ձեր խոսքին, բայց խոսքը օդի մեջ է:

Հայերն այստեղ նախընտրում են ամուսնանալ ֆրանսիացու, իտալացու հետ:

Իրենց զավակներին ուզում են հայ մկրտեն, դպրոց ուղարկեն, բայց տան մեջ եթե հարաբերությունները մեկը օտար է, մեկը հայ է, միշտ օտար լեզու են օգտագործում: Հայ ուսուցչուհիներն ամեն օր մեկ ժամ դաս ունեն: Արտոնված է՝ կուզեք երկու ժամ արեք, բայց ժամանակ չկա: Այդ դպրոցի 27 ժամվա ժամանակացույցին պիտի հետևենք: Ամեն օր մեկ ժամ դաս են անում հայերեն: Բայց մեկ ժամ հայերենն ինչ պետք է լինի»:

«Ամեն մարդ ուզում է, որ հայ առնի: Բայց իմ ամենամեծ վախն ավելի շուտ կլինի, որ գոնե քրիստոնյա լինի: Այդ քրիստոնյան տան մեջ այնչափ մեծ դժվարություն չի բերում: Բայց մահմեդականը արդեն պորբլեմ կլինի:

Շատ տարածված են նմանատիպ ամուսնությունները: Մի քիչ ընտանիքների հետ է կապված: Ընտանիքները, դաստիարակությունը դրա մեջ դեր են խաղում:

Այս մենթալիտետը [խմբ. հայի] չունեն ֆրանսիացիք: Բայց շատ բարի մարդիկ են ֆրանսիացիները:

Մեծ սերունդների հետ ապրելու վտանգը կա արդեն: Որովհետև հիմա եթե մեծ հայրիկ, մեծ մայրիկ կա տան մեջ, այր ու կին գործի կերթան, նորմալ է, մեծ մայրիկը թոռանը նախաճաշ կտա: Տատիկը, պապիկը նրա ձեռքը կբռնեն դպրոց կերթան, հացը կառնեն, օրվա ճաշը մեծ մայրը կեփե, լվացքը մեծ մայրը կլվա: Սա կոտրվեց...

Ամուսնալուծությունները շատ են հայերի շրջանում: Դրանք արձանագրվում են քաղաքացիական ձևով: Եթե եկեղեցին հաստատի, արձանագրում է, եթե չես անցնում, չի արձանագրում: Դա փողով է՝ եկեղեցին անցնելը: Ամեն մարդ կուզե եկեղեցի մտնել, ճերմակ հագուստ հագնել, օրհներգը կնվագի, մի բան անի:

Մի քիչ դժվար եղավ: Հետո, ամեն ազգի մեջ եղածին պես, Ֆրանսիան օրինական չէին անցել հայերը: Երկիրը օրենք ունի, բան ունի, չես կարող ուզածիդ պես բան անել: Գողության մեջ են մտնում: Ստեղ ամեն գեշություն կա: Դա մի քիչ մեզ մեկ քայլ ետ արավ: Ֆրանսիացիների վախը արաբներն էին, բայց հիմա հայերն էլ են՝ իրար դանակ խոցող հայերը... Մենք չենք իմացնել, նման բան չի եղել:

Ամուսնալուծություններ են լինում: Հետո պետությունը շատ օգնություն է տալիս, ով այստեղ է: Օրինակի համար, այր և կին մի տեղ գործ կարող են գտնել, լինում է, որ կացարան են հատկացնում: Եվ այդ հարկը կարող են ծախսու առնեն, եթե ուզեն: Ամսականին երկու հոգին բավական է: Զավակին ավելի բավարար է»:

«Հիմնականում քրիստոնյա են առնում: Շատ բացառիկ պարագաներ կան՝ մարոկացիների հետ ամուսնացած: Բայց բացառիկ պարագաներ են՝ մի քանի հոգի: Բայց, ընդհանրապես, քրիստոնյաների հետ են՝ ծագումով ֆրանսիացի կամ իտալացի:

Հայկականությունը պահելը կախված է սեռից: Եվ անձը, եթե իր ինքնության գիտակից է, իր պատմությունը գիտի և, այնպես պատահեց, որ օտարի հետ ամուսնացած է, օտարը կընդունի: Շատերը կան որ ճանաչում են, մանավանդ Հայաստանից եկած երիտասարդներ, որ օտարի հետ ամուսնացած են և իրենք հետաքրքրված չեն: Կարելի է ընդհարացնել այն, որ հայկական կողմը՝ աղջիկ կամ տղա, եթե իրենք գիտակից լինեն, զավակների համար խնդիրը լուծված է: Բայց եթե իրենք այդ գիտակցությունը չունեն կորցված են արդեն: Եվ կորցվածների թիվը շատանում է»:

«Ես ասում եմ, որ մամաներն են պահպանում հայկականությունը: Օրինակ ասեմ, աղջիկս ընկեր ուներ հրեա: Ինձ ասում էր նրանք ուզում են հայ աղջիկ առնել, որովհետև գիտեն որ մամաներն են սովորացնողը:

Հիմա խառնված է. մեկը ֆրանսիացի է առնում, մյուսը՝ իտալացի և այլն»:

«Կան, որ արդեն հայերի հետ շփվել ու ընտանիք են կազմել: Բայց կան շատերը, որ ուրիշ ազգերի հետ՝ ֆրանսիացի, կամ իսպանացի,

կան իտալացի: Ամենամեծ մասը արդեն քրիստոնյաների հետ են: Բայց կա մի փոքր մաս՝ մահմեդական ընտրող»:

«Քիչ են միջէթնիկ ամուսնությունները: Իմ երեխեքիս օրինակով կասեմ: Ամեն ինչ ծնողից է գալիս: Ամեն տարի Հայաստան ենք գնացել, այնտեղ են սովորել երեխեքը, դրա համար երկուսն էլ հայ են ուզում: Այսօր աղջիկները շատ են գնում վերև սոցիալապես: Որքան շատ են գնում վերև, տղա դժվար է ճարել: Հայաստան այդպես է, էստեղ էլ նույն բանն է: Այլազգիների հետ ինչու՞ են ամուսնանում: Տղերքի ծուլության համար, կարծում եմ:

Դպրոցից դուրս ֆրանսերեն խոսել կարող է լինի: Եթե այսօր ծնողները աշխատում են՝ առավոտը գործի, երեկոյան գալիս են տուն: Այդ ընթացքում երեխան 10 ժամից ավել ֆրանսիացու հետ է: Գալիս է տուն և ծնողին 1-2 ժամ է տեսնում: Տնային աշխատանքներ է կատարում, որոնք ֆրանսերեն են: Արդեն ինչ ուզում եք անեք, բայց, ըստ էության, ինքը ֆրանսիացու հետ է»:

Հայերի ինտեգրումը երկրում

Քննարկվող առանցքային հարցեր. *հայերի կերպարի ընկալումը, ինտեգրման հաջողություններն ու դժվարությունները, ընդունող երկրի և հասարակության վերաբերմունքը, հայ համայնքի և պետության փոխհարաբերությունները:*

«Հայերի մասին ամեն մարդ հարգանք ունի: Առաջ չգիտեին՝ հայերն ովքեր են: Հիմա, երբ որ մենք այս խառնամուսնությունների, թաղումների պարագային, որ իրենց տուն ենք գնում, խոսում ենք և այլն, պատմում ենք, թե առաջին քրիստոնեաները հայեր են եղել, և շատերը զարմանում են: Ֆրանսիացիները զմայլվում են արարողություններով: Իրենց շրջապատը ամբողջը ֆրանսիացի են: Ֆրանսիական մթնոլորտի մեջ են»:

«Հայերի կերպար մենակ Ֆրանսիայի մեջ չէ, ուր երթաք՝ մինչև այսօրից 10 տարի առաջ, մինչև հիմա նորեն «je vous connais, je vous connais [խմբ. ես գիտեմ ձեզ, ես գիտեմ ձեզ]» են ասում, Ազնավուր, Géno-

cide Arménien [խմբ. Հայոց ցեղասպանություն] : Ամենից շատ այս երկու բանն են ասում:

Génocide-ի [խմբ. Ցեղասպանություն] համար սա նրանից է, որ Ֆրանսիան ազատ երկիր է: Դու եթե կուզես գոռալ, կանչել, ուզես քաղաքիդ մեջ ամենամեծ պլացի [խմբ. place - հրապարակ] վրա, մարդիկ ասում են «oui, oui, je connais génocide» [խմբ. այո, այո, ես գիտեմ Ցեղասպանության մասին], և քաղաքապետն էլ քեզ ազատություն կտա, որ երթաս գոռաս, ուզածդ ասես: Չեն մերժում Génocide-ը:

Շատ են սիրում մեզ: Երբ որ Հայաստան ժողովի էի, ասեցի, որ մենք ճերմակ օձիքի պետք ունենք: Մենք փաստաբանի պետք ունենք, մենք ինժեների պետք ունենք, մենք գրողի պետք ունենք, մենք architecte-ի [խմբ. ճարտարապետի] պետք ունենք՝ այս ճերմակ օձիքների պետք ունենք, որ մեր գլուխը լինեն այս մարդիկ: Ինչ անենք, որ աղվոր ոսկերիչ լինես, աղվոր հագուստ կարող լինես, ինչին է պետք, մենք չենք կարող երկիրը փրկել»:

«Ընդունված է [խմբ. հայր]՝ առանց խոսքի, առանց ճանաչողության: Ֆրանսիան համայնքին դեմ է: Բայց Ֆրանսիացիք շատ են սիրում հայ համայնքը: Որովհետև Երկրորդ [խմբ. համաշխարհային] պատերազմն է եղել, և Երկրորդ պատերազմին բոլոր հայերը գնացին ֆրանսիական բանակի մեջ ծառայեցին: Ընդունված են հայերը՝ որպես ֆրանսիական հասարակության մաս կազմող: Այս շրջանի բերումով ֆրանսիական հասարակության մեջ ընդունված են հայերը: Ինտեգրված են, որովհետև հնարավոր չէ ինտեգրվել հասարակության մեջ, բայց քեզ չընդունեն: Եվ համայնքի կազմակերպումը մեզ համար առաջնահերթ խնդիր է:

Տեղ-տեղ եղած է, պատահած է, որ ժողովրդի՝ ֆրանսիացիների կեցվածքը փոխվի հայերի հանդեպ, բայց, ընդհանրապես, ոչ, որովհետև այլևս երրորդ, չորրորդ սերունդն է և ընդհանրապես տարբերություն չկա:

Լիբանանցիները բավական շուտ կարողացան համարկվել: Հայաստանցիները տակավին վերջացած խնդիր չէ, տակավին նոր սկսած է: Ճիշտ է, պարագաներ կան, բայց ընդհանրապես չի կարելի ընդհանրացնել: Դոմինանտողը դրական կարծիքն է:

Հայաստանից եկողները այս նախորդ բարդույթը չունեն, ստորակայության բարդույթ չունեն: Հայաստանից են գալիս՝ երկիր կա, բան կա: Երբ մենք եկանք, Սովետական Հայաստանը մեր երկիրը չէր: Այսինքն մենք այդպես չէինք զգում: Միաժամանակ, ամբողջ հայության հայկական ինքնությունը պահպանելու ամբողջ բեռը մեզ վրա էր: Հայաստանից եկողներն այդ բեռը չունեն, երբեք այդ բանը չեն զգա, որովհետև երկիր կա այդտեղ, և ամեն մեկն իր ճամփան կերթա: Մանավանդ, որ այդ երկրից փախած-եկած են այստեղ: Այդ երկիրը որոշ չափով մերժված երկիր է իրենց համար:

Երկու-երեք սերունդ առաջ մարդիկ շատ մեծ գումարներ էին նվիրում: Հիմա այդպես չէ: Երկրորդը, Ֆրանսիայի հայկական դպրոցների մեջ ուսուցիչների կեսը պետական վճարում ունեն: Շատ քչերը, որ եկեղեցու կողմից են վճարված, քչերը, որոնք պետք եկած վկայականներ չունեն: Օրինակ՝ հայերենի ուսուցիչներն, ընդհանրապես, այստեղի վկայականներ չունեն:

Միջին Արևելքի համակարգում հազիվ դպրոցը վերջացրած, համալսարանը վերջացրած կամ համալսարան չգնացած՝ ուսուցչության մեջ են մտնում: Հետո նույնիսկ, եթե մանկավարժ լինեն՝ ինչ: Խնդիրն այդ է: Հայաստանի մեջ մանկավարժություն ուսանած մեկն այստեղ երեխաների հետ չի կարող աշխատել: Այստեղի մեթոդները բոլորովին տարբեր են: Պետք է հարմարվել: Եվ հարմարվելու համար հաճախ մանկավարժ լինելու պետք չկա, ուսանած լինելու պետք չկա, որովհետև մակարդակը շատ բարձր չէ հայ ուսուցիչների: Միայն թե հարմարվեն ֆրանսիական մեթոդներին:

Ֆրանսիայի մեջ ուրիշ երևույթ կա: Արևմտյան սփյուռքի մեջ շատ ընդհանրացած երևույթ է: Փոքր տարիքին հայկական դպրոց են գնում, կազմակերպությունների մաս կազմում, ամուսնանում ընդհանրապես օտարի հետ և, մինչև իրենց զավակները կունենան՝ 30 տարեկան արթնանում և ասում են, որ կուզեն զավակները հայախոս դառնան: Մինչ այդ 10-15 տարի հայության հետ կապ չեն ունեցել: Ուրեմն կապ է ստեղծվում ու հետո խզվում»:

«Հիմա, օրինակի համար, լավ անուն ունեն [խմբ. հայերը]: Բայց ֆրասիացիները չեն ասի, որ սա հայ է: Հայերն աշխատասեր են, լավ

համբավ ունեն, իրանց լավ են ցույց տալիս: Մինչև այս վերջին տարիները հայերը մեծ արժեք ունեին Ֆրանսիայի մեջ, որովհետև մեր ծնողները որ եկան, ոչինչ չունեին, աշխատեցին, երկրին էլ օգնություն եղավ, իրենց զավակները լավ ուսում առան, և հիմա, անշուշտ, մինչև այս վերջին 30 տարիները հայերի մասին ֆրանսերեն ասում են՝ «parfaitement intégré a la société française» [խմբ. կատարելապես ինտեգրված ֆրանսիական հասարակությունում]: Բոլորովին ընդգրկված են ֆրանսիական ընկերության մեջ: Ֆրանսիացիները լավ տպավորություն ունեն հայերի մասին՝ շատ լավ:

Այսօր մի քիչ ավելի դժվար է, որովհետև ամեն երկրի մեջ, որ արտասահմանից մարդիկ կգան, ընդունելությունը դժվար է: Դժվար է երկրի համար:

Չեմ կարծում, որ կարող ենք հայերի մասին ասենք սա: Ֆրասիացիներն, ընդհանրապես, չեն սիրում օտարներին: Չեն սիրում օտարներին, որոնք իսլամ են, որոնք կապրիզ [խմբ. caprice - քմահաճություն] են անում: Ես չեմ լսել, որ ֆրանսիացիները հայերի դեմ են: Ֆրանսիայի համար, եթե անձը, որ գալիս է որևէ տեղից, քրիստոնյա է, տարբեր է, եթե իսլամ է՝ տարբեր է: Ֆրանսիայի մեջ այսօր դժվար է: Ժողովուրդը բավական հակառակ կդառնա իսլամների դեմ: Բայց հայերի դեմ ես չեմ տեսել, որ ասեն՝ այս հայերն ինչու են գալիս: Հայերը աշխատասեր են: Ամեն ազգ աշխատասեր չէ: Եվ նաև, ինչպես ամեն ժողովրդի մեջ, տեսակները կան՝ լավ տեսակը կա, վատ տեսակը կա:

Ունենք չորս կազմակերպություններ, որ կջանան միացնել իրար: Եկեղեցիները կմիացնեն: Նաև կա Ֆրասիայում կազմակերպություն՝ CCAF, որ կջանա բոլոր հայերին միավորել: Նույնիսկ կան տարբեր-տարբեր politique [խմբ. քաղաքական] խմբեր, ինչպես՝ դաշնակցությունը, ռամկավարները: Կողք-կողքի են գալիս և միասին աշխատում: Դա ազդում է համբավի վրա դրական»:

«Այստեղի հայերը «իրենք» ու «մենք» են ասում, որովհետև իրենք են տարբերություն դնում մեր և իրենց մեջ: Իսկ համայնքում չեն դնում տարբերություններ: Մենք մեր մեջ ավելի շատ ենք կռվում: Երբ որ հայաստանցիք, օրինակ, ուզում են գնան օգնեն, մյուսները կարող է չու-

զեն, մտածեն՝ հիմա ամբողջը կվերցնեն: Բայց չկա նման նպատակ: Ես ինքս տարբերություն չեմ դնում սփյուռքահայ-հայաստանցի, որովհետև մեկն այստեղ ծնվել-մեծացել է, մեկն էլ արդեն նոր տուն ունի սփյուռքում: Ես չեմ կարող տաբերություն դնել»:

Բ. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

Համայնքի կառույցներն ու իրադարձությունները

Քննարկվող առանցքային հարցեր. *համայնքի կառույցներ և կազմակերպություններ (կրոնական, մշակութային, բարեգործական, քաղաքական և այլն), համագործակցություն նրանց միջև, հիմնական սոցիալական և մշակութային միջոցառումներ ու իրադարձություններ, նախաձեռնություններ, սոցիալ-մշակութային կյանք, համայնքի ներգրավվածություն և համախմբում:*

«Ֆրանսիայում ավելի տարածված բառը ասոցիացիա՝ հասարակական կազմակերպություն: Բոլորը նույնն են [խմբ. եկեղեցի, դպրոց, կուսակցություն]: Քաղաքական կուսակցություն, որպես այդպիսին, չի կարող գրանցված լինել: Որովհետև քաղաքական կուսակցությունը չի կարող զբաղվել այլ ազգի կամ այլ պետության շահերով: Այսինքն այդ կուսակցությունները ֆորմալ ձևով պետության մոտ արձանագրված չեն: Իրենք կարող են գրասենյակներ ունենալ, որոնք կարող են ունենալ նորից հասարակական կազմակերպության բնույթ: Կարող է լինել մշակութային, սոցիալական ուղղվածության, բայց ոչ քաղաքական: Օրինակ, Ամերիկայում Հայ դատը հատուկ կարգավիճակ ունի՝ քաղաքականություն վարելու հատուկ բան ունի: Այստեղ չունեն: Այստեղ, օրինակ, հայկական կառույցները ձևավորվում են ուրիշ խմբերի շուրջ: Օրինակ՝ CCAF-ը հիմնականում դաշնակցական կազմակերպությունների ընդհանուր միությունն է: Չեմ ասի, որ իրենք թերանում են, ուղղակի այսպես մի բան կա. հայկական կազմակերպությունները որևէ մեկի կողմից, որևէ մեկ այլ ասոցիացիայի կողմից չեն կարող ենթարկվեն համակարգման: Ավանդական մտածողությունը այստեղ շատ է խանգա-

րում: Օրինակ, դուք ծանոթ եք, չէ՞, Դաշնակցության կուսակցության գաղափարներին: Ուշադրություն դարձրեք դաշնակցականների հիմնական մասը դաշնակցական են՝ ավանդույթից ելնելով: Իրենք գիտեն, որ իրենք պիտի լինեն դաշնակցական: Նույնը հնչակյաններն են: Այսինքն իրենք տեսել են, որ այդպես պիտի լինի ու այդպես շարունակում են:

Տեսե՞ք՝ ինչպես է: Ֆրանսիան եվրոպական միակ երկիրն է, որտեղ ղեկավարման ուղղահայաց սկզբունքը պահպանվել է: Հիմնականում, երբ որ ձևավորվում են հասարակական կառույցներ, ավանդաբար, Ֆրանսիայի պետությունը չի միջամտում: Ի դեպ, Ֆրանսիայի 1901թ. օրենքը էտալոնային է ամբողջ աշխարհի համար, հասարակական կառույցներ ստեղծելու համար: Ինչո՞վ է էտալոնային: Որովհետև հասարակական կառույցներին տալիս է գրեթե 100 տոկոս ազատություն՝ գործելու հասարակության մեջ, ինչ-որ բաներ ձեռնարկելու, ինչ-որ մտքեր, գաղափարներ ստեղծելու և իրացնելու: Բայց, ավանդաբար, ուղղահայաց ղեկավարման ձևը պահպանել են, և դա փոխանցվել է նաև հայկական ասոցիացիաներին: Իմ կարծիքով, այդ ուղղահայացը խիստ խանգարում է: Որովհետև իշխանության համար տարվող պայքարն ավելի շատ էներգիա է խլում, քան թե բուն էությունը: Պարզ օրինակ բերեմ. մշակույթային կառույցը, որ պետք է զբաղվի մշակույթով, ձևավորի երգ-չախումբ, պարախումբ, ավելի շատ ժողով են անում, որ տեսնեն այս մարդն ինչ ասեց, լավ մարդ է, թե՛ ոչ: Այսինքն իրենց էներգիայի 95 տոկոսից ավելին ծախսվում է ներքին խնդիրները լուծելու վրա, որովհետև իշխանության համար տարվող պայքարը, ուղահայացով վեր ելնելու գաղափարը միշտ կա: Թիմերի են բաժանվում, տարբեր հոսանքների են բաժանվում ու սկսում են իրար հետ կռվել: Ու էն էներգիան, որ պիտի դնեն ստեղծելու վրա, ճիշտ հակառակն է օգտագործվում: Ճիշտ չի զարգանում: Մենք այստեղ ունենք շատ խիստ վատնում ազգային ներուժի: Գաղափարներ, որ կարող են մարդկանց համախմբել: Ես երկար տարիներ այստեղ եմ և չեմ տեսել»:

«Մշակույթի տուն կա՝ Դեսին, հոս՝ Լիոն չէ: Միություններ կան՝ «Կապույտ խաչ», «Տիկնաց միություն», «Կարմիր խաչը» կար, անհետացավ: Այս «Կապույտ խաչ»-ի «Տիկնաց միության» անդամների գրեթե

մեծամասնությունը լիոնահայեր են, շատ հայերեն էլ չգիտեն: Այս միությունները պահում են հայությունը: Տարին մի քանի անգամ հրավիրում ենք հոս: Ամսվա առաջին չորեքշաբթի օրերը ճաշկերույթ է լինում, 50-60 հոգին են գալիս տարեց սերունդից, հոս ճաշում են, հարաբերություններ են սեղծվում: «Կապույտ խաչ»-ում այսօր հոգնած վիճակ է: Եվ այդ տարեց սերունդից հետո այդ կազմակերպություններում իրենց երիտասարդությունը չի շարունակի: Մենակ հոս չէ, ամեն տեղ է»:

«Մոտավորապես 10-15 հատ ասոցիացիաններ կան այս շրջանում՝ Վիեն, Վալանս: Սրանք 190 փախստականների ձեռքն են: Ավելի շատ տարիքոտ են հիմա: Activité-ին [խմբ. ակտիվությունը] սրանց բանը չի:

Ամենամեծ հանցանքը գիտեն ինչն է: Լուսավորչական լինելով՝ մենք միշտ հակառակվել ենք, առաջին անգամ՝ կաթոլիկներին, հետո՝ բողոքականներին: Ինչու՞, չգիտեմ: Ես բողոքականներին շատ լավ եմ ճանաչում: Շատ բարի մարդիկ են, օգնող մարդիկ են, մի բան չսպասելով՝ օգնող են:

Մեր եկեղեցին կա, պատարագը բանը շատ աղվոր է, հուղարկավորությունն անգամ աղվոր է՝ երգերով: Շատը դաշնակցականներն ունեն, բողոքականներն էլ ունեն, կաթոլիկներն էլ ունեն:

Հայաստանցիների հարցը մի քիչ փոխվեց: Եկեղեցին դպրոց ունի: Ժամը 4-ին է ավարտվում, կարծեմ: Հայրերը, մայրերը գալիս են դպրոցից եկողներին առնում: Հայաստանից եկողները գանգատվեցին՝ ասելով, որ չեն կարող արևմտահայերենին սովորել և անհանգիստ են, որ Ֆրանսիայի կառավարությունն իրենց մի դպրոց հայթայթի, որ Հայաստանից եկած ուսուցիչներ բերեն, որ իրենց psychologie-ին [խմբ. հոգեբանությունը] շտկվի»:

«Ակտիվ գործողներ կային: Ես արդեն քանի տարի է դուրս եմ եկել Մշակույթի տնից: Նախկինում բոլոր հաստատած բաները՝ գիրքի վաճառքի տոն, մեկ-մեկ ապակառուցվեցին: Դասախոսություններին, միջին հաշվով, 70 հոգի էին գալիս, երբեմն՝ 100 հոգի, 50 հոգի: Գրքի վաճառքի փառատոն կար երկու օրվա, որ Դեսինի մշակութային կենտրոնի մեջ էին անում: Այդ հսկա համալիրի մեջ էին անում, 500-700 հոգի կային: Եվ ամեն մեկ վաճառքին 17-18 հազար եվրո վաճառք էին անում:

Հիմա չկա: Եվ եթե հայության մասին գիրք պետք է առնեք, ինտերնետով պետք է փնտրեք: Գրատուն կար Մշակույթի տան մեջ: Հետզհետե ամեն բան ապակառուցվեց:

Կառույցները կորցրեցին իրենց ուժը, այսինքն՝ մարդիկ կորցվեցին, որոնք գոյացնում են այդ ուժը: Լիոնի եկեղեցին ժամանակին բավական մշակութային բաներ արեց: Երկու տարվա մեջ բավականին բան փոխեց:

Առաքելական եկեղեցին Հայաստան այդպես չէ: Սա Պոլսո պատրիարքության մոդելն է, որ սփյուռքի մեջ տարածված է: Թեմական խորհուրդ կա և ծխական խորհուրդ կա: Հիմա իրականության մեջ այս ծխական և թեմականն էլ նոր բաներ էին, ժամանակին ազգային միություն էր: Առաջնորդարան կա, բայց տեղական առումով: Լիոնի մեջ մի եպիսկոպոս կար, որ արքեպիսկոպոս եղավ: Եվ արքեպիսկոպոսարան եղավ Լիոնի մեջ: Հիմա, Էջմիածնից եկած նոր կանոնակարգով, Լիոնի մեջ չի կարող եպիսկոպոսարան լինել: Մի քահանա կա՝ շատ չափավոր կարողություններով: Եվ ծխի վերածվեց: Ամբողջ Լիոնի համայնքը մեկ ծխի վերածվեց: Երբ որ ֆրանսիական եկեղեցու հետ հարաբերության մեջ ենք, նրանք հարյուր հատ ծուխ ունեն: Ամբողջ Լիոնի հայությունը մեկ հատ ծխի վերածվեց: Շատ չմտածված, սխալ բաներ եղան: Մի հատ ծուխ է և ծխական խորհուրդը կա: Ծխական խորհուրդը ամբողջ Լիոնի հայությանը պետք է տիրություն անի: Բայց ինչպես կարելի է ծխական խորհուրդ ասել դրան: Ծխական խորհուրդը երեք տարի առաջ շատ հետաքրքիր միջազգային գիտաժողով կազմակերպեց այստեղ: Իրականում ծխական խորհրդի անունը չկա էստեղ: Որպեսզի հանրային մարմիններից՝ քաղաքապետարանի և այլնի նպաստ ստանա, մշակութային բան ենք ստեղծել: Բայց իրենց համար մշակութայինը երեսանց բան է՝ մշակութային մի բան չունի: Ես այդ անունով մի բան կազմակերպեցի՝ այս գիտաժողովը: Հետո տեսանք, որ այս մարդիկ իսկապես հետաքրքրված չեն:

Կա, օրինակ, Հայ Ավետարանական Եկեղեցու կենտրոնը [խմբ. որ օգնում է թղթաբանության հարցերով]:

Այն ժամանակ, գրեթե ամիսը մեկ անգամ մի խումբ Հայաստանից եկած մարդիկ խուժում էին գրասենյակ և ասում՝ մենք փողոցն ենք,

թուղթ չունենք, օգնեցեք մեզ: Եվ որոշվեց մյուս կազմակերպությունների հետ, եկեղեցիների հետ և այլն մի մարմին ստեղծել, որ իմացվի, որ մարմին կա, որ եկողների կեցության պայմաններով է զբաղվում»:

«CCAF-ը կա, գործ է անում, որ բոլոր միությունները՝ հնչակ, դաշնակ, ամենը միասին աշխատեն: Առաջ չկար սա: Ամեն մեկը գլուխը առնում գնում էր կառավարությանը մի բան էր ասում: Սա ուզեցին հրեաների պես անել՝ միավորել»:

«Մեր կազմակերպությունը «Կապույտ խաչն» է, Ֆրանսերեն՝ Կապույտ խաչը, բայց ինքը կոչվում է ՀՕՄ՝ Հայ օգնության միություն [խմբ. «Կապույտ խաչ»-ը ՀՕՄ-ի փաստական մասնաճյուղն է] : Եվ մենք Ֆրանսիայում ունենք 17 հատ մասնաճյուղ, որոնք արդեն ունեն իրենց բյուրոները: Եվ ամեն մասնաճյուղ իր քաղաքի հետ է աշխատում: Իմ մասնաճյուղը Լիոնից մի քիչ հեռու է, և մենք արդեն աշխատում ենք ուրիշ կազմակերպությունների հետ՝ «Նոր սերունդը», Դաշնակցությունը: Մենք կազմակերպում ենք, ինչ-որ օգնություն՝ կարող ենք Հայաստանի և ուրիշ երկրների հետ: Կարող ենք օգնություն անել բոլոր երկրներից՝ լինի Ֆրանսիայից, լինի Ամերիկայից, Հայաստանից:

Այդ գործունեությունն իրականացվում է պետական հովանավորչությամբ: Ինչ-որ հայկական manifestation-ներ [խմբ. ցուցադրություններ] գնում են քաղաքում: Ապրիլի 24-ի միջոցով մենք կապվում ենք բոլոր քաղաքների քաղաքապետական տան հետ, և ինչ որ պետք է կազմակերպենք՝ իրենց հետ է ամեն ինչ: Եվ արդեն ճաշկերույթներ ենք պատրաստում: Ամեն տեսակ օգնություն ենք հավաքում և ուղարկում՝ կան Հայաստան, կան ում որ ամենաշատը պետք է: Հայաստանի հետ դյուրին է, որովհետև ՀՕՄ-ը արդեն ունի գրասենյակ և իրենց հետ ամեն ինչ շուտ է հասցնում: Ինչպես անցած տարի պատերազմի ժամանակ՝ ինչ որ արդեն գումար հավաքվեց, վստահ ուղարկեցինք բոլոր օգնությունները, հասավ ՀՕՄ-ին, և ինքն արդեն բաժանեց բոլոր մարդկանց՝ ըստ կարիքների:

Իրենք [խմբ. Լիոնի հայերը] մեզ դիմում են, օրինակ, եթե այս տեսակ պատերազմ լինի Հայաստանում, իրենք մեզ դիմում են և ասում, օրինակ, շորեր ունենք: Լինում է այնպես, որ դիմում են իրենց օգնելու համար:

ՀՕՄ-ը և «Կապույտ խաչը» շատ մեծ կազմակերպություն է և ողջ աշխարհում կա և վստահությունը կա: Ցանկացած մարդ կարող է դիմել, բայց մենք արդեն ինչ որ կարող ենք, օգնում ենք՝ ինչպես գտնել հյուրանոց, որտեղ կարող են մնալ, ուտելու կամ խմելու բաներ կարող ենք հասցնել: Բայց լիմիտ կա: Պետք է մենք ուրիշ մասնաճյուղերի դիմենք: Որովհետև մենք այստեղ արդեն շատ անդամներ չենք և պետք է խոսենք, օրինակ, քաղաքապետարանի հետ, կառավարական մարդկանց հետ, որոնք կարող են մի բանով օգնել:

Ավելի շատ աշխատում ենք ուրիշ հայ կազմակերպությունների հետ: Մեծ manifestation [խմբ. ցուցադրություն] ենք կազմակերպում, ինչպես ապրելի 24-ի օրը, Լիոնի քաղաքապետարանն է կազմակերպում, բոլոր կազմակերպությունները միասին մասնակցում են: Մենք արդեն, ինչպես ասում են, քույր կազմակերպություններ ենք: Դաշնակցությունը կա ...: Եթե պետք լինի իրենք մեզ են հասնում կամ մենք իրենց: «Նոր սերունդը» կա ...: Իր անդամները շատ երիտասարդներ են, և արդեն իրենք են կազմակերպում manifestation-ներ և իրենց սովորությունն են փոխանցում՝ ինչ որ սովորել են, ինչ որ գիտեն»:

«Ամենաշատը, որ երիտասարդ է հավաքում, պարի խումբն է, շախմատի քլուբը [խմբ. ակումբ]: Ավելի շատ եկեղեցուն է կապված: Եվ մեր երեխեքը գնում են այնտեղ: Շախմատի ուսուցիչը ռոճիկը [խմբ. աշխատավարձ] առնում է եկեղեցուց: Դպրոցը չնչին բան է տալիս, որպեսզի մեր երեխեքը գնան: Դեսինի մշակույթի տունը լավ է, եթե երիտասարդությանը հետաքրքրեն՝ կգնան: Բայց մեկ-երկու տարի գնում են, հետո փոխվում են, հետո չեն ուզում»:

«Շատ են [խմբ. հայաստանցիները]: Օրինակ վերցրեք Ֆրանսիայի Մարգարյան-Փափազյան դպրոցում 180 երեխա է: «Կապույտ խաչը» դպրոց ունի արևելյան լեզվով [խմբ. արևելահայերենով], իրենք ունեն 15 երեխա: Միայն մեր՝ Դեսինի դպրոցն է 220 աշակերտ, 7 ուսուցիչ և բոլորը հայաստանցի հայեր են»:

«Ամենաուժեղը եկեղեցական [խմբ. համայնքային կազմակերպություններից], բայց ոչ թե առաքելական, այլ բողոքականն է: Կազմակեր-

պությունները քանակությամբ շատ են, բայց որ վերցնեք իրար հետ համագործակցեն, չէ»:

«Մենք ժամանակին հոս դասախոսություններ արինք: Սկիզբը 60-70 երիտասարդ եկան, ասին կարևոր է: Երկրորդ դասախոսության այդ 70 հոգին 40 դարձան, հետո անհետացան: Այսինքն եկեղեցին չի կարողանում իր զավակներին հավաքել: Նոր սերունդը հայերեն չի հասկանում, և ասում են, որ պատարագները երկար է: Բայց պատարագները երկար չեն: Գնացեք ֆրանսիական եկեղեցի, այնտեղ պատարագները երկար են: Եկեք հոն մոմ վառեք և գնացեք: Սերունդը մոտ չէ եկեղեցուն: Բացատրությունն ասում են, որ չենք հասկանում: Ինչը չենք հասկանում: Մեր ժողովուրդն արդեն չհասկանալով ավանդությունը պահում է: Չենք կարող մենք ստորակետ փոխել, որովհետև սա ավանդությունն է: Մենք գրաբար եք կարդում, ժողովուրդն էլ չի հասկանում: Բայց այդ պարագային երկուսն էլ տալիս ենք, որ հասկանան: Մի քանի անգամ երիտասարդների հետ խոսեցինք:

Շատ միութենական բան չունենք: Այստեղ, նախ և առաջ, աշխատանքն է կարևոր: Մի երգչախումբ ունենք, որ առաջ 20 հոգի էր: Մարդ չմնաց, 3 հոգի կա: Հայտարարություններ ենք անում, որ երիտասարդներ գան վարժվեն, դասընթացներին հետևեն: Դժվար է: Ֆրանսիայի մեջ երկու բան կա, իմ կարծիքով՝ լավ հայ լինելով պիտի մնանք և լավ ֆրանսիացի լինելով պիտի շարունակենք»:

«Բեյրութի քաղաքացիական պատերազմից հետո եկողները շատ էին: Այդ վերջին ալիքն է, որ նոր շունչ տվեց համայնքին: Երբ որ ես մշակույթի տան տնօրենուհի էի, ամեն շաբաթ, առանց բացառության, մշակույթային միջոցառում կար, դասախոսություններ, դասընթացներ: Ժողովուրդը գալիս էր: Հայաստանցի չէր գալիս, բայց ավանդական սիյուռքի ներկայացուցիչները՝ մեծ մասամբ ֆրանսիահայերը գալիս էին: Ամեն մի դասախոսությանը, միջին հաշվով, 70 հոգի կլինեք: Երբեմն մարդ էինք մերժում:

Գիրք էր լույս տեսնում, և այդ գրքի հեղինակին հրավիրում էինք, մասնագետներ էինք հրավիրում: Ես նաև կազմակերպել եմ արևմտահայ գրականության դասընթացներ՝ ամիսը երկու օր, Մշակույթի տան

մեջ: Բայց հետո դադարեցրինք, որովհետև Լիոնի սրբազանը Լիոնի կաթոլիկ եկեղեցու մեջ արեց մոտավորապես էդպես մի բան: Ինը ամիսը մեկ անգամ գրականության մասին մի բան անում էինք: Ընդհանրապես, երկու-երեք ուսուցիչ ունեինք, գրականագետներ կային: Վահե Օշականին հրավիրել եմ, օրինակի համար, Գրիգոր Պըլտեանը՝ սփյուռքի ամենամեծ գրողներից մեկն է և ոչ միայն սփյուռքի համար: Գալիս էին և երկու շաբաթ սեմինարի պես կազմակերպում էինք արևմտահայ գրականության դասընթացներ: Մոտավորապես 30-40 հոգի ներկա էին գտնվում:

Եթե ճիշտ ձևը գտնեք, մարդիկ կհետաքրքրվեն: Նաև ասեմ, որ գրականություն կա, որ պետք չէ որևէ բան անել: Սերունդ է փոխված հիմա: Մեկ սերնդից մյուսին փոխանցվող հաստատություն գոյություն չունի: Այս մշակույթի տներն ավելին են անում, բայց համալսարան չեն, Բեյրութի պես ազգային վարժարաններ չեն: Փոխանցման խնդիրը շատ բարդ է. հայկականության, հայկական ինքնության, մշակութային գիտելիքների փոխանցումը շատ ավելի դժվար է: Սա պետք է նկատի առնել: Կա նաև վարիչների կարողությունը: Շատ ավելի անկարելի է երիտասարդներին գրավել: Իմ տարիքիս ես չեմ կարող 20 տարեկան երիտասարդներ գրավել: Անշուշտ, տեխնիկա կա, որ ժողովրդին հետաքրքրում է՝ նյութը, ցուցադրման ձևը և այլն»:

«Հայկական մշակույթի դասեր էին կազմակերպվում Դեսինում՝ արևմտահայերենով, ավանդական: Ինձ կանչեցին գործի, հրավիրեցին, որ աշխատեմ երեխաների հետ: Թարգմանչաց տոն էինք նախապատրաստել: Փոքրիկ մատյան սարքեցինք բոլորի հետ, էդպես ձեռագրեր, որ ներկայացրինք: Իրենք բոլորը հիմնականում խոսում էին ֆրանսերեն, արևմտահայերեն: Բայց չխուսափեցին ինձ հետ աշխատելուց: Որովհետև, նախ, կիրթ գրական հայերենը իրենց էլ է հասանելի: Մի՞՛հ է, թվում է, որ արևմտահայերենը դա մի ուրիշ հայերեն է, բայց դա նույն հայերենն է: Կիրթ մատուցմամբ իրենք կարող են շատ հեշտ ու հանգիստ մեզ հասկանալ: Ես ձգտում էի խոսել, իրենք էլ ինձ պատասխանում էին՝ կուզեն ֆրանսերեն, կուզեն արևմտահայերեն: Ես իմ լեզուն եմ համարում արևմտահայերենը ևս: Թարգմանչաց տոն կազմա-

կերպեցինք, հիանալի, եկել էին: Երեխաները նկարեցին, գրեցին, Մաշտոցի ամբողջ աշխատանքն ուսումնասիրվեց: Որոշ բաներ սովորեցին ու մի բան ավելացած գնացին երեխաները:

Քաղաքապետարանից ներկայացուցիչ պարտադիր լինում է մեր հանդեսներին: Այս անգամ ևս, երբ որ դաս էինք կազմակերպել մշակույթի տանը, քաղաքապետն էր, բավական ներկայացուցիչներ կային»:

«Ունենք շատ [խմբ. մշակութային իրադարձություններ]: Հիմա քովիդի պատճառով շատ չկարողացանք առաջ տանել, բայց միշտ անում ենք շատ հանդեսներ, համերգներ, ցուցադրություններ ենք կազմակերպում, որ մեր հայությունը միշտ միացած լինի, իրար հետ տեսնվենք:

Փորձում ենք [խմբ. ակտիվ մասնակցություն պահել], բայց դժվար է: Մեր կարողացածով անում ենք, բայց դժվար է, որ բոլորը միշտ այս ճամփով գնան: Կան, որ գալիս են: Օրինակ, կազմակերպում ենք ճաշ կամ հանդես, և իրենք գալիս են լավ ժամանակ անցկացնելու: Ուրիշ բանի համար պետք լինի, արդեն չեն գալիս: Օրինակ, «Կարմիր խաչը» մի բան է անում, գրությունը ուղարկել ենք, շատ մարդիկ ասում են, որ այս սփյուռքի հայերը ինչ որ արել են Հայաստանի համար, քիչ են արել: Բոլոր հայությունը չէ, բայց ես լսել եմ կամ կարդացել եմ Ֆեյսբուքում: Միշտ քննադատության մեջ ենք»:

«Մի քանի տարի է, որ չենք անում [խմբ. բացի ապրիլի 24-ն այլ միջոցառումներ]: Վարդանանցն է, որ մասնավոր աղոթքի ժողով էինք անում, հավատքի մասին էինք խոսում, որ հավատքը արթուն լինի, արթուն մնանք հավատի մեջ: Երկու տարի առաջ արինք: Մեր երիտասարդները՝ երեք եկեղեցիների երիտասարդներով միասին ժողով ունեցանք, որ ծանոթանան մեկը մյուսի հետ, աղոթեն, և ամեն անձ, ամեն եկեղեցի իր առանձնահատկությունը ցույց է դնում, իրենց աղոթքները և այլն: Ուզեցինք շարունակել, բայց չստացվեց: Մեր մտքի մեջ է: Գիտենք, որ շատ աղվոր ժողով ունեցանք: Գրեթե 40 հոգի էին՝ 40 երիտասարդ: Փորձում ենք կապի մեջ մնալ միշտ»:

«Անում ենք, շատ ենք անում [խմբ. մշակութային միջոցառումներ]: Օրինակ, ապրիլի 24-ին, որ երթ ենք անում՝ եկեղեցուց գնում ենք մեր

հայկական հուշարձանը: Դպրոցի երեխաները պարում են, երգում են, մեծ հանդեսներ են կազմակերպում Նոր տարուն: Պատկերացրեք, եթե 220 աշակերտ է, մեծ հանդես է կազմակերպվում այդ 220 աշակերտի ծնողները, տատին-պապին գալիս են: Պարի խումբն էլ շատ մեծ դեր ունի»:

Մեդիա

Քննարկվող առանցքային հարցեր. մեդիա կազմակերպություններ, սպառում և լսարան, հայկական տեղեկատվական դաշտ և ազդեցություններ:

«Ռեդիոն 32 տարի առաջ է ստեղծվել և միակ հայկական շունչ բերող մեդիան էր: Հետո վերջին 15 տարիներին մեդիաների թիվը շատացավ: Հետո մարդիկ համացանցի վրա իրենք սկսեցին բաներ փնտրել: Ռեդիոյի դերակատարությունը պակասեց: Հիմա մենք փորձում ենք ռադիոյին ուրիշ դերակատարում տալ: Այս վիճակների և լուրջ նյութերի հեռարձակումը, ներկայացնելը, կարծեմ թե, նոր հետքերություն է ստեղծում, մասնավորաբար՝ հայերենով եղած նյութերը, որ հիմա ֆրանսահայերը չեն տիրապետում հայերենին բավական: Միջին Արևելքից նոր եկած հասարակության համար հայերենով նյութերը շատ բան են, իսկ ֆրանսահայի համար ֆրանսերենով եղած նյութերը ավելի ընկալելի են:

Ընդհանրապես մեծահասակներ են և միջահասակներ են [խմբ. լսարանը]: Երիտասանդները չեն լսում: Երիտասարդները եկան, ասին, որ շատ ծերերի ռադիո է: Ասինք ուրեմն դուք եկեք նայեցեք՝ ինչ կարող եք անել»:

«Ցավոք սրտի, մեր հայաստանցիք չեն հետևում [խմբ. հայկական ռադիոյին]: Տարիքով մարդիկ են շատ լսում: Ես հիմա ամեն ինչ անում եմ, ուզում եմ նենց անեմ, որ երիտասարդները շատ լսեն:

Երգիչները որ գալիս են, գալիս են հարցազրույցի: Շատ բաներ ենք անում»:

Սոցիալական կյանք և համայնքային համախմբում

Քննարկվող առանցքային հարցեր. *համայնքային կապեր և հարաբերություններ, ներհամայնքային կյանք և ինտեգրում, համայնքների բազմազանություն:*

«Դրա [խմբ. ներառող համայնքային կազմակերպության բացակայություն] զգալի մասը գալիս ա պետությունից: Պետությունը չի խրախուսում՝ համայնքային ներուժը օգտագործել այլ երկրի կամ Ֆրանսիայից դուրս այլ պետական միավորների զարգացման կամ, ընդհանրապես, ներուժի արտագաղթին, ֆինանսական փոխանցումներին:

Վերաբերմունքը պետության կողմից նույնն է: Խնդիրն այն է, որ իրենց [խմբ. այլ համայնքների] ներքին կազմակերպվածությունն ավելի մեծ ա:

Տեսնք Ֆրանսիայում դեմոկրատիան: Ես միշտ ասում եմ, որ դեմոկրատիան փչացել և սպառել է իրեն: Ինչ է լինում Ֆրանսիայում. հավաքվում է խտացված բնակչություն, որոնք գալիս են Ալժիրից, Մարոկկոյից, Թունիսից և այլն: Այդ երկրների բնակիչները իսլամական համերաշխություն ունեն մեկը մյուսին պահելու և ինչ-որ քաղաքներում ստեղծում են խտացված բնակություն: Իրենց վրա ուշադրություն են սևեռում: Այդ ուշադրությունը իրենց վրա սևեռում են նաև քաղաքական մարմինները, որոնք ունեն իրենց շահերը, որոնց համար այդ մարդիկ դառնում են ընտրազանգված:

Կա ներուժ: Տեսնք, այստեղ այդ ավանդականը շատ մեծ դեր ունի: Ես օրինակ բերեմ եկեղեցուն: Եկեղեցին ձևավորել ա ազգային սահմանադրություն: Առաջին բանը, որ հայկական միութենական կյանքը սկսեց զարգանալ հենց այդ ազգային սահմանադրության վրա էր: Ըստ սահմանադրության՝ պիտի ազգային մարմիններ ձևավորվի եկեղեցիներում, ովքեր կնունքի, ծնունդի թղթերը տային, հուղարկավորությունները արձանագրեին, ու դա պիտի ունենար իրավական ուժ: Եվ փաստացի էնպես եղավ, եթե Սիրիայում և Լիբանանում աշխատում էր սա, որովհետև էստեղ կրոնական համայնքը պաշտոնական վիճակ ուներ, Ֆրանսիայում չէր աշխատում: Ֆրանսիայում չես կարա ազգային միություն ձևավորես, ստեղծես պաշտոնական ադմինիստրացիա: Բայց հա-

մառորեն մինչև այսօր ավանդույթի ուժով գլորում է ազգային սահմանադրության ոգին, որը համապատասխանացրել են ֆրանսիական 1901թ. օրենքին, և այդպես շարունակվում ա:

Էնքան է ուժեղ այդ ազդեցությունը, ուղղահայացի համար պայքարը, որ բովանդակության մասին գաղափարների փոխանակում չի լինում: Չի հասնում դրան խնդիրը: Խնդիրը զուտ քաղաքական խժոժումն է: Քաղաքական բառն էլ ես կփոխեմ կենցաղայինի՝ հարս ու սկետուր տրամաբանությամբ: Ցավով եմ նկարագրում սա, բայց սա իրականությունն է:

Հայաստանցիները համայնքով ապրելու ո՛չ կամք ունեն, ո՛չ էլ պետք ունեն: Իրենք դրա անհրաժեշտությունը չեն տեսնում: Իրենք ընկերություն ունեն, ընկերական միջավայր ունեն, որով ձևավորում են իրենց համար ոչ համայնքային, տկար ինչ-որ մի բան՝ նույնը, ինչ Հայաստանում բոլորս ունենք: Այսինքն ժամանցի կամ թաղման պարագայում հավաքվում են. նույն բարեկամական-ընտանիքային կապն ա իրենց միավորում, ոչ թե համայնքային շունչը: Օրինակ, այդ նույն հայերը չեն զգում հայկական կրթություն ստանալու կարևորությունը: Իրենք, օրինակ, փնտրում են դպրոցների մեջ էն դպրոցը, որը իրենց տան մոտ ա: Իրենք չեն տեսնում հայկականության զարգացման անհրաժեշտություն: Չունեն այդ հեռատեսությունը: Իրենք հենց սկզբից համաձայն են, որ իրենց երեխեքը ծուլվեն: Հենց սկզբից հանձնված եկել են: Նախ, որովհետև ավանդական սփյուռք չգիտեն ինչ բան է, համայնքով ապրել չգիտեն ինչ բան է: Եվ երկրորդ, չունեն անհրաժեշտ մտավոր պոտենցիալ, որպեսզի հաշվարկեն իրենց հեռանկարը:

Հայերի համասեռ խումբ գոյություն չունի, չկա: Ով փորձի ձեզ հակառակը համոզել, ես՝ իբրև համայնքի որոշ պարտականություն վերցրած անձ ասում եմ, որ սուտ կասի, որովհետև հնարավոր չի գտնել այդ միությունը: Այդ զանգվածը չի ձևավորվել Ֆրանսիայում, ուղղակի չի ձևավորվել՝ ո՛չ Լիոնում, ո՛չ Փարիզում, ո՛չ Մարսելում»:

«Դժբախտաբար [խմբ. տարբերություններ կան տարբեր խմբերի միջև]: Հիմա հայաստանցիները շախմատի հաջողություններ ունեն: Մի պարոն կա, որ դաս է տալիս՝ շաբաթ օրերը և չորեքշաբթի օրերը: Հա-

յաստանցի անձերը չեն ներառվում: Հիմա վարչության անդամների մեջ բոլորն էլ ֆրանսահայեր են: Մենք կուզենանք, որ հայաստանցին էլ մտնի, բեյրութցին էլ մտնի, իրանցին էլ մտնի: Բայց չեն հարմարվում, չեն ուզում, ժամանակ չեն տրամադրում:

Շատ հայաստանցիների գաղթ կա վերջին ժամանակներում: Հիմա կարող եմ ասել, որ, շնորհիվ Հայաստանի ժողովրդի, եկեղեցիները լցվում են: Բայց ժամը 11-ին, քառորդն անց 11-ին գալիս են: Մենք ամեն կիրակի 930-ին ժամերգություն ենք անում, 10-ին պատարանգ ենք անում և 12-ին ավարտում: Առաջ 830-ին էինք սկսում, հետո բավական մարդ կար: Հիմա հուսահատություն կա, որ մարդ չկա, և մանավանդ այս հիվանդությունից ժողովուրդը կվախենա: Շատ մահ եղավ և երրորդ սերունդը մեկնեց այս աշխարհից»:

«Շատ դժվար ա միավորել համայնքը: Ես էլի մի քիչ կարողանում եմ, որովհետև պարսկահայ եմ և Հայաստանի հայերեն եմ խոսում, Լիբանանի հայերեն էլ եմ խոսում»:

Գ. ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Քննարկվող առանցքային հարցեր. *հայկական ինքնությունը պայմանավորող գործոնները համայնքում, երկրում (հիմնական տարրեր), ինքնության դրսևորման տարածությունները, լեզվի, ընտանիքի, կրոնի և եկեղեցում, այլ գործոնների դերը ինքնության պահպանման գործում, ծուլում՝ վրանգներ և մարահրավերներ:*

«Մի քիչ կա [խմբ. ուժացման խնդիր], որ արդեն հետևում են, որ իրենց երեխաները հայկական դպրոց գնան, կամ ծնողները հետևում են, որ հայ արմատներով մեծանան: Բայց կան ուրիշ ընտանիքներ, որ իրենց համար արմատները կարևոր չեն: Երկու տեսակն էլ կա: Ինձ թվում է, որ շատերը էս բանը չեն պահել: Ամեն տեսակ ժողովուրդ կա, և ես ասում եմ, մարդիկ, որ էս տեսակ են մտածում, պետք է գնան Հայաստան ու տեսնեն հայրենիքը և զգան այս»:

«Շատ դժվար ա: Եվրոպայի մեջ հայ մնալը շատ դժվար ա: Արաբական, պարսկական երկիրների մեջ բնական ա, որ հայ կմնաս: Բայց այստեղ շուտ են կորցնում»:

«Վտանգ կա, որ ցրվենք և սփյուռքը մեռնի, մեր ինքնությունը կորցնենք: Շատ ջանք ենք դնում, որ մեր եկեղեցու մեջ քարոզը հայերեն լինի, երգերը հայերեն լինեն, ջանք ենք անում, որ մեր լեզուն շարունակենք: Միտքն այն է, որ պահենք հայկականությունը և ոչ անպայման լեզուն: Այդ միտքը կա: Լեզուն կարևոր է, բայց այնպես չէ, որ միակ միջոցն է, որ կարող ենք հայ մնալ: Հայկական մշակույթը, հայկական պատմությունը, հայկական ընտանիքը, զգացումը, ամեն ինչը, մեր կապը հայրենիքի հետ [խմբ. կարևոր են հայ մնալու համար]: Բայց այնպես չէ, որ լեզուն անպայման պետք է խոսես: Անշուշտ, երկրորդ, երրորդ, չորրորդ սերունդն է, որ այսպես է կարծում:

Պետք է, որ երիտասարդները կարենան Հայաստան երթալ և շփվել: Հայաստանի հետ կապն է, որ կարող է օգտակար լինել սփյուռքին, ինքնությամբ: Հաջորդ սերունդն իր ինքնությունը գտնի և համոզի իրեն՝ ով լինել: Այն, ինչ տեսնում է, չի բավարարում, որ հայկականությունը պահի»:

«Դժբախտաբար, մեր ծխական խորհրդի ժողովներն ամբողջը ֆրանսերեն է: Մատենագրությունները ֆրանսերեն է: Հայերեն հասկանում են, բայց իրենց համար ամենաոլորիները ֆրանսերեն խոսելն է, ֆրանսերեն գրելն է: Պատարագի գրքերը երկու լեզվով է գրված, որ ժողովուրդը գա տեսնի և հետևի:

Ուսուցիչները գրեթե մեծամասնությունը ֆրանսիացի են: Եվ նրանց կողքը օգնական հայեր կան: Կառավարության կողմից ճանաչված է մեր դպրոցը: Եվ կառավարությունը վճարում է օրհորդներին դրամը, քանի որ, ակադեմիայի կողմից ճանաչված լինելով, իրենց ուզած ծրագիրն ենք գործածում: Եթե դա չանենք, դժվարության մեջ կլինենք: Դպրոց ես բացում՝ իրենց ասած մեթոդները պիտի անես: Եվ այսպիսով, սրբազանի ժամանակ հաջողեցինք այս դպրոցը: Հողը մեր հողն է՝ եկեղեցու սեփականությունը, շենքը մեր շենքն է: Բարերարների օգնությամբ նվիրատվություններ արին, մահացան՝ անունները դրվեցին

Մարգարյան-Փափազյան: Դժվարություն ունեցանք սկզբից աշակերտ գտնելու համար: Դռնեղուռ պտտել եմ, ծնողներին ասել եմ պատիկներին դպրոց ուղարկեք: Դժվարություններ ունեցանք: Առաջին օրը 9 հոգով սկսեցինք, հետո 9-ը 21 եղավ, 21-ը 50 եղավ: Այսօր, փառք Աստծո, 230 հոգի կա: Քանի որ տարածված է Լիոնի գաղութը, երկու բասեր [խմբ. ավտոբուսներ] ունենք, պատիկներին հավաքում է: Եթե այդ հավաքելու հարցը չլինի, դժվար է: Ծնողները կբերեն, բայց դժվար է: Երկու ավտոբուս ունենք, և երկու ավտոբուսները մեր մեջքը կտտրում են՝ բավական սուղ է: Անշուշտ, ընտանիքները վճարում են, բայց դժվար է: Հոս կուտեն, ճաշերը դրսից է գալիս: Չենք կարող հոս տիկիներին բռնել և ճաշ պատրաստել հայկական: Ամեն օր պետք է այդ ուտելիքների համար մեկը զբաղվի, մեկը պետք է գնումներն անի, այդ տիկիները պիտի հոս աշխատեն: Դրա համար մի ռեստորան կա, մարդիկ բերում են:

Չեմ կարծում [խմբ. թե լեզուն հետագայում օգտագործում են]: Հիմա այս դպրոցից վերջացած է, որովհետև քոլեջ չունենք, լիցեյ չունենք: Այստեղից դուրս եկան՝ ֆրանսիական դպրոց են գնում:

Բոլորը կուզեն քաղաքական գործիչներ լինել և գրասենյակների մեջ աշխատել: Եվ շատ են ուզում վաճառականի գործը շարունակել: Բայց եթե տարին 40-50 մարդիկ էին, ամեն տարի գնալով պակասում է: Եթե 20 հարսանիք լինի տարին, ցավալի է, որ 12-ը խառն է: Չենք կարող մերժել: Եթե մերժենք, հարսանիք չենք անի: Եվ հիմա դժվարություն կա, որ երիտասարդները չեն ուզում ամուսնանալ: Միասին ապրում են, մի զավակ ունենում, գալիս են զավակին մկրտելու, չենք կարող ոչ ասել»:

«Առաջ հայերենը պահելու խնդիրն է եղել այստեղ: Բոլոր նոր եկածները, թեկուզ իրենց տանը, փոքր դպրոցներ են ստեղծել, և ծնողները հայերեն են դասավանդել իրենց երեխեքին և շրջապատին: Հիմա չկա այդ ձգտումը: Ավելի շատ են ծուլվում այլ ազգերի հետ: Գլխավոր խնդիրն էր է»:

«Երկի թե տեղյակ եք, որ Լիոնում գործում է նաև այլ հայկական դպրոց՝ Մարգարյան-Փափազյան: Որպես առանձին պետական դպրոց՝ գործում է ամենօրյա, սովորական, որտեղ հայերենի ուսուցմանը շատ ժամեր չի հատկացվում, և դա նորմալ է, որովհետև հիմքը էստեղ ֆրանս-

սիական կրթություն պետք է ստանան, որ կարողանան շարունակել: Կողքից առարկայական տրված է հայերենի ժամեր և այլն, բայց մի խնդիր կա այդտեղ՝ իրենք անցնում են արևմտահայերեն: Եվ էն երեխաները կամ էն ծնողների երեխաները, ովքեր Հայաստանից են եկել, դժվարություն են ունենում սովորելու: Այսինքն, երեխան մի բան անցնում է, և, հնարավոր է, ծնողը այդ նույն մակարդակը չունի արևմտահայերենի, չի կարող օգնել: Էդտեղ օգնության է գալիս մեր դպրոցը, որովհետև սա մեր՝ հայաստանյան արևելահայերենով խոսող, ուսուցանող դպրոց է: Մեկօրյա չի, երեքօրյա է, այսինքն երեք կամ երկու՝ նայած ոնց է ստացվում, որովհետև էստեղ աշխատող ուսուցիչները հիմնականում այս գործից բացի ունեն նաև մշտական աշխատանք, և պետք է համատեղենք: Երեք օր ենք աշխատում՝ չորեքշաբթի, ուրբաթ, շաբաթ օրերը: Հարմարեցնում ենք ծնողներին, երեխաներին: Գովելի է այն փաստը, որ անկախ ամեն ինչից՝ երեկոյան ժամ է լինում, հոգնած են լինում, ծնողները պարտաճանաչ բերում են, որ հայ մնան: Օրինակ, Մարգարյան-Փափագյան դպրոցում դասամիջոցների ժամերին երեխաները բոլորը խոսում են ֆրանսերեն: Էստեղ էլ, իհարկե, խոսում են: Բայց կանոն է, որ խոսում ենք հայերեն կամ չես իմանում բառը՝ հարցնում ես, որ իմանաս հայերեն, էնքան, մինչև որ երեխան սովորում է, որ պետք է խոսի հայերեն: Տարրական բաներ սովորական շփման մեջ, շաբաթվա օրեր, ամիսներ, դրանք իրենք չգիտեն հայերեն:

Կա տարիք, երբ որ երեխան դեռևս ծնողի հսկողությանն է, ենթարկվում է, բայց դա երևի թե մինչև 15 տարեկանն է: Մեր դպրոցում մինչև 15 տարեկան երեխաներ ունենք, և շատ լավ էլ գալիս են: Հիմնականում աղջիկներն ավելի շատ են: Իմ դասարանում մեծամասնությունը՝ 10 տղա ունեմ: Ուրախացել եմ, որ տղաները սպորտի հետ մեկտեղ ֆուտբոլի են գնում, և հասցնում են ծնողները տեղավորվել երկու ժամվա մեջ, սպասել վերցնել:

Մենք էստեղ ունենք աշակերտ, որ շատ բավական հեռու է [խմբ. աշակերտները հեռվից են գալիս]: Օրինակ՝ մեքենայով մեկ ժամ պետք է գան: Որ ապրում էի Հայաստանում, մտածում էի, հա դե՛ ինչքան հեռու է: Չէ, հեռու է բավական: Մեկ ժամ մինչև գալիս են մեքենայով, չգիտեմ, դժվար է: Այս տարի ունենք կորոնայի հետ կապված բազում խնդիրներ:

Դպրոցը մեկ փակեցինք, մեկ բացեցինք, եկան, գնացին երեխաները: Բայց, փառք Աստծո, այս տարի նաև համալրվեցինք փոքրերի խմբով՝ 4 տարեկան: Չունեինք նման փորձ, երբեք չէինք արել: Փորձում ենք նախակրթարան անել, որովհետև դա մեր ապագա սանն է դառնում: Իրենք սովորում են, որ պետք է գան: Արդեն լեզուն սովորած գան: Երեխաներ կան, որ ծնվել են էստեղ կամ ծնողները վաղուց եկած են, և իրենք տանը չեն էլ օգտագործում: Ամուսինը ֆրանսիացի է լինում կամ չգիտեն: Արդեն խառնամուսնություն, արդեն երեխան ...:

Շատ չեն [խմբ. խառնամուսնությունները], բայց կան: Նույն էլ մյուս դպրոցում: Բերում են հիմնականում հայկական շունչը զգալու, սովորելու: Ու հետո, իրոք, տարբերվում են աշակերտները դպրոցի: Երբ գնում են էդտեղից քոլեջ, արդեն կեցվածքով, գիտակցմամբ, որ իրենք հայ են: Էնքան դժվար է, երբ երեխան էստեղ է ծնվել, իրեն բացատրել՝ Ֆրանսիայում ծնվելուց բացի, մեկ այլ ծագում կա, որ քո գենը հայի գեն է: Դժվար է: Իրենք չեն հասկանում սկզբնական շրջանում: Դրա համար սկզբում ծնողն է աշխատում՝ ստիպելով, որ բերի, հետո նոր մենք ենք բացատրում՝ ինչու է կարևոր գան էստեղ: Ես միշտ, որ ծանոթանում եմ խմբի հետ, առաջին հարցս՝ «դուք եք եկել, թե՛ ծնողն է բերել», «գիտե՞ք, թե ինչի պետք է գաք»: Երեխան պետք է իմանա, որ սա պարտադիր ուսուցում չի: Ասում է պարտադիր դպրոց գնում է, ինչի պետք է գա երկու ժամ խելոք նստի, սովորի, տանը աշխատի: Հետո բացատրում ենք, վիդեոներ ենք ցույց տալիս:

Ծրագիրը յուրաքանչյուր ուսուցիչ ինքն է իրենը պատրաստում: Չկա ընդհանուր ծրագիր: Ընդհանուր չի կարող լինել, որովհետև գալիս են, մենք չգիտենք ովքեր են գալիս՝ մակարդակը երեխայի, ինչ գիտի, տեղյակ է, թե չէ: Մենք արդեն պատրաստում ենք: Եթե տառաճանաչ չեն, սկսում ենք ուսուցումից, բայց, դրան գումարած, օրինակ, կազմակերպում ենք հեքիաթների ընթերցում կամ ցուցադրում ենք: Սկսում ենք Երևան, Մատենադարան, Մեսրոպ Մաշտոց, հայկական մշակույթ, Գառնի, Գեղարդ, ամեն ինչ, ինչը տեղեկություն կտա Հայաստանի մասին՝ Հայաստանի տարածքը, քարտեզը:

Որովհետև սա [խմբ. այս դպրոցը], որպես էդպիսին, ֆրանսերենի ուսուցում չի տալիս: Դրա համար կողքից լրացուցիչ դասեր են հայերե-

նի: Որովհետև մյուս դպրոցում ժամերը շատ քիչ են հատկացված ու արևմտահայերեն են: Հայաստանից եկած ծնողների համար կարևոր է, որ երեխան տան լեզուն կարողանա խոսել, հասկանալ, կարդալ: Գիրք ենք տալիս, որ կարդա: Կամ գնում են Հայաստան պարտադիր: Չեք պատկերացնում, թե ինչ հայրենասեր են էստեղ և ոնց են ձգտում, որ ամռանը պետք է գնան Հայաստան:

Գալիս են: Կարևոր չէ՝ Հայաստանից լինի [խմբ. աշակերտը]: Վրացահայեր կան, Ռուսաստանից եկած հայեր: Եթե իմանում են նման բան կա արևելահայերենով, իրենք անպայման ձգտում ունենում են: Մեկը չի ձգտում մյուսի աշակերտին վերցնել: Չէ: Մենք երկուսս էլ նույն գործն ենք անում:

Տեսեք, էսպիսի մի փորձ ժամանակին ես կատարեցի: Սկզբում, որ աշխատում էի հայկական ռադիոյում, ունեին ծրագիր՝ «Կրթօջախ» էր կոչվում: Մոտ մեկ տարի աշխատեցի: Ինչն էր հիմքը, ինչն էր բուն նպատակը, որ պետք է հայկական մշակույթը ճանաչելի դարձնեինք ռադիոյով, լսեին, բայց երեխայի շուրթերից: Այդ ժամանակ ես չգիտեի, էստեղի հետ չէի համագործակցում, չէի աշխատել: Գիտեի, որ կա հայկական դպրոց: Առաջինը գնացի խնդրեցի, որ ինձ ժամ հատկացնեն: Ու հայերենի համար շաբաթական ժամ ինձ հատկացնում էին: Ես զրուցում էի երեխաների հետ, պատրաստում էինք թեմա, ձայնագրում էինք ու սկսում էինք ռադիոյով հեռարձակել: Հեքիաթներ էին պատմում, վերլուծում էին՝ ինչ են հասկացել: Հետաքրքիր էր իրենք ոնց են պատկերացնում, օրինակ, Թումանյանի հեքիաթ «Քաջ Նազարը»: Շատ բան անգամ չէին հասկանում, պետք է բացատրես իրենց: Իրենք իրենց քաղցր էստեղի լեզվով խոսում են: Շատ հետաքրքիր բան էր ստացվում, ուղղակի ժամանակատարության համար ամսվա մեջ երկու ծրագիր էր հասցվում: Որովհետև, պատկերացրեք, պետք է հասցնել ծրագիրը սցենարով գրել, դա սովորացնել երեխային, հետո ձայնագրել: Բայց շատ հետաքրքիր բան ստացվեց, ու երեխաները սկսեցին իրար ճանաչել: Կազմակերպեցինք հանդիպում այս դպրոցի աշակերտների հետ և մյուս: Այսինքն երկուսի համատեղ ծրագիր ունեցանք և մեկ շատ հիանալի համագործակցություն իմ սաների հետ Հայաստանի: Այսինքն մենք՝ էստեղի երեխաները զանգեցինք Հայաստանի աշակերտներին: Ու, բնա-

կան է, թեման, դե երեխա են, նախապես ասում ես, իրենք գրի են առնում, ուղղորդում ես, բայց փաստը, որ ուղիղ եթեր մենք գնացինք Հայաստանից և էստեղից, ծանոթացանք և խոսեցինք:

Այս վերջին երկու տարիները շատ դժվար եղան դպրոցի համար: Եվ՞բ այնտեղ փակվեց՝ հեռավար էր ուսուցումը, և՞ էստեղ չէին կարողանում: Շատերը՝ երեխաները հիասթափվեցին, մոռացան: Չէինք կարողանում հեռահար: Դժվար էր: Միջավայր պետք է լինի, որ իրենց համար մենք դա բացատրենք, ասենք: Բացի դրանից, ծնողները բերում են, և ամեն մեկը իր գործը գնում է շարունակում: Էստեղ հետևողական պետք է լինի, ինչ-որ մեկը զում պետք է միացնի, չգիտեմ: Դա անհնար էր կազմակերպել: Ծնողները կարող են թողնեն ու գնան: Դրա համար կարևոր է, թե ով է աշխատում, ծնողները ճանաչում են, թե՛ չէ՛:

Տեսնք, այս ամեն ինչը, որ կա, բոլորը բարերարների, ծնողների հոգածությամբ և բարի կամքով դրսևորվող բաներ են: Հնարավոր է մանր ինչ-որ բաների համար, տեխնիկական խնդիրների համար ... [խմբ. վճար], բայց ինքը բարեգործական է, որ երեխաները հնարավորություն ունենան հայերենին առնչվելու, սովորելու: Պարտադիր հիմքով չի [խմբ. վճարը], որովհետև մենք հասկանում ենք, որ էստեղ դժվար է ֆինանսապես շատ ծնողների համար: Շատ հասանելի է [խմբ. վճարը]: Ամենամիսիմալ տարիֆով ինքը աշխատում է ու էլի բարի կամքով՝ էն էլ գիրք ձեռք բերելու: Ամեն ինչը, որ բերվում է, դա գումար է, ամեն դեպքում:

Կապը կա [խմբ. այլ դպրոցների հետ], մենք տեղյակ ենք միշտ՝ իրենք ինչով են զբաղվում, փորձն ենք վերցնում: Իրենք գիտեն՝ մենք ինչով ենք զբաղվում: Բայց էլի մշտական ինչ-որ մի տեղ հավաքվելու համար հոգածություն է պետք՝ կողքից ինչ-որ մի բան: Հիմա մենք ձգտում ունենք ամռանը կազմակերպել նման մի բան՝ ուրիշ համայնքների հետ համագործակցենք, երեխաները իրար ճանաչեն: Անպայման ուզում ենք, բայց օգնել է պետք: Հոգածու ձեռք է պետք: Մշտապես պետք է գործի կողքին մտածես, որ մի բան էլ դու անես, հոգաս, ժամանակին լինի, տեղին լինի: Դժվար է, բայց, փառք Աստծո, անում ենք: Ես շատ բավարաված եմ ինձ էստեղ զգում ու սիրով ամեն ինչ կատարում, ինչպես և մեր բոլոր ուսուցիչները: Շատ սիրով:

Չորս ուսուցիչ կա: Ունենք 85 աշակերտ: Բայց նախկինում ավելի շատ են եղել, մինչև կորոնավիրուսը բավական շատ էին:

[խմբ. աշակերտներին ներգրավում ենք] Ֆեյսբուքի էջով, մեր միջոցով, ասելով, տարածելով, ծնողներն իրենց մեջ: Ինձ թվում ա՛ մենք մի փոքր պասիվ ենք գովազդի առումով: Մեզ թվում է, որ եթե հայ են, պետք է իմանան, բայց հավատացեք, որ կողքի փոքրիկ շրջանից ասում են՝ մենք չգիտեինք: Ինչ-որ ֆուտբոլի, պարի տեղից իմանում են, որ էսպիսի բան կա, ու տարածվում է: Տեղեկացնում ենք, փորձում ենք սոց. ցանցերով ասել, ռադիոյով հաղորդում տալիս ենք, որ կա էսպիսի մի բան, որ կարող եք գալ, գրանցվել:

[Ամենամեծը] 15 տարեկան աղջիկ ունենք: Ամենաշատը 8, 9, 10 տարեկաններն են [խմբ. աշակերտ]: Երևի թե 50 տոկոսը իրենք են: Եվ շատ լավ է, որովհետև հենց իրենց տառի ուսուցումը ավելի ճիշտ, հետաքրքիր, տեղին կազմակերպում ենք, ավելի հետաքրքրիչ է լինում: Իսկ եթե մեծանում են Պատկերացրեք նախորդ տարի մեծերի խումբ, որ ես ունեի՝ 13, 14, 15 տարեկան էին, և մենք Թումանյան էինք սովորում: Այսինքն վերցված էր տարվա կտրվածքով Թումանյան քառյակներ, ու պետք է քառյակները սովորեին: Ճիշտ է, շատ դժվար էր իրենց բացատրելը: Թումանյանն ինքնին հասկանալը դժվար չի, բայց պետք է երևի Հայաստանում ծնված լինես՝ շունչը հասկանալով:

Տարեկան ծանրաբեռնվածությունն այնպես է, որ իրենք հեշտությամբ սովորեն: Որովհետև էդ տարիքի երեխաները արդեն քոլեջ են գնում, իրենք էլ չեն հասցնի: Պատկերացրեք, տուն չէին գնում դասից, միանգամից կարող է գային էստեղ:

Մեր մոտ մինչև քոլեջ, որ հասնում են, արդեն ժամանակի առումով էլ չեն կարող գալ, որովհետև Ֆրանսիայում ուսումնական ծրագիրը խտացված է: Էստեղ շուտ են մասնագիտական ուղղություն վերցնում: Այսինքն, եթե մենք դպրոցն ավարտում ենք, հետո՝ ԲՈՒՀ: Էստեղ շուտ են կյանք մտնում: Իրենք արդեն 16 տարեկանում ուղղվածություն ունեն»:

«Մենք դպրոցում հրաշք ենք տեսել՝ հայաստանցի երեխեքի հրաշք: Եվ, ցավոք սրտի, այդ երեխեքը, որ եկան և 3 տարվա մեջ նամակ են

գրում, իրենց ֆրանսերենը ինձանից լավ էր, մեր դպրոցից հետո գնում են ֆրանսիական դպրոց: Հայաստանի ծրագրով է [խմբ. կրթությունը]: Ուսուցիչ ունեմ, որ Հայաստանում աշխատել է, երկու տարի այստեղ է, Հայաստանի երեխաների հետ կապ ունի: Հայաստանում ինչքան երգիչ, դերասան համերգով եկել են այստեղ, 90 տոկոս ես եմ կազմակերպել: Ու եթե շահույթ բերել է, այդ գումարները դպրոցի համար է: Հետո ուզում եմ ճամբար տանեմ երեխաներին: Դպրոցը անվճար է: Ուսուցիչների աշխատավարձը անձնական միջոցներից է: Արդեն 2013 թվականից կա դպրոցը: Բոլոր գրքերը, տետրերը Երևանից եմ առնում, բերում»:

«Համայնքի խնդիրներով եկեղեցին էր զբաղվում: Օրինակ, ծննդյան և մկրտության վկայականները տալիս էր եկեղեցին: Պետությունը պետք է այդ առաքելությունը իր ձեռքը վերցնեն: Այդ կոիվը կար: Եկեղեցին չէր ուզում զիջեր իր դիրքերը: 1905թ. այդ օրենքը դուրս եկավ, բայց մինչև 1922թ. եկեղեցին պայքարեց: Դրանից հետո եկեղեցին միանգամից թուլացավ: Կաթոլիկ եկեղեցին սկսեց շատ արագ ազատ անկման մեջ կորցնել թե՛ իր իշխանությունը, թե՛ հավատացյալներին, թե՛ ազդեցությունը: Ու բնականաբար, այդ եկեղեցիները սկսեցին պարտվել: Օրինակ, այստեղ կողքը եկեղեցի կար, որտեղ հայերը հավաքվում՝ պատարագ, ժամերգություն էին անում, հայ հոգևորականներ, որ Ցեղասպանությունից փախել եկել էին կամ այստեղ ձեռնադրվել էին:

Լիոնում այսօր եկեղեցին որ կա, մինչև հիմա կան հիշողներ, որ մինչև 1965թ., երբ այդ եկեղեցին կառուցվեց (Սբ. Հակոբ եկեղեցին), այդտեղ՝ դիմացը վարձու շենք էլ չէր, շենքի մեջ մի բնակարան էր: Պարապ մնացած եկեղեցիները լցնելու համար երբեմն կաթոլիկ հոգևորականները, հակառակ հայերին, չէին համարում քույր եկեղեցի: Այդ իմաստով որոշ դժվարություններ կային: Համայնքային ցանցային եկեղեցական նվիրապետություն, ծխեր, առաջնորդարան չկար: Որովհետև հիմնական մտավոր կառույցը, որ պիտի ձևավորեր այս ուժերը, դեռ շատ զարգացած չէր, երկրի օրենքները լավ չգիտեին, քաղաքական հասունություն չունեին, որ կարողանային այդպիսի բաներ ստեղծել: Ավելին ասեմ, թեմ, որպես այդպիսին՝ եկեղեցական կառույցը ձևավորվել է

2006թ.: Մինչև այդ թեմ չի եղել: Պատկերացրեք, մինչև 2006թ. Ֆրանսիայում ապրել է, չգիտեմ, մոտ 100 հազար հայ, բայց չենք ունեցել թեմ: Եկեղեցական կառույց չենք ունեցել որպես այդպիսին»:

«Առաջնորդը Փարիզ է բնակվում: Այսինքն հարաբերություններ ունենք: Երբեմն տոնական օրերին կանչում եմ իրեն՝ պատարագելու: Իսկ եթե կարևոր թաղում կամ հարսանիք կլինի, եպիսկոպոս կուզեն, արդեն ինքը կգա հոս: Բայց, ընդհանրապես, մեկ հոգևորականով է լինում ամեն բան: Ֆրանսիայի մեջ այդ բաները չկա շատ: Գաղութի մեջ ժողովրդին երկու քահանա լինի, չորս քահանա լինի՝ այս բաները չկա: Մենակ, որ ծանոթ է լինում, ասենք, Դեսինը, որ 10 կմ հեռավորություն է, եթե այդ տեղը մի ծանոթ լինի և ասեն, որ այսինչ տեր հորը կուզեն, արդեն կերթա կմասնակցի:

Մենք ամեն տարի ապրիլի 24-ին աղոթք ենք անում մեր եկեղեցու մեջ: Հայ կաթոլիկ վարդապետը գալիս է, բողոքական վարդապետը գալիս է, արարողություններ ենք անում: Մի ժամ պատարագ էինք անում առաջ, բայց հիմա չենք անում: Մեկ ժամվա արարողություն ենք անում՝ երգչախմբի մասնակցությամբ: Ես բարի գալուստ եմ մաղթում, վարդապետը ֆրանսերեն ավետարան է կարդում: Քարոզն անում է ֆանսերեն, և գալիս են օտարներ՝ երեսփոխաններ, քաղաքապետարանի ներկայացուցիչներ: Նրանք գալիս են, և հայերից ավելի շատ օտարներ են գալիս: Անշուշտ, երբեմն անում ենք երկլեզու, բայց շատ ժամանակ չունենք: Ասենք 3-5 վայրկյան պետք է խոսենք հայերեն և 5 վայրկյան էլ պետք է խոսենք ֆրանսերեն, որ հասկանան: Այսպես, տարին մեկ-երկու անգամ էկումենիկ ժողովներ ենք անում ֆրանսիական եկեղեցիների, evangelic [խմբ. ավետարանական] եկեղեցիների և բողոքական եկեղեցիների հետ, և տարին մեկ անգամ աղոթքի օր է:

Ժողովուրդը, նախ, այս հիվանդությունից [խմբ. քվիդից] վախենում է: Հիմա ժողովուրդը եկեղեցի ուշ է հաճախում: Հոգեհանգստին եկեղեցին լեցուն է: Ես մեկ օր քարոզիս մեջը ասի, որ մեռելները ողջ լինեն: Մի բեյրութի տղա ասաց՝ ինչու՞ ասիր «մեռելները ողջ լինեն», չհասկացա: Ասի՝ ինչու՞ չհասկացար, շատ պարզ է՝ մեռելների շնորհիվ հոգեհանգիստ է լինում, ժողովուրդն էլ եկեղեցի է գալիս:

Գալիս են, այնչափ չէ [խմբ. ուրիշ առիթի]: Լիոնի մեջ այս եկեղեցին կա: Հայությունը տարածված է: Թաղամասեր կա, որ օտոքարեր [խմբ. մեքենաներ] չկան կիրակի օրերը, թաղամասեր կա՝ դժվարություն ունեն, թոռնիկին կամ զավակին պետք է սպասի, որ մեծ մորը կամ մորը եկեղեցի բերի: Այս դժվարություններն ունենք: Լիոնի մեջ հայությունը տարածված է՝ ցրված է: Բայց Ծնունդ, Ջատիկ, ուրիշ առիթներով տոնական օրերին գալիս են:

Համայնքի մեծ մասն առաքելական եկեղեցու հետևորդ է: Կաթոլիկների թիվը քիչ է: Ճիշտ թիվը չգիտենք, որովհետև շատ խառնամուսնություններ կան: 20-25 հազարի չափ ժողովուրդ կա միայն Լիոնի մեջ: Դեսինի գաղութն ավելի ամփոփ է: Լիոնը շատ ցրված է: Ցեղասպանությունից հետո է ժողովուրդը եկել: Ես երբ որ նոր էի եկել, կտեսնեի, որ մեր ժողովուրդն այնպիսի տների մեջ են, որ աչքերս լցվում էր: Հին տների մեջ, արտաքնոցները սանդուղքների վրա՝ սրանք ժամանակին եկել են և հոն մնացել են: Բայց, վերջիվերջո, կառավարությունը, քաղաքապետարանները նոր շենքեր շինել տվին: Իրենք էլ տարիքներն առած էին, ամենը մահացան»:

«Կաթոլիկները չգիտեմ, բայց մեր եկեղեցին շատը հայաստանցիներ են: Դա ներկայացնում է այստեղի հայությունն այսօր»:

«Այստեղ եկեղեցիները լավ հարաբերություններ ունեն՝ թե՛ առաքելական, թե՛ կաթոլիկ: Եվ մեր եկեղեցիները ներկա են: Ֆրանսիայի հայ գաղութի ընդհանուր կազմակերպություն կա, որ հիմնադիր ենք մենք: Հիմնադրամ կա: Բոլոր կազմակերպությունների մեջ մենք ներկա ենք գտնվում՝ երբեմն իբրև եկեղեցի և երբեմն էլ իբրև «Հույս Հայաստանի» կազմակերպություն»:

«Այո, մանավանդ Լիոնի մեջ կա [խմբ. համագործակցություն եկեղեցիների միջև]: Օրինակ, ապրիլի 24-ի առիթով երեք եկեղեցիները միասին աղոթք են անում՝ կաթոլիկ եկեղեցին, որ Վիլյորբան է, և Լիոնի եկեղեցին: Միշտ կապի մեջ ենք: Մի քանի ամիս առաջ տեսնվում և պատրաստվում ենք:

Կիրակի օրերն են գալիս [խմբ. եկեղեցի] և հինգշաբթի օրերը ժամը 8-ին աղոթաժողով ենք ունենում միասին, ով որ կուզի գալ՝ կգան: Եվ պատերազմը սկսվեց անցյալ տարի, եկեղեցիները պետք է գործեն մեկ ամսվա համար: Մենք հեռահար ամեն օր աղոթքի ժողով դրեցինք, և այս շաբաթ մեկ տարի եղավ, որ ամեն օր աղոթում ենք: Ընդհանրապես 10-20 հոգի են գալիս այս ժողովին: Միասին սուրբ գիրք ենք կարդում և աղոթում Հայաստանի համար, մեր վիճակների համար, հիվանդների համար, ովքեր պետք ունեն աղոթքի: Դա ամեն օր անում ենք՝ երկուշաբթիից մինչև հինգշաբթի:

Շաբաթը մեկ անգամ աղոթաժողով ենք անում: Հինգշաբթի ժողով է, բայց այս ժողովը կաթոլիկ, բողոքական, ավետարանական, օրթոդոքս՝ բոլորի համար է: 20-30 հոգի ենք լինում, նախաճաշ ենք անում միասին, ծանոթանում ենք մեկը մյուսին: Այս շատ կարևոր է:

Երկու ասոցիացիա ունենք [խմբ. Լիոնի Հայ Ավետարանական Եկեղեցին], որ երեխաները, երբ արձակուրդ կլինեն, 2-3 շաբաթով կհավաքվեն, համագումարներ կկազմակերպենք, 3 ամիս կծառայեն մեր եկեղեցուն՝ ով որ կուզի: Մեկ այլ ուրիշ երիտասարդների համար կա: Երիտասարդներ՝ այսինքն 14 տարեկանից մինչև 30: Հավաքույթներ են լինում՝ մեկ շաբաթ կամ երկու շաբաթ: Ուրիշ խումբ ունենք՝ Mission-ը, ուրիշ՝ «Հույս Հայաստան»: Իրենք ավելի Հայաստանի հետ կապի մեջ են: Եվ ուրիշ խումբ՝ «Բանբեր» անունով թերթն է, որը 2 ամիսը մեկ է»:

«... դե Ֆրանսիան կրոն չունի: Եկեղեցին սեփական է: Պետականորեն ոչ մի բանով չեն աջակցում: Իրենք իրենց սեփական ուժն են:

Որ հայերով շատ լինենք այստեղ, ոնց էլ լինի շաբաթը երեք-չորս օրով կամ հարսանիք կլինի, կամ թաղում»:

Դ. ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի հետ կապը և հայրենիքի ընկալումը

Քննարկվող առանցքային հարցեր. Հայաստանի մասին ընկալումները համայնքում, երկրում, այդ ընկալումները պայմանավորող գործոնները, Հայաստանի հետ կապի ոլորտները, ՀՀ ներքին և արտաքին քաղաքականությունների ազդեցությունը հայրենիքի կերպարի ձևավորման, հայրենիք-սփյուռք հարաբերությունների վրա:

«Հայաստանը մինչև այսօր խնդիր ունի ձևավորելու ազգային երազանք, ազգային ձգտումներ: Էնպես որ, Հայաստանն էնքան թույլ զարգացած երկիր է, թույլ կարողություններով է օժտված ցանկացած ոլորտում, որ Հայաստանի օգնությունը սփյուռքին ես ուղղակի չեմ կարողանում պատկերացնել: 30 տարվա երկիր ենք և չունենք սփյուռքի դպրոցների համար ծրագրեր: Սա չգիտեմ, թե ինչ ձևով ներկայացնեմ: Օրինակ, փորձեմ համեմատել մեզ հրեաների հետ: Համեմատության կողողինատները պատկերացնում եք ինչքան հեռու կլինեն: Ես, օրինակ, կուզեմ, որ Հայաստանը ներքին կարգ ու կանոնի, ներքին քաղաքականության, գոնե ընդունելի, այդ գետնաքարչ բանից դուրս գա: Ինքը իրեն կարողանա պահելու հնարավորություն ունենա, մենք էլ, որպես սփյուռք, ինչով կկարողանանք՝ կօգնենք: Ես երբեք կտրված չեմ եղել, իմ պորտալարը Հայաստանի հետ երբեք կտրված չի եղել»:

«Հայաստանցիների նոր գաղթը, որ հիմա եղավ... եկեղեցիների մեջ եկեղեցական օրենքներ չունեն: Եվ, դժբախտաբար, Ֆրանսիայի ամեն կողմն են: Որտեղ քար վերցնես՝ մի հայաստանցի կհելին տակից: Այդ գաղութների մեջ եկեղեցի չկա: Հոս մի եկեղեցի ունենք, երբ որ հայաստանցիները գալիս են, եկեղեցու մեջ կենալու այդ սովորությունը չունեն: Մի քանի անգամ նեղվել եմ պատարագի ժամանակ: Արարողությանը խոսում են, հեռաձայնը կզանգե և հեռաձայնով կխոսեն: Այս պարագայում թուղթ գրեցինք, որ այդ բաները դադարի: Պատկեր կբերեն եկեղեցի, շատ ուրախ ենք, բայց մայրը պիտի պատիկին հսկի: Երբ պատիկը կույա արարողությունը կխանգարվի, պետք է պատիկին առնի

և դուրս գա մեկ վայրկյան: Այս բաները մի քիչ պակասում է հայաստանցիների մեջ:

Մի քանի անգամ Հայաստան եմ գնացել: Էջմիածի մեջ էլ չես կարող աղոթել, որովհետև իրար հետ խոսակցություն կա: Երբ որ ասում եմ, որ եկեղեցին Աստծո տունն է, լռություն պիտի լինի: Ֆրանսիական եկեղեցի կերթաս՝ 300-400 հոգի, ճանճը թռնի՝ կլսես, որովհետև հարգանք կա, սեր կա: Մեր ժողովուրդը, մանավանդ հարսանիք լինի, թաղում լինի, չսկսած արարողությունը՝ աղմուկ կլինի, կարծես թե սինագոգի մեջ ենք: Այդ սերունդը՝ երրորդ սերունդը երթալուն հետո երիտասարդներին շատ բան չես կարող ասել»:

«Հայաստանի կերպարը փոխված է, որովհետև այդ մարդկանց [խմբ. հայաստանցիների] միջոցով են առնում Հայաստանի մասին տեղեկությունը:

Սիրիացիները դուրս եկան Հայաստանից: Նրանք, ընդհանրապես, ծանոթ ունեին այստեղ, և նրանց միջոցով դա կատարվեց:

Պատերազմը, իսկապես, մեծ ցավ պատճառեց, ոչ միայն հուսախափություն, որովհետև սուտ խոսեցին իշխանությունները, բայց նաև ամեն անգամ, որ այսպես դժբախտություն կպատահի Հայաստանին, ժողովուրդը, իսկապես, շատ կցավի: Ժողովրդի մեջ զգացում կտարածվի, որ հայությունը այս բաներից դուրս պիտի չգա: Այս նոր ստեղծված հոգեբանությունը պարբերաբար կգա մարդկանց մտքի մեջ, որ իսկապես մենք այս կացությունից պիտի դուրս չգանք, որ Հայաստանից պիտի չկարողանանք բարեկեցիկ և կառուցված բան տեսնել: Բայց, ընդհանուր առմամբ, կարծում եմ, որ թիվը մեծ է հայերի, որ Հայաստանին կառչած են: Որոշ չափով են կարող եմ խոսել Լիոնի մասին և հայության զգացումը զգալի է, որովհետև 30 տարի առաջ այսպես չէր: Հայությունը ճանաչողություն ունի հանրային ոլորտի մեջ: Առաջ այդպես չէր: Իսկապես, մեծ ճիգեր պետք էր թափեինք և թափեցինք, մեր սերունդը՝ մասնավորաբար»:

«Ընդունված էին հայերը, բայց որպես կորցված էին ընդունված: Այստեղ մենք՝ որպես առանձնահատկություն ունեցող հասարակության շերտ ճանաչվեցինք: Պատահական չէ, որ ժողովրդի մեջ դրական կեց-

վածքը Հայաստանի հանդեպ արմատացավ: Հանրային կարծիքը հայամետ է դարձած այսօր: Քաղաքական դասը միշտ ուշադիր է քաղաքական հարցերի վերաբերյալ և այլն: Սա տասնյակ տարիների աշխատանքի արդյունք է: Լրիվ պատահական չէ: Հայաստանը կարող է օգտվի այս բաներից: Դրսից եկած հայերը, մանավորապես՝ Հայաստանից եկած հայերը օգտվում են այս մթնոլորտից: Բայց թե ինչպես են տեսնում Հայաստանը, ինչպես քիչ առաջ ասացի, շերտերը շատ են հայերի մեջ: Մարդիկ կան, որոնց ամբողջ էությունը կապված է հայության հետ: Որովհետև, երբ այդ Հայաստանը չկար, Սովետական Հայաստան կար, նույն բանն էր: Հայաստանի մասին շատ մարդիկ գաղափար ունեն, որովհետև կերթան ու կգան: Ժողովրդի հյուրընկալությունը, ժողովրդի բարյացակամությունը իրենց հանդեպ իրենց գրավում է: Միաժամանակ, այս զգացումը կա, որ այս երկիրը շատ դժվար պիտի ոտքի ելնի: Ամեն տարի մի բան է պատահում»:

«Հայաստանն իրենց [խմբ. երեխաների] համար հեքիաթային մի տեղ է: Երբ որ մենք ասում ենք Հայաստան, իրենք հասկանում են, որ դա մի դրախտային վայր է, որտեղից եկել են իրենց պապերը, իրենց հայրիկն ու մայրիկը: Նրանք երբեք չեն տեսել ու, երբ որ իրենք սպասում են, որ գնալու են Հայաստան, դա իրենց համար հպարտություն է: Կամ երբ ասում է՝ ես հայրենի այբուբենը գիտեմ, դուք չեք պատկերացնի, թե դա ինչ հպարտություն է իրենց համար, երբ ասում է՝ ես գրել գիտեմ հայերեն, արժեք է, մեծ, հսկայական արժեք երեխայի համար:

Իրենք ասում են՝ մենք էլի ենք գնալու [խմբ. այցելությունից հետո], շատ սիրել ենք: Ու կարևորը, որ գնում են իրենց տեսրերով, գրիչներով, գրածով, որպեսզի էնտեղ տանեն ցույց տան՝ տեսնեք, մենք գրել գիտենք, որ կարդացել են մի բան: Դրախտային վայր, հեքիաթային մի տեղ, որը իրենք երազում են տեսնել անայաման: Էդպես է ներկայացվում, ու այդ աչքերով էլ գնում են՝ Հայաստանը տեսնում են: Անկեղծ կասեմ, Հայաստանում եմ հիմնականում ապրել, բայց նման հայրենասեր սերունդ կամ մարդիկ չէի պատկերացնում, որ էստեղ կտեսնեմ՝ ծնողներից, երեխաներից սկսած: Այնքան են սիրում այդ փոքրիկ դրոշը կարևորել, որը որպես հագուստ կարող են հագնել և գալ դպրոց ..., որ

մենք ունենք, մենք հայ ենք: Շատ հայրենասեր են այստեղ մարդիկ: Ան-
պայման ձեռք են մեկնում իրար, օգնում են՝ ինչ հարցով ուզում է լինի»:

«Պատերազմից հետո ոչ մեկին չենք հավատում: Ճշմարտությունն
եմ ասում: Վախի մեջ ենք, բայց հույս ունենք որ լավ պետք է լինի: Մենք
հիմա անցել ենք թոշակի ամուսիններով և մտածում ենք, որ երթանք
այնտեղ՝ ինչպես կանենք, ինչով կարող ենք օգնենք: Կուզենք մի բան
անենք, բայց ինչ՝ չգիտենք: Շատ են այդպեսի մադրիկ, որ պատրաստ
են ինչ-որ մի բան անել: Պատերազմին միավորվեցինք, բայց հետո այդ
մշակույթները կորցվում են»:

«Մենք մեր եկեղեցիների մեջ, ընդհանրապես, քաղաքականու-
թյան մեջ չենք մտնում: Սրան կձգտեն ավելի պոլիտիկայի կազմակեր-
պությունները: Անշուշտ, հետաքրքրված ենք, բայց չենք կարող ասել, որ
մենք մի ուղղություն ունենք, որ այսինչ կողմ պետք է կամ այնինչ կողմ
պետք է թեքվենք:

Հայաստանի վերաբերյալ ինչ որ կարողանանք ասել, մեր կողմից
կքաջալերենք, երբ որ կտեսնենք, որ երկիրը առաջ կերթ: Երբ որ Երև-
ան կերթանք, անշուտ, տեսնում ենք փոփոխություններ: Մտահոգ ենք,
երբ որ կտեսնենք, որ տարվա վրա դժվարության մեջ է ժողովուրդը:
Դժվարություններ կան քաղաքականության մեջ: Կցավենք, երբ կտես-
նենք, որ ժողովուրդը չեն կարողանում համաձայնել մի բանի համար:

Մեր հայրենիքն է, օգնում ենք, մեր եկեղեցիների հետ ենք կապ-
վում՝ հասկանալու համար ինչ է վիճակը, ինչ է պետք: Շատերը կան մեր
եկեղեցում, որ կայցելեն, որ անձնական լուրեր ունենան, ոչ թե հեռա-
ձայնով»:

«Հիմա մի բան կա, որ նշմարում ենք, որ Հայաստանի հայերը և 80
տարիների մեջ լիբանանցիները միշտ միասին կմնան և ուրիշների հետ
չատ չեն բացվի: Թերևս, որովհետև պետք ունեն լեզուն սովորելու: Գի-
տեմ որ, լիբանացիներն էլ եկան և իրենք իրենց մեջ էին: Հետո կամաց-
կամաց բացվեցին և սկսեցին ասոցիացիաների մեջ աշխատել, ծառա-
յել: Հիմա զգում ենք, որ հայերը, որ եկան, 10 տարվա մեջ իրենք իրենց
մեջ կմնան: Բայց մենք կուզենք որ բացվեն, ծանոթանանք և տեսնեն,

որ մենք իրենց վնաս չենք: Մենք էլ փորձում ենք հայերեն խոսել, մենք էլ փորձում ենք հայկական մի բան ունենալ»:

Սփյուռքի մասնակցությունը ՀՀ կյանքին

Քննարկվող առանցքային հարցեր. *սփյուռքի մասնակցությունը ՀՀ քաղաքական կյանքում, Հայաստանի նշանակությունը՝ որպես հայրենիք և պեպոություն, սփյուռքի ակնկալիքները ՀՀ-ից՝ սփյուռքի հանդեպ վարվող քաղաքականության մեջ, համայնքի կապերը ՀՀ հետ, հայկական շահի պաշտպանություն, լոբբինգի ներուժ Ֆրանսիայում:*

«Այսօր երկու տարբերակ կա: Կան մարդիկ, ովքեր գնում են լավ ժամանց անցկացնելու համար, և կան ուրիշ մարդիկ, որ գնում են օգնության համար՝ օգնելու Հայաստանին և Հայաստանի ժողովրդին»:

«Կազմակերպեցինք մասնավոր ճամփորդություններ Հայաստան՝ երիտասարդների համար: Ճամբարներ արինք երիտասարդների համար, որոնք Ամերիկայից, Լիբանանից, Ֆրանսիայից, ամեն տեղից հավաքվեցին, և մի քանի տարի նորից պիտի անենք: Այս ձևով կջանանք, որ երիտասարդ նոր սերունդը երթա և իր արմատները, հայ արժեքները գնահատի:

Այստեղ հայաստանցի մի ընտանիք էր, որ 20 տարի հոս է և հայրը ասաց, որ զավակները ֆրասիացի են դարձել: Նրանք մեզանից ավելի շատ են տելեվիզիոն [խմբ. հեռուստացույց] նայում հայերեն՝ կարծես հայաստանցիները, իրենց նոր սերունդը, մեզանից շուտ ֆրանսիացի պիտի դառնա: Ես զարմացա, որ այդպես ասաց:

Հիմա քովիդը մի քիչ դժվարացրեց, բայց շատ ծրագրեր կան Հայաստանի մեջ և Ղարաբաղի մեջ, ծրագրեր կան, եկեղեցիներ կան, մեր քույր-եղբայները հոն են: Նրանց էլ կփորձենք հանդիպել և օգնել՝ գիտենալ մենք ինչ կարանք անել իրենց համար»:

«Եթե ուրիշ իրականության մեջ նայենք, օրինակ, այդպես ուղիղ միջամտություն՝ դպրոցների զարգացման ծրագրեր լինեն, համայնքային կառույցներ ձևավորելու փորձ ունեցող պրեֆեսիոնալների, ովքեր

որ կկարողանան այստեղ ձևավորել, նախ, մթնոլորտ՝ համայնքով ապրելու ճգտում, և հետո, կարողանանք ձևավորել էնպիսի համայնքային կառույցներ սփյուռքում, որոնք կլինեն կենսունակ, որոնք կկարողանան աշխատել թե՛ Սփյուռքի, թե՛ Հայաստանի համար: Թե ինչպես կարան լինեն մեխանիզմները, չգիտեմ:

Ինձ թվում ա կընդունվի [ՀՀ միջամտությունը համայնքում]: Ինչու՞ կընդունի, որովհետև, երբ որ ինչ-որ մի բան չկա և դու ցույց ես տալիս, գուցե ինքը նայի և որոշի, որ սա լավ բան է: Եթե ոչինչ չունես, չես կարող ասել՝ կընդունի, թե՛ չէ: Բայց եթե ցույց տաս և ասես, որ վրան աշխատել են ակադեմիկոսներ, կատարվել է ժամանակակից բոլոր մանկավարժական մեթոդները ուսումնասիրելով կամ հաշվի է առնվել սփյուռքի փորձը, Ֆրանսիայի պետության վերաբերմունքը, կաշխատի, եթե փորձի Հայաստանը զարգացնել սփյուռքի կառույցները և մտավոր ներարկումներ անի»:

«Սփյուռքը շատ օգնություն է արել Հայաստանին: Այդ երկրաշարժի ժամանակները ինչեր ուղարկվեցին: Այս սրահը լեցուն էր: Ես զարմացա, երբ տեսա, որ հայ չեն, բայց օգնեցին: Բայց երբ որ կլսես, որ, չէ, օգնությունը չի գնացել, գնացել է՝ ինչ է եղել, չգիտես:

Ես ասում եմ՝ նայեցե՛ք, Հայաստանի ժողովուրդը հայ կմնա, չի փոխվի: Բայց եթե այստեղի հայությանը՝ մեզ չօգնեք, դպրոցներին չօգնեք, եկեղեցուն չօգնեք, մեր հայությունը սոված է, հոն օգնեք, բայց հոս մի մոռացեք: Երկու ինքնություն պիտի պահենք՝ լավ հայ, լավ ֆրանսիացի պիտի լինեն: Այս դպրոցի մեջ երեխաները կկարդան, կսովորեն, բայց շարունակությունը չկա: Քոլեջ պիտի բացենք, բայց դրամ չկա»:

«Եթե կուզեք Հայաստանը և Արցախը անկախ մնան, պետք է հաշտվենք մեր թշնամիների հետ, բայց չգիտեմ՝ ինչպես: Բարեկամ դառնան մեզ, իմ ձեռքս չէ: Մեր թշնամին կուզե բարեկամ դառնալ ինձ, բայց չգիտեմ՝ ինչպես: Եթե կուզեմ Հայաստանը և Արցախը շարունակվի, պատերազմով չէ որ պիտի հաղթենք: Չգիտեմ ինչպես, բայց պետք է հաշտվենք, պետք է գտնենք մի ճանապարհ, որպեսզի հաշտվենք: Բայց հիմա ես շատ վշտացած եմ, որ այս պատերազմով կորցրեցինք և ես որոշեցի, որ Թուրքիա պիտի չերթամ, խանութ էլ պիտի չերթամ

թուրքերի, որովհետև շատ վշտացած են: Թշնամի չէին ինձ համար: Շատ վատ բաներ էին արել, բայց մոտենալ կուզեի, հիմա չեմ կարող:

Մեր աշխատանքը այս է, որ կջանանք օգտակար լինել: Եվ տարբեր ձևերով, տարբեր նյութերով արդեն կլինենք: Բայց տեղ գալիս է, երբ որ սփյուռքն ուզում է որոշումների մեջ բաժին ունենալ: Հոն է դժվարությունը, որ քաղաքականություն է սա: Մինչև ու՞ր Հայաստանը պատրաստ պիտի լինի ընդունել՝ սփյուռքի անձերը լինեն Հայաստանի որոշումների մաս:

Չեմ կարծում, որ քվեարկությունով կարելի էր: Հայաստանը պետք է ընդունի մի կարգ՝ պաշտոնյաներն, օրինակ, սփյուռքից լինեն: Կխորհենք, որ կուսակցությունն ավելի զորավոր և ավելի արդյունաբեր պիտի լինի, եթե այս կարելիությունը լինի: Շատ անգամ սփյուռքի մեջ մարդիկ ասում են, որ շատ չեն սիրում այդ գաղափարը Հայաստանից, որ սփյուռքին ասում են դուք մեզ դրամը տվեք, մենք մեր գիտեցածը գիտենք: Այս պատգամը գնալով շատ դժվար կլինի և ժողովուրդն այս պատրաստ չէ ընդունելու: Կարող ենք ասել, որ պատրաստ են օգնելու, բայց կուզեն նաև որոշումների, ղեկավարության մաս կազմել:

Փորձի փոխանակում ենք անում, և ֆրանս-հայկական համագումարին մասնակցեցինք: Այս ամիս նոյեմբեր 12-ին մի համագումար պիտի կազմակերպենք՝ երկու ֆրանսիացի պիտի խոսեն և երկու հայ: Եվ հունվար ամսին երկու անձ պետք է ընդունենք Նուբարաշենի հոգեբուժական հիվանդանոց»:

«Զխանգարի [խմբ. սփյուռքը՝ Հայաստանին]: Երբ այսօր այստեղի հայերի հետ խոսում եմ, թե բա գիտես դաշնակները ելել են: Ասում եմ, եթե դու այնտեղ չես ապրում, դու կյանքով չես ապրում, դու չես կարող իմանալ՝ իրենց ինչ է պետք: Դու այստեղ ծնվել ես, այստեղ մեծացել ես, Հայաստան էլ երբեք չես եղել ու գոռում ես՝ այս եմ ուզում: Բայց դու չգիտես այնտեղի բնակչությունն ինչ է ուզում: Դու այստեղից չգիտես՝ այնտեղի ապրողի համար ինչ է պետք: Եթե իրենք գտնում են, որ այսպես պետք է արվի, ուրեմն իրենք են տերը: Իմ դուրը գա-չգա, ես կաջակցեմ:

Այստեղ երեխեք կան այնպես են սովորել, այնպիսի բաներ գիտեն, որ այսօր կարող են օգտագործել մեր երկրի համար: Այստեղից էլ կա-

րող են ազդել պետականորեն: Ոչ թե ՄԱԿ-ում տարին մեկ անգամ կանչեն, իրար հետ ճաշեն՝ նկարվելու համար: Եվրադատարանով, ամեն ինչով կարող են ճնշում գործադրել: Միակ խնդիրը՝ համագործակցեն, միասնական լինեն: Այսօր մի հայ կարող է մի բան անել, որ Հայաստանին պետք է, դաշնակներն ասեն, որ պետք չի, օրինակ:

Կան, շատ կան [խմբ. համայնքի անդամներ], որ հասել են մի աստիճանի և համայնքին օգնում են»:

«Վերցնենք քաղաքական ուղին, քաղաքապետարանում փոխքաղաքապետը հայ է (կամ հայաստանցի, կամ այստեղի հայ):

Կարող եմ մի բան ասել. այն, ինչը պոլիտիկայի մեջ է, առաջին շաբաթը սովորում է ոնց խաբի: Իրականում ասում են՝ հա, ոնց չենք կարա [խմբ. օգնել], բայց իրենց ձեռնտու չէ, որ անեն: Հիմնականում դեսպանատունն է [խմբ. հայերի հարցերով զբաղվում]: Ֆրանսիայի քաղաքացին ուրիշ տարբեր երկրում խնդիր ունենա՝ գնում է դեսպանատուն, իրեն աջակցում են: Ես ասում եմ ձեզնից գումար չեմ խնդրում: Ես իմ համայնքով վճարում եմ: Ձեզ դիմում եմ զուտ ադմինիստրատիվ: Ոչ մի բան չեն անում: Իրենք լավ մարդիկ են [խմբ. դեսպանատանը], բայց չեն կարող գործել: Միայն այստեղ չի: Ես Փարիզ էլ եմ խոսացել: Ոչինչ չեն կարող անել: Ի դեպ, մենք մինիստր [խմբ. նախարար] ենք ունեցել: Լինոնի քաղաքապետն էլ է հայ»:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Փարիզի հայերի շրջանում իրականացված հարցազրույցների (շուրջ 18 հարցազրույց) անցկացման համար ընտրված տեղեկատու անձանց ընտրությունը պայմանավորված է եղել մի շարք չափանիշներով և ընթացել է փուլային ձևով: Առաջնահերթ խնդիր է դրվել կապ հաստատել համայնքում առկա գրեթե բոլոր խմբերի, շերտերի հետ և հավաքագրված տեղեկատվության մեջ ապահովել բոլոր կողմերի ներգրավվածությունը: Այս սկզբունքը ապահովվել է համայնքում նշանակալի հայկական կառույցների ներառմամբ, ինչը որոշվել է ըստ մի քանի չափանիշի՝ ոլորտային տարաբաժանաման, կառույցներում ներգրավված անդամների թվի և սեռատարիքային կազմի պահպանման: Հաջորդիվ, ընտրված կառույցներից առանձնացվել են նաև տեղեկատու անձինք՝ ըստ համայնքի մասին ունեցած տեղեկատվության, ազդեցիկության, համայնքային տարբեր գործընթացներում ներգրավվածության փորձի: Պահպանվել են նաև սեռային, տարիքային, սոցիալ-մասնագիտական համամասնությունները: Արդյունքում տեղեկատու անձինք են հանդիսացել կուսակցությունների, հայկական դպրոցների, դեսպանատան, երեք եկեղեցիների, բարեգործական կազմակերպությունների, լրատվամիջոցների, գրադարանների, մշակութային կազմակերպությունների, ազգային հարցերով զբաղվող կառույցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Նաև առանձին հարցազրույցներ են իրականացվել համայնքում ակտիվ գործող անհատների հետ: Յուրաքանչյուր խմբից ընտրվել են մեկ կամ մի քանի կազմակերպություններ, որոնց համապատասխան ներկայացուցիչների հետ անցկացվել է խորին հարցազրույց՝ նախապես մշակված հարցաշարով:

Հարցազրույցներն իրականացվել են տեղում և հարցազրույցները վարել են Լուսինե Տանաջյանը և Սոնա Ներսիսյանը: Գործիքակազմը և ստացված արդյունքները մշակվել են բաժնի աշխատակիցների կողմից:

Ա. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Համայնքի ձևավորումը

Քննարկվող առանցքային հարցեր. Փարիզի հայ համայնքի ձևավորման և գաղթի պատմությունը, ներգաղթի ու արտագաղթի հիմնական պատճառները, ծները, ծավալները և ուղղությունները՝ անցյալում և ներկայում, համայնքի սեռափոփոխային, ընտանեկան, սոցիալական կազմը՝ ըստ ելքի վայրի:

«1910 թվականից 20 թվական [իսմբ. 1920 թվական] միջակայքում առաջին սերունդ հայերը հաստատվեցին այստեղ՝ մինչև Ցեղասպանություն: Նրանք Փարիզում 30-40 ընտանիք առևտրականներ էին, ուսանողներ ու մի քանի արկածախնդիրներ: Եկեղեցին կառուցվել է այդ ժամանակ, դրա համար այդքան փոքր չափսեր ունի: Խոսք է գնացել անգամ, որ կարիք չկա այդքան ծախս տեսնել, այստեղ այդքան հայ չկա ու պարզ չէ՝ կմնան, թե՛ չէ: Ահա սա 10 տարի հետո ուրիշ պատասխան բերեց, բայց Ֆրանսիայի ամենամեծ եկեղեցին էր: Եվ մենք հիմա 20 եկեղեցի ունենք Ֆրանսիայի տարածքում, ամենամեծը դա է, և համայնքն էլ ամենամեծն է՝ չնայած Մարսելում, Լիոնում ևս քիչ չեն եկեղեցիները, էլի մեծ են, բայց ոչ այս չափի:

Ձուլման վտանգի հարցում այդ առաջին սերունդը հիմա արդեն գոյություն չէր ունենա իր հետագա սերունդով, եթե էլի, ճակատագրի հեգնանք եմ անվանում կամ Աստծու նախախնամություն, չորս կամ հինգ անգամ, պատմությունը լավ չգիտեմ, բայց կրկնության պահին է

1 Ներսիսյան Ա., Տանաջյան Լ., ԴԱՆ, 2022, ՖՀ, Փարիզ (խորին հարցազրույցի տվյալներ):

այստեղ. սկզբում թուրքահայերն են եկել, հետո մի սերունդ թուրքահայեր, պոլսահայեր՝ հիմնականում, նրանք ովքեր որ ցեղասպանության չէին ենթարկվել, բայց ճնշումների տակ էին, 20-ականներին [խմբ. 1920-ականներին] նորից պոլսահայեր են եկել, վերջում, եթե չեմ սխալվում, սկսվել է լիբանանյան պատերազմը, այդ սերունդն է եկել, ապա սկսվել է պարսկական հեղափոխությունը՝ մի փոքր սերունդ պարսկահայեր են եկել, սկսվել է սիրիական պատերազմը՝ մի սերունդ էլ է եկել, հիմա հայաստանցի հայերն են գալիս: Բայց եթե նախորդները միագաղափար, միատարր էին՝ լեզու, ուղղագրություն, ոճ, հայաստանցիները, երևի, 180 չասեմ, բայց 90 աստիճան տարբերվում են, և դրանով է, որ չեն ընկալվում իրենք այս համայնքի մեջ՝ գումարած մի քիչ էլ բարոյասոցիալական խնդիրները, որոնք հայաստանցիները առաջ են բերում»:

«500 հազար [խմբ. հայերի թիվը], բայց դա պաշտոնական տվյալ չէ: Առնվազն 20 հազար հայ կա, որ հայ չի ներկայանում»:

«Մեր գաղութը հին գաղութ է: Առաջինները եկել են Ցեղասպանությունից հետո՝ ինչպես հայրս, մայրս: Եվ առաջին սերունդը, որ այստեղ էր, նրանք էին, հետո մենք եկանք, հետո 70 թվականից Լիբանանից եկան, հետո՝ Պարսկաստանից, բայց շատ չէ, և 90 թվականից մինչև այսօր՝ Հայաստանից: Այսինքն տարբեր ծագումով մարդիկ, և, անշուշտ, բոլորը նույն մտածելակերպը չունեն: Մենք Ֆրանսիայում ենք ծնվել, և եվրոպական մտածողություն ունենք, նրանք որ Լիբանանից էին, տարբեր էին, Հայաստանից նույնպես: Դժվարությունն այն է, որ պետք է բոլորս նույն համայնքի մեջ ապրեինք: Նրանք, որ առաջին սերունդն էին, ինչպես որ ես, հայրիկս, բավականին ցրվում են հիմա Ֆրանսիայի մեջ՝ ամուսնության կամ այլ պատճառով: Հիմա լիբանանցիները եկան և հայաստանցիները, և կարող ենք ասել, որ համայնքը լայն է Ֆրանսիայի մեջ, մոտ կես միլիոն, բայց տոկոսը որտեղ է, չեմ կարող ասել, չգիտեմ»:

«Ի սկզբանե պետք է իմանաք, որ այն մարդիկ, ովքեր հասանելի են որպես հայեր և ներկայանում են որպես այդպիսին, շատ քիչ տոկոսն են կազմում, այսինքն արդեն իրենք այդ կես միլիոնի մարզինալ հատ-

վածն են, ոչ թե մեծ հատվածը, և դրա համար, եթե իրենցով դատեք ընդհանուր ֆրանսահայության վիճակը, արդեն սխալ պատկերացում կկազմեք:

Հայկական դպրոցների աշակերտների թիվը 2000-ից չի անցնում, կան 7 ամենօրյա դպրոցներ, որտեղ աշակերտների թիվը մի քիչ ավել է: Ամենօրյա դպրոցները, որտեղ կարևոր է հայապահպանության գործընթացը, ինչպես նշեցի, աշակերտների թիվը 2000-ից չի անցնում, ինչը կես միլիոնանոց համայնքի պայմաններում շատ քիչ է: Այսինքն դժվար է ասել, թե ինչպիսին է հայկական դպրոցների վիճակը Ֆրանսիայում և կարծիք կազմել, թե ինչ կրթություն ունեն, կամ ինչ հայապահպանման արժեքներ ունեն ֆրանսահայերի երեխաները:

Այստեղ կա շատ փոքր հատված, որը մինչև Ցեղասպանությունը եղել է, այսինքն՝ մտավորականներ, առևտրականներ, իսկ մեծ մասը Ցեղասպանությունից մազապուրծ եղածներն են, այսինքն՝ տասնյակ հազարներ, եթե ոչ ավել, որ Մարսելի նավահանգիստ են իջել կամ գնացել են Հյուսիսային և Հարավային Ամերիկա: Հայերի մեծ մասը, որոնք կան, հին համայնք՝ չակերտավոր կոչվածի, Մարսել նավահանգիստ իջած հայերն են, որոնց մի մասը մնացել է Մարսելում, մի մասն ուղիղ Ռոն գետի առանցքով գնացել Լիոն, Վալանս, մի մասն էլ եկել է Փարիզ: Այսինքն հայերի մեծամասնությունը այդ գծի վրա է՝ Մարսել-Լիոն, Մարսել-Նիս, Լիոն-Վալանս-Գրենոբլ և դեպի մայրաքաղաք: Այդ վայրերում մոտավոր հաշվարկներով 100-150 հազար հայկական ծագում ունեցողներ պետք է լինեն: Դրանք երեք գլխավոր հայաշատ տեղերն են, ինչից ելնելով, համայնքային կառույցները հայերի թիվը նշում են կես միլիոն, որը ո՛չ պաշտոնական է, ո՛չ գիտական, ո՛չ էլ հետազոտական, բազա չունի, դա ընդհանուր գիտակցությունն է, որ մենք այսքան ենք: Նաև ֆրանսիական իշխանությունների գիտակցությունն էլ է այդ, որ մոտավորապես այդքան են, ինչը կազմում է երկրի բնակչության մոտավորապես մեկ տոկոսը: Սա, մի կողմից, դեմոգրաֆիկ իմաստով շատ քիչ բան է, բայց քաղաքական առումով, այդ մեկ տոկոսը իրենց նախագահական ընտրությունների հարցն է լուծում:

«Հայերի այս մասից զատ, կա նաև սիրիահայերի, թուրքահայերի 60-70-ականների [խմբ. 1960-1970-ականների] հոսքը, և սիրիահայ, լի-

բանանահայ՝ 50-60-70-ականների [խմբ. 1950-1960-1970-ականների] հոսքը:

Հիմնական խումբը առաջին հոսքն է, ածանցյալ խմբերն արդեն Սիրիայից, Լիբանանից եկածներն են, քաղաքացիական պատերազմի ժամանակ՝ 70-ականներին [խմբ. 1970-ականներին]: Իսկ ահա Իրանից շատ չեն: Ընդ որում, Սիրիայից և Լիբանանից, որոնք գնացել են նաև Թուրքիա՝ Քեմալի ռեֆորմներից հետո, հույս ունենալով, որ վերափոխվելու են Թուրքիայում, սակայն զգալով, որ ազգային ինքնագիտակցությունը հայր չի կարող պահպանել այնտեղ, հետ են եկել: Այսինքն Թուրքիայից 60-70-ականների [խմբ. 1960-1970-ականների] եկածները հիմնականում այդ հայրենադարձներն էին դեպի Թուրքիա: Երրորդ կամ չորրորդ փոքր հոսքը Սովետական Միության վերջին տարիներին երկրից դուրս եկածներն են, որոնք հնարավորություն են ունեցել, և արդեն 90-ականներին [խմբ. 1990-ականների] հայաստանցիների խումբն է:

Տեղեր կան, որտեղ հին համայնքը ինտեգրված է ավելի, կան տեղեր, որտեղ հայաստանյան համայնք է միայն: Քաղաքներ կան, որոնք այդ շառավղից դուրս են և այստեղ միայն նոր եկվոր հայերի խմբեր կան: Մի քանի քաղաքներ կան՝ մեծամասամբ Փարիզից մի քիչ հյուսիսային շրջաններում և արևմտյան՝ Մոնպելիեում, Թուլուզում, Լիլում, այստեղ ավելի շատ նոր հայեր կան, հին հայերի քանակը տաս ընտանիքից ավել չի լինի: Փոքր քաղաքներում էլ իրենք շատ ավելի ինտեգրված են, այսինքն հին համայնք կոչվածը չկա, ոչ էլ շատ կազմակերպություններ կան, և հենց 10-15 ընտանիքից ավել է լինում, արդեն նոր համայնք է դա»:

«80-ական [խմբ. 1980-ականների] թուականները բառական կարեւոր թուական մը եղաւ ֆրանսահայութեան համար: Թուրքիայէն եւ Լիբանանէն սկսաւ երկրորդ ներգաղթ մը դէպի Ֆրանսա: Թուրքիոյ քաղաքական կեանքը բառական տագնապալից էր եւ 1981 թուականին Քենան Յուրենի օրով երկրին գլուխը զինուորական մը եկած էր: Ատկէ առաջ Թուրքիոյ մէջ ձախակողմեաններն ու աջակողմեանները միշտ բախումի մէջ էին եւ ատոր իբրեւ հետեւանք երկիրը սկսած էր տագնա-

պիլ ու խառնուիլ: Այս տագնապալի օրերուն Թուրքիոյ հայ համայնքը վտանգաւոր վիճակի մէջ էր եւ հոն ապրիլը բաւական բարդ էր: Նախ երիտասարդները դուրս եկան Թուրքիայէն՝ իրենց ուսումը շարունակելու համար Եւրոպայի մէջ: Այն ընտանիքները, որոնք գործով ի վիճակի էին դուրս գալ եւ հաստատուիլ Ֆրանսա, անոնք եկան: Նոյն շրջանին նաեւ գաղթ մը տեղի ունեցած է դէպի Միացեալ Նահանգներ: Իսկ Լիբանանի պարագային, Լիբանանի ներքին անկայուն քաղաքական վիճակն էր, քաղաքացիական պատերազմին պատճառով նոյնպէս դէպի Ֆրանսա գաղթ մը տեղի ունեցաւ: Լիբանանցիներու համար Ֆրանսա գալը աւելի դժուար էր, որովհետեւ Լիբանան միշտ ֆրանսական ազդեցութեան տակ է եղած: Անոնք, որոնց կեանքը բարեկեցիկ եղած է, կամ կապ ունեցած են արտասահմանի մէջ եւ կամ բնակարան ունեցած են: Իսկ սովորական դասակարգը, եթէ հնարաւորութիւն ունէր, եկաւ հաստատուեցաւ Ֆրանսա՝ նոր կեանք մը սկսելու համար:

Ինչ բերաւ այս երկու գաղթերը Ֆրանսայի գաղութի վրայ: Ես կ'ուզեմ օրինակը տալ մեր Միօրեայ վարժարանի պարագան, ուր տեսանք գաղթական ընտանիքներու զաւակներու աճ մը՝ հայերէն սորվիլ, հայկական մշակութային միութիւն մը եւ երգիք մը փնտռել: Անոնք, որոնք Պոլսոյ կամ Լիբանանի մէջ կը յաճախէին հայկական դպրոց, այդ հայ ընտանիքները ուզեցին պահպանել այդ ամանդութիւնը եւ իրենց զաւակները մեր դպրոցը ուղարկեցին:

Յետոյ կը տեսնենք Հայաստանէն եկող գաղթականներ դէպի Ֆրանսա: Թուրքայէն եկած գաղթականներու պարագան այլ էր, որովհետեւ իրենք ապաստան կը փնտռէին, նոյնպէս Լիբանանցիին պարագան ուրիշ էր, իսկ Հայաստանցիինը բոլորովին տարբեր էր: Հայաստանը երբ կ'անկախանար, այդ կը նշանակէր որ Հայաստանէն գաղթած հայուն ապաստան տալու խնդիր չէր մնար: Սովետական Միութեան ժամանակ Հայաստանէն եկածներու ապաստան տալու պատճառ մը կար, բայց անկախութենէն ետք Ֆրանսա արտագաղթելը որեւէ պատճառ մը չունէր, բացի տնտեսական ճգնաժամը, որը նոյնպէս ապաստան տալու պատճառ չէր հանդիսանար Ֆրանսայի կառավարութեան համար»:

«Փարիզի հայերու մեծամասնութիւնը ընդհանրապէս եկած են արեւմտեան Հայաստանէն: Օրինակ. հայրս վանեցի է, իսկ մայրս մա-

նիսեցի: Այլ խօսքով, Խարբերդէն, Իզմիրէն, Պոլիսէն եկողներ են, իսկ վերջերս Հայաստանէն գաղթողներ շատ կան: Նանսի քաղաքը հայերու համար Ֆրանսայի մէջ կորսուած շրջան մըն էր, ուր կարող էիր գտնել միայն 2 հայ ընտանիք: Այսօր կ'ըսուի, որ 6000 հայեր ունինք այնտեղ ապրող, ովքեր Հայաստանէն գաղթած են: Նանսի քաղաքի բնակչութիւնը 100000 կը հասնի: Այնտեղ հիմնուած են հայկական շաբաթօրեայ դպրոց, ակումբ եւայլն: Չեմ կրնար ըսել Հայաստանէն գաղթողներու թիւը, որովհետեւ իրենք ւելի կորսուած (անյայտ) շրջաններու մէջ բնակութիւն հաստատեցին առաջին իսկ օրէն: Գաղթող հայաստանցիք ոչ թէ իրենք որոշեցին այդ շրջաններու մէջ ապրիլ, այլ՝ ֆրանսական կառավարութիւնը ինք զիրենք ցրուեց, որպէսզի անոնք այնտեղ բնակութիւն հաստատեն: 20 տարիներ առաջ հայերը հաստատուած եւ բոլորուած էին Փարիզի, Լիոնի եւ Մարսէյ քաղաքներուն մէջ: Հիմա բոլորովին ցրուած են»:

«Շատ քիչ [խմբ. արտագաղթի միտում կա], որովհետեւ Ֆրանսա գեղեցիկ, խաղաղ, տնտեսապէս ապահով երկիր է: Բնակչութեան մեծամասնութիւնը գոհ է: Հայերը տնտեսական լաւ վիճակի մէջ են, որովհետեւ երկար տարիներէ ի վեր այստեղ կ'ապրին»:

Համայնքի սոցիալ-մասնագիտական և տնտեսական կազմը

Քննարկվող առանցքային հարցեր. *հայերի զբաղվածությունը տնտեսական գործունեության ոլորտներում և փոփոխություններն ըստ ժամանակագրության, ձեռնարկավորություն և ներգրավվածություն համայնքային կյանքում, սոցիալ-մասնագիտական խմբեր, շերտեր, կրթություն (կրթության նկատմամբ վերաբերմունք և կրթական շեմի փոփոխություններ):*

«Դե մարդիկ եկել են այստեղ ոչ լավ օրից: Այդ պարագայում ցանկանում է այստեղ ավելի լավ ապրել, քան Հայաստանում, և դիմում է ինչ-որ միջոցների, որոնք խրախուսելի չեն: Բայց ձեռքներս դնենք խղճներիս, ասենք, որ, երբ որ մարդը ինչ-որ մի կետի հասնում, կայանում է,

ինքը կանգ է առնում այդ գործի մեջ, խոսքը գնում է գողությունների, խաբեությունների մասին, ստացվում է, որ օրվա հացն է պատճառը»:

«Շատ բժիշկներ կան, շատ իրավաբաններ կան, շատ առևտրականներ (երևի ամենաշատն իրենք են): Մի ժամանակ, հատկապես Թուրքիայից եկածները, շատ են զբաղվել տեքստիլով, բայց հիմա այն դուրս է եկել, քանի որ Չինաստանը անմրցունակ շուկա է ստեղծել ողջ աշխարհում:

90 տոկոսը ձգտում է ունենալ կրթություն: Ինչ վերաբերում է Ֆրանսիայում ապրողներին, առհասարակ, նա, ով հնարավորություն ունի, այլևս Ֆրանսիայում ուսումը չի շարունակում: Առաջին ուսումից հետո ձգտում են Ամերիկա, Շվեյցարիա, Անգլիա, որովհետև այնտեղ աշխատանք գտնելու լայն հնարավորություններ ունեն և ավելի բարձր կրթություն կարող են ստանալ:

Հայաստանցի հայերը թղթաբանական խնդիր ունեն՝ ուսում ստանալու համար, բայց եթե չկան, ես չգիտեմ մի հայաստանցի հայ, ով որ չցանկանա սովորել, մարդիկ միլիոններ են ծախսում, որ գան Ֆրանսիայում սովորեն՝ Հայաստանից թեկուզ, կամ դրամաշնորհներ են ունենում, այսինքն ջանք են թափում սովորելու համար: Բայց Ֆրանսիա պետությունը նաև լավ մոդել ունի, կարծեմ Հայաստանն էլ ուներ Սովետական Միության ժամանակ, տեխնիկոմներ են դրանք՝ վեց ամսից մեկ տարվա ընթացքում նեղ մասնագիտական բաներ ես ստանում՝ գործարաններում աշխատելու: Կամ ամենապարզ օրինակը բերեմ. մարդ է, որը դպրոցականների ընդմիջման ժամերի, երբ որ նրանք դուրս են գալիս, որ փողոցը անցնեն, նա կանգնում է և փողոցը փակում է՝ մինչև երեխաներն անցնեն, և նա պետք է դրա համար կուրս անցնի, նա պետք է իմանա լեզուն, պետք է կարողանա ետ բերել երեխային, եթե շեղվում է ճանապարհից: Սա ամենափոքր նրբությունն էմ ասում:

Համայնքից 50 տարեկան մի մարդ ունենք, Լիբանանից է, արդեն 4-րդ կամ 5-րդ ֆորմասիոնն է [խմբ. formation - վերապատրաստում] անցնում. մի աշխատանքի անցնում է, աշխատում է, հետո զգում է իրենը չէ, փոխում է:

Բացառություններ այստեղ էլ կան, բայց այստեղ ես հասկանում,

թե սպասարկման ոլորտի աշխատող ինչ է նշանակում: Հայաստանում նա, ով աշխատանք չունի, ես իրենց չեմ քննադատում, իրենց ասում են արի կանգնի կասսայում [խմբ. դրամարկում], ոչ քաղաքավարի կերպով սպասարկում է և այլն, իսկ այստեղ սպասարկման ոլորտում ամեն ինչ հաշվառած է: Ավտոբուսի վարորդների օրինակը, թեկուզ, բոլորը խնամված, քաղաքավարի և, միևնույն ժամանակ, անվտանգությունն է ապահովված: Եթե ավտոբուսում հարբած մեկը մտնի, վարորդը իրավունք ունի կասեցնել նրա գործողությունները՝ մինչև ոստիկանության գալը: Մարդիկ այդ ամենն անցնում են մանրամասներով: Շատ հայեր կան, որ առնում են այդ իրավունքները, շատ նորեկ հայեր աշխատում են շինարարության մեջ, մեծամասամբ, հատկապես անգրանցում աշխատանք են իրականացնում և անվտանգության մեջ: Մի քանի հայեր կան, որ ունեն շինարարական կազմակերպություններ, ընդգրկում են նոր աշխատողներ՝ «սևով», որը իրենց ձեռք է տալիս հարկ չվճարելու տեսանկյունից, և կան նաև հայեր, ովքեր ունեն անվտանգության ծառայությունների պատրաստման իրավունքներ և այլն: Այդտեղ է, որ հայերը կարողանում են գրանցվել, դասի չգնալ և նման բաներ»:

«Իմ ծնողները որ եկան, ուզեցին, որ իրենց երեխաները ուսում ունենան, և շատերը բժիշկ, փաստաբան կամ ինժեներ էին, բայց հիմա, որ նորերը գալիս են, մեկ ոլորտ չկա, որ կարող ենք դա ասել, բայց հին սերնդի մասին կարող ենք ասել, որ նրանք կրթության մակարդակը բավականին բարձացրեցին»:

«Լիբանանէն եկած հայերու պարագային, անոնք եկած են դրամով եւ այստեղ իրենց գործը հիմնած եւ շարունակած են: Ոմանք երիտասարդ ժամանակ եկած են ուսման համար եւ յետոյ այստեղ մնացած են, գործ հիմնած են եւ այսօր լաւ վիճակի մէջ են: Մէկ խօսքով՝ բոլոր շերտերու մէջ հայերը ներգրաւուած են:

Թէ լիբանանցիներու եւ թէ պոլսահայերու պարագային, անոնք վարպետ ոսկերիչներ էին: Երբ Ֆրանսա եկան, իրենց գործը շարունակեցին: Բայց երբ գործ գտնելու դժուարութիւն կայ, անձը իր մասնագիտութեամբ չի փնտռեր, այլ ուրիշ գործ մը կ'աշխատի՝ իր ապրուստը ճարելու համար եւ ընտանիքը պահէ:

80-ականներուն [խմբ. 1980-ականներուն] թուականներուն հիւսքի գործի բաականին տարածուած եւ պահանջուած էր: Գրեթէ բոլոր աշխատանոցները հայերուն ձեռքն էր: Այս 15 տարի տեւեց եւ հայեր լաւապէս աշխատեցան, որովհետեւ Չինաստան սկսաւ աժան գնով վաճառել հազուստները»:

«Ես երբեք գաղութէն դրամ չեմ ուզեր, որովհետեւ հազիւ 100 ելրոտան, կը սկսին խօսիլ ըսելով, թէ ինչ ըրիք մե տական հաստատութիւն է եւ պետութիւնը նորոգելու համար ինք մասնագէտներ կը դրկէ: Մեր հաստատութիւնը յուշարձան է: Ֆրանսացիք հայերու նման չեն, որ իրենց հնութիւնները քանդեն: Անոնք իրենց հնութիւնները կը պահպանեն եւ կը հպարտանան իրենց պատմութեամբ:

Ես 10 տարի Հալէպի մէջ գտնուող Մխիթարեան դպրոցի տնօրէնը եղած եմ: Դպրոցին պարտքերը փակելու համար՝ նկարներ ծախած եմ: Հարստութիւնը նուիրումի մէջ է եւ ոչ թէ փողի մէջ է:

Անշուշտ խելքը գլուխը մարդիկ կան, ինչպէս մեր ուսանողներէն Փաթրիկ Տէմիրճեանը, որ այս քաղաքի մարզպետն է: Տարին գոնէ մէկ անգամ 5000000 հազար նուէր կ'ընէ Տաւուշի ջրանցներուն: Այդ պատճառով ֆրանսացիներ իրեն դիտողութիւն սկսան ընել, թէ ինչու հայերուն կ'օգնես: Իսկ անոնց պատասխանեց, թէ ան բոլորին ալ կ'օգնէ: Փաթրիկը ամէնէն երեւի երեսփոխանն է:

Այսօր հայութեան մեծ մասը եկամուտի աղբիւր է»:

«Կարող ենք ասել, որ ամեն տեսակ խավ կա՝ լինի առևտրականներ, ինժեներներ և այլն: Կան ընտանեկան բիզնեսներ, բայց ավելի քիչ են հիմա»:

«Բոլոր [խմբ. աշխատանքային ոլորտներում զբաղված են հայերը]: Ինչո՞ւ են ասում, որ հայ համայնքն ամենալավ ինտեգրվածն է. ֆրանսահայերի ամբողջությունը երևի ուղիղ պրոպորցիոնալ Ֆրանսիայի բնակչության սիստեմն է ներկայացնում: Համայնքային կան, իհարկե, երևացող հայեր, որոնք շոու բիզնեսի, նորաձևության, քաղաքականության ոլորտում շատ հաջողակ են, բայց իրենցով չենք կարող ընդհանուր կարծիք կազմել: Սկզբի հայերը արհեստագործներ էին, որովհետև

առաջին սերունդն էր դա: Այն ոլորտներում, որոնք երևացող ոլորտներ են, բնականաբար, հայերը որ կան, տաղանդավոր են:

Մի քիչ վատ ապրողների զանգվածը, եթե ըստ Ֆրանսիայի ընդհանուր դեմոգրաֆիայի վերցնենք, հավասարակշռում է նոր եկած ոչ լեզավներով, ոչ լավ ապրուստ ունեցողները, իսկ մնացած մասը՝ սկսած ուսուցիչներից մինչև հարուստ բիզնեսմեններ, այդ ամբողջ շերտը կա»:

Ընտանիք

Բնարկվող առանցքային հարցեր. *հայ ընտանիքի կառուցվածք, հարաբերություններ՝ անցյալի և ներկայի համեմատությամբ, խառնամուսնություններ՝ ընկալումներ և միտումներ, երեխաներ:*

«Շատ են խառնամուսնությունները: Բնական է դա. 50 միլիոնի մեջ ընդամենը 500 հազար հայ ենք, և դրանից խուսափել հնարավոր չէ, կոպիտ ասած, օվկիանոսի մեջ մի բաժակ ջուր ենք: Ամենամեծ համայնքներից մեկն ենք, ի դեպ, բայց ամեն դեպքում, մոտավորապես նույնքան բնակչություն կար, սկզբունքորեն, եթե վերցնենք, Սիրիայում և Լիբանանում: Բայց ի՞նչն է խնդիրը. Լիբանանում և Սիրիայում ապրող հայը ոչ հային համարում է իրեն օտար և թշնամի, քանի որ նա մահմեդական է և արաբական մշակույթի կրող, և տաբու էր առաջացել: Իսկ ահա այստեղ եկողը եղբայրական պետություն է գալիս, քրիստոնեական պետություն է գալիս, և իրեն ընկալում է այս մշակույթին հոգեհարազատ, հետևաբար՝ այդ պատենշները չկան, մանավանդ, որ համայնքը այդ խնդիրը չի դնում առաջին իսկ սերունդներից սկսած: Տոկոսային հարաբերությամբ՝ ես եթե տարեկան անում եմ մոտավորապես 100 պսակադրություն, 100-ից առնվազն 80-ը խառնամուսնություններ են: Բաժանումները չեմ կարող ասել, որովհետև դրանք մեզ չեն հասնում: Բայց ֆրանսիական վիճակագրությունը, որ թերթերում իմ աչքով ընկել է, 50-60 տոկոս է: Մարդիկ այստեղ, սովորաբար, ամուսնանում են՝ արդեն բաժանվելու գաղափարը մտքների մեջ ունենալով: Նախ, կյանքն այնքան թեթև է իրենց մոտ, որ նախաամուսնական ամեն տեսակի հարաբերություններ ունենում են, և ամուսնությունը ցանկություն է իրար հետ երկար ապրելու, և արդեն 4-5 տեսակի ամուսնության մակարդակ ունեն ֆրանսիացիները»:

«Անպայման, թե՛ երեխաներն են ուզում առանձնանալ, թե՛ ծնողները, որովհետև 18 տարեկանից հետո երեխաներին տրվող ընտանեկան հարկը մեծանում է, մանավանդ, եթե աշխատում են, իրենք էլ ձգտում են ազատության: Որ ֆրանսիացին ապրի ծնողների հետ, դա չլսված բան է: Հայերի մեջ կարող է լինեն, նորեկ հայերի մեջ հատկապես [խմբ. որ չուզենան առանձնանալ], բայց երբեմն դա ձեռք է տալիս երեխաներին»:

«Օրինակ, Փարիզի մէջ բնակուող հայ ընտանիքները յաճախ առանձին կը մնան: Իսկ անոնք, որոնք փոքր քաղաքներու մէջ կ'ապրին՝ Մաղսէյ, Վալանս Ալֆոդիլ եայլն, ուր հայկական միութիւնները շատ են եւ ուժեղ: Մթնոլորտ մը կը ստեղծուի, որը նպաստաւոր է հայապահպանման գործընթացին: Վալանսի եւ Մաղսէյի 15 տոկոսը հայեր են: Վալանսի մէջ 30 հայկական միութիւններ կան: Այնտեղ հայկական ընտանիքը տակաւին կը պահպանուի: Բայց դժբախտաբար խառն ամուսնութիւնները շատցած են եւ հայեր ֆրանսացիներու հետ կ'ամուսնանան»:

«Միասին չեն ապրում, երիտասարդները մեծանում են և առանձին ապրում: Շփում կա, բայց ոչ Հայաստանի պես, բոլորովին տարբեր է, իրար մոտ ապրելու ձգտում էլ չկա»:

Հայերի ինտեգրումը երկրում

Քննարկվող առանցքային հարցեր. *հայերի կերպարի ընկալումը, ինտեգրման հաջողություններն ու դժվարությունները, ընդունող երկրի և հասարակության վերաբերմունքը, հայ համայնքի և պետության փոխհարաբերությունները:*

«Ֆրանսիայի կողմից հայերի նկատմամբ վերաբերմունքը դրական է՝ հայտնի անձանց շնորհիվ: Բացի դա, ելնելով նրանից, որ Ֆրանսիայի հայերը Ֆրանսիային երբեք վնաս չեն տա՝ ընդհակառակը, նույն Միսաք Մանուշյանի օրինակը եթե վերցնենք, ֆրանսիացիք գիտեն, որ եթե հայը կոպում է, ուրեմն նա ճիշտ է: Ֆրանսիացիները, կարելի է ասել, ինտուիտիվ առումով հայերի կողմն են՝ Ղարաբաղյան հակամարտու-

թյան հետ կապված՝ այստեղ կա նաև մահմեդական-քրիստոնյա հակասությունը և այլն: Ընդհանուր վերաբերմունքը հայերի նկատմամբ այն է, որ հայը ավելի արդար է, քաղաքակիրթ:

Դա շատ մարզինալ է, շատ փոքր է [խմբ. հայաստանցիների հոսքը]: Մոտավոր թվերով նոր հայերի հոսքը մի քանի 10 հազարից չի անցնում, և կես միլիոնանոց ինտեգրված համայնքում դա նշանակալի դեր չի կատարում: Այն հայերը, որոնք հին համայնքի հետ մերվում են, իրենք, բնականաբար, հին համայնքի կողերն են վերցնում: Հին հայերի մեջ էլ կան այնպիսիք, ովքեր քաղաքացիություն են ստացել: Այն հայերը, որոնք ոչ լեզալ կարգավիճակ ունեն և չեն կարողանում ինտեգրվել, նրանք այդ կովկասյան վերջին ինտեգրացիայի մեջ են դիտվում, այսինքն՝ վրացիների, չեչենների, մի քիչ ավելի քրեական մասի մեջ: Դա այն մասն է, որը պատկան մարմինների ուշադրության տակ է, այսինքն դա ընդհանուր հասարակության աչքին չի երևում, ու շատ քիչ են հայերի մասնակցությամբ վատ պատմություններ Ֆրանսիայում: Եթե կա մեծամասնություն, որը լավ համբավ ունի, յուրաքանչյուր հայ էլ փորձում է դա պահել: Նույն Շառլ Ազնավուրը, որը դրական ազդեցություն ունի հայի համբավի վրա, թեկուզ որ կինը հայ չէ, զավակները կիսահայ են, փեսան արաբ է և այլն, դա նշանակություն չունի: Հայը ֆրանսիական մոդելին շատ բռնող ժողովուրդ է, իր մեջ չի փակվում»:

«Քաղաքական դաշտում Պատրիկ Դևեջյանն է, որ բացի պատգամավոր լինելուց, Օ դը Սենի [խմբ. Hauts-de-Seine] դեպարտամենտի նախագահ էր, որը միավորում է տասից ավելի քաղաքներ: Ֆրանսիայի ամենազարգացած դեպարտամենտն է, իսկ Եվրոպայում երրորդը, եթե չեմ սխալվում: Նաև Մարտին Վասալը, որոնք երկուսն էլ այս տարի եղել են Հայաստանում, չնայած Պատրիկ Դևեջյանը ամեն տարի է այցելում, նաև տնտեսական ներդրումներ է իրականացնում: Այսինքն Օ դը Սենը կես միլիոնի ներդրում է ամեն տարի անում Տավուշի մարզում: Մարտին Վասալն էլ իր դեպարտամենտով է ակտիվ կապերի մեջ: Բացի դա, կան հայ քաղաքապետեր, փոխքաղաքապետեր: Օրինակ՝ Լիոնի փոխքաղաքապետն է հայ, ինքը՝ Մարտին Վասալը Մարսելի փոխքաղաքապետն է: Դիդիե Փարաքյանը նորածնության մեջ է շատ հաջողակ: Փարիզի

շրջակայքի փոքր քաղաքներում ևս հայ փոխքաղաքապետեր կան: Փարիզը բաժանված է 20 շրջանների, որոնցից յուրաքանչյուրն ունի իր քաղաքապետարանը. 5-րդում, 9-րդում հայ փոխքաղաքապետեր կան: Այսինքն քաղաքական դաշտում հայերը ներգրավված են այնքան, ինչքանով բոլորը: Երաժշտության ոլորտում՝ Շառլ Ազնավուրից սկսած, բոլորը գիտեն որ հայերը տաղանդավոր են՝ Միշել Լեգրան, Լիս Սարյան, Սիլվի Վարդան, նոր սերնդից՝ Պատրիկ Ֆիորին, Ալեն Թերզյանը, որը հայտնի պրոդյուսեր է և Ֆրանսիայի կինոակադեմիայի նախագահն է, այսինքն «Սեզարի» [խմբ. César, Ֆրանսիայի ազգային կինոմրցանակ] նախագահն է ու շատ ազդեցիկ է կինոբիզնեսում և մշակույթում: Բիզնես դեմքեր էլ կան, իրարկե, բայց ոչ շատ հարուստների թոփ տասնյակում, որովհետև այստեղ բիզնես դաշտը շատ կոնսերվատիվ է: Բայց հայերի ներգրավվածությունը դրական է, ու երևացող հայերը, որպես կանոն, գնահատված ու սիրված են»:

«Հայերի մասին շատ բարձր կարծիք ունեն: Դրա մեջ մեծ ներդրում ունի Ազնավուրը: Երկրորդը, երևի թե, Ֆրանսիայի մեդավորության զգացումն է՝ Հայոց ցեղասպանության, Կիլիկյան Հայաստանի տապալման գործում իրենց մասնակցության: Պատմության առաջ այսպես գլուխ են խոնարհել: Երրորդ, չեն կարող հայերի հանդեպ լավ չլինել, որովհետև 500 հազարը քիչ ձայն չէ, ընդ որում, 500 հազարը պաշտոնական տվյալներ չեն»:

«Ընդհանրապես, լավ պատկեր ունեն հայերը, և միշտ ասում են, որ հայերը լավ ինտեգրվել են Ֆրանսիայի մեջ և լավ են ընդունվել ֆրանսիացիների կողմից:

Ֆրանսիացիները տարբերություն չեն դնում [խմբ. հայաստանցիների և ֆրանսահայերի միջև], բայց հասկանում են՝ նորերը որ գալիս են, շատերն առանց թղթի են, բայց հիմնականում պահպանում են հարաբերությունները»:

«Տեղացի ֆրանսացիները մեծ յարգանքով կը տածեն ֆրանսահայերու նկատմամբ, որովհետև հայերը ինտեգրացումի ամենէն լուրջն օրինակն են: Հայերը 80 տարիներ երբ Ֆրանսա եկան, հիմնեցին, աշ-

խատեցան եւ մաս կազմեցին ընկերակցութեան մէջ: Այլ խօսքով, հայերը երբեք ֆրանսացիներու հետ հարց չունեցան, այլ ընդհակառակը՝ համակերպուեցան: Միշտ պահեցին հայ մշակոյթը, իրենց ինքնութիւնը՝ ինտեգրուելով հասարակութեան հետ: Հայերը համեմատելով արաբական երկիրներէն եկող գաղթականներու հետ, ֆրանսացիք հայերուն դրական օրինակ կու տան»:

«Հայերու հանդէպ շատ լաւ տպաւորութիւն կայ: 1925-ին, երբ հայերը Ֆրանսա եկան, տեղացիք վատ տպաւորութիւն ունէին իրենց նկատմամբ: Սկիզբը միշտ այդպէս կ'ըլլայ: Կ'ըսէին, որ հիւանդութիւններ պիտի բերեն, թոյլ են, մաքուր աշխատանք չենք կրնար կատարել: Այս պատկերը համաշխարհային երկրորդ պատերազմէն յետոյ փոխուեցաւ: Ունինք Շառլ Ազնաւուր, որը հայ ազգի պարծանքը: Այսօր, կրնամ ըսել, թէ ֆրանսացիները շատ լաւ տպաւորութիւն ունին հայերու մասին, որովհետեւ հայերը իրենք զիրենք արդարացուցած են: Կ'ըսեն, թէ աշխատասէր ազգ են եւ համախմբուած եւ համերաշխ են: Իսկ ուրիշներ հայերն ու հրեաները նոյն գծի վրայ կը դնեն, պատճառաբանելով որ իրենք միշտ իրարու հետ կ'ապրին:

Կ'ուզեմ նշել նաեւ, որ այն բնիկ ֆրանսահայերը, որոնք վաղուց այստեղ, եկող հայաստանցիներուն համար կ'ըսեն, թէ իրենց միջեւ տարբերութիւն կայ: Տեղի ֆրանսացիները, որոնք լաւ տպաւորութիւն ունին հին հայերու հետ, երբ կը տեսնեն եկուորներուն, կամաց-կամաց իրենց տպաւորութիւնը կը սկսի փոխուիլ: Բայց ես տարբերութիւն մը չեմ տեսներ իրենց միջեւ»:

Բ. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

Համայնքի կառույցներն ու իրադարձությունները

Քննարկվող առանցքային հարցեր. *համայնքի կառույցներ և կազմակերպություններ (կրոնական, մշակութային, բարեգործական, քաղաքական և այլն), համագործակցություն նրանց միջև, հիմնական սոցիալական և մշակութային միջոցառումներ ու իրադարձու-*

թյուններ, նախաձեռնություններ, սոցիալ-մշակութային կյանք, համայնքի ներգրավվածություն և համախմբում:

«Այստեղ համայնքային կազմակերպվածությունը շատ ավելի լավ է, քան մյուս երկրներում: Օրինակ՝ կա CCAF-ը, որը ֆրանսսահայ կազմակերպությունների համակարգող խորհուրդն է: Բնականաբար, քնադատությունները շատ են, շատ կառույցներ կան, դրա մեջ չեն մտնում, սակայն փաստն այն է, որ Ֆրանսիայում կա մի կազմակերպություն, որը կազմակերպություններին կապում է իրար հետ: CCAF-ի մեջ մտնում են և՛ դաշնակցականները, և՛ հնչակյանների կառույցները, և՛ AGBU-ն, և՛ Համահայկական հիմնադրամը, և՛ երեք եկեղեցիները՝ կաթոլիկ, առաքելական, ավետարանչական: Ֆրանսիայի դեպքում այս եկեղեցիներն ավելի համերաշխ են, Հայաստանում մի քիչ այլ է, հատկապես ավետարանչականների դեպքում: Համակարգող խորհրդի կազմը, եթե նշենք, դրանք երեք կուսակցություններն են (ռամկավարներն ավելի թույլ են, որովհետև տարրալուծվել են ՀԲԸՄ-ի մեջ, բայց երեք ավանդական կուսակցությունները), երեք եկեղեցիները, կարևոր մշակութային օջախները, այդ բոլորը, կարելի է ասել, միավորված են, մարտնչելու տեղը գտել են՝ խորհուրդն է: Նպատակն այն է, որ հայերը մեկ խոսափող ունենան: CCAF-ի համանախագահները՝ Արա Թորանյանը և Մուրադ Փափազյանը համարվում են խոսնակ, այսինքն շատ դեպքերում իրենց կարծիքի հետ կարող են համաձայն չլինել մյուս կուսակցությունները, ժողով անեն, իրենք քննադատությունները լսեն կամ ընդունեն, բայց Ֆրանսիայի իշխանական ներկայացուցիչները՝ նույն նախագահը, ընդունում է համանախագահներին: Նախագահի օգնականը հասարակական հարցերով իրենց ընդունում է խորհրդակցությունների: Սա, փաստորեն, երկակի է, իրենք համայնքի համար պատասխանատվություն չեն կրում, համայնք էլ իր հերթին ամեն ինչ չի անի այնպես, ինչպես իրենք են ուզում: Կազմակերպվածության առումով իրենք կարողանում են ներկայանալ, իսկ անհամաձայնությունները իրենք իրենց ներսում են լուծում»:

«Բոլորը կարևոր են՝ լինի եկեղեցին, մշակույթի խումբ, թե մեկ այլ բան, բոլորն իրենց կարևորությունն ունեն [խմբ. տարբեր խմբերի մարդկանց համախմբելու համար]»:

«Գաղութին մէջ կար գրասենեակ մը, որը կազմուած էր չորս միութիւններու կողմէ: Այն կը գործէր գաղթականներուն օգնելու համար: Այդ միութիւններն են. աղքատախնամը, կապոյտ խաչը, բարեգործականը եւ եկեղեցին: Ցանկացած հարցով գաղթականները կարող էին դիմել այս գրասենեակ եւ համապատասխան օգնութիւն կը ստանային, թէ թղթաբանական եւ գործի գտնելու առումով: Որոշ գումար մը կար, որ պէտք է յատկացուէր գաղթականներու, բայց այդքան գոհացուցիչ չէր, անցողակի պզտիկ օգնութիւն մըն էր: Իրենց խորհուրդ կու տայինք, որ այնքան ատեն որ ձեր թղթաբանական գործերը կանոնաւորուած չեն, գործ գտնելու հնարաւորութիւն չկայ: Անոնք, որոնք ապաստան գտնելու դիմում կը գրէին Ֆրանսայի պետութեան, 2-3 ամիս պետութիւնը զիրենք քեմփերու կը տանէին եւ որոշ չնչին գումարով կ'օգնէին իրենց: Շատեր զանազան միջոցներով այստեղ մնացին: Ուրիշներ այլ քաղաքներ գացին, անօրինական եւ սեւ գործերով զբաղուեցան: Հասկնալի էր իրենց ցաւը, բայց հնարաւոր չէր այլ միջոցներով այստեղ մնալ: Ո՞վ տէր պիտի դառնար իրենց: Ֆրանսահայ համայնքը ի վիճակի չէր իրենց թուղթերը կանոնաւորելու:

Հայաստանցի հայերը համայնքային կեանքէն միշտ դուրս մնացած են եւ երբեք չեն շաղուած: Չեմ գիտեր ինչու, կարծես իրենք նախընտրած են չշաղուիլ եւ մաս կազմել միութենական շարքերէն ներս: Այո՛, Ֆրանսա երբ կու գան, պէտք է ֆրանսերէն սորվին, որպէսզի կարողանան թէ՛ աշխատիլ եւ թէ՛ ուսում ստանալ: Սկզբնական շրջանին մաս կը կազմեն միութենական կեանքէն ներս, բայց երբ կը սկսին ինքնուրոյնանալ, այդ ատեն կը սկսին հեռանալ հայկական շրջանակներէ, կ'ուզեն ֆրանսացիի պէս ըլլալ, թերեւս ալ ամերիկ, որպէսզի յաջողին: Առանց գիտակցնելու իրենք համոզուած են, որ իրենց յաջողութիւնը ոչ թէ համընկնելու մէջ է, այլ լուծուելու, ձուլուելու մէջ է: Մենք յստակ տուեալներ չունինք, թէ անցնող 20 տարիներու ինչքան հայեր եկած ու գացած են, քանի՞ ուսանողներ ունինք դպրոցներէն ներս եւայլն: Այլ խօսքով, հայաստանցիներու մէջ միաւորում մը չեմ տեսած, այլ ցիրուցան եղած են: Իսկ Պարսելոնայի հետեւանքով, որտեղ միութիւն մը կայ, որ կը համախմբէ Հայաստանէն գաղթած հայերը, մշակութային միջոցա-

ռումներ եւ լեզուական դասաւանդեանց աշխատանքներ կը տանի: Այլ խօսքով՝ փորձը կայ եւ ձեւաւորուած միութիւն մըն է»:

«Տեսնք, հիմա Փարիզ և Փարիզի հայ համայնք հասկացությունները մի քիչ իրարից տարբերվում են: Փարիզը բավականին մեծ քաղաք է, մեծ Փարիզ հասկացությունը կա: Բուն Փարիզի մեջ մենք չունենք հայկական դպրոց, ունենք այս մեկ եկեղեցին, բայց ունենք հայաշատ չորս մեծ քաղաքներում՝ իրենց քաղաքապետով: Այդ չորս քաղաքներն ունեն իրենց եկեղեցիները և ունեն նաև դպրոցներ հայկական: Հայկական մեկօրյա դպրոցներ գործում են նաև Փարիզում, օրինակ՝ AGBU-ի դպրոցը, առանձին անհատական դպրոցներ էլ են գործում, կան նաև եկեղեցուն կից դպրոցներ:

Օրինակի համար, այստեղ մեր մայր եկեղեցին արդեն տասնամյակ կլինի փորձում է կիրակի օրերը դասեր կազմակերպել, այն էլ միայն պատարագի ժամերին: Կիրակի օրերը դպրոցը գործում է, բայց բավականին թույլ մակարդակի վրա է գտնվում, և հոգևոր հովիվը կիրակնօրյա դպրոցով չի կարողանում զբաղվել, որովհետև այն պատարագի ժամերին է լինում: Այստեղ արդեն կա սոցիալական խնդիր, այսինքն մարդիկ այստեղ շատ խնայում են իրենց ժամանակը, հատկապես ինչը որ վերաբերում է արձակուրդներին և ազատ օրերին: Երբ որ ծնողը գալիս է պատարագի, չի պատրաստվում մեկ ժամ ավել սպասել, որպեսզի իր երեխան այստեղ մնա, և շատ ծնողներ պատարագի էլ չեն մնում: Բայց, սովորաբար, այնպես ենք նախատեսում, որ երբ որ ծնողը պատարագի է, երեխան գնա դասի, գաղափարը լավ է, բայց եթե մեկ հովիվ ավել ունենայինք այստեղ, ավելի կազմակերպված կլիներ:

Այդ հարցը ես փոքրիշատե լուծելու համար այս տարվանից ձեռնարկեցի հոգևոր դաստիարակության դասընթացներ՝ ամսվա մեջ երկու չորեքշաբթի օր: Արդեն երկու դաս ունեցել եմ, բայց 100-200 հազարանոց ֆրանսիական համայնքում դպրոցին մասնակցելուն արձագանքել են ընդհամենը վեց երեխա: Սա է իրավիճակը այստեղ, այսինքն հարցը ոչ թե հոռետեսաբար, այլ իրատեսաբար եմ փորձում ներկայացնել: Այսպիսի դպրոցի փորձ արդեն մի տարի կա կողքի քաղաքում, որը փարիզյան շրջան է, որտեղ 10-20 երեխա է հաճախում, և դրական մի-

ակ բանն այն է, որ ուսուցիչները ճիգ են գործադրել՝ արևելահայերեն ուսուցում ապահովել, որովհետև այստեղ իսպառ բացակայում է, հիմնականը արևմտահայերեն խոսքի վրա է:

Իրենց էլ կարելի է հասկանալ, թե ինչու արևմտահայերեն, որովհետև, նախ, 100 տարի է արևմտահայերենն է այստեղ խոսվել և գերիշխել, երկրորդ, որովհետև այդ լեզուն մեռնող լեզուների շարքում է արդեն և պետք է փայփայել այն: Ես կողմ եմ, որ այստեղ արևմտահայերենը պահպանվի, իմ երեխան ինքը հայկական դպրոց է գնում՝ մեր տնից մոտ 30 կմ հեռավորության վրա: Անշուշտ, մեզ հարմար է, որովհետև ավտոբուսը այստեղ է գալիս և նրան տանում է, լավագույն դպրոցն է: Դեռևս 1800-ականներից Հունաստանի Սալոնիկ քաղաքից հիմնադրված մի դպրոց է, որ հետո Թուրքիա, եթե չեմ սխալվում՝ Պոլիս է շարունակել իր գործունեությունը, իսկ Ցեղասպանությունց հետո տեղափոխվել է Ֆրանսիա՝ Մարսել, իսկ 1920-ականներից հաստատվել է Փարիզում: Այսինքն արմատական տեղափոխություն է կարտարվել, բայց, իմ կածիքով, լավագույն դպրոցն է, որովհետև ես իմ երեխայի վրա էլ եմ զգում: Նա մանկապարտեզային տարիքի է, բայց նա դպրոցում խոսում է արևմտահայերեն: Ուսուցիչներ ունեն՝ արևելահայերենի տիրապետող, հավանաբար, որպեսզի դյուրացնեն ուսուցիչների և աշակերտների սկզբնական շփումը, բայց ուսուցումը կատարվում է արևմտահայերենով: Հիմա եթե մի օր ես ծառայությունս վերջացնեմ Ֆրանսիայում, գիտեմ որ ինքը դժվարություններ կունենա, բայց զոնե տառաճանաչ կլինի, Հայաստան եթե վերադառնա: Այդ իմաստով, զոնե դասական ուղղագրությունն այստեղ սովորի: Ի դեպ, դա մի խնդիր է, որը Հայաստանում չեն պատկերացնում: Ես էլ չէի պատկերացնում՝ որքան կարևոր է ուղղագրության հարցը: Եվ այստեղ էլ չեմ պատկերացնում, թե Հայաստանում ինչու չեն պատկերացնում, որ դա կարևոր է:

Մյուս հարցը դպրոցների հետ կապված, այո, ասում ենք հայկական դպրոցներ են, որովհետև ղեկավար կազմի մեջ հայեր կան, բայց դպրոցները միատարր լինելու իրավունք չունեն Ֆրանսիա պետության մեջ, դա համարվում է ռասիզմ: Դպրոց գիտեմ, որ անգամ արաբ աշակերտ կա, հավանաբար քրիստոնյա, որ ապրում է մոտակայքում, այդ դպրոց-

ները վճարովի են, այսինքն մասնավոր դպրոց են համարվում, մինչև մանկապարտեզի առաջին երեքից վեց տարին առաջնորդվում են հիմնականում հայերենով, որից հետո անցնում են ֆրանսիական ծրագրի, և հայերենը մնում է որոշակի տարիքի սահմանում՝ որպես օտար լեզու: Արդեն դպրոցները չեն զարգացնում երեխաների մոտ հայոց լեզուն, որովհետև երեխան հայոց լեզվի դասին կարող է հայերեն խոսել, բայց մյուս 6-7 ժամը ֆրանսերեն է խոսում, ինքը ընկերների հետ ֆրանսերեն է շփվում՝ դպրոցում, դասամիջոցին և այլն: Բայց այդ դասին Մասիս, նուռ, տոլմա, բաստուրմա՝ այսպես ինչ-որ հայկական բառեր են ասում, սիմվոլիկ, որովհետև երբ նրանք դպրոցը ավարտում են, սիմվոլային մակարդակի են մնում: Լավ կողմ կա. մեծ մասը, որ դպրոց են գնացել ասում են, որ հասկանում են հայերեն, բայց դժվարանում են խոսել, կոմպլեքսավորվում են: Միջավայրն է դա, մարդը, որ աշխատանքի գնաց, գիտի, որ հայի ռեստորանում կամ խանութում է աշխատում, կարող է հայերեն խոսել, բայց սա, իհարկե, լուրջ խնդիր է»:

«Այսօր, դժբախտաբար, մեր կեանքի մէջ շատցած են ազգային աղանդաւորները (դաշնակցականները, հնչակեանները, ռամկավարները, բարեգործականներ): Այս բոլորի բառին վաւերական առումով աղանդաւորներ են, իրենց ծակերուն մէջ քաշուած, այնտեղ կը հաւաքուին, ժողովներ կը կատարեն, ամէն ինչ կ'ուտեն, կ'ուրախանան: Բացէք այս թերթերը եւ տեսէք իրենց յայտարարութիւնները, որոնք միայն ճաշկերոյթի, ժամանցի բովանդակութիւն ունին, բայց մէկ հատ մշակութային բան չկայ:

Քսան տարիներ առաջ երբ թերթատէիր այս թերթերը, միայն մշակութային, դասախօսական, գրականութեան մասին յայտարարութիւններ կը գտնէիր: Այսօր այս բոլորը վերացած են եւ փոխարինուած են այդպիսի սին յայտարարութիւններով:

CCAF անունով կեդրոն մը կայ, որ ինքը գաղութի աշխատանքները կը կազմակերպէ եւ որուն մէջ մենք չկանք: Ամենահինը, ամենահեղինակաւոր եւ ամենաօրինաւոր հաստատութիւնը ըլլալով, որը հիմնուած է ֆրանսական պետութեան կողմէ, դժբախտաբար չէ ներգրաւուած CCAF-ի մէջ: Մարաշցիներու միութիւն, տարբեր թաղականութեան խորհուրդներ ներառնուած են»:

«Այսօր ամէնէն առողջ հաստատութիւնը Հրանդ Տինք հաստատութիւնն է, որտեղ հայ լեզուն կը փորձեն սորվեցնել ծպտեալ հայերուն, որոնք վերադարձած են իրենց արմատներուն եւ քրիստոնէութիւնը ընդունած են: Հրանդ Տինքը հիմնարկը աօրեային հետ համընկնելով՝ համապատասխանել քայլ կ'առնէ: Կարելի է իրենց հետ համագործակցիլ եւ ընդհանուր եզրեր գտնել:

Բազմաթիւ հայկական կազմակերպութիւններ կան, որոնք կ'ուզեն Հայաստանի հետ համագործակցիլ, բայց առանձին-առանձին կ'ուզեն գործակցիլ, միասնութիւն չկայ, այդ պատճառով չենք կրնար որոշակի եւ կոնկրետ երեսոյթներու մասին խօսիլ եւ համապատասխան քայլեր առնել: Ամէն մէկը իր գաղափարները պնդելէն բացի՝ անդին չի կրնար երթալ:

Իսկ համակարգող միութիւնը միայն Հայ Դատի հարցով կը զբաղուի եւ այլ հարցերով չեն զբաղուիր:

Գալով դպրոցներուն, դպրոցներուն մէջ նոյնիսկ համագործակցութեան եզր չկայ: 4 դպրոց կայ, միասին հարցերը քննելով եւ կամ միասին ուսումնական ծրագիր պատրաստելու ցանկութիւնն անգամ չկայ: Հայը դարձած է եսակեդրոն եւ իրմէ անդին չի կրնար տեսնել, իր պատասխանատուութեան շուքին տակ կ'ուզէ մնալ, չի կրնար դիմացինին հետ համագործակցիլ: Ամէնէն ցաւալին, դժբախտաբար, այս ժողովուրդի մտածելու կարողութիւնը 1915-էն ետք կանգնեցաւ եւ այսօր չէ վերսկսած: Կ'ուզենք առանց մտածելու աւանդութիւնը շարունակել: Կարելի չէ: Պէտք է ժողովուրդին մտածել սորվեցնել եւ այդ կը սկսի դպրոցէն, այս պարագային հայ դպրոցէն եւ իրեն մէջը պէտք է մարդը կերտել: Ոչ թէ միայն ուսումնական ծրագիրը կիրարկել եւ արդիւնքը բերել, բայց եթէ պատանին մտածել չի գիտեր, ինչպէ՞ս պէտք է շարունակէ իր կեանքը: Օրինակ՝ դպրոցներու մէջ կրօնի դաս կը դասաւանդուի, սակայն միայն պատմութիւններն է, որ կը պատմուի: Պէտք է պատմել, թէ Քրիստոսի կեանքը մեզի համար ի՞նչ նշանակութիւն ունի, Քրիստոսի մեզի համար ինչո՞ւ աշխարհ եկաւ եւ զոհուեցաւ խաչին վրայ: Այդ օրուայ նիւթերը իմ կեանքիս մէջ ինչպէ՞ս կրնամ արժեւորել: Հարցերը պէտք է բարոյական տեսանկիւնէն պէտք է դիտուին:

Եկեղեցւոյ վիճակն ալ նոյնն է: Ամէն կիրակի հաւատացեալ եւ ոչ հաւատացեալներ ասանդութիւնը յարգելով՝ եկեղեցի կ'երթան: Մարդիկ ոչ մէկ բան չեն հասկնար, 2000 տարի է գրաբար լեզուով է պատարագը եւ արարողութիւնները: Հաղորդութեան Ս. խորհուրդը ինչ նշանակութիւն ունի: Իսրայէլի կղերականները ընկերաբաններ են, որոնք Աստուածաշունչը կը վերցնեն եւ մէջի դրուագները առօրեայ կեանքին հետ կը կապեն: Մեր կղերականները կղերական չեն, պատրաստուած չեն, ուղղակի կը կրկնենք այն ինչ որ 2000 տարիներ առաջ գրուած է»:

«Ընդամէնը 4 դպրոց ունինք: Իսկ կազմակերպութիւնները կը գործեն շատ աշխուժ կերպով, բայց նաեւ կը հանդիպին նոյն մշակութային դժուարութեան:

Ես կը կարծեմ, որ մասնակցողներու թիւը մշակութային եւ կամ եկեղեցական կեանքին ներս քիչ է: Տարբեր ձեւով կը մօտենան հարցերուն: Մեր երիտասարդութիւնը գրաւելու դժուարութիւն ունինք, որովհետեւ կեանքը փոխուած է, ապրելու ձեւերը փոխուած են: Մեր ժամանակ կազմակերպութեան մէջ կը մտնէիք, ինքնանուիրով կը գործէիք: Միջոցները շատ սահմանափակ էին, աշխատելու ձեւերը սահմանափակ եւ տարբեր էին, կէսը արեւելեան մօտեցումով, կէսը ֆրանսական մօտեցումով, այսինքն՝ խառնուրդ բան մը կար: Այսօր, երիտասարդները, որոնք կ'ապրին եւրոպական շրջանակի մէջ, իրենց մօտեցումը, հարցերու բռնելու ձեւը բոլորովին տարբեր է: Կը կարծեմ, որ մեր կազմակերպութիւնները այս հոլովոյթը դեռ չկրցան մարսել:

Այս պատճառով է, որ երիտասարդ ներգրաւելը որեւէ մէկ կազմակերպութեան մէջ շատ դժուար է: Խօսքս 30 տարեկան երիտասարդներու մասին է: Աւելի փոքր տարիքի երիտասարդներ յաճախ կը մասնակցին միութենական կեանքին, բայց երբ կը սկսին կեանքի ու գործի ասպարէզ նետուիլ, գործի բերումով կը սկսին ավելի շփուիլ ֆրանսացիներու հետ: Այստեղ մեծ խոչընդոտ մը կը յառաջանայ: Անոնք այլեւս չեն կրնար երկու ձեւով մասնակցութիւն ունենալ: Այդ պատճառով կը հեռանան հայկական միութենական կեանքէն եւ կը սկսին համագործակցիլ ու շփուիլ տեղացի ֆրանսացիներու հետ: Այս է մեր դժուարութիւնը: Եթէ կարողանանք 30-40 տարեկան երիտասարդները ներգրաւել մեր ազգային կեանքէն ներս, շատ լաւ քայլ մը կատարած կ'ըլլանք:

Բարեգործական միությունը ունի իր դպրոցը, դասախօսություններ կը կազմակերպէ, երաժշտական մրցոյթներ կը կազմակերպէ:

Փարիզի մէջ ամէնօրեայ 2 դպրոցներ կան, իսկ Մարսէյի մէջ՝ 1, որը շատ ուժեղ հայկական վարժարան մըն է:

Ֆրանսայի մէջ շատ դժուար է հայկական մշակութային ժառանգութիւնը պահպանել:

Հայաստանի մշակութային հարստութիւնը անլի կովկասեան ժառանգութիւնն է, իսկ մերը՝ Օսմանեան ժառանգութիւնն էր, որը հայկական էր:

Մեր մէջ գիտակցութիւնը կայ, բայց մշակոյթը պահպանելու խնդիր կայ: Այստեղի հայը չունի լեզուն կիրառելու տեղ եւ միջավայր, որը հիմնական խնդիրն է: Ատոր համար չի փորձեր հայերէնը իր ամէնօրեայ լեզուն դարձնել: Դպրոցին մէջ հայերէն կը սորվիս ու կը խօսիս, բայց դպրոցէն դուրս չեն խօսիր»:

Մեղիա

Քննարկվող առանցքային հարցեր. *մեղիա կազմակերպություններ, սպառում և լսարան, հայկական տրեդեկապոլական դաշտ և ազդեցություններ:*

«Նոր Յառաջ» թերթը ամենատարածված հայալեզու թերթն է: Հիմա իրենք փորձում են մի քանի էջ ֆրանսերեն դնել, քանի որ հայալեզուների թիվը նոսրանում է այս համայնքի ներսում: Սա ամենաառատ տպվող թերթն է, երկօրյա է: «Nouvelle d'Arménie»-ն էլ վատ չի տպագրվում, բայց, կարծեմ, սա ամսաթերթ է:

Բարդ է ասել, թե ով է կարդում այն: Կարծեմ մոտ 500-ի հասնող բաժանորդագրություն կա: Հիմա փորձում են կայք կազմակերպել օնլայն՝ ավելի հասանելի երիտասարդներին: Ասեմ ձեզ, կարդալու մշակոյթը Ֆրանսիայում չափազանց զարգացած է, մարդիկ շատ գրագետ են այստեղ, կա այդ մշակոյթը: Որովհետև այստեղ կրթված լինել՝ նշանակում է լինել նորմալ քաղաքացի»:

«Դժբախտաբար, մամուլը փոքրանում է: Մենք առաջ օրաթերթ ունեինք՝ «Յառաջը», հիմա «Նոր Յառաջն» է, բայց նույնը չէ: Նոր սե-

րունդներից շատերը հայերեն չեն կարդում: Ես ել եմ դժվարությամբ կարդում: Օրինակ, եթե հեռուստաալիք լինի, վստահ չեմ, որ շատերը կդիտեն: Ռադիո կա նաև:

«Nouvel d'Armenie»-ն բավականին մեծ դեր ունի: Լիոն, Վալանսում էլ հայկական ռադիոներ կան, կա նաև Մարսելում: Նաև սոցիալական ցանցերի միջոցով. Ֆեյսբուքում, օրինակ, խմբեր կան, որ ինֆորմացիայով կիսվում են, միջոցառումներով շատ ակտիվ են: Բայց, կրկին, ակտիվ է փոքր մասը, մեծ մասը հայկական ծագում ունեցող ֆրանսիացիներ են, որոնք սիրում են Ֆրանսիան, իրենց լիարժեք քաղաքացի են համարում և որոշ չափով գիտեն, որ հետաքրքիր արմատներ ունեն և շատ չեն խորանում, որովհետև Ֆրանսիան ինքը մղում է դրան՝ եթե ուզում ես լինել լավ ֆրանսիացի, շատ կապված չպետք է լինես քո արմատներին:

Ֆրանսիացի բոլոր քաղաքական գործիչները իրենց հրապարակային խոսքում միշտ ասում են, որ հայ համայնքը կամ ֆրանսահայությունը կամ Ֆրանսիայի հայկական ծագումով քաղաքացիները ինտեգրացման լավագույն օրինակն են Ֆրանսիայում, որովհետև մեծ մասը ինտեգրված է և հայրենիք է համարում Ֆրանսիան, իսկ նրանց փոքր մասի նպատակը ոչ թե ի վնաս Ֆրանսիային գործել է, այլ Հայաստան-Ֆրանսիա հարաբերությունների լավացման հարցում կամուրջ լինելու փաստն է, որ իրենց գործունեությունը միաժամանակ ձեռնտու լինի և Հայաստանին, և Ֆրանսիային: Եվ իրենք իրենց գործողություններով պետք է ցույց տան, որ առաջին տեղում Ֆրանսիայի շահերն են և ոչ թե Հայաստանի: Իրենք ավելի շատ չեն ցավում մի երկրի ճակատագրով, որը այս պահին իրենց հայրենիքը չէ: Այն մասը, ովքեր չեն ուզում ինտեգրվել, որ դառնան ֆրանսիացի կամ որպեսզի իրենց սերունդները չդառնան ֆրանսիացի, նրանց մի մասը հայրենադարձվում է Հայաստան և Արցախ: Հաջող դեպքեր կան այս առումով: Վերջին օրինակն իմ ծանոթներից չորրորդ սերնդի մի հայ էր, որը գնաց Արցախ և նորաբաց Թումոյում գլխավոր ադմինիստրատոր է աշխատում»:

«France Arménie», «Nouvelle d'Arménie» եւ «Նոր Յառաջ». ասոնք մեր հիմնական թերթերն են: «France Arménie»-ն երկլեզուով է, «Nouvelle d'Arménie»-ն միայն ֆրանսերէնով է, իսկ «Նոր Յառաջ»-ը հայերէնով է,

բայց շաբաթական դրութեամբ հատուած մը ունի, որը ֆրանսերէնով է: Երեք ռատիոներ ունինք, որոնք կը գտնուին Փարիզ, Լիոն եւ Վալանս: Իսկ «Ռատիո FM»ը այսօր կը սփռուի թէ՛ Փարիզի, թէ՛ Մարսէյի եւ թէ՛ Նիսի վրայով:

Դժբախտաբար լրատուական միջոցները փոխուեցան: Աւանդական մամուլը այսօր կը տարածուի անմիջապէս համացանցով: Մարդիկ չեն կրնար ամիսով սպասել թերթին: Այս երեւոյթը լուրջ ազդեցութիւն ունի թերթերու ապագային վրայ: Այս թերթերէն մէկը ունի իր տպագիր ամսագիրը եւ իր կայքէջը»:

«Ունինք մի քանի թերթեր: Հիմա վտանգ կայ, որ մամուլը կրնայ ըլլալ փակուի: Օրինակ՝ «Յառաջ» թերթը անցեալին ուժեղ էր, 1925-2010 օրաթերթ էր, իսկ հիմա շաբաթաթերթ է (շաբաթը երկու անգամ կը հրատարակուի), որը Միսաքեան ընտանիքի կողմէ կը հրատարուէր: Կարեւոր մշակութային հաստատութիւն մըն էր, ոչ թէ միայն Ֆրանսահայութեան համար, այլեւ՝ ամբողջ Սփիւռքի համար: Այսօր օրերուն Ֆրանսայի մէջ թերթ հրատարակելը շատ դժուար է, որովհետեւ թերթ կարդալու մշակոյթը վերացած է եւ տեղը գրաւած է օնլայն տարբերակը»:

Սոցիալական կյանք և համայնքային համախմբում

Քննարկվող առանցքային հարցեր. *համայնքային կապեր և հարաբերություններ, ներհամայնքային կյանք և ինտեգրում, համայնքների բազմազանություն:*

«Այստեղ չկա ԱՄՆ-ի նման այդ տարբաժանումը՝ հին ու նոր սփյուռք, միմյանցից շատ հեռու, թե՛ հիմնականում իրար հետ, կապը պահում են:

Ես եկեղեցու մակարդակով կխոսեմ. ես որ չորս տարի առաջ եկա, կար այդ տարբաժանումը, հիմա էլ կա, անհնար է դա չլինի, որովհետև այսօրվա հին համարվածները ժամանակին այստեղ նոր են եղել և շատ հյուրընկալ պայմաններում չեն ապրել: Պարույրի պես կրկնվող գործընթաց է: Ես փորձում եմ այդ բաժանումը վերացնել՝ գոնե եկեղեցու հետ կապված: Ինչու՞ մյուս ասոցիացիաների հետ չեմ ջանում հարաբերու-

թյուններ ունենալ. նրանք շատ բևեռված կազմակերպություններ են՝ իրենց կուսակցական կամ գաղափարական հողի վրա: Ինձ համար եկեղեցին ամեն տեսակի ծայրահեղություններից դուրս է»:

«Օրինակ, ապրիլի 24-ին, սովորաբար, չորս մեծ միջոցառում է տեղի ունենում: Ամենամեծը երթն է՝ Կոմիտասի արձանից մինչև անմար կրակ, Շանգ Էլիզեի կողմերը մոտավորապես: Երկրորդը պատարագն է հայկական եկեղեցում, պատարագով է սկսվում՝ կեսօրին պատարագ ենք անում, հետո գնում ենք ցույցի: Երրորդը՝ 23-24-ի մոտակա կիրակի օրը պատարագ են մատուցում հայ կաթոլիկները՝ Նոտղը Դամ հայկական եկեղեցում: Եվ չորրորդը, որը Ցեղասպանության հետ կապ չունի, բայց հայ զինվորի արձանի մոտ կրակ վառելն է, ինքը գաղափարաբանորեն հանուն Ֆրանսիայի զոհված հայ զինվորների համար է, բայց այնպես ենք դասավորել, որ այդ օրերին, ուշադրությունը բևեռենք այս հանգամանքի վրա, ժողովուրդն էլ շատ լինի, շատ հավաքվի: Դա Ֆրանսիային դուր է գալիս, որ ինքը սիմվոլիկ քայլ է անում, և ժողովուրդը հետաքրքրված է դրանով: Անցյալ ապրիլի 24-ին այս չորս մեծ միջոցառումները, կարելի է ասել, խաչաձևեցին սաստիկ կերպով, ժողովուրդը չիմացավ՝ ուր գնա և ինչ անի: Ամենամեծ խնդիրն այն էր, որ կիրակի էր այդ օրը, և կիրակի օրն անմար կրակին կրակ վառելը արգելվում է: Հայկական պատարագը, որը սովորաբար լինում էր ժամը երեքին, տեղափոխվեց առավոտյան 11-ին, նույն օրը Նոտղը Դամը ասաց, որ ժամը երեքին պատարագ է, իսկ նույն ժամին CCAF-ը կազմակերպեց երթը: Հիմա մարդը չգիտի՝ պատարագի գնա, թե երթի գա, այսպիսի իրավիճակներ: Հաղորդակցման մեխանիզմը չաշխատեց, մեկը մյուսի հետ չհավաքվեցին քննարկելու, թե ինչպես անեն, որ ապրիլի 24-ին և՛ պատարագի մասնակցեն, և՛ ցույցի գնան, և՛ որ CCAF-ի նախագահը բոլոր տեղերում կարողանա մասնակցություն ունենալ»:

«Այլ համայնքների հետ հարաբերություններ կան, բայց կազմակերպությունների միջոցով: Օրինակ՝ եկեղեցին կարող է ուրիշ թեմի հետ կապ ունենալ, Բարեգործականի մասնաճյուղերի հետ կարող է կապ ունենալ, բժշկական միությունը կարող է այլ բժշկական միությունների հետ կապ ունենալ: Իհարկե, կան բարեկամներ, ընկերներ»:

«Խիստ տարաբաժանված են կուսակցությունները, անգամ թշնամական, հետևաբար՝ ես աշխատում եմ բոլորից հեռու մնալ, պաշտոնական հարաբերությունների մեջ չմտնել, որպեսզի եկեղեցին ներքաշած չլինեմ այդ ամենի մեջ: Այսինքն եկեղեցին դրանից տուժում է:

Բայց ինչ որ վերաբերում է հայաստանցիներին, կարող եմ ասել, որ ինձ հաջողվել է այդ սառույցը կոտրել և հալեցնել: Առաջինը սկսեց բախումից, երբ որ ես խորանից ասացի, որ համար առաջին հայաստնացին ես եմ այստեղ, որովհետև քամահրանքը հայաստանցիների հանդեպ էր: Եվ երկրորդ սառույցը հայաստանցիների մոտ, որ կոտրեցի, հայտարարեցի որ ես այստեղ ծառայելու եմ բոլորին՝ անկախ նրանից հայաստանցի են, թե՛ ոչ: Ինձ համար գոյություն չունի պարսկահայ, լիբանանահայ, սիրիահայ, հայաստանցի հայ. հայը հայ է և ինձ համար հավասարապես արժեք է ներկայացնում, և ես հային ծառայելու համար եմ եկել, չեմ եկել ինչ-որ կոնկրետ մասսաներին ինչ-որ բաներ հասկացնելու կամ իրենց հետ աշխատելու»:

Գ. ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Քննարկվող առանցքային հարցեր. *հայկական ինքնությունը պայմանավորող գործոնները համայնքում, երկրում (հիմնական տարրեր), ինքնության դրսևորման տարածությունները, լեզվի, ընտանիքի, կրոնի և եկեղեցում, այլ գործոնների դերը ինքնության պահպանման գործում, ծուլում՝ վրանգներ և մարահրավերներ:*

«Ուրեմն, այստեղ սերնդափոխությունն ապահովում է համայնքի հարատևությունը, հետևաբար, եթե այդ սերունդը չլիներ, այդ ուժացումը վաղուց կլիներ: Ֆրանսիացի գաղափարը ինչ է նշանակում. մարդ կարող է լինել սևամորթ, անունն Աբդուլլահ, բայց ինքը ֆրանսիացի է, դա թղթի խնդիր է ընդամենը՝ ֆրանսիացի համարվելը: Այստեղ, երբ որ մարդիկ մուտք են գործում ոչ ֆրանսիացի, դա իրենց համար համարվում է այն բարձրակետը, որին պետք է հասնեն, և դրա համար է ամբողջ պայքարը, որ մղում են այս երկրի ներսում՝ դա լինի հայ կամ այլազգի: Եվ այդտեղից ձևավորվում է կաստայականություն. նրանք, ով-

քեր վերևում են, արիսուկրատներն են, ես, որ մեկ տարվա թուղթ ունեմ, այստեղ վասալիկ եմ, նրանք, ովքեր թուղթ չունեն, ստրուկներ են:

Համայնքի մեջ էլ երբեմն կարելի է նկատել [խմբ. միմյանց նկատմամբ այդ վերաբերմունքը]: Դա ավելի շատ անհատական հարաբերությունների մեջ կարող է ձևավորվել, ուղղակի հոգեբանորեն այնպես է ստացվում, որ մեկը մյուսի հետ հեռավորությունը պահում է: Ես շատ քիչ հայաստանցիների գիտեմ, որ մասնակցում են ինչ-որ միջոցառման, որին մասնակցում են այստեղի արվեստագետները, և շատ քչերին գիտեմ այստեղի ծնված-մեծացած կամ թեկուզ դրսից եկած և երկար տարիներ այստեղ ապրող, որ հայաստանցիների հետ գնում են Արմենչիկի համերգին պարելու: Երբեմն նկատելի է նաև մեկը մյուսին չընկալելը, չհասկանալը, խորշելը ինչ-որ տեղ: Այո, գոյություն ունի այդ պատենշը»:

«Բնավ չկա համագործակցություն երեք եկեղեցական համայնքների միջև: Հետո էկումենիզմը քրիստոնեության մեջ տրոյական ձի է, ինքը մի բան է, որը ուժերը օգտագործում է իր օգտին: Կամ գուցե մեր եկեղեցին շատ ակտիվ չէ այդ ոլորտում, չեմ կարող ասել:

Հայերի մեջ 90 և ավելի տոկոս հայ առաքելականներն են, բայց այն մակարդակի, ինչ որ Հայաստանում է: Ինչպես տեսաք, եկեղեցին ամեն կիրակի լեցուն է: Ուրիշ օրեր եթե պատարագ անես, 10 հոգուց ավել մարդ դժվար հավաքվի, որովհետև զբաղված են կամ չի հետաքրքրում մարդկանց: Կիրակին տարբեր է, տարբեր մոտիվացիաներով մարդիկ կարող են գալ եկեղեցի, բայց մեծ տոներին ասեղ գցելու տեղ չկա»:

«Ինչ խոսք, շատ մեծ վտանգ կա, նորեկ հայաստանցիների սերունդները շատ ավելի խոցելի են, վտանգի առջև են, քան նախորդները: Մի քիչ այսօր Ֆրանսիայի դեմոգրաֆիկ դեմքը փոխված է. ամեն օտարազգի ձգտում է ֆրանսիացի լինելուն, ինտեգրվելուն: Կողքին կա սևամորթը, կա արաբը, կա վրացին, և մրցակցություն կա: Հայաստանցին մրցակցության մեջ, նախ, հնարավորություն չունի հայկական դպրոց տալու, այդ դեպքում երեխան չի լինում գրաճանաչ, որովհետև օրվա մեծ մասը ֆրանսերենով է անցկացնում: Մարդու զարգացման համար երկու մեծ դպրոց կա՝ ընտանիք և հասարակություն: Ընտանիքի դերը այստեղ

մինիմալի է հասցված: Ծնողը ավելի ուշ է գալիս տուն, ժամանակ չի մնում երեխայի հետ շփվելու համար՝ հայերենով, իհարկե»:

«Այսօր, դժբախտաբար, այստեղ շաբաթական դրութեամբ երկու անգամ հայերէն դասեր կը դասաւանդուին: Այսօր ֆրանսահայ ծնողները իրենց զաւակները շաբաթ օր մեր դպրոցը կը դրկեն, ոչ թէ հայապահպանութեամբ մտահոգուած են, այլ որպէսզի իրենց շաբաթավերջը լաւ ու հանգիստ վայելեն: Այսօր խառն ամուսնութիւնները շատցած են, որը մեծ վտանգ է: Այս մտահոգութենէն մեկնելով, ես այս դպրոցը մշակոյթի կեդրոնի պիտի վերածեմ: Ինչու՞: Այն հայ երիտասարդ համալսարանաւարտները, որոնք ուսումնասիրութիւններ կը փափաքի կատարել եւ կամ չի կրնար Հայաստան երթալ, հոս կրնայ գալ եւ իր ուսումնարութիւնը կատարել: Այս բոլոր 14000 գրքերը պիտի թուագրենք»:

«Ավելի շատ նրանք, որ վաղուց եկել էին՝ Պոլսից կամ այլ վայրերից, շատ զարգացած էին, մշակոյթի մասին բավականին տեղեկութիւններ ունեին և կարողացան փոխանցել՝ քիչ թե՛ շատ, հետո իրենց զավակները՝ ինչպէս ես, կարողացան փոխանցել՝ ինչ որ կարող էինք: Երբ որ սկսեցինք աշխատել, ավելի դժվար էր, այսպէս մենք մեզ սովորեցինք, հետո ավելի հեշտ էր:

Իրենց կյանքը Ֆրանսիայի մեջ է, և ,անշուշտ, հարաբերություններ պետք է ունենան ֆրանսիացիների հետ, առիթներ՝ ծանոթանալու ֆրանսիացիների հետ: Շատ են [խմբ. խառնամուսնությունները], բնական է, չենք կարող պայքարել: Կամաց-կամաց ծուլվում են»:

«Հայապահպանության և հայկականության խնդիրը Ֆրանսիայի դեպքում այն է, որ այստեղ հստակ պետական մակարդակով իրենց ողջ քաղաքականությունը, իրենց հանրապետական արժեքները հիմնված են նրա վրա, որ մարդկանց՝ ըստ ծագման հիմքը չեն էլ ուսումնասիրում և այդ հիմքը որպէս փաստ չեն էլ ընդունում: Այստեղ համայնքայնությունը գոյություն ունի, սակայն պետությունն ինքը ուժեղ մարտնչող հակահամայնքային է և աչք չի փակում համայնքների գոյության վրա, այսինքն Ֆրանսիայում էթնիկ ռեգիստր չկա, այստեղ էթնիկ մեծամասնություն չկա, հետևաբար՝ էթնիկ փոքրամասնություն էլ չկա: Կան, իհար-

կե, հեռավոր գյուղերում, որտեղ ֆրանսիացի են համարվում բաց մաշկ և մազերի գույն ունեցողները, մի քիչ թուփսն արդեն ֆրանսիացի չէ, բայց պետությունը այդ մոտեցումը չունի, իրենք այս պահի դրությամբ էթնիկ իմաստով այնքան խառնված են իրենք իրենց մեջ, որ այդ մոտեցումը հակառակ կողմով կարող է աշխատել և ի վնաս իրենց կարող է լինել»:

«Ես չեմ սիրում եկեղեցուն վերագրել ազգապահպան գործունեություն, եկեղեցին ունի հավատապահպան գործունեություն, քրիստոնեական առաքելություն, որի մեջ մնալով մարդը չի կարող անմասն մնալ իր ազգությունից, իր էությունից: Մարդիկ գալիս ֆրանսերեն են խոսում, ասում եմ ցանկացած ֆրանսիական կազմակերպություն գնացեք, անգամ նախագահները, անգամ գիտաժողովները ֆրանսերենով են անում, միակ տեղը, որ հայերեն է խոսվում, միակ օազիսը հայկական մնացել է եկեղեցին, որ ամեն ինչ հայկական դեռ պահպանում ենք: Ամեն դեպքում, ես հավատում եմ, որ եթե եկեղեցին իր ճիշտ կոչման մեջ է, այդ ազգապահպանությունը ինքնաբերաբար եկող բան է, բայց հակառակ դեպքում, եթե եկեղեցականը կուսակցության ճնշման տակ սկսի դավեր նյութի, քաղաքական երանգներով քարոզներ խոսի ամեն կիրակի (մեկ-մեկ կարելի է, հավատացյալներ կան, սիրում են այդ տեսակ քարոզներ լսելը, որ չճանձրանան եկեղեցում), բայց եկեղեցին թող իր բուն առաքելությունը կատարի, որը հավատքի քարոզչությունն է: Արդեն տարվա մեջ մոտ ութ այլակրոն մարդու հետ պսակ եմ կատարել: Իրենք դավանափոխ են լինում իրենց ցանկությամբ: Մենք չենք կարող այլ ազգի հետ պսակ անել, բայց դա նշանակում է, որ մենք չենք ցանկացել մարդկանց նեղացնել: Դա մեզ ցավ է պատճառել, բայց եթե այլակրոնությունը կա, կհաղթի նա, ով ավելի ուժեղ է իր հավատքի մեջ: Եթե նկատել եք, այս պարագայում, եթե աղջիկը հայ է, ընտանիքը փրկված է. մոր գենը լավ է աշխատում»:

«Ֆրանսայի մէջ շատ քիչերն են, որոնք հայ լեզուն կը տիրապետեն: Ֆրանսահայ նոր սերունդը զանազան մակարդակներով դուրս կու գայ: Ոմանք ֆրանսերէնով եւ հայերէնով կ'արտայայտուին, իսկ ուրիշներ՝ միայն ֆրանսերէնով: Նոյնիսկ Պոլսոյ մէջ հայերէնը սկսած է տեղի

տալ, որովհետեւ չափահաս տարիքի մարդիկը, որոնք հայ դպրոցներէ շրջանաւարտ են, գիտեն եւ կը խօսին հայերէն, իսկ նոր սերունդը միայն թրքերէնով կը խօսի ու կ'արտայայտուի:

Թէ Ֆրանսայի եւ թէ Պոլսոյ մէջ, նոր սերունդին մէջ կայ այն հոգեբանութիւնը, թէ «հայերէնը ինչի՞ պիտի ծառայէ», մանաւանդ որ իրենց ուսումը թրքերէնով կամ ֆրանսերէնով է: Նկատի ունենալով այս երեւոյթը, պէտք է զուգահեռ գտնել, որ ինչպէ՞ս պիտի կարողանամ հայերէն դասաւանդել եւ հայերէնը դասաւանդելը միայն լեզու դասաւանդել չի մնայ, այլ լեզուն պէտք է դառնայ պատուհան մը՝ կեանքը դիտելու, որ իրեն համար հայերէնը նշանակութիւն մը ըլլայ, որպէսզի կարողանայ անցեալին հետ կապ հաստատել եւ ներկան հայերէնով մտածէ: Մեր ուսուցիչներու մօտ հայերէն սորվեցնելու հարցը միայն հայերէն դասաւանդելու հարց դարձած է: Եթէ միտքը վերցնենք՝ կեանքը վերցուցած կ'ըլլանք: Եթէ ես որեւէ մէկ լեզուով չկարողանամ ձեզի հետ հաղորդակցիլ, ուրեմն ինչի՞ պիտի ծառայէ իմ սորված լեզուս: Այս գաղափարները դեռ յստակ չեն: Հին ուսուցիչներու խումբ մը կայ, բայց իրենց փոխարինողները չկան: Պէտք է նորերը գան, բայց ոչ կաղապարուած գաղափարներով, այլ միտքը ազատելով պէտք է անձը կեանքին պատրաստուի:

Պայմաններու բերումով լեզուն եւ կրօնը մշտապէս մեր ինքնութեան հետ կապուած են: Մէկը միւսին պէտք է ամբողջացնէ, բայց միտքը պէտք է զարգացնէ: Ուրեմն, այսպիսիով հարցերը առարկայական կը մնան եւ կամ ուղղակի ասանդականը պահպանելով՝ պէտք է շարունակել, բայց դէպի հոր, չեն գիտեր:

Շատերու համար ինքնութիւնը պահպանելու համար դպրոցները, ուրիշներու եկեղեցին կամ դպրոցն է, բայց ինծի համար եկեղեցին իր տեղը չէ գրաւած եւ ոչ ալ իր պարտականութիւնը լաւագոյնս կը կատարէ:

Նայինք Հայաստանի վերջին տարիներու տնտեսական վիճակին: Ինչ իրաւունքով միլիոններ պէտք է ծախսենք, որպէսզի Մոսկուայի մէջ եկեղեցի կառուցեմ: Նոր եկեղեցի կառուցելով՝ ես իմ քրիստոնէութեան գաղափարս ետ պիտի արժեւորեմ: Գնա գործարան բաց, 50 հոգի աշխատուոր, անոնց աղօթքը կ'անոնես եւ անլի օգտաշատ գործ կատարած կ'ըլլաս: Եկեղեցին այսօր իշխանութիւն մը դարձած է»:

«Ընդհանրապես Արեւմուտքի, բայց մասնաւորապես Ֆրանսայի մէջ ֆրանսական մշակոյթը այնքան ուժեղ է եւ գրաւիչ, որ մեզի՝ ֆրանսահայերու համար շատ դժուար է հակազդել եւ չէր կարելի հակազդել, որովհետեւ մշակոյթը շատ կարեւոր եւ ընդունելի: Հայերս չունինք որեւէ մշակութային քաղաքականութիւնը, որ մեզի կ'արտօնէ թէ՛ ֆրանսական մշակոյթէն օգտուիլ եւ թէ՛ հայկական մշակոյթը պահպանել: Այլ խօսքով՝ մէկը միւսը կը ճզմէ: Օրինակ, Ֆրանսայի մէջ ունինք ամենօրեայ 4 դպրոցներ եւ ընդամէնը 1000 աշակերտ: Ասով չես կրնար լեզուն պահպանել:

Կան շատեր, որոնք հայ են, բայց հայերէն չգիտեն, սակայն նման ֆրանսահայեր երբեք չեն մոռնար իրենց արմատները եւ պարտականութիւնները, Հայ Դատը: Ունինք երիտասարդներ, որոնք հայերէն չենք գիտեր, բայց Հայ Դատի պաշտպաններ են եւ հայապահպանման գործընթացի մէջ ակտիվ գործունէութիւն ունին:

Ինչպէս վերեւ ըսի, որ Հայաստանի հայերը երբ Ֆրանսա կը գաղթեն, իրենց հետ նաեւ հայերէն լեզուն կը բերեն: Այսպիսով կորիզներ եւ օջախներ կը ստեղծուին, որտեղ հայերէն լեզուն կը պահպանուի: Որքան հայեր եկած են, չեմ գիտեր: Շատ երիտասարդներ կը տեսնեմ, ովքեր ֆրանսերէն կը խօսին, բայց մէկ անգամէն կը սկսին մաքուր, սահուն հայերէն խօսիլ: Ես այս լսելով՝ կ'ուրախանամ եւ կը հպարտանամ: Այսպիսով նոր հոսանք մը կը ստեղծուի, անշուշտ եթէ նոր գաղթողները չձուլուին: Ապագան դա ցոյց կու տայ:

Մեր ծնողները երբ Ֆրանսա եկան, փորձեցին իրենց ինքնութիւնը պահպանել: Անոնք իրենց կամքով չեկան, այլ պարտադրանքով դուրս ելան իրենց հողերէն: Մինչդեռ այն հայերը որոնք կամովին գաղթած են Ֆրանսա, կը փորձեն ինտեգրուիլ եւ ֆրանսացի դառնալ»:

«Մարդոց մէջ կայ ազգային գիտակցութիւն, որոնք կը նպաստեն հայկական մթնոլորտի ստեղծմանը: Կան հարուստ հայեր, որոնք նոյնիսկ կը հովանաւորեն նմանատիպ միջոցառումներ»:

Դ. ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի հետ կապը և հայրենիքի ընկալումը

Քննարկվող առանցքային հարցերը. Հայաստանի մասին ընկալումները համայնքում, երկրում, այդ ընկալումները պայմանավորող գործոնները, Հայաստանի հետ կապի ոլորտները, ՀՀ ներքին և արտաքին քաղաքականությունների ազդեցությունը հայրենիքի կերպարի ձևավորման, հայրենիք-սփյուռք հարաբերությունների վրա:

«Այն, ինչ պատկերացնում են սփյուռքից այն կողմ, դեռ շատ չի փոխվել: Հայաստանը՝ դա վերացական, Արարատ, բաստուրման և նուռը, այդ մակարդակի վրա է, որովհետև իրենք Հայաստանում որպես զբոսաշրջիկ են: Եվ երբ տեսնում են ցույցեր, մտածում են, թե դա ինչի համար է: Ես ասում եմ իրենց, որ 20 կմ Երևանից հեռացիր և տես՝ կյանքը ինչպես է դադարում: Դու Երևան ես գնացել, Գեղարդ ես գնացել, մաքուր է, իր համար լավ է, իր հայրենիքն է: Արդեն ձևավորվել են որոշակի խավեր, որոնք, ասում էին, որ Հայաստանին պետք է պատժել, դադարեցնել դրամաշնորհները: Ցույցեր են գումարում, և շատ քիչ մարդ է գնում ցույցերի, ինչպես եկեղեցի են շատ քիչ գալիս, այնպես էլ ցույցերին: Եթե 100 հոգի ցույցին հավաքվի, լավ է: Անշուշտ, հնարավոր է իրենք դրսից ղեկավարներ կամ ֆինանսավորողներ ունեն, որ այդ ամենը տեղի ունենա, համենայն դեպս, մարդիկ արտահայտում են իրենց բողոքը Հայաստանում տիրող ներքաղաքական իրավիճակի հանդեպ»:

«Մեկ տեսակի հարաբերություն չկա, տարբեր են. կան, որ երբեք Հայաստանում չեն եղել և գանգատվում են, ուրիշներ կան, որ բավականին գնացել-եկել են, բայց հուսախաբ եղան, մանավանդ այդ անկախության օրերին, չնայած շատերը, որ ուղղակի գնում են որպես զբոսաշրջիկ, լավ տպավորություն են ունենում, ովքեր ինձ նման հաճախ են լինում, լավ պատկերացում ունեն:

Հայրենադարձության միտումներ չկան: Կան մի քանի հոգի, որ, օրինակ, Երևանում հարկաբաժին ունեն ինձ պես և հաճախ են գնում,

բայց իբրև հայրենադարձ՝ չէ: Իմ ֆրանսիացի ընկերները, որ հարցնում են, թե իմ երկիրը որն է, ես ասում եմ, որ երկիրս Ֆրանսիան է, ես այստեղ եմ ծնվել, ուսում ստացել, բայց Հայաստանը իմ սիմվոլն է, որ պաշտպանում եմ, և իրենք այդ տեսակետը լավ հասկանում են:

Դա ուրիշ նպատակ է [խմբ. Ֆրանսիայից այլ երկրներ արտագաղթելը]. երիտասարդները միշտ ուզում են այլ երկիր գնալ՝ իրենց ապագայի համար: Դա ուրիշ հարց է, ավելի պրոֆեսիոնալ ձևով: Այսինքն ոչ թե Ֆրանսիան են լքում, այլ գնում են իրենց մակարդակը բարձրացնելու:

[Խմբ. հայրենիքի մասին պատկերացումը] Երկիր, որ դժվարություններ ունի, երկիր, որ կորցնում է իր բնակիչներին, երկիր, որ խնդիր ունի Ղարաբաղի հետ կապված, այսինքն մեզ համար կարևոր հարցերն են, որ մինչև օրս լուծում չունեն: Մյուս պատկերները հաճելի են՝ նայած ինչ հարաբերություններ ունեն իրենց ժողովրդի կամ ծանոթների հետ»:

«Դեպի Հայաստան նկատվում է, իհարկե, հոսք չի կարելի ասել, որովհետև քիչ հատված է դա, ընդ որում, դրանք չորրորդ սերունդ հին հայերն են: Իմ իմացած օրինակներով կան, որ գնում են Հայաստան և հատկապես Արցախ գնացողներ էլ կան՝ մշտական բնակության համար»:

«Այստեղ նորից ելակետային դրույթն այն է, որ դա վերաբերվում է շատ փոքր հատվածին: Նախ, համայնք ասվածը՝ այդ կես միլիոնի մասին է խոսքը, թե՛ համայնքային կազմակերպությունները և դրա մեջ ներգրավված մարդիկ: Դա մոտավորապես կարող է մի քանի 10 հազար մարդ լինել, որոնք ինչ որ կերպ երբևիցե կապ են ունեցել համայնքային կառույցների հետ: Հայաստանի հետ կապը համայնքային կառույցների միջոցով է լինում կամ անձնական կապերի, եթե ինչ-որ մեկն արմատների բերումով հետաքրքրված է Հայաստանով, բայց մեծամասամբ այն կազմակերպությունների, որոնք վերֆրանսիական են, օրինակ՝ ՀԲԸՄ, Դաշնակցություն, Հնչակյաններ, «Հայաստան» հիմնադրամ և այլն, նրանք, որոնք համահայկական բնույթ ունեն և, ինչպես աշխատում են ԱՄՆ-ում կամ Լիբանանում, փորձում են նույն սկզբունքով այստեղ աշխատել և կապը կարողանում են պահել: Իսկ այն կազմակերպություն-

ները, ովքեր համահայկական ցանց չունեն, զուտ ֆրանսիական են, իրենք արդեն Ֆրանսիայի առանձնահատկությամբ են գործում՝ որպես տեղի մշակութային ասոցիացիաներ, որոնք պարտադիր չէ, որ ընդհանուր համահայկական ցանցի մաս լինեն:

Ֆրանսիայի ՀԲԸՄ-ն, հատկապես երիտասարդական կառույցն ամառային ճամբարներ են կազմակերպում և երեխաների կամ երիտասարդների տանում են այնտեղ: Կան փոքր ասոցիացիաներ, որ էլի փոքր խմբերով գնում են Հայաստան՝ սահմանամերձ շրջաններում իրենց նախաձեռնությամբ աշխատանքներ են կատարում, դպրոց են վերանորոգում և այլն»:

«Սա [խմբ. համայնքում Հայաստանի մասին պատկերացումները] շատ հակասական է՝ ելնելով խմբերից: Բնականաբար, Հայաստանից նոր եկածների խումբը ամեն կերպ փորձում է արդարացնել իրեն, թե ինչու է եկել: Հին հայերը, օրինակ, CCAF-ն ավելի կշռադատաված մոտեցում են ցույց տալիս՝ ֆրանսիական քաղաքականությունը ելնելով: Այդ պատճառով Հայաստանին ուղղված դիրքորոշումն ավելի կառուցողական, խորհրդատվական է»:

Ինձ թվում է՝ այնքանով, ինչքանով ուրիշ վայրերում [Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականության դրվագների ազդեցությունը համայնքի վրա]: Օրինակ՝ Հայոց ցեղասպանության հետ կապված ցանկացած թեմա առնչվում է համայնքին: Այստեղ Ցեղասպանության քարոզչության խնդիր չկա, և, ինչպես գիտենք, 2001 թվականին Ֆրանսիան օրենք ընդունեց և հրապարակայնորեն ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, ինչը սահուն կերպով տանում է դեպի Ղարաբաղյան հարց, որը արդեն գիտակցվում է որպես Ցեղասպանության հետևանք:

Այստեղ կարևոր է չորրորդ սերունդ ֆրանսահայերի ակտիվությունը, որը հիմա երևում է Ղարաբաղի հետ կապված: Առհասարակ, Ցեղասպանության գիտակցության խնդիրը շատ կարևոր է: Մինչև վերջերս արտերկրի շատ հայեր չգիտեին, թե իրենց հետ ինչ է կատարվել, որովհետև կապի հնարավորությունը այդքան չկար, այսինքն ամեն մեկի համար դա անձնական ընտանիքի պատմություն էր, ոչ թե ընդհանուր ժողովրդի հետ կապված: Հետաքրքրական է, որ հրեաների

բնաջնջման փորձից հետո նացիստների կողմից, 40-ականներից [խմբ. 1940-ականներից] նոր սկսվում է հայ մտավորականների ու հրապարակախոսների մոտ նոր գիտակցությունը սկսում է արթնանալ, որ փաստորեն մեր հետ դա են արել: Մարդիկ գալիս են այն գիտակցության, որ դա եղել է: Խնդիր է առաջանում ցույց տալու հասարակությանը, որը քեզ հյուրընկալել է, թե ինչու են իր տարածքում շատ: 70-80-ականներին Հայ ազատագրական գաղտնի բանակի ջանքերով սկսում են խոսել դրա մասին: Եվրոպական հասարակությունը սկսում է գիտակցել, թե ովքեր են հայերը և ինչու են Եվրոպայում այսքան, կամաց-կամաց չեն եկել դարձել այսքան, այլ միանգամից: Դրա գիտակցությունը գալիս է երկրորդ, երրորդ սերունդ հայերի պայքարի շնորհիվ: Դեմոգրաֆիկ առումով, երկրորդ սերունդ հայերից հետո պայքարը մտնում է քաղաքական դաշտ: 60, 50, 40 տարեկանների մեջ այդ ակտիվության խնդիրը չկա: Սա իր ակտիվությունը դրսևորել է կամ Հայաստանի զարգացման, կամ Ղարաբաղի հարցում: Այսօր 30 տարեկանից ներքև Ֆրանսիայի ազգաբնակչության մեջ շատ քչերն են, որ ոչ ֆրանսիական արմատ չունեն, այսինքն չորս տատիկ պապիկներից չորսն էլ ֆրանսիացի են, շատ քիչ մաս են կազմում, ու քանի որ ամեն մեկն ինչ-որ հետաքրքիր արմատ ունի, հայկականի դեպքում դա շատ դրական է, այսինքն՝ քրիստոնյա, հին արմատներ ունեցող, որը երիտասարդներին պատիվ է բերում:

Հայաստանցիները քննադատաբար են վերաբերում այս խնդրին, և առաջին վերաբերմունքը լինելու է ինքնարդարացնող գաղթ: Զգուշավոր է վերաբերմունքը, որովհետև լավ ինտեգրված ֆրանսահայը գիտի Ֆրանսիայի հասարակական կարգը և հասարակության լիիրավ անդամ է: Ֆրանսիայում ապրող հայը, կոպիտ ասած, սրտին մոտ չի ընդունում Հայաստանի ներքին քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձությունները: Իսկ կառույցները, հենց նույն CCAF-ը հայտարարություններով հանդես գալիս են, փորձում են ոչ թե Հայաստանի ներքին կյանքին միջամտեն, այլ խորհրդատվությանը: CCAF-ը շատ նեյտրալ է: Նույն Մուրադ Փափազյանը և Արա Թորանյանը իրենց պարտականությունները շատ լավ հասկանում են, և երկար տարիներ նրանք դրա միջով անցել են, ֆրանսիական քաղաքական համակարգը լավ են պատ-

կերացնում: CCAF-ը ուղղակի չէր կարող, Ֆրանսիայում հայկական կառույց լինելով հանդերձ, ընդդիմադիր կեցվածք ընդունել: Մտավորապես ԵԱՀԿ Մինսկի խմբի պես նեյտրալ դիրքորոշում ունի»:

«Տարբեր անկիւնէ դիտուած, կան քաղաքական, մշակութային, սոցիալ եւ ընտանեկան յարաբերութիւններ: Օրինակ, մեր կազմը բաղկացած է 6 հոգի է, որոնց մէջ կան 1 հայաստանցի, 1 ղարաբաղցի, 1 պոլսահայ, 1 լիբանանահայ, 2 ֆրանսահայեր: Մեր յարաբերութիւնը մեր 2 հայաստանցի աշխատակիցներու հետ զուտ ընտանեկան յարաբերութիւններ են:

Մշակութային գետնի վրայ, Հայաստանէն յաճախ կը հրաւիրուին մշակութային ներկայացուցիչներ՝ երգչախումբեր, պարախումբեր, երգիչ, ինչպէս նաեւ մտաւորականներ: Գաղութի կազմակերպութիւնները այս բոլորը ընդունելու կարօտը ունին: Մշակութային հոլովոյթը Սփիւռքի երթալով սկսած է տկարանալ: Մեր բուն շունչը Հայաստանէն կու գայ: Շատ տխուր մը վիճակ մըն է սա: Կրնամ ճիշդ հակառակը ըսել: Հայաստանէն գաղթողները այստեղ նաեւ կը ստեղծեն նոր մշակութային շունչ մը: Կը ստեղծուին պարախումբեր, երգչախումբեր եւ թատերախումբեր, որոնք խորքին մէջ նոր եւ հին սփիւռքահայերու միացումն են:

Քաղաքական առումով, տարբեր կազմակերպութիւններ տարբեր յարաբերութիւններ ունին Հայաստանի հետ: Օրինակ՝ կազմակերպութիւններ կան, որոնք համաձայն են Հայաստանի իշխանութիւններու որդեգրած ներկայ քաղաքականութեան հետ, իսկ ոմանք՝ ոչ, դէմ են:

Անկախութեան առաջին ստեղծուեցան Սփիւռք-Հայաստան համագումարներ: Այնտեղ փորձուեցաւ կապեր հաստատել Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ: Որոշուեցաւ նիւթեր, որոնց շուրջ պիտի ստեղծուէր միացեալ յանձնախումբեր: Իմ կարծիքով սա դժբախտաբար չյաջողուեցաւ, որովհետեւ փոխ յարաբերութիւնները նպաստաւոր են երկուստեք:

Միւս կողմէ այսօր կան կարեւոր կազմակերպութիւններ, որոնք լաւ յարաբերութեան մէջ են Հայաստանի հետ: Օրինակ, «Հայաստան» ֆոնտը կը գործէ Ղարաբաղի համար: Կան այնպիսի կազմակերպութիւններ, որոնք իրենց ներկայացուցիչները ունին Հայաստանի մէջ՝ ՀՕՄ-ը, Օգնութեան Խաչը, Բարեգործութեան միութիւնը (ՀԲԸՄ): Կա-

պերը ստեղծուեցաւ, բայց չստեղծուեցաւ սիւթեմատիկ մեխանիզմի կառոյցը, որպէսզի Սփիւռքը օգտագործուէր Հայաստանին որպէս օգնութիւն եւ Հայաստանը իր կարգին Սփիւռքի գոյատեւման գրաւական»:

«Յարաբերութիւններ կան [իսմբ. Հայաստանի հետ]: Ես երեք տարի է, որ այստեղ կ'աշխատիմ: Նախկին տնօրէնը՝ Ռոմենտ Գէորգեանը շատ ընկերներ ու գործընկերներ ունի Հայաստան եւ յաճախ կ'այցելէ Երեւան: Յուսամ կը զարգանայ այս կեպը: Ես ալ, իմ հերթիս, պիտի այցելեմ Հայաստան նոյնիսկ Հրանդ Տինքի հիմնարկի հետ գործունէութիւն պիտի ծաւալեմ: Բայց ես կ'ուզեմ մնալ գիտական ասպարէզէն ներս, որովհետեւ կը կարծեմ որ այս գրադարանի արժէքը գիտական է եւ կ'ուզեմ յարաբերութիւններ զարգացնել պատմութեան ինստիտուտի հետ: Զանազան բարեկամական կապեր ունիմ, բայց պաշտօնական յարաբերութիւններ:

Հայեր կան, որոնք շատ կապուած են Հայաստանին եւ կ'ուզեն ամէն տարի այցելել, բայց կան նաեւ այնպիսիք, ովքեր չեն զգար որ Հայաստանը իրենց երկիրն է, որովհետեւ այս մշակութային իրողութիւնը չկայ այնտեղ: Երբ Հայաստան կ'այցելեն այն մշակոյթը չեն զգար այնտեղ, որովհետեւ կովկասեան մշակոյթ է, պոլսահայերու մշակոյթի նման չէ: Իսկ Հայաստանի քաղաքական ոչ դրական իրավիճակը, դժբախտաբար նաեւ կ'ազդէ իրենց վրայ»:

Սփյուռքի մասնակցութիւնը ՀՀ կյանքին

Քննարկվող առանցքային հարցեր. *սփյուռքի մասնակցութիւնը ՀՀ քաղաքական կյանքում, Հայաստանի նշանակութիւնը՝ որպէս հայրենիք և պետություն, սփյուռքի ակնկալիքները ՀՀ-ից՝ սփյուռքի հանդէպ վարվող քաղաքականության մեջ, համայնքի կապերը ՀՀ հետ, հայկական շահի պաշտպանություն, լոբբինգի ներուժ Ֆրանսիայում:*

«Արտաքին քաղաքականութիւնը համարում են զրո: Այստեղ արտաքին քաղաքականության բուն կրողը սփյուռքն է, և նա էլ պետք է լինի, որովհետեւ մեր արտաքին հիմնական քաղաքականութիւնը, ցա-

վրք սրտի, 100 տարի է Յեղասպանության վրա է կանգնած: Բայց եթե Հայ դատի հարցը հանենք, սփյուռքը կքանդվի, իր ամբողջ ողնաշարը դրա վրա է, կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները դրա շուրջ են աշխատում: Եվ միայն ապրիլի 24-ին կարող ես այստեղ 50-60 հազար հայ մեկտեղ տեսնել, երբեք այլ տեղ չեք տեսնի այդքան հայ համախմբված, անգամ Ազնավուրի համերգին»:

«Ոչ թե խառնվելու համար ներքին կյանքին, բայց գոնե կկարողանա օգտակար լինել, ինչ որ բաներ կկարողանա փոխել: Կամ ինչու՞ սփյուռքի թանգարան չեք բացում, որ տեղացիները իմանան՝ ինչպիսին է սփյուռքի կյանքը, ինչպե՞ս են ապրել: Մենք պետք է տեղյակ լինենք Հայաստանից, իսկ իրենք ինչու՞ չպիտի տեղյակ լինեն, չէ՞ որ երեք միլիոն Հայաստանում հայ կա, յոթ միլիոն՝ դրսում:

Եթե մենք Հայաստանի մեջ զգանք, որ ուզում են ավելի խորը լինեն հարաբերությունները, անշուշտ, սփյուռքը կարող է մեկ ուղղություն ունենալ, որ կարող է կողքից անել այն, ինչ պետությունը չի կարող անել»:

«Իմ անձնական կարծիքս հետեւեալն է. նախ քաղաքացի ըլլալ ի՞նչ կը նշանակէ: Կը ծնինք երկրի մը մէջ, կը մեծնաք, կը մասնակցիք այդ երկրին բոլոր օրէնքներուն, պարտականութիւններ ունիք, կը քուէարկէք կամ կը քուէարկուիք, կ'ընտրուիք, ընտրող կը դառնալ, ղեկավար կը դառնաք, հոն կ'ապրիք: Եթէ ընտրած էք այդ երկրին մէջ ապրիլ, դուք իրաւացի էք այդ երկրի քաղաքականութեան գաղափարներուն համար մասնակցելու, պայքարելու: Ես այսօր միմիայն դիտող մը կրնամ ըլլալ Հայաստանի ներքին քաղաքական կեանքին: Ես երբեք իմ անձիս իրաւունք չեմ տար մասնակցելու ներքին կեանքին խառնուելու, որովհետեւ ես այստեղ ապրած չեմ: Ես քաղաքացի չեմ: Հայաստան երթալով, անձնագիրը վերցնելով եւ Երոպայի մէջ ապրելով՝ ինքզինքս երբեք քաղաքացի չեմ կրնար համարել: Այո՛, հայ ենք, այդ տարբեր հարց: Բայց քաղաքացի ըլլալու հարցը ուրիշ իրաւունքներ եւ արժէքներ կը հետապնդէ:

Արտաքին քաղաքականութեան պարագային, եթէ Սփիւռք մը ըլլալով քաղաքականութեան վրայ ծանրութիւն կայ Հայաստանի վարչակարգին վրայ, ուրեմն Սփիւռքի ղեկավարներուն հետ պէտք է ծրագիր մշակել: Միայն բողոքելը իմաստ չունի: Իրար ինչպէ՞ս պիտի ամբողջաց-

նենք եւ ոչ թէ հակասենք: Ասի պէտք է նկատի առնուի: Պէտք է գիտնանք, թէ տարի յետոյ որտեղ երթալ կ'ուզենք, ինչպէս կրնանք առաջանալ, ինչ են կարեւոր խնդիրները եւ ինչ ձեւով: Նոյնիսկ երբեմն հաւասարկշրոշելու համար պէտք է դիտմամբ հակասական ոճեր ստեղծել, բայց խորհրդակցելով պէտք է ճամբայ մը որդեգրուի, ուր միասին քայլ պէտք է առնել»:

«Սփիւռքէն պէտք չէ պահանջել, որպէսզի միջամտէ Հայաստանի ներքին քաղաքականութեան, բայց Սփիւռքի կրնայ շատ առաւելութիւններ ունենալ Հայաստանի համար, որովհետեւ ոչ թէ անելի խելացի ենք, այլ պարզապէս ուրիշ աշխարհայեացք ունինք: Ինչ կը վերաբերի կառավարութեան, ղեկավարութեան, քաղաքական մօտեցումներու, ունինք նաեւ փորձառութիւն մը, որ մեզի ցոյց տուած է թէ ինչպէս կրնայ ստեղծել արեւմտեան ձեւի կառավարութիւն մը, երբ որ Հայաստանը 70 տարի շարունակ Սովետական Միութեան իշխանութեան կառավարական ձեւի տակ ապրած էր: Կրնանք շատ մեծ օգտակարութիւն ունենալ այս գծով: Կրնանք նաեւ օգտակար ըլլալ դաստիարակչական միջոցները առաջարկելով, ոչ թէ մեր կողմէ, այլ կառավարական շրջանակներու մէջ մեր ծանօթ փորձագէտները կրնան առաջարկներ ներկայացնել Հայաստանին, որպէսզի Հայաստանի ներկայացուցիչները ներշնչուին եւ տեղեակ ըլլան, թէ ինչ տեղի կ'ունենայ արեւմտեան շրջանակներու մէջ: Այսպիսով անոնք կրնանք բարեփոխումներ կատարել Հայաստանի մէջ:

Հայաստանը պէտք նաեւ սորվի ձերբազատիլ այս ընտրական խախտումներէն: Սփիւռքի համար գլխաւոր պատճառներէն մէկն է սա, որը պատճառ կրնայ դառնալ Հայաստանի համար տարբեր կարծիք կազմել:

Վերջերս Հայաստանի անկախութեան 25-ամեակը նշեցինք: Մեզի համար դա հպարտութիւն է: Դարերու մեր երազն էր եւ ձեռք բերեցինք: Սովետական պետութեան փլուզումէն, Ղարաբաղեան ազատամարտէն եւ երկրաշարժէն ետք անկախութիւն ձեռք բերելը մեծ իրագործում եւ հպարտութիւն մըն է հայերուս համար: Ո՞վ կ'երեւակայէր, որ օր մը պիտի կարողանայինք Սովետական Միութեան ոտքի կանգնիլ եւ ստանալ մեր անկախութիւնը:

Ինչ է այսօր Հայաստանի վիճակը, իսկ ի՞նչ է հայ ժողովուրդի նա-
յուածքը Հայաստանի եւ անոր կառավարութեան քաղաքականութեան
վրայ: Շատ տխուր է: Ժողովուրդը յուսախաբ է: Ճիշդ չէ որ յուսախաբ
ըլայ: 25 տարիներ անցած են մեր անկախութենէն, ճիշդ չէ որ յուսախաբ
ըլլանք, այլ պէտք է հպարտանայինք: Որոշ մարզերու Հայաստանը զար-
գացած է, բայց այդ բաւարար չէ: Տնտեսական պայմանները լաւացան,
բացի մեծամասնութեան համար: Հայաստանի գլխաւոր հարցերէն են
նաեւ ընտրական խախտումները, սոցիալական հաւասարութիւնը:

Երբեմն Հայաստան կ'այցելեմ եւ փողոցներու մէջ կը պտտիմ, կը
զմայլիմ շէնքերու գեղեցկութեան, աստօներու շքեղութեան: Սա օրինակ
Աբովեանի մէջ է: Բայց երբ 10 մէթր առաջ կը քալեմ, արդէն իսկ սեփա-
կան աչքերովդ աղքատութիւնը կը տեսնես: Սփիւռքէն այցելող ժողո-
վուրդը լաւ չի ճանչնար, չի զգար իրավիճակը: Կը բաւարարուի միայն
հրապարակ, Օբերա, Աբովեան քալելով: Վստահ եմ, որ այդ այցելու հա-
յորդիները օր մը պիտի զգան իրավիճակը, որ Հայաստանը միայն Հրա-
պարակը կամ Օբերան չէ: Ֆրանսահայեր շատ դժգոհ են Հայաստանի
իրավիճակէն, սոցիալական վիճակէն: Մեր նախարարներէն յաճախ կը
լսենք, որ տնտեսական 10 տոկոս աճ տեղի ունեցած է, բայց հայերը չեն
ընդունիր այս երեւոյթը:

Սփիւռքը կրնայ ազդել Հայաստանի վրայ, եթէ կարողանայ համո-
զել այս օրիկարխական վարչակարգը վերանայ: Որովհետեւ այս հիմնա-
կան ազդեցութիւնն է, որ սոցիալ իրավիճակը չ'աճիր Հայաստանի մէջ,
այլ կը վատթարանայ:

Չի կարելի շարունակ քննադատել երկիրը, քննադատել ղեկավար-
ները, այլ պէտք է քննադատել ղեկավարութեան ձեւը, որ կը կրէ նաեւ
ղեկավարներու պատասխանատուութիւնը»:

«Եթէ վստահութիւն ունենան, որ պիտի կարողանան նորմալ ձևով
աշխատել, կանեն ներդրում, բայց միշտ կասկած կա»:

«Այստեղ միութիւն մը կայ, որը կազմուած է ֆրանսահայ գործա-
րարներէ: Անոնք Հայաստանի հետ սերտ կապ ունին, գործնական ծրա-
գիրներ կը մշակեն»:

«Տարիներ շարունակ Հայաստանի Հանրապետութիւնը փորձում է
ղեսպանութեան միջոցով ֆրանսահայ դպրոցները կցել Կրթութեան և

գիտության նախարարությանը՝ պատճառաբանելով, որ հրեական օրինակն են վերցնում, որ պետությունը կարողանա հավասարը հավասարի հետ խոսել այս պետության հետ, և ինքը կանի ծրագրեր, որ հայերենը շատանա, հայ գրականությունը, հայոց պատմությունը: Սփյուռքը դրան չի համաձայնվի, որովհետև Հայաստանի կրթամակարդակը, դասական ուղղագրության խնդիրը, որը Հայաստանը չի կարողացել լուծել: Դեսպանությունը ասում է, որ այսօր դպրոցները դատապարտված են կորստյան՝ աշակերտ չի գնում, թանկ է, հեռու է և այլն: Բայց չգիտեմ Հայաստանի Հանրապետությունը ինչ երաշխիքներ է տալիս, որ ինքը պիտի կարողանա լուծի: Հայաստանում չի կարողանում, իսկ սփյուռքում 3-4 անգամ մեծ ծախս է դա»:

«Ես ժամանակին ասել եմ, որ եթե ուզում են, ու Հայաստանը լավ հարաբերություններ ունենա սփյուռքի հետ, պետք է, նախ և առաջ, միայն իր գումարների հետևից չվազի, սկզբից միայն դա էր: Ինձ մի քանի տարի Ազգային ժողով էին հրավիրել, ես ասացի պատգամավորներին, թե ինչու չեն տալիս հինգ աթոռ սփյուռքին՝ խորհրդի պես թեկուզ: Սա նշան կլինի, որ սփյուռքի գումարները չեք ուզում»:

«Երբ պարոն Նալբանդյանը ֆրանսայի մէջ Հայաստանի դեսպանն էր, դեսպանատան կողքին միութիւններու կողմէ խմբակներ կազմուած էին, որոնց նպատակն էր զանազան նիւթերու երկկողմանի ծրագիրներ մշակել եւ զարգացնել: Ես երկու տարի մշակութային մասնաճիւղին մէջ մաս կազմեցի, եւ փորձեցինք մամուլի եւ դպրոցի վերաբերեալ ծրագիրներ առաջարկել: Նախ ուզեցինք մտեցում մը ստեղծել, թէ ինչպէ՛ս կարելի է իրար հասկնալ եւ գործակցիլ: Այդ բոլորը ծրարով յանձնեցինք եւ այդպէս ալ մնաց:

Ինչպէս կարելի է համագործակցիլ կամ ինչն է կարելորդ: Կը տեսնենք, որ մարդիկ առաջ կը քշեն լեզուի հարցը: Լեզուի պատճառով ատելութիւն մը ստեղծուած է: Երկու լեզուները՝ արեւմտահայերէնն ու արեւելահայերէնը պէտք է պահպանուին ինչպէս որ կան:

Այս բախումը մենք առաւելաբար կը տեսնենք պատանիներու միջեւ: Երբ արեւելահայ պատանին կու գայ արեւմտահայերէն խօսող ակումբ մը, ես ինչ կրնամ ընել: Չեմ կրնար ըսել, թէ մենք այստեղ արեւմ-

տահայ կը դասաւանդենք, ուրեմն արեւելահայերէն չեմ դասաւանդեր: Այդ սխալ է: Արեւելահայը լրիւ տարբեր ուղղագրութիւն, հնչեղութիւն, արտաբերում, լսողութիւն ունի, նոյնպէս ալ արեւմտահայը: Օրինակ՝ ես իմ աւարտական դասարանիս մէջ ունիմ արեւելահայ ուսանող մը: Երբեք իրեն չեն ստիպեր, որ դասական ուղղագրութեամբ գրէ կամ արեւմտահայերէնով արտայայտուի: Պէտք է արտայայտուի եւ ես իրեն հետ հաղորդակցութեան մէջ պէտք է մտնեմ: Լեզուն մերժել՝ անձը, մշակոյթը մերժել ըսել է:

Երկու տարին անգամ մը ուսուցիչներու վերապատրաստման եւ վերաորակաւորման դասընթացներ կը կազմակերպուի, շատ լաւ նախաձեռնութիւն է, բայց պէտք է իմանալ նաեւ իւրաքանչիւր համայնքի եւ երկրի դժուարութիւնները, մանաւանդ պոլսահայերու պարագան»:

«Ունինք Հայաստանի եւ Սփիւռք, որոնք մեր ժողովուրդի երկու մասը: Չեմ գիտեր որմէկը ակելի կարելոր է: Ինչպէս վերել ըսի, որ խօսքեր կային որ Սփիւռքն ու Հայաստանը պիտի համագործակցէին, բայց օրուայ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը ըսաւ, թէ դուք միայն դրամ դրկեցէն եւ ուրիշ բանով մի գբադուիք: Ես անձամբ լսեցի այս խօսքը: Սփիւռքի եւ Հայրենիքի փոխ յարաբերութիւնները այնքան կարելոր են, որ կարելի չէ արգիլել: Պէտք է իսկապէս մտածել եւ միջոցներ ստեղծել՝ այս երկու գործօնները իրարու քով բերելու եւ սերտացնելու, եւ ոչ թէ միայն շքանշաններ կախելով ու պարգեւատրելով: Մեղք ենք»:

«Ինչպէս ամբողջ աշխարհում՝ հրեաները մեծ կշիռ ունեն, չնայած, որ հայերից շատ չեն: Մեծ հայկական լոբբի կոչվածը շատ վատ է աշխատում: Սա իմ անձնական կարծիքն է: Ասում ենք կա, բայց մեր աչքին չի երևում: Հրեաների մոտ այդ շերտավորումները, գոնե, իրենք ցույց չեն տալիս: Մենք շատ շերտավորված ենք, և դա ստեղծում է շատ խնդիրներ, որ այդ լոբբին պետք է լուծեր: Մենք, վերջիվերջո, պետք է գիտակցենք, իրար ձեռք բռնենք»:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հրատարակությունը ներդրում է սփյուռքագիտության մեջ՝ թե՛ հետազոտության փորձի, թե՛ ձեռքբերված նյութի քննարկման և թե՛ արդյունքների կիրառման հնարավորությունների տեսանկյունից:

Այն արձանագրում է սփյուռքում տարբեր խմբերի կենսագործունեության, համայնքերի և, ընդհանուր առմամբ, ֆրանսահայերի իրավիճակն ու փոփոխությունները՝ միաժամանակ դուրս բերելով սփյուռքում տեղի ունեցող գործընթացների դինամիկ պատկերը:

Աշխատանքում փորձ է արվել դիտարկել յուրաքանչյուր քաղաքի համայնքն իր համատեքստի մեջ՝ տեղային, միջավայրային առանձնահատկություններից մինչև ֆրանսահայկական ամբողջություն: Ներկայացված նյութերը կողք-կողքի առավել ընդգծում են յուրաքանչյուր խմբի առանձնահատկությունը՝ լրացնելով խճանկարի ընդհանուր պատկերը:

Ինչպես ցույց են տալիս հարցազրույցների նյութերը՝ Ֆրանսիայի հայկական համայնքը, ունենալով ընդհանուր դիմագիծ, բազմաշերտ ու բազմազան է, ներառում է բարդ կառուցվածքներ, ունի հայկական սփյուռքային բազմատեսակ կառույցների, ոլորտների, ուղղությունների ներկայացվածություն, ինչպես նաև ընդունող հասարակության մեջ ներառող գործունե կառույցներ:

Ֆրանսահայերի սոցիալ-ժողովրդագրական կազմը, միգրացիոն հոսքերին և նշանակալի իրադարձություններին զուգահեռ, մշտական փոփոխության մեջ է: Եվ չնայած վերջիններս ազդում են համայնքների կառուցվածքային փոխակերպումների վրա, համայնքային կառուցվածքի հիմնական տարրերը պահպանվում են և կայուն ձևով ապահովում են համայնքային կյանքը:

Հետաքրքիր է հետևել, թե ինչպիսի օրինաչափություններ են ունենում Ֆրանսիայի հայկական համայնքները, ինչ փոփոխությունների են

հանդիպում և ինչպես են պատասխանում դրանց: Տեղեկատու անձանց կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ Ֆրանսիայի հայերը կարողացել են ձևավորել շարունակական համայնքային պահանջ կամ սփյուռքյան մշակույթ այս ուղղությամբ, որն ապահովում է համայնքային զարգացման հավելյալ մեխանիզմներ ու լրացնում է համայնքում գործող կառույցների գործունեությանը: Այս երևույթը կարելի է համարել Ֆրանսիայի հայ համայնքի առանձնահատկությունը սփյուռքագիտական տեսանկյունից:

Պարզ է դառնում նաև, որ համայնքներում առկա ընդհանուր շարժունության համատեքստում առկա են ինչպես նոր արտաքին հոսքեր, այնպես էլ ներքին տեղաշարժեր, մասնավորապես, նկատելի է մեկ կենտրոնից՝ Մարսելից դեպի Փարիզ կամ Լիոն տեղի ունեցող շարժունությունը:

Վերջինս նկատելի է ոչ միայն առանձին դեպքերի, անձնային մակարդակով, այլև համայնքային կապիտալի, այդ թվում նաև կազմակերպական կառուցվածքների, որոնք բարդանում են շարժման ուղղությամբ և դառնում պետության հետ կապի գլխավոր օղակ:

Նյութերից կարելի է հասկանալ, որ ֆրանսահայերի տարբեր խմբեր ունեն ինտեգրման իրենց առանձնահատկությունները՝ կախված տվյալ հայկական համայնքում առկա սոցիալ-մշակութային դաշտերից կամ գերիշխող խմբերի հատկանիշներից, սոցիալական շերտերում տեղավորման հնարավորություններից:

Հարցազրույցների նյութերում նկատելի շեշտադրումներ կան ընդհանուր մարտահրավերների առանջնահերթությունների ու դրանց պատասխանելու յուրահատուկ լուծումների շուրջ, որոնք թույլ են տալիս տեսնել տարբեր միջավայրերում առկա ռեսուրսները ու դրանց իրագործման հնարավորությունները:

Համայնքային տարբեր դերակատարների՝ հարցադրումների պատասխաններից պարզ է դառնում, որ նրանք, իրենց տեղային-համայնքային իրականությունը պատկերացնում են ֆրանսահայերի կամ Ֆրանսիայի հայկական սփյուռքի, երբեմն էլ՝ ընդհանուր առմամբ, հայկական սփյուռքի համատեքստում: Այդպիսով, նյութը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել ոչ միայն համայնքային գործընթացների, այլև սփյուռքյան իրականության ընկալումների մասին:

Ամենատարբեր ոլորտների մասին նույնանման հարցադրումների շուրջ պատասխանների բազմազանությունը պայմանավորված է համայնքերում տարբեր միջավայրերի ու տարածությունների առկայությամբ, ինչն էլ առաջացնում է տարբեր շրջանառվող խոսույթներ:

Նույն հարցի շուրջ բազմազան տեսակետների մեջ նյութում շատ ակնառու երևում են հարցեր, որոնց շուրջ տարակարծություն գրեթե չկա: Դրանցից մեկը ֆրանսահայ լինելու ընկալումն է, երբ հայ լինելը չի խանգարում ֆրանսիացի լինելուն, ընդհակառակը՝ մի պատկանելիությունն ուժեղացնում է մյուսին:

Նյութերը ցույց են տալիս, որ բոլոր համայնքներում առկա են հայկականության հարցերին, Հայաստանի հետ կապին մասնակցելու տարբեր ուղիներ՝ միջնորդավորված կամ անմիջական ձևով, թե՛ որպես հայկական համայնքի ներկայացուցիչ, թե՛ որպես Ֆրանսիայի քաղաքացի:

Գիրքը, մաս կազմելով ավելի լայն հետազոտական ծրագրի, դառնում է առաջին քայլը՝ հետազայում քարտեզագրման ուղղության մշակման, նոր մոտեցումների որդեգրման, ավելի ճշգրիտ մեթոդաբանության մշակման ու ավելի լայն խնդիրների սահմանման համար: Ինչպես նաև այն կարող է օրինակ դառնալ սփյուռքյան համայնքների ներուժի քարտեզագրման մոդելի մշակման համար:

Մեթոդաբանությունը, որը կիրառվել է հետազոտական խմբի կողմից, կարելի է համարել առանձնահատուկ, քանի որ այն փորձարկված է և ապահովում է համալիր մոտեցում, բազմաբնույթ ներուժի ուսումնասիրության առանջնահերթությունների սահմանման և ճշգրտման մեխանիզմներ, ներուժի ուսումնասիրության և դրա ազդեցիկության չափանիշների հստակեցման ձևեր և միջոցներ:

Նյութերի հետազոտությունը հիմք է ձևավորում ներուժի ավելի լավ ճանաչման, ավելի կոնկրետ չափանիշների առանձնացման և քարտեզագրման համար, ինչն իր հերթին կարող է հիմք դառնալ ՀՀ-ում սփյուռքի ներուժի ներառման և քաղաքականությունների մշակման համար: Այս համատեքստում ակնհայտ է, որ առանց սփյուռքն ամբողջապես ճանաչելու՝ հնարավոր չէ նախանշել դրա արդյունավետ զարգացման ուղիները, դրա ներառման հնարավորությունները պետության մեջ:

RESUME

This publication is a contribution to diaspora studies, both in terms of research experience, discussion of the acquired material, and the possibilities of applying the results.

It records the situation and changes of the life activities of different groups, communities and, in general, French-Armenians in the Diaspora, simultaneously bringing out both a static and a dynamic picture of the processes taking place in the Diaspora.

In this work, an attempt was made to consider each city's community in its context, from local, environmental features to the French-Armenian whole. The materials presented side by side further emphasize the uniqueness of each group, completing the overall image of the mosaic.

As the materials of the interviews show, the Armenian community of France, having a general profile, is multi-layered and diverse, includes complex structures, has a representation of various Armenian diasporic structures, sectors, directions, as well as active structures that include it in the host society.

The socio-demographic composition of French Armenians is constantly changing, along with migration flows and significant events. And although the latter affect the structural transformations of communities, the main elements of the community structure are preserved and provide community life in a sustainable way.

It is interesting to observe what patterns the Armenian communities of France have, what changes they encounter and how they respond to them. According to the information given by the informants, the Armenians of France were able to form a continuous community demand or diasporic culture in this direction, which provides additional mechanisms of commu-

nity development and complements the activities of the structures operating in the community. This phenomenon can be considered a feature of the Armenian community in France from a diasporic point of view.

It also becomes clear that in the context of the general mobility in the communities, there are both new external flows and internal movements, especially the mobility from one center, from Marseille to Paris or Lyon, is noticeable.

The latter is noticeable not only in individual cases, at the personal level, but also in community capital, including organizational structures, which become complicated in the direction of the movement and become the main link of communication with the state.

It can be understood from the materials that different groups of French-Armenians have their own characteristics of integration, depending on the socio-cultural fields existing in the given Armenian community or the characteristics of the dominant groups, the possibilities of placement in social strata.

In the materials of the interviews, there are noticeable emphases on the priorities of common challenges and unique solutions to answer them, which allow us to see the resources available in different environments and the possibilities of their implementation.

It becomes clear from the answers to the questions of various community actors that they imagine their local-community reality in the context of the French-Armenians or the Armenian diaspora of France, and sometimes, the Armenian diaspora in general. Thus, the material gives an opportunity to get an idea not only about community processes, but also about perceptions of diasporic reality.

The variety of answers to similar questions about the most diverse areas is due to the presence of different environments and spaces in the communities, which causes different circulating discourses.

Among the various points of view on the same issue, issues on which there is almost no disagreement can be seen very clearly in the material. One of them is the perception of being French-Armenian, when being Armenian does not prevent being French, on the contrary, one affiliation strengthens the other.

The materials show that in all communities there are different ways of participating in the issues of Armenianness, the connection with Armenia, in a mediated or direct way, both as a representative of the Armenian community and as a citizen of France.

The book, being part of a wider research project, becomes the first step in further developing the direction of mapping, adopting new approaches, developing more precise methodology and defining broader problems. Also, it can become an example for the development of a model for mapping the potential of diaspora communities.

The methodology used by the research group can be considered special, as it is tested and provides a complex approach, mechanisms for defining and adjusting priorities for the study of multidisciplinary potential, ways and means of specifying the criteria for studying the potential and its effectiveness.

As a result of the materials, a basis is formed for a better recognition of the potential, the identification and mapping of more specific criteria, which in turn can become a basis for the inclusion of the potential of the Diaspora in RA and the development of policies.

Thus, without fully recognizing the diaspora, it is not possible to outline the ways of its effective development, the possibilities of its inclusion in the state.

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԴԱՇՏԱՅԻՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Ներսիսյան Ս., Տանաջյան Լ., ԴԱՆ, 2021, ՖՀ, Փարիզ (խորին հարցազրույցի տվյալներ):
2. Ներսիսյան Ս., Տանաջյան Լ., ԴԱՆ, 2021, ՖՀ, Լիոն (խորին հարցազրույցի տվյալներ):
3. Ներսիսյան Ս., Տանաջյան Լ., ԴԱՆ, 2022, ՖՀ, Մարսել (խորին հարցազրույցի տվյալներ):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սփյուռքագիտություն. Քննական անթոլոգիա, Կազմ. և խմբ.՝ Վ. Սահակյան, Խմբագրական կազմ՝ Բարսեղյան Ս., Գալստյան Ն., Մաթևոսյան Հ., Ներսիսյան Ս., Տանաջյան Լ., ԵՊՀ հրատ., Երևան, 2022, 586 էջ:
2. Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն, Երևան, «Զանգակ-97», 2002, 288 էջ:
3. Կարապետյան Ռ., (պատ. խմբ.), Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. խնդիրներն ու հեռանկարները, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 179 էջ:
4. Կարապետյան Ռ., Հայ համայնքներն այսօր. Թեհրանի, Լոս Անջելեսի, Բեյրութի, Փարիզի, Թբիլիսիի հայերի էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններ/.-Եր.,: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, 2018, էջ 252:
5. «Հայ Սփյուռք հանրագիտարան», գլխ. խմբ. Այվազյան Հ., Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 2003, 732 էջ:
6. Armenian Diaspora Opinion, Armenian Diaspora Survey, Pilot Project, 2018.

7. Léonian René, Les Arméniens de France sont-ils assimilés? Chez l’Auteur, Revue d’Histoire et de Philosophie religieuses, Issy-les-Moulineaux, 1986, p. 530.
8. Karapetyan R., Sociodemographic Aspect of the Resource Analysis of the Armenian Diaspora: Methodological Approaches, Armenian Diaspora in Dynamics, Prague, 2022, p. 11-29.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՍԱԼԱ	ASALA: Armenian Secret Army for the Liberation of Armenia, Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ
ԱՐԱՄ	ARAM: The Association for the Research and the Archiving of Armenian Memory, Հայկական հիշողության ուսումնասիրության և արխիվացման ասոցիացիա
ԷՌԱԶՄՈՒՍ	ERASMUS: EU programme for education, training, youth and sport, Եվրոպական միության ուսանողների փոխանակման ծրագիր
ԺԱՖ	JAF: La Jeunesse arménienne de France, Ֆրանսահայ երիտասարդական միություն
ԻՍՀՄ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ՀԲԸՄ	AGBU: Armenian General Benevolent Union, Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն
ՀՅԴ	Հայ Յեղափոխական Դաշնակցություն
ՀՕՄ	Հայ օգնության միություն
ԱՍԱՖ	CCAF: Conseils de coordination des organisations Arméniennes de France, Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհուրդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ
ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

19

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՆ ԱՅՍՕՐ.
ՀԱՅԱՑՔ ՆԵՐՍԻՑ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ձևավորումը և էջադրումը՝
Արթուր Հարությունյանի



ՖՐԱՆԱԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՆ ԱՅՍՈՐ